



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Է Օ Ժ Է Ն — Ս Ի Ի

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՑ



ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԷ

ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻՃԵԱՆ



ՀԵՏՈՐ Դ.



Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

- 1868 -

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԹ

Յ.Ա.ՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Ժամն իրիկուան ութն էր . անձրեւը՝ Յրանսօաց Պօտուէնի սենեկին ապակիները կը ձաղկէր , մինչդեռ բռնաչունչ հովը սենեկին խախուտ ու թերափակ դուռն ու պատուհանները կը դղրդէր : Սովորաբար կռկիկ ու մաքուր պահուած այս համեատ բնակարանին անկարգ եւ անխնամ վիճակն անբարբառ վկայ մ'էր այն տխուր եւ ծանր պարագաներուն՝ որք մինչեւ այսօր իրենց անշքութեան մէջ իսկ խաղաղ ապրող կեանքեր տակն 'ի վերայ ըրին : Աղիւսաշատակ դետինը ցեխով աղտոտած , կարասիները՝ որ առաջ մաքրութեամբ կը փայլէին , թանձր փոշւով ծածկուած էին : Այն ժամանակէն 'ի վեր որ Յրանսօաց ուտիկանութեան տեսչին ձեռք տարուեցաւ , անկողինը շարդարուած չէր . նախընթաց գիշերը Տակօպէո՝ աղջկանց պահուած տեղը գտնելու համար ըրած նոր եւ ունայն ջանքերէն ետեւ պարտաւեալ , յուսահատութենէն ընկճեալ , առանց ըզդեատներն հանելու՝ անոր վրայ ինկեր՝ քանի մը ժամ պառկեր էր :

Գղրոցին վրայ կեցած սրուակ մը , դաւաթ մը եւ չոր հացի կտրուանքն ապացոյց էին

դօրականին սակաւապիտու թեանը , որ ապրե-
լու համար՝ Տրանսօաղի բանտարկութենէն ե-
տեւ Մայէօի ձեռօք դրաւատունէն փոխ առ-
նուած սարկին կարօտ եղեր էր : Չոյլ երկաթէ
փոքրիկ եւ մարմարի սէս սլաղ (վասն զի փայ-
տը երկար ժամանակէ 'ի վեր հատած էր) վա-
ռարանին վրայ դրուած աղօտաւառ կանդեղի
մը լուսով Մայէօն կը տեսնուէր , որ աթոռի
մը վրայ նստած կը նիրհէր՝ գլուխը կուրծքին
վրայ ծռած , ձեռու ըները դողնոցին ներքեւ
ծածկած , եւ կրուկներն ալ աթոռին ստքերուն
ձողակին կրթնցուցած : Ժամանակ ժամանակ
իւր խոնաւ հազուսաներուն ներքեւ կը սար-
սըռէր : Այն տաժանելի եւ զանազան սրտա-
յուզութեամբ լցուն օրը՝ խեղճ արարածը բե-
րանն ուտելիք չէր դրած , թէ եւ ուտել ալ
ուղէր՝ տունը հաց չկար : Տակօպէռի ու Ակրի-
քօյի գալուն սպասելով , չէր կրնար անհան-
դիտա քնհատութեան դիմանալ , որ խաղաղ եւ
կենսամորոգ քունէ մը շատ տարբեր էր : Մերթ-
ընդ մերթ Մայէօ սրտատանջութենէն աչուր-
ները կէս մը կը բանար եւ շուրջը կը նայէր .
յետոյ հանդատեան անդիմադրելի պիտոյքէն
յաղթուելով գլուխը նորէն կուրծքին վրայ կից-
նար :

Քանի մը վայրկեան լռութենէ ետեւ , որ
միայն հովին մօնչիւնովը կընդհատէր , ծանր
ու յամբաքայլ ոտնաձայն մը լսուեցաւ սան-
դուղին գլուխը եւ սենեկին դուռը բացուեցաւ :

Տակօպէս ներս մտաւ, Ռապա-ժօա ալ ետեւէն :
Մայէօ վեր դատկելով արթնցաւ, ոտքի վրայ
ելաւ եւ Ակրիքօլի հայրը դիմաւորելով ըսաւ .

« Պարոն Տակօպէս, բարի լուրեր ունիք . . . : »

Մայէօ չկրցաւ շարունակել՝ Տակօպէսի
դէմքին տխրութենէն դարնուելով : Զօրականը
մտածութեանց մէջ ընկղմեալ՝ կարծես թէ չը-
կրցաւ առջի բերան գործաւորուհին տեսնել,
եւ ակտի մը վրայ իյնալով արմուկները սե-
ղանին վրայ դրաւ եւ կրեօք ձեռուրներուն
մէջ ծածկեց :

Բաւական երկար խորհելէ ետեւ՝ ոտքի վրայ
ելաւ ու կէս ձայնով ըսաւ . « Այնպէս պէտք
է ընել . . . այն . . . այնպէս պէտք է ընել . . . : »

Այն ժամանակ քանի մը քայլ առնելով սենեկին
մէջ՝ Տակօպէս շուրջը նայեցաւ բան մը փնտր-
ուելու կերպով . վերջապէս վայրկենի մը չափ հե-
տադօտելէ ետեւ, վառարանին քով երկու ոտ-
նաչափ երկայնութեամբ երկաթէ ձող մը տե-
սաւ, որ անոր երկաթէ կափարիչը վեր առնը-
լու կը գործածուէր երբոր չափազանց տաքցած
ըլլար . առաւ դայն, ու շաղրութեամբ զննեց,
ձեռքովը կշռեց եւ գոհ դէմքով մը գղրուցին
վրայ դրաւ :

Մայէօ՝ Տակօպէսի երկար լռութեան վը-
րայ դարմացած՝ երկչոտ եւ սրտատանջ հետա-
քրքրութեամբ անոր շարժումները կը դիտէր :
Շատ չանցաւ դարմանքը դարհուրանաց փոխ-
ուեցաւ երբ տեսաւ որ զօրականն ակտի մը

վրայէն իր պայուսակն առաւ, եւ մէջէն գոյր
 մը գրպանի ատրճանակ հանելով անոնց հրա-
 գործիները դնուց : Գործաւորուհին սարսափե-
 լով չկրցաւ ինքզինք բռնել եւ գոչեց . « Ա՛հ . . .
 Պ . Տակօպէս . . . ինչ պիտի ընէք :

Զօրականը Մայէօի նայեցաւ առաջին ան-
 դամ տեսնելու պէս, եւ սիրալիր բայց կտրուկ
 ձայնիւ մ'ըսաւ . « Բարի երեկոյ, սիրելի աղ-
 ջիկա . . . Ժամք քանին է : — Սէնթ-Մարիի ժա-
 մացոյցը հիմա ութ դարկաւ, Պ . Տակօպէս :
 — Ո՛ւթ . . . ըսաւ զօրականն ինքնիրեն . . . դեռ
 ութն է եղեր : » Եւ ատրճանակները երկաթէ
 ձողին քով դնելով նորէն խորհիլ սկսաւ աչքը
 չորս կողմը պարացրնելով :

« Պարոն Տակօպէս, ըսաւ Մայէօ վախն իմ
 վախը, բարի լուր մը չունիք . . . » — Ո՛չ :

Զօրականն այս միակ բառն անհշափ սուղ
 ձայնով մ'ըսաւ, որ Մայէօ աւելի քան մը հար-
 ցրնելու չհամարձակելով գնաց լուսեթեամբ նըստ
 առաւ : Ռապա-Ժօա ալ եկաւ գլուխն աղջկանու
 ծունկին վրայ դրաւ, եւ անոր պէս հետաքրքր-
 րութեամբ Տակօպէսի շարժումները կը դիտէր :
 Իսկ զօրականը նորէն քանի մը վայրկեան մտած
 խոհ կենալէ ետեւ՝ անկողնին քով գնաց, սա-
 ւան մ'առաւ եւ անոր երկայնութիւնը հաշ-
 ուեց . յետոյ Մայէօի դառնալով . « Մկրատ մը
 առէք » ըսաւ : — Բայց, Պ . Տակօպէս . . .
 — Ես ալ ըրէք, բարի աղջիկա, մկրատ մը, կըրկ-
 նեց Տակօպէս այնպիսի ձայնիւ մը որ թէպէտ

խիստ չէր, բայց կը ցուցնէր որ անմիջապէս
կատարուիր կուղէր :

Գործաւորուհին Ֆրանսօազի կարի կողովին
մէջէն մկրատ մը հանելով դօրականին տուաւ :

« Հիմա բռնեցէք սաւանին միւս ծայրէն եւ
ուժով մը ձկուեցէք, աղջիկս, ըսաւ Մայէօի .
եւ քանի մը վայրկենի մէջ անոր երկայնութիւնը
չորսի բաժնելով չուանի պէս սլորեց, եւ ոլոր-
քը չքակուելու համար՝ գործաւորուհիէն դեր-
ձանէ ժապաւէններ առնելով քանի մը տեղէն
կապեց, յետոյ չորս կտորներուն ծայրերն ա-
մուր մ'իրարու կապելով գրեթէ քանս ոտք
երկայնութեամբ ճոպան մը շինեց : Բայց ասով
չէր լիննար . վասն զի ինքնիրեն խօսելով ըսաւ .

« Հիմա կեռ մը պէտք է . . . » Եւ նորէն
բողորափքը նայիլ սկսաւ :

Մայէօի սարսափն հետզհետէ աւելնալով,
վասն զի Տակօպէնի դիտաւորութեանը վրայ
չէր կրնար այլ եւս երկբայիլ, երկչոտ ձայնիւ
մ'ըսաւ . « Բայց Պ. Տակօպէն . . . Սկրիքօլ
դեռ չեկաւ . . . այսչափ ուշ մնալէն կերելի
թէ բարի լուրեր ունի բերելիք . . . : — Այո՛,
ըսաւ դօրականը դառնութեամբ եւ միշտ աչ-
քովն իրեն պէտք եղած նիւթը մնատելով, իմ
բերածներուս պէս բարի լուրեր : » Եւ աւել-
ցուց . « Սակայն երկաթէ կեռ մը պէտք է
ինձ . . . : »

Մէկ կողմ միւս կողմ նայած ժամանակ դօ-
րականը Ֆրանսօազի կարած հաստ կտաւէ պար-

կերէն մէկը տեսնելով առաւ, բացաւ եւ ըսաւ
Մայէօի . « Աղջիկս , երկաթէ ձողակն ու ձո-
պանը մէջը դիր , որպէս զի տանելը դիւրին ըլ-
լայ : — Տէր աստուած , գոչեց Մայէօ Տա-
կօպէտի ըսածը կատարելով , Պ . Տակօպէտ , Ակ-
րիքօլի գալուէն չպիտի սպասէք . թերեւս բարի
լուրեր պիտի բերէ ձեզ : Անհող եղիր ,
աղջիկս պիտի սպասեմ տղուս գալուէն :
Ժամը տասնէն առաջ չեմ կրնար երթալ հոսկէց .
գեռ ժամանակ ունիմ : — Աւանդ , Պ . Տակօ-
պէտ , ամեն յոյս կորուսիք ուրեմն : — Ընդհա-
կառակն . . . մեծ յոյս ունիմ . . . բայց իմ վը-
րայ : »

Այս ըսելով Տակօպէտ պարկին բերանը գո-
ցելու կերպով ոլորեց եւ գորոցին վրայ դրաւ
ատրճանակներուն քով :

« Գոնէ Ակրիքօլի գալուէն պիտի սպասէք ,
այնպէս չէ , Պ . Տակօպէտ : — Այո . . . եթէ
ժամը տասնէն առաջ գայ : — Ըսել է որ
միտքերնիդ դրած էք . . . — Անխախտ կերպով
. . . եւ սակայն՝ եթէ ձախող գուշակութեանց
հաւտարու չափ պարզամիտ ըլլայի . . . : — Երբեմն
գուշակութիւնները սուտ չեն ելներ , Պ . Տակօ-
պէտ , ըսաւ Մայէօ , որ գորականն իր վտան-
գաւոր խորհրդէն դարձունելէ դատ ուրիշ բան
չէր մտածեր : — Այո , ըսաւ Տակօպէտ , բարե-
միտ կանայք այդպէս կրսեն . . . եւ թէպէտ
եւս բարեմիտ կին մը չեմ , պահ մ'առաջ բան մը
տեսայ որ սիրտս ցնցեց : Բայց վերջապէս

տարակոյս շկայ թէ սրտիս զայրոյթը նախադ-
գացութիւն թուեցաւ ինձ . . . : — Ի՞նչ տե-
սաք : — Պատմեմ ձեզ , բարի աղջիկս . . . դո՛ւնէ
ժամանակն անցունելու կ'օգնէ , որ շատ երկար
կուգայ ինձ . . . : Յետոյ իր խօսքն ընդմիջելով
հարցուց . « Ժամացոյցը կէս դարկաւ հիմա : — Այո՛ ,
Պ . Տակօպէս , ութ ու կէսն է : — Տակաւին ժամ
ու կէս կայ , ըսաւ Տակօպէս քթին տակէն . յե-
տոյ աւելցուց . « Ահա պատմեմ տեսածս . . . :
Պահ մ'առաջ չեմ գիտեր որ փողոցէն անցած
ժամանակս պատին վրայ մեծ ու կարմիր ծա-
նուցում մ'աչքիս հանդիպեցաւ , որուն զլուխը
սեւ յովաղ մը նկարուած էր որ ճերմակ ձի մը
կը գիշատէր . . . : Այս տեսնելուս պէս՝ արիւնս
զլուխս ցատկեց , վասն զի պէտք է զբուցեմ
քեզ , բարի Մայէօս , որ ես ժամանակաւ ճեր-
մակ ձի մ'ունէի Ժօվիալ անունով , որ այս
Ռապա-Ժօայի ընկերն էր , եւ սեւ յովաղ մը դայն
բղբակց . . . : » Ռապա-Ժօա՛ որ Մայէօի սաքին
տակը սրտկեր էր , այս անունը լսելուն պէս
զլուխը վեր առաւ ու Տակօպէսի նայեցաւ :

« Ար տեսնէք . . . անասուններն ալ յիշո-
ղութիւն ունին , ըսաւ զօրականը սրտէն հա-
ռաչք մ'արձակելով : Յետոյ շանը դառնալով .
« Ար յիշես , հմ , Ժօվիալը : »

Ռապա-Ժօանորէն այս անունը տիրոջ բեր-
նէն լսելուն՝ կաղկանձեց ու մեղմով մը հաչեց՝
որպէս թէ հասկըցընելու համար որ իր վաղեմի
ճանրու ընկերը չէր մոռցած :

« Արդարեւ, Պ. Տակօպէն, տխուր գուգա-
դիպութիւն մ'է այդ ծանուցման գլուխն այն
ձի պատառող սեւ յովաղը տեանել: — Այս բան
մը չէ. մնացեալը մտիկ ըրէ: Մանուցման մօ-
տը գացի, ու կարգացի թէ Մօռօք անուանեալ
մարդ մը Պերմանիայէն Փարիզ եկեր, իր զսպած
այլ եւ այլ կատաղի գազանները թատրոնի մը մէջ
ցոյց պիտի տայ, գլխաւորապէս փառաւոր ա-
ռիւծ մը, վաղը մը եւ ճալայի սեւ յովաղ մը՝ Ման
անուանով: — Այդ անունը սարսափ կուտայ մար-
դու, ըսաւ Մայէօ: — Առաւել սարսափ պիտի տայ
քեզ, աղջիկս, երբոր իմանաս որ այս յովաղը՝
ասկէց չորս ամիս առաջ Նիքսիկայի մօտ իմ ձիս
մեռցրնողն է: — Ա՛հ, . . . իրաւունք ունիք,
Պ. Տակօպէն, ըսաւ Մայէօ, սարսափելի բան
է: — Սպասէ տակաւին, ըսաւ Տակօպէն՝ որուն
դէմքը հետզհետէ կը խոժոռէր, ամենն այս չէ . . .
Այն Մօռօք անուանեալ մարդուն պատճառաւ
որ յովաղին տէրն է, ես եւ իմ խեղճ տղայքս
Նիքսիկայի մէջ բանտարկուեցանք: — Աւ հիմա
այդ չար մարդը Փարիզ եկած է . . . եւ ձեզ
գէմ սիս ունի, ըսաւ Մայէօ. սէ, իրաւունք
ունիք, Պ. Տակօպէն . . . զգուշացէք ինքզինք-
նիդ, այդ բանը չարագուշակ նշան մ'է . . . :
— Այո՛, չարագուշակ է . . . այն թշուառակա-
նին համար . . . երբոր զինքը տեսնեմ, ըսաւ
Տակօպէն քինալից կերպով մը, վասն զի հետը
հին հաշիւներ ունիմ կարգադրելիք . . . : — Պ.
Տակօպէն, գոչեց Մայէօ ականջ դնելով, մէկը

անդուղէն վեր կենէ վաղելով, Ակրիքօլի քա-
ուածքն է . . . անտարակոյս բարի լուրեր կը
բերէ . . . : — Հիմա գործս կարգին է, ըսաւ
մէկէն զօրականն առանց Մայէօի պատասխա-
նելու. Ակրիքօլ երկաթադործ է. ինձ պէտք ե-
ղած երկաթի կեռը կը դանէ : »

Քանի մը վայրկեան ետքը Ակրիքօլ ներս
մտաւ . բայց, աւանդ . . . գործաւորուհին ա-
ռաջին նայուածքով երիտասարդին բեկեալ դէմ-
քէն հասկըցաւ որ անոր յոյսերն 'ի դերու ելած
էին :

Է՛, ըսէ նայինք, ի՞նչ լուր ունիս, ըսաւ
Տակօպէս իր որդւոյն՝ այնպիսի ձայնով մը որ-
մէ բացայայտ կը հասկըուէր թէ Ակրիքօլի փոր-
ձած ջանքին յաջողութեան վրայ յոյս մը չու-
նէր : — Ա՛հ, հայր իմ, մարդու խելքին կուգայ,
դու ինք պատերու դարնելով խորտակելը կու-
գայ, գոչեց երիտասարդը զայրազին :

Տակօպէս Մայէօի դառնալով ըսաւ . « Ահա
կը տեսնես, խեղճ աղջիկս . . . ես տարակոյս
չունէի այսպէս ըլլալուն . . . : — Բայց դու,
հայր իմ, գոչեց Ակրիքօլ, Մօնպոօն կոմսը տե-
ամբ : — Մօնպոօն կոմսը երեք օրէ 'ի վեր Նօ-
ռէն գացեր է . . . ահա իմ բարի լուրերս ալ,
պատասխանեց զօրականը դառն հեզութեամբ .
քու բարի լուրերդ ի՞նչ են . . . պատմէ նա-
յիմ. ես կուզեմ լաւ համազուիլ որ օրէնքը՝ ո-
րուն համար պահ մ'առաջ կըսէիր թէ պարկեշտ
մարդիկը միշտ կը պաշտպանէ, շատ անգամ

զանոնք չար ու նենգաւոր մարդոց ձեռքը կը
թողու : Այո , այս համոզման պէտք ունիմ . . .
եւ յետոյ երկաթէ ճանկի մը . . . եւ այս երկու-
քին համար ալ յոյսս քու վրադ էր : — Ի՞նչ ը-
սել կուզես , հայր իմ : — Գուհախ ըրածդ պատ-
մէ որ իմանամ , դեռ ժամանակ ունինք . քիչ
մ'առաջ ժամն ութ ու կէս դարկաւ . ըսէ նայիմ ,
մեզնէ դատուելէդ ետեւ ուր դացիր : — Ոստի-
կանութեան տեսչին , որ արդէն քու դանդատդ
լած էր : — Ի՞նչ ըսաւ քեզ : — Գործը վերջին
աստիճան քաղաքավարութեամբ մտիկ ընելէ
ետեւ՝ պատասխանեց . « Այդ աղջիկները յար-
դելի տան մը մէջ են . . . վանքի մը մէջ են .
ուստի առ այժմ զանոնք հոնկէց քաշել առնե-
լու հարկ չկայ . . . ասկէ դատ ես չեմ կրնար
ձեր լոկ վկայութեամբ կրօնական տուն մը կո-
խելու պատասխանատուութիւնը վրաս առնուլ .
վաղը տեղեկութիւն կուտամ որու որ պէտք է ,
եւ յետոյ պէտք եղածը կը տնօրինուի : » — Յե-
տոյ պէտք եղածը պիտի տնօրինուի եղեր . . .
կը տեսնես , միշտ օրէ օր կը ձգեն , ըսաւ դո-
րականը . — « Բայց , պարոն , պատասխանեցի
իրեն , ըսաւ դարձեալ Ակրիքօլ , հիմա , այս ի-
րիկուն , այս դիշեր պէտք եղածն ընել հարկ
է . վասն եթէ աղջիկները վաղ առաւօտ Սէն
— Ֆրանսօս փողոցը չգտնուին , մեծ վնաս կըլ-
լայ իրենց : — Շատ կը ցաւիմ , պատասխանեց
տեսուչը , բայց նորէն կըսեմ , ես չեմ կրնար
ձեր լոկ վկայութեամբ , ոչ ալ ձեր հօրը վկա-

յութեամբ՝ որ այդ աղջիկներուն ծնողք կամ
աղդական չէք, օրինաց կանոններուն հակառակ
դործ մ'ընել, մինչեւ անգամ եթէ ընտանիքն
ըլլայ ուղողը: Արդարութիւնը ծանր ընթացք
եւ օրինական ձեւեր ունի՝ որոց հպատակիլ
հարկ է: » Անշուշտ, ըսաւ Տաղուպէս, հպատա-
կիլ հարկ է՝ թէ եւ վատ, դաւաճան եւ ապա-
շնորհ ըլլալու վտանգի մէջ դանուխ մարդ . . . :
— Քարտովիլ օրիորդին համար ալ խօսեցանք,
հարցուց Մայէօ: — Այո՛, բայց դարձեալ նոյն
սխառասխանը տուաւ ինձ: Գործը խիստ ծանր
էր. վկայութիւն մը կուտայի, բայց ըսածս
հաստատող ապացոյց մը չունէի: « Նրբորդ մը
ձեզ հաւաստեր է թէ Քարտովիլ օրիորդը կը
պնդէ եղեր որ ինքը խենթ չէ, ըսաւ տե-
սուչը, բայց այդ բաւական չկրնար ըլլալ. ամեն
խելագար ինքզինք խելացի կը կարծէ. ուստի
չեմ կրնար ձեր պարզ վկայութեան վրայ յար-
դի բժշկի մը տունը կոխել: Սակայն ձեր վկա-
յութիւնը կընդունիմ եւ որու որ պէտք է կը
հաղորդեմ: Բայց պէտք է որ օրէնքն իր ընթաց-
քը կատարէ: — Նրբոր պահ մ'առաջ իմ դործս
եւ ինքնին տեսնել կուղէի, միթէ այս ամենը
նախատեսած չէի. եւ սակայն տկարամտու-
թեամբ ականջ կախեցի ձեր խօսքին: — Բայց,
հայր իմ, քու ընելիք փորձդ ալ անհնարին էր
. . . եւ ինքզինքդ խիստ վտանգաւոր հեռուա-
նաց կենթարկէիր, ինչպէս որ դու ալ հասկը-
ցար: — Ըսել է որ, յարեց զօրականն առանց

պատասխանելու որդւոյն ըսածին , դրասպէս ,
հաստատապէս պատասխան տրուեցաւ քեզ թէ
ոչ այս պիշեր եւ ոչ իսկ վաղ առաւօտ աղջիկ-
ներն օրինաւորապէս ձեռք անցունելու յոյս
չպիտի ունենանք : — Ոչ , հայր իմ , ըստ օրի-
նաց՝ սախողական հարկ չկայ , եւ այս խնդիրը
երկու երեք օրէն առաջ չկրնար որոշուիլ : — Ա-
հա ես ալ այդ դիտնալ կուզէի , ըսաւ Տակօ-
պէս ոտքի վրայ ելնելով եւ սենեկին մէջ ճե-
մելով : — Այսու ամենայնիւ , ըսաւ նորէն Ակ-
բիքօյ , սատիկանութեան տեսչին տուած պա-
տասխանը բաւական չսեպեցի : Չայրանալով ,
եւ չկրնալով հաւատալ որ դատատանական
վարչութիւնը կարենայ այսպիսի արդար բողոք-
ներու առջեւ խուլ կենալ , դատատանի պաշ-
տօնատուներ դիմեցի յուսալով թերեւս հոն դա-
տաւոր մը գտնել որ իմ բողոքս մտիկ ընելով
պէտք եղածն անմիջապէս 'ի դործ դնէ : — Է՛ ,
ինչ եղաւ , հարցուց դօրականը կանգ առնելով :
— Ըսին ինձ թէ արքայական օրինապահին առ-
եանն ամեն օր ժամ հինգին կը գոցուի եւ ա-
ռաւօտեան տասնին կը բացուի : Քու յուսահա-
տութիւնդ մտածելով , խեղճ Քարաօվիլ օրի-
որդին կացութիւնը մտածելով , վերջին ջանք
մ'ալ փորձել ուղեցի : Աանոնաւոր դօրաց պա-
հականոց մը մտայ եւ ամեն բան սնունց հրա-
մանատար տեղակալին պատմեցի : Այն աստի-
ճան սիրտս վրդոված էր , եւ այն աստիճան
ջերմութեամբ ու համոզմամբ խօսեցայ , որ տե-

դակալին կարեկցութիւնը շարժեցաւ : « Տեղա-
կալ , ըսի անոր , շնորհ մը միայն ըրէ ինձ . ձեր
ստորակարգեալ պաշտօնակալներէն մէկը երկու
մարդոց հետ վանքը թող երթան , օրինաւորա-
պէս ներս մտնեն , եւ Սիմօն մարաջախափին աղ-
ջիկները տեսնելով հարցունեն թէ վանքը կե-
նալ կուզեն՝ եթէ ոչ հօրս քով գալ , որ դա-
նոնք Ռուսաստանէն բերած է . . . այն ժամա-
մանակ կը տեսնուի թէ հոն արդելափակ ըլլալ-
նին ահամայն է թէ ոչ : » — Ի՞նչ պատասխան
տուաւ քեզ , հարցուց Մայէօ , մինչդեռ Տակօ-
պէտ ուսերը թոթովելով պտոյտը կը շարունա-
կէր : — « Տղան , ըսաւ ինձ , ձեր այդ խնդ-
րածն անհնարին է . ձեր իրաւունքը կը հասկը-
նամ , բայց չեմ կրնար այդպիսի ծանր գործ մը
վրաս առնուլ : Բռնութեամբ վանք մը մտնելը
դիւրին բան չէ , գլխ ծանր պատասխանատու-
ութեան ներքեւ կը ձգէ : — Բայց այն ժամանակ
ի՞նչ ընելու է , պարտն , մարդու խելքին կու-
զայ : — Ճշմարիտն ըսելով , ես ալ չեմ գիտեր .
ամենէն ապահով միջոցն սպասել է » ըսաւ տե-
ղակալը : Այն ժամանակ ես ալ , հայր իմ , խոր-
հելով որ մարդկօրէն ինչ որ հնար էր՝ կատա-
րեր էի , ' դարձայ եկայ՝ յուսալով որ թերեւս
դուն ինձմէ աւելի բաղդաւոր ելեր էիր . գրժ-
բաղդարար այն յոյսս ալ պարապ ելաւ :

Այս ըսելով երիտասարդը յոգնութենէն
պարտասեալ աթոռի մը վրայ ինկաւ : Պահ մը
խոր լռութիւն տիրեց Ակրիքօլի խօսքերէն ետեւ՝

որք այս երեք անձանց վերջին յոյսերը կը վեր-
ճացընէին : Խեղճերն անողոք ճակատագրի մը
հարուածին ներքեւ ընկճեալ անշշուհ մնացեր
էին : Նոր դէպք մ'այս տեսարանին սրտակէզ
դառնութիւնն աւելցուց :



ԳԼՈՒԽ Է.

ԳԻՒՏ

Սենեակին դուռը՝ որ Ակրիքօլ մտցեր էր
դոցել, վախն 'ի վախը բացուեցաւ, եւ Ֆրանս-
սօադ Պօտուէն՝ Տակօպէտի կինը՝ սեմին վրայ
տեանուեցաւ դժգոյն նուաղեալ եւ ինքդիներ
հազիւ բռնելու կարող : Զօրականը՝ Ակրիքօլ
եւ Մայէօ այն աստիճան տխուր սրտաբեկու-
թեան մէջ ինկած էին, որ մէկն ալ չկրցաւ
առջի բերան նշմարել Ֆրանսօադի ներս մտնե-
լը : Իսկ Ֆրանսօադ հազիւ երկու քայլ առնե-
լով ծունդի վրայ ինկաւ, ձեռուրները իրար կը-
ցած, եւ խոնարհ ու տկար ձայնիւ մ'ըսաւ .
« Խեղճ այրս, ներէ ինձ : »

Ակրիքօլ եւ Մայէօ՝ որ կրնականին դրանը
դարձուցած էին, այս ձայնը լսելնուն պէս՝ ե-
տեւնին դարձան . Տակօպէտ ալ գլուխը վեր ա-
ռաւ :

« Մայր իմ, գոչեց Ակրիքօլ Ֆրանսօադի քով
վազելով : — Ահնա, գոչեց Տակօպէտ ալ ստի-
թան : »

վրայ ելնելով եւ քայլ մը դէպ 'ի տարարազդ
կինն երթալով . — Բարի մայրս . . . դուն այդ-
պէս ծուռկի վրայ իյննա , ըսաւ Ակրիքօլ ծուռ-
լով եւ գորովանօք անոր փաթթուելով . եւ
կանգնէ : — Ոչ , դաւակա , ըսաւ Ֆրանսօադ քաղ-
ցրր եւ միանգամայն անյողդողդ ձայնիւ , չպի-
տի ելնեմ մինչեւ որ հայրդ հներէ ինձ . . . վա-
սըն դի շատ յանցաւոր եմ անոր առջեւ . . .
հիմա գիտեմ : — Ներե՛լ քեզ , խեղճ կին , ըսաւ
գօրականն յուղեալ սրտիւ անոր մօտենալով ,
միթէ ես քեզ երբէք ամբաստանանձ եմ , 'ի բաց
առեալ այն առաջին յուսահատական շարժումը՝
գոր ըրի քեզ դէմ : Ոչ , ոչ , ես չար քահանայ-
ները միայն ամբաստանեցի եւ իրաւունք ունէի :
Վերջապէս , ահա եկար , աւելցուց օգնելով
որդւոյն որ Ֆրանսօադը ոտքի վրայ հանեն . վիշ-
տերնուս մէկը պակսեցաւ : Ուրեմն թող տուին
քեզ : Նրէկ դեռ չէի կրցեր ո՛ւր բանտարկուած
ըլլալդ խմանալ : Այնչափ տազնապի մէջ եմ որ
քու ետեւէդ պտրտելու ժամանակ չունեցայ :
Նստէ նայինք , սիրելի կինս : — Բարի մայրս ,
այդ որչափ տկարացեր ես , որչափ մտեր եւ
որչափ դեղներ ես , ըսաւ Ակրիքօլ անձկու-
թեամբ եւ աչքն արտասուօք լցուած : — Ին-
չո՛ւ լուր մը չղրկեցիր մեզ , յաւելցուց երիտա-
սարդը , որպէս զի դայինք քեզ դանէինք . . . :
Բայց որչափ կը դողաս , սիրելի մայր իմ , ձեռ-
քերդ սառ կտրած են , յարեց երիտասարդը
Ֆրանսօադի առջեւ ծուռը դրած : Յետոյ Մա-

յէօի դառնալով . « Ար խնդրեմ քիչ մը կրակ
վառէ շուտով , ըսաւ : — Հայրդ եկած ժամա-
նակ մտքէս անցաւ , բայց ոչ փայտ կայ , ոչ
ածուխ : — Աւրեմն կաղաչեմ , բարի Մայէօս ,
վար իջիր ու հայր Առիօէն փոխ առ . ան բա-
րեմիտ մարդ մ'է , չտալիք չընել . խեղճ մայրս
կրնայ հիւանդանալ . նայէ ինչպէս կը դողայ : »

Հաղիւ այս խօսքն Ակրիքօլի բերնէն ելեր
էր՝ Մայէօ աներեւոյթ եղաւ : Արիտասարդը ոտ-
քի վրայ ելաւ , դնաց անկողնին վերմակն ա-
ռաւ ու բերաւ մօրը ծունդերուն ու ոտքերուն
փաթթեց . յետոյ նորէն առջևը ծունդի վրայ
դալով ըսաւ . « Չեռուրներդ , սիրելի մայր իմ : »

Աւ մօրը տկար ձեռուրներն իր ձեռաց մէջ
առնլով շնչովը տաքցընել ջանաց : Խիստ սրբ-
տաշարժ տեսարան մ'էր արդարեւ այս կորովի
խիղախ բայց պաշտելի գորովով լցուած արիա-
դէմ երիտասարդին՝ իր խեղճ դժգոյն եւ դողա-
հար ծերունի մօրկանը ցոյց տուած ամենափա-
փուկ ուշադրութիւնները տեսնել :

Տակօպէս՝ որ բարեարտութեան մասին որ-
դիէն վար չէր մնար , դնաց բարձ մ' առաւ եւ
կնոջը բերելով ըսաւ . « Քիչ մը դէպ առաջ
ծռէ , սա բարձն կտեւդ դնեմ , որպէս զի հան-
գիստ ըլլաս եւ քեզ տաքցընէ : — Այդպէս ընե-
լով երկուքդ ալ զիս դիտէ կը հանէք , ըսաւ
Տրանսօսող բռնի ժպիտով մը . մանաւանդ դուն ,
ըսաւ էրկանը , քեզ հասուցած այնչափ մնա-
սէս կտեւ ինչպէս ես . եւ իր մէկ ձեռքը որդ-

ւոյն ձեռաց մէջէն հասնելով զօրականին՝ ձեռքը բռնեց, եւ արտասուալից աշուրներն անոր վրայ կրթնցուց. յետոյ ցած ձայնով ըսաւ. «Բանտին մէջ շատ զղջացի ըրածիս վրայ . . . » :

Ակրիքօլի սիրտը կը մորմոքէր խորհելով որ իր մայրը, այն բարի առաքինի եւ հրեշտակային վարուք կինը, բանտին մէջ անշուշտ չարագործ եւ վատանուն կանանց հետ խառնուեր էր. ուստի քիչ մնաց որ այս կակծալի պարագան յիշելով զայն մխիթարելու պիտի ջանար. բայց իսկոյն խորհելով որ այս բանը Տակօպէտի սրտին նոր վէրք մը պիտի տար, լուց եւ խօսքը դարձուց. «Պարբիէլ ինչպէս է, սիրելի մայրիկ, ըսաւ, որովհետեւ զինքը տեսեր ես, լուր տուր մեզ այդ բարի եղբօրս վրայ : — Փարիզ հասնելէն 'ի վեր, ըսաւ Պրանսօսազ աչքը սրբելով, առանձնութեան մէջ է. մեծաւորներն արգիլեր են իրեն դուրս ելնել : Բայց բարերազգարար ինձ հետ տեսնուիլը չէին արգիլած. իր խօսքերն ու խրատներն աչքս բացին. հասկըցուց ինձ թէ առանց գիտնալու ծանր վիշտ հասուցեր եմ քեզ, խեղճ այրս : — Ի՞նչ ըսել կուզես, հարցուց Տակօպէտ : — Ի՞նչ պիտի ըսեմ. անշուշտ քու միտքդ ալ կը վկայէ որ քեզ հասուցած վիշտս չարամտութեամբ չէր. Բու յուսահատական տագնապդ տեսնելով իմ սիրտս ալ նոյնչափ կը ճմլէր, բայց չէի համարձակիր ըսել քեզ՝ վախճալով որ երգմանս դէմ գործած կրլլամ : Արդու մս պիտոյ բռնել կուզէի՝

կարծելով թէ ըրածս բարեգործութիւնս էր ,
պարտականութիւնս էր : Սակայն ներսէս բան
մ'իմաց կուտար ինձ որ իմ պարտականութիւնս
քեզ այնպէս զշտացընել չէր : « Աւանդ , Աստ-
ուած իմ , լուսաւորէ զիս , կ'աղաղակէի բան-
պիս մէջ ծունր դնելով ու աղօթելով , առանց
հոն գտնուող ուրիշ բանտարկեալ կանանց ծաղ-
րածութիւնները մտիկ ընելու : Դնչու համար ,
կըսէի ես ինձ , իմ խոտովանահօրս պէս ամե-
նապատկառելի մարդէ մ'ինձ հրամայուած ար-
դար եւ աւրբ գործ մ'այսչափ դժնդակ վիշ-
տերով զիս ու իմիններս կընկճէ . ողորմէ ինձ ,
բարեբար Աստուած , ներչնչէ զիս , եթէ աղա-
մայ սխալ մը գործեցի , իմացու ինձ . . . » :

Այս ջերմեռանդ աղօթքս Աստուած լսեց .
միտքս ձգեց որ Քարբիէլին երթամ : « Փոհանամ
զքէն , Աստուած իմ , ըսի , կը հնազանդիմ քեզ .
Քարբիէլ իմ դաւակա ըսել է , միանգամայն քա-
հանայ է . . . սրբակրօն մարտիրոս մ'է : Եթէ
աշխարհի վրայ մէկը կայ որ սիրոյ եւ դժու-
թեան կողմանէ երկնաւոր Փրկչին նմանի՝ Քար-
բիէլն է : Երբոր բանտէն ելնեմ , կերթամ անոր
խորհուրդ կը հարցընեմ , եւ անս ալ իմ տարա-
կոյսս կը լուծէ : — Իրաւունք ունիս , սիրելի
մայր , դոչեց Ակրիքօլ . այդ խորհուրդն Աստ-
ուած աղղեր է քեզ . . . Քարբիէլ . . . մարմ-
նեղէն հրեշտակ մ'է . . . աշխարհի ամենէն
մաքուր արի եւ ազնիւ անձն է . ճշմարիտ
քահանայի , բարի քահանայի տիպարն է : — Ահ ,

խեղճ կին , ըսաւ Տակօպէս դառնութեամբ , ե-
թէ Գաբրիէլէն դատ ուրիշ խոստովանահայր
չունենայիր . . . : — Այդ իմ մտքէս ալ անցեր
էր դուրս երթալէն առաջ , ըսաւ Ֆրանսօսադ
պարդութեամբ . որչափ քաղցր պիտի ըլլար ինձ
խոստովանիլ այդ սիրելի տղուն . բայց վախցայ
որ Տիւպօս արբան կը սրդողցընեմ , եւ Գաբ-
րիէլ ալ չափազանց ներողամտութեամբ կը դա-
տէ իմ մեղքերս : — Քու մեղքերդ որն են , սի-
րելի խեղճ մայրիկ , դու մեղք գործած ունիս :
— Գաբրիէլ ինչ ըսաւ քեզ , հարցուց զօրակա-
նը : — Աւանդ , սիրելիս , մեծ ցաւ եղած է ինձ
թէ ինչո՞ւ համար այս տեսակցութիւնն առաջ
չըրի իրեն հետ : Տիւպօս արբային վրայ տուած
տեղեկութիւններս իր կասկածն արթնցուցին ,
եւ այն ժամանակ այս սիրելի դաւակը դանա-
դան բաներ հարցուց ինձ , որոց վրայ մինչեւ
ցարդ բնաւ խօսք բացած չէր : Սիրտս բո-
վանդակապէս բացի անոր . ան ալ իրենը բա-
ցաւ ինձ , եւ տխուր գիւտեր ըրինք այնպիսի
անձանց վրայ՝ զորս միշտ պատուական եւ ա-
ռաքինի մարդիկ ճանչած էինք , բայց մեզ խա-
բած էին իրարմէ ծածուկ : — Ի՞նչպէս : — Այո ,
իմ բերնէս գաղտնաբար սուտ բաներ կըսեն ե-
ղեր անոր . ինձ ալ անոր բերնէն կըսէին , պատ-
ուիրելով որ մէկու մը չյայտնեմ . . . : Խոս-
տովանեցաւ ինձ թէ ինք նախ քահանայ ըլլա-
լու յօժարութիւն չունի եղեր . բայց հաւտա-
ցուցեր են իրեն , որ ես թէ այս եւ թէ հան-

դերձեալ կենաց մէջ իմ փրկութեանս վրայ հա-
ւաստի ըլլալու համար կը փափաքիմ եղեր որ
ինք քահանայ ըլլայ, վասն զի այնպէս համող-
ուած եմ եղեր թէ Աստուած զիս պիտի վար-
ձատրէր այնպիսի ընտիր պաշտօնեայ մ'իրեն
տուած ըլլալու համար. եւ թէ ես որչափ որ
զինքը փողոցէն որք գտեր եւ չարաչար աշխա-
տելով ու ինքզինքս գրկելով զաւկիս պէս մեծ-
ցուցեր եմ, բայց եւ այնպէս այսպիսի հնա-
զանդութեան եւ սիրոյ փորձ մ'իրենս առաջար-
կելու չեմ համարձակիր եղեր . . . : Խեղճ տը-
ղան այս սուտերուն հաւտալով, իմ սրտիս ջերմ
բաղձանքը կատարելու համար իր անձը զոհեր,
կղերանոցը մտեր է: — Բայց այդ քահանայնե-
րուն ըրածը սոսկալի բան է, ըսաւ Ակրիքօլ,
նողկալի ստախօսութիւն մ'է, սրբապիղծ խար-
դախութիւն մ'է: — Նոյն միջոցին, շարունա-
կեց Ֆրանսօսող, ինձ ալ ուրիշ բերան մը կը
գործածէին. կըսէին թէ Վաբրիէլ քահանայ ըլ-
լալու փափաք ունի, բայց ինձ յայտնելու չհա-
մարձակիր՝ վախնալով որ Ակրիքօլի պատճառաւ
կը նախանձիմ. վասն Ակրիքօլ գործաւոր մնա-
լով չպիտի կրնար երբէք վայելել այն մեծ օ-
գուտները՝ որ Վաբրիէլ կրնար քահանայութեամբ
ձեռք բերել: Ուստի երբոր խեղճ տղան կղե-
րանոց մտնելու հրաման խնդրեց ինձմէ (թէ
եւ ակամայ՝ բայց զիս երջանիկ ընելու կարծ-
եօք), փոխանակ իր միտքը դարձրնելու, ընդ
հակառակն՝ իր այս գիտաւորութիւնն 'ի գործ

զնելու յորդորեցի հաւատելով թէ շատ աղէկ
կընէր, եւ թէ մեծ ուրախութիւն կը պատճա-
ռէր ինձ . . . : Յայտնի է որ ասոնք չափա-
զանցութիւն էին . բայց ի՞նչ ընեմ, կը վախ-
նայի որ չըլլայ թէ Ակրիքօլի համար նախանշ-
ձելու կատկած ընէ վրաս . — Ի՞նչ նողկալի մե-
քենայութիւն, ըսաւ Ակրիքօլ ապշելով, ձեր
փոխադարձ անձնուիրութիւնն իրենց վատ խար-
դախութեանց դործիք ըրեր են . ըսել է որ Գար-
րիէլ՝ այդ դրեթէ բռնի տուած քաջալերու-
թիւններդ սրտիդ՝ ամենաքաղցր բաղձանքը կար-
ծեր է : — Սակայն Գարրիէլ ամենաբարի սիրտ
մ'ունենալուն համար, քիչ քիչ եկեղեցակա-
նութեան տրամադրութիւն վրան եկաւ . եւ այս
ալ խիստ պարզ էր . վշտակրեալները մխիթա-
րել, դժբաղդներուն անձնուէր լլլալ . այս եր-
կու բանին համար ծնած էր . ուստի եթէ այս
առաւօտեան խօսակցութիւնը մէջերնիս չբաց-
ուէր, անցեալին վրայ երբէք խօսք չպիտի ը-
նէր : Աերջապէս այն միշտ քաղցրաբարոյ եւ
միշտ հեզ Գարրիէլը բարկացաւ, սրտմտեցաւ,
մանաւանդ Պ. Ռօտէնի եւ ուրիշ անձի մը դէմ . . . :
« Սրդէն, ըսաւ, ծանր գանդատի պատճառ-
ներ ունէի անոնց դէմ, բայց այս երեւան ե-
լած դործերը չափն անցուցին : »

Տակօպէս՝ Ֆրանսօազի վերջին խօսքերը
լսածին պէս շարժում մ'ըրաւ, եւ ձեռքը ճակ-
տին տանելով՝ յիշողութիւնն ամփոփել սկսաւ .
Բանի մը վայրկեանէ՛լ վեր խոր դարմացմամբ

ևւ դրեթէ սոսկմամբ մտիկ կընէր այս սառ-
րերկրեայ չարահնար մեքենայութեանց եւ ճար-
տարարութեան խարէութեանց պատմութիւնը :

Ճրանսօաղ շարունակեց . « Աերջապէս ,
երբոր խոստովանեցայ Գաբրիէլի թէ զիս խոս-
տովանցընող Տիւպօա Աբբային խորհրդոցն ան-
սալով՝ էրկանս աւանդուած աղայքը . . . Սիմօն
դօրապետին աղջիկներն . . . անծանօթ կնոջ մը
յանձնեցի , սիրուն տղան , աւանդ , ցաւելով զիս
մեղադրեց , ոչ թէ մեր սուրբ կրօնին քաղց-
րութիւններն այն խեղճ որբերուն ճանչցընել
տալ ուղելուս՝ այլ էրկանս չիմացընելուս հա-
մար , որ միայն պատասխանատու էր Աստու-
ծոյ եւ մարդկան առջեւ՝ իրեն յանձնուած ա-
ւանդին . . . Գաբրիէլ խստիւ կշտամբեց նա-
եւ Տիւպօա արբային վարմունքը , որ չար եւ
նենգաւոր խրատներ տուեր էր ինձ , ըսաւ .
յետոյ իր հրեշտակային քաղցրութեամբը
զիս մխիթարելով յորդորեց որ դամ ամեն բան
քեզ յայտնեմ , խեղճ այրս : Ինքն ալ կուղէր
հետս դալ , վասն զի քեզ ըրած անիրաւու-
թեանս վրայ այն աստիճան վշտացած էի որ
տուն դառնալու չէի համարձակեր . բայց դըժ-
բաղդաբար իր մեծաւորներուն հրամանաւ կղե-
րանոցին մէջ արդիլեալ ըլլալուն՝ չկրցաւ հետս
գալ եւ . . . »

Տակօպէն մէկէն իր կնոջը խօսքը կտրեց .
ծերունի դօրականը մեծ վրդովման մէջ կերեւէր .
« Բան մը պիտի հարցընեմ քեզ , Ճրանսօ :

անց, ըսաւ, վասն զի այսչափ հոգերու եւ այսչափ սեւ ու սառանայական դարանադործութեանց մէջ մարդուն միտքն ալ կը յնորի խելքն ալ . . . : Արբերուն անյայտ եղած օրն ըսիր ինձ թէ Գաբրիէլը փողոցէն առած ժամանակդ պարանոցը պղինձ միտալ մը կար եւ ծոցն ալ օտար լեզուով գրուած թուղթերու ծրար մը : — Այո՛ . . . սիրելիս : — Այն թուղթերն ու միտալները խոստովանահօրդ տուիր, այնպէս չէ : — Այո՛, սիրելիս : — Գաբրիէլ այդ միտալին ու թուղթերուն վրայ երբէք խօսք մը բացած է քեզ : — Այ : »

Ակրիքօլ՝ մօրն այս յայտարարութիւնը լսած ժամանակ զարմացմամբ երեսը կը նայէր . մէկէն դոչեց . « Աւրեմն Գաբրիէլ ալ Սիմօն զօրապետին աղջկանց եւ Քարաօվիլ օրիորդին պէս պարտաւորեալ է վաղը Սէն-Յրանսօս փողոցը գանուելու : — Անտարակոյս, ըսաւ Տակօպէս . կը յիշեա հիմա որ իմ եկած ժամանակս ըսաւ մեզ թէ քանի մ' օրէն մեր օգնականութեան պէտք պիտի ունենայ ծանր պարագայի մը համար : — Այո՛, կը յիշեմ, հայր իմ : — Հիմա զինքը կղերանոցին մէջ բանտարկեալ կը պահեն : Մօրդ ալ ըսեր է թէ իր մեծաւորներուն դէմ դանդառի պատճառներ ունի : Մեր օգնականութիւնը խնդրած ժամանակ, կը յիշեա, դէմքն այնչափ տխուր եւ ծանր էր, որ ես ալ ըսի իրեն . . . — Թէ մահուամբ վերջանալիք մենամարտութեան մը համար առկէց ուրիշ կերպով

չէր կրնար խօսուիլ, ըսիք, յարեց Սկրիքօյ՝ Տա-
կօպէսի խօսքը կարելով: Ճշմարիտ է, եւ առ-
կայն դու որ քաջասիրտ մարդիկը լաւ կրնաս
ճանչել, վկայեցիր որ Գաբրիէլի քաջութիւնը
քու կինէդ վար չմնար: Ուստի կերեւի թէ վը-
տանդը շատ մեծ ըլլալու է որ իր մեծաւորնե-
րէն այսչափ կը վախնայ: — Հիմա որ մօրդ յայ-
տարարութիւնները լսեցի, ամեն բան կը հաս-
կընամ, ըսաւ Տակօպէս: Գաբրիէլ ալ Ռօզին
ու Պանչին պէս, Քարտօլի օրիորդին պէս,
մօրդ պէս, թերեւս մեզ պէս՝ չար քահանայ-
ներու գաղտնի մեքենայութեանց գոհ եղած է:
Ուստի այս ժամուս որ անոնց խաւարային հը-
նարքները, դժօխային յարատեւութիւնը հաս-
կըցայ, կը տեսնեմ որ, յաւելցուց դօրականը
ցած ձայնիւ, հետերնին մաքառելու համար
չատ դօրաւոր ըլլալ պէտք է . . . : Ճշմարիտն
ըսելով, ես անոնց դօրութեան վրայ այսչափ
գաղտնիար չուէի: — Իրաւունք ունիս, հայր
իմ, վասն զի ինչպէս որ Գաբրիէլի նման բարի ու
գթած մարդիկ բարեգործութիւն կընեն, այն-
պէս ալ չարերն ու կեղծաւորները չարագոր-
ծութիւն կընեն: Չար քահանայէ մ'աւելի ոխե-
րիմ թշնամի չկրնար ըլլալ: — Կը հաւատամ ք-
ամօրդ եւ այդ բանը զիս շատ կը վախճընէ,
վասն զի վերջապէս խեղճ տղայքս անոնց ձեռքն
են: Բայց կրնանք առանց մաքառելու անոնց
ձեռքը թողուլ . . . ամեն յոյս կորած է . . .
նէ, ոչ, ոչ, տկարամտութիւն պէտք չէ: Եւ

սակայն քանի որ մայրդ այս սատանայական
դարանագործութիւնները յայանեց, կարծես թէ
անջի ու ժս, անջի անվեհերութիւնս չմնաց. մեր
բոլորովի քը լարուած որոգայթները սարսափելի
կը թուին ինձ: Այս տղայոց վերցուիլ տարուիչն
առանձին բան չէ. այլ մեզ շրջապատող եւ ըս-
տանացող ընդարձակ դաւադրութեան մը մէկ
ճիւղն է: Կը թուի ինձ թէ ես ու սիրելիներս
դիչերուան մութին մէջ կը խարխափինք՝ օձե-
րէ թշնամիներէ եւ որոգայթներէ շրջապատ-
եալ, դորս ոչ կրնանք տեսնել եւ ոչ հետերնին
կռուիլ: Աերջապէս, ի՞նչ ըսեմ . . . ես՝ որ
երբէք վախցած չեմ մեռնելէ . . . վատ չեմ . . .
կը խոստովանիմ հիմա, այն, կը խոստովանիմ
որ այդ սեւագդեատ մարդիկը դիս կը վախցը-
նեն . . . այն . . . կը վախնամ այդ մարդոցմէն:»
Տակօպէս այս խօսքերն այնչափ անկեղծ
կերպով արտասանեց, որ Ակրիքօլ ցնցուեցաւ,
վասն դի նա ալ մի եւ նոյն տալաւորութիւնը կը
կրէր: Եւ հարկաւ այսպէս պիտի ըլլար. յայտնի
եւ արեւի լուսով դործելու եւ մարտնչելու վար-
ժուած անկեղծ արի եւ անվեհեր բնաւորու-
թեան տէր մարդիկը մէկ բան մը միայն կը վախ-
ցընէ, այն է՝ մութի մէջ անըմբռնելի թշնամի-
ներէ յանկարծ կաշկանդուելով դարնուիլ: Տա-
կօպէս քսան անգամ մահուան դիմադրաւեր էր.
եւ սակայն՝ երբոր իր կնոջը սլարգմտաբար նը-
կարագրած դաւաճանութեանց նենդութեանց
ատու թեանց եւ խարդախութեանց տխուր հիւս-

քը տեսաւ, տարտամ երկիւղ մ'եկաւ իր վրայ .
եւ թէ պէտ վանքին դէմ խորհած զիշերային
ձեռնարկութենէն ետ կենալու միտք չունէր,
բայց դորձն հիմա առաւել ճախող եւ առաւել
վասնդաւոր կերեւէր իրեն:

Քանի մը վայրկենէ 'ի վեր տիրած լռութիւ-
նը Մայէօի վերադարձովն ընդ միջեցաւ: Աղջիկը
գիտնալով որ Տակօպէոի Ֆրանսօսադի եւ Ակրի-
քօլի խօսակցութիւնները սլէտք չէր օտար մար-
դոցմէ լսուէին, մեղմով մը դուռը դարկաւ եւ
հայր Վօռիօի հետ դուրսն սպասեց:

Արնամք ներս մտնել, տիկինն Ֆրանսօսադ,
ըսաւ դորձաւորուհին, հայր Վօռիօ փայտ բե-
րած է ձեզ: — Այո, այո, մտիր, բարի Մայէօս,
ըսաւ Ակրիքօլ, մինչդեռ հայրը ճակտէն վա-
զած պաղ քրտինքը կը սրբէր:

Դուռը բացուեցաւ եւ պատուարժան ներ-
կարարը տեսնուեցաւ, որուն ձեռքն ու բազուկ-
ներն այս անգամ անուշ կապուտով ներկուած
էին. մէկ ձեռքով զամբիւղ մը լի փայտ բռնած
էր, միւսովն ալ կտոր մը կրակ բերած էր թիա-
կի մը վրայ:

« Բարի իրիկունն ձեզ, ըսաւ հայր Վօռիօ,
չնորհակալ եմ որ զիս մտքերնիդ բերիք, տի-
կինն Ֆրանսօսադ. գիտնաք որ իմ խանութս եւ
մէջի բոլոր բաները ձեզ համար պատրաստ են: . . .
Պրացութեան մէջ մէկմէկու օգնելը պարտք է:
Արյունսամ որ ժամանակաւ դուք ալ բաւական
խնամք ցուցըցած էք իմ հանդուցեալ կնոջս: »

Պատուարժան ներկարարը՝ փայտը սենեակին մէկ անկիւնը դնելով, եւ թիակով կրակն Ակրիքօլի տալով, սենեակին մէջ դանուողներուն արտում եւ մտահոգ դէմքէն հասկըցաւ որ իր հոն երկար կենայն անպատշաճ էր . ուստի հարցուց . «Ուրիշ բանի մը պէտք ունի՞ք, տիկին Ֆրանսօաղ : — Շնորհակալ եմ, հայր Լօնիօ, շնորհակալ եմ : — Ուրեմն գիշեր բարի ձեզ . . . :

Յետոյ Մայէօի դառնալով՝ աւելցուց . «Պ. Տակօպէսի եկած նամակը չմտնաք իրեն տալ . . . իմ ձեռքս ներկոտ ըլլալուն համար չհամարձակեցայ բռնելու : Գիշեր բարի ձեզ . . . : » Եւ դուրս ելաւ :

« Պ. Տակօպէս, ահաւասիկ նամակը » ըսաւ Մայէօ, եւ ինք կրակ վառելու դրաղեցաւ : Ակրիքօլ ալ մօրը հին թիկնաթոռը վառարանին մօտեցուց :

« Նայէ, տղաս, ի՞նչ նամակ է, ըսաւ Տակօպէս որդւոյն, գլուխս այնչափ յոգնած է, որ աչքս հազիւ կը զօրէ »

Ակրիքօլ նամակը բանալով տեսաւ որ քանի մը տող միայն կը պարունակէր, եւ առանց ըստորագրութեանը նայելու՝ կարդաց .

« Ծովու վրայ, 25 դեկտ. 1831 »

« Ապղեմի դինուորակիցք իմ .

« Եւրոպա գացող նաւու մը հանդիպելով, » քանի մը վայրկեան անոր հետ հաղորդակցելէ

» օգուտ կը քաղեմ շտապաւ այս քանի մը տո-
 » դերը քեզ գրելու , որ կը յուսամ թէ Հընդ-
 » կաստանէն գրած վերջին նամակներէս առաջ
 » ձեռքդ կը հասնին Հավոէն . . . : Գուն հիմա
 » անշուշտ Փարիզ հասած ես կնոջս ու զաւակիս
 » հետ . . . ըսէ անոնց . . .
 « Բայց ժամանակ չկայ . . . մակոյկը կեր-
 » թայ . . . մէկ խօսք մ'ըսեմ արատրնօք . . .
 » ես Գաղղիա կուգամ . . . փետրվար 13ը մի-
 » մտնար . . . կնոջս եւ զաւակիս ապագան ան-
 » կէ կախեալ է . . . : »
 « Աղջ կեցիր , սիրելիս , յաւիտեան շնորհա-
 » կալ եմ :

ՍԻՄՕՆ

« Ակրիքօլ . . . հայրդ . . . շուտ ըրէ »
 գոչեց Մայէօ : Տակոպէս՝ նամակին առջի խօս-
 քերը լսելուն պէս՝ որոց դժնդակ դիպողութիւն
 մը կուտային ներկայ պարագաները , երեսին
 գոյնը փոխուեր էր . . . : Սրտին շարժումը յող-
 նութիւնն ու սպառումն այս վերջին հարուածին
 հետ միանալով զինքը նուազեցուցին , եւ ըս-
 կըսաւ դողդոջելի խոսքով յիշեալ յոգնիմ
 « Սրտին քովը վաղելով վայրկեան մը զայն
 թեւերուն մէջ բռնեց . բայց շատ չանցաւ այս
 վայրկենական սկարութիւնը փարատեցաւ : Տա-
 կօպէս ձեռքը ճակտին տարաւ , իր յաղթ մէջ-
 քը շտկեց , աչուրները փայլիլ սկսաւ , իր խիստ
 դէմքը խիզախ երեւոյթ մ'առաւ , եւ վայրագ
 զայրութով մը գոչեց . « Աչ , ոչ , ես դաւաճան

չեմ ըլլար : վատ չեմ ըլլար : սեւ վերարկուներն
այլ եւս չեն վախոյրներ զիս , այս գիշեր Միսօն-
եան Ռօզն ու Պլանչի պիտի ազատին : »

ԳԼՈՒԽ Ը.

ՊԱՏԺԱԿԱՆ ՕՐԷՆՔ

Տակօպէս՝ սեւ վերարկուներուն (ինչպէս
որ կրէր) իր սիրելեաց գէմ անընդհատ 'ի գործ
դրած խաւարային եւ ստորերկրեաց վտանգա-
ւոր մեքենայութիւններէն պահ մը վախնալով
վարաներ էր Ռօզի ու Պլանչի ազատութեան
համար երկնած խորհուրդը փորձելու : բայց
Միսօն մարաջախտին նամակը կարգացուելուն
պէս , որ իր նուիրական պարտականութիւնը
կը յիշեցընէր , վարանումը դադրեցաւ : Զօրա-
կանին վայրկենական սրտաբեկութեան տեղ
հանդարտ եւ կրնանք ըսել խոհուն հաստատա-
մբտութիւն մ' եւ անվեհեր կամք մը յաջորդեց :
« Ակրիքօլ , ժամը քանին է , հարցուց որդ-
ւոյն . — Հիմա ինն զարկաւ , հայր իմ : — Շու-
տով երկաթէ կեռ մը շինէ ինձ . . . որ իմ ծան-
րութիւնս վերցընելու չափ ամուր եւ պատի մը
կատարին յարմարելու չափ բայ ըլլայ : Այս ձոյլ
երկաթէ վառարանը կրնայ քեզ դարբնոց եւ
միանգամայն սալ ըլլալ . տանը մէջէն կռան մը
պտի . . . երկաթն ալ , ըսաւ զօրականը վա-

բաներով եւ չորս կողմը նայելով . . . երկաթն
ալ . . . ահա դուայ . . . : »

Այս բանով Տակօպէս վառարանին քովէն
հաստ ունելի մ'առաւ , որդւոյն առաւ եւ ա-
ւելցուց . « Յն , շուտ բրէ , տղան , կրակն ա-
ղէկ մ'արծարծէ , եւ այն երկաթը ճերմկնալու-
սատիճան տաքցընելով կեռ մը դարբնէ
ինձ . . . : »

Չրանսօսող եւ Ակրիքօլ դարմացմամբ իրա-
քու երես նայեցան . երկաթադործը տեղեկու-
թիւն չունենալով հօրը դիտաւ որո՞թեւէն եւ
արդէն Մայէօի օգնութեամբ սկսած պատրաս-
տութիւններէն , ապշեցաւ . « Ինչպէս ասկէ զոս
մեզ » . « Չեւ լսեր բաժն , Ակրիքօլ կրկնեց Տա-
կօպէս ունելին ճեռքը բռնած , հիմա շուտով
կեռ մը պիտի դարբնես ինձ ասով . . . : » Ահա
մեր հայր իմ . . . ինչ ընելու համար :
— Հոս պարան մ'ունիմ' անար անցունելու հա-
մար . . . ճայրք բաւական լայն օղակ մը շինէ . որ-
պէս զի պարանն անար մէջ անցունելով ամուր
մը կանարեմ : — Բայց ինչ պիտի ընես այդ պա-
րանն ու կեռը : — Անորին պատէն վեր ելնել-
ու պիտի դարձածեմ' եթէ ճիւղամ դռնէ մը
ներս մտնել : — Ա՞ր Վանքին , հարցաւ Չրան-
սօսող իր որդւոյն : — Ի՞նչ կրակք , հայր իմ ,
դու չեց' երկատաարդը մէկին տաքի վրայ ելնելով ,
տակաւին . . . այդ կր մտածես : — Հոսպ ինչ
կուղեւ որ մտածեմ : — Բայց հայր իմ . . . այդ
անհարկ բան է . . . այդ պիտի ճիւղարկութիւն

մը պէտք չէ փորձել : — Յայն ինչ կայ , դա-
 ւանկս , հարցուց Յրանասող սրտատանջութեամբ ,
 ուր պիտի երթայ հայրդ : — Այս զէ որ այս գի-
 շեր երթայ Սիմօն մարաջախտին աղջկանց փակ-
 աւած վանքը մտնէ եւ աղջիկները վերցնէ քե-
 ռէ : — Տէր ողորմեա . . . այդ արքայադու-
 թիւնէ . . . խեղճ այրս յ գոչեց Յրանասող
 միշտ հաւատարիմ իր բարեպաշտական աւան-
 դութեանց . եւ ձեռքերն իրար կցելով շարժու-
 մ'ըբաւ , որպէս զի սարքի վրայ ելնէ եւ Տա-
 կօպէոյի մօտեցայ :

Չօրականն զգալով որ ամեն տեսակ դիտո-
 դութիւն ու թախանձանք պիտի տեղան իր
 վրայ , եւ հաստատութեամբ սրտած ըլլալով
 որ մտիկ չընէ , մէկէն 'ի մէկ առաջքն առնու-
 եւ թանկադին ժամանակ մը չկորսնցընելու հա-
 մար՝ ծանր եւ խիստ դէմք մ'առաւ , որով իր
 դիտանորութեան անդրդուելի հաստատութիւ-
 նը կը հասկըցընէր : Մտիկ ըրէ , կինս , եւ դու ,
 տղան , ըսաւ . երբոր իմ տարիքս ունեցող մարդ
 մը միտքը բան մը կը գնէ , պատճառը գիտէ .
 եւ անդամ մը միտքը գնելէ ետեւ՝ ոչ կին եւ
 ոչ տաւակ չեն կրնար դաշն արդելուլ . . . ինչ
 որ պիտի ընէ կրնէ . . . : Ես ալ այսպէս միտքս
 դրած եմ : Աւտի պարտապ տեղը մի աշխատիք ,
 ինչ որ քեզ՝ ականջս մտնելիք չունի . . . Չեր
 պարտքն էր այդպէս ըսել ինձ . շատ աղէկ . եւ
 այդ պարտքը կատարելիք . ալ խօսքը չընենք :
 Այս իրիկունն ես կուզեմ իշխել տանս մէջ . . . :

Տրանսօսող վախճանալու վհամարձակեցաւ
խօսք մ'ըսել, բայց աղերսաւոր աչքով մը որդ-
ւոյն նայեցաւ :

« Հայր իմ, ըսաւ որդին, խօսք մ'ալ ըսեմ,
միայն մէկ խօսք մը : — Տեսնե՞նք խօսքդ, յա-
բեց Տակօպէս անհամբերութեամբ : — Քու որոշ-
մանդ դէմ կենալ չեմ ուզեր . բայց ներէ որ
հասկըցընեմ քեզ թէ չես գիտեր ինչ գէշու-
թիւն պիտի բերես գլխուդ . . . : — Ես ամեն
բան գիտեմ, ըսաւ դօրականը խստութեամբ .
ընելիք դործս ծանր բան է . . . բայց չըսուի
թէ տուած խոստումս կատարելու համար որ
եւ է միջոց պակաս թողուցի : — Հայր իմ, նո-
րէն կըրտեմ, գգոյշ կեցիր . . . չես գիտեր ինչ
մեծ վտանգի մէջ կը ձգես ինքզինքդ, ըսաւ ե-
րիտասարդը խռովեալ դէմքով մը : — Օ՛ն, խօ-
սինք վտանգին, դռնապանի հրադանին եւ պար-
տիզպանի մանդաղին վրայ, ըսաւ Տակօպէս
արհամարհոտ կերպիւ մ'ուսերը թոթվելով . խօ-
սինք եւ լմնայ . . . : Այսուհետեւ ինչ պի-
տի ըլլայ . ենթադրենք թէ վանքին մէջ սպան-
նուեցայ, միթէ դու մօրդ չես մնար : Քսան
տարիէ 'ի վեր առանց ինձ մնալու վարժուած
էք . . . իմ մեռնիլս այնչափ ծանր չի դար-
ձեղ . . . : — Ո՛հ, Աստուած իմ, ես եմ այս
ամեն աղետից պատճառք, դռչեց հէք մայրը . . .
ան, Գարրիէլ կրտունք ունէր զիս մեղադ-
րելու : — Տիկին Տրանսօսող, մի վախճար, ըսաւ
կամացուկ մը Մայէօ՝ Տակօպէսի կնոջ քովը մօ-

անհաշով, Ակրիքօլ չթողուր որ իր հայրն այսպէս ինքզինք վտանգի մէջ ձգէ: »

Նրխտասարդը պահ մը վարանելէ ետև խօսիլ սկսաւ յուզեալ ձայնիւ . « Նս քեզ լաւ կը ձանչեմ, հայր իմ, դիտեմ որ մահուան երկիւղով չեմ կրնար քեզ արգելուլ: — Աւրեմն ինչ վտանգ է ըսածդ: — Ս. յնպիսի վտանգ մ'է . . . որուն առջև քու բոլոր քաջութեամբդ իսկ կը նահանջես . . . ըսաւ երխտասարդն այնպէս ծանր ու մտախոհ կերպիւ որ հօրը սրտին դրպաւ: — Ակրիքօլ, ըսաւ դօրականը խառութեամբ, ըսածդ վատութիւն է, դիս կը նախատես: — Ի՞նչ կրես, հայր իմ: — Վատութիւն է, կրկնեց դօրականը բարկութեամբ . վասն զի մարդ մը վախցընելով իր պարտականութենէն ետ կեցընել ուղերը վատութիւն է . . . նախատինք է . վասն զի վտանգէ ու սպառնալիքէ վախցող կը կարծես դիս: — Ա՛հ, պարոն Տակօպէտ, գոչեց Մայէօ, Ակրիքօլի ըսածը չէք հասկընար . . . : — Շատ աղէկ կը հասկընամ » պատասխանեց դօրականը գառնութեամբ:

Ակրիքօլ՝ հօրը խառութենէն ցաւազին կերպիւ յուզուեցաւ, բայց իր սիրտն ու ակնածութեան թելադրած առաջադրութենէն չխախտեցաւ . նորէն խօսիլ սկսաւ սիրտն ուժգին բարախելով . « Ներեցէք ինձ, հայր իմ, եթէ ձեզ անհնազանդ կը գանուիմ . . . բայց թէ եւ դիս ատէք, պէտք է դիտնար որ գիշեր ժամանակ վանքի մը պատէն ներս անցնիլն ինչ ծանր եւ

վաճանդաւոր բան է . . . : — Տղան . . . տակաւ
 լին կը համարձակիս . . . գոչեց Տակօպէս բար-
 կացայտ դէմքով : — Ակրիքօլ . . . գոչեց Ֆը-
 բանասող լալադին . . . այր իմ : — Պարսն
 Տակօպէս , մտիկ ըրէք Ակրիքօլը . . . մեր ա-
 մենու օգտին համար կը խօսի , գոչեց Մայէօ :
 — Բառ մ'անդամ մտիկ չեմ ընել . . . տատա-
 խանեց դօրականը ցամամբ ոտքը դեմին դար-
 նելով : — Ըսել կուզեմ քեզ . . . հայր իմ . . .
 որ ինքդինքդ գրեթէ աներկբայարար թիա-
 րան երթալու վաճանդի մէջ կը գնես , գոչեց ե-
 ըխտաւորը դարհուրելի կերպիւ երեսին գոյնը
 դեղնելով : — Թշուառական , գոչեց Տակօպէս
 մէկէն 'ի մէկ որդւոյն թեւէն բռնելով . չէիր
 կրնար այդ բանը ծածկել ինձմէ . . . փոխանակ
 դաւաճան եւ վատ ըլլալու վաճանդի մէջ գրա-
 նուելու : » Յետոյ դօրականը դողալով կրկնեց .

« Թիարան : »

Եւ կարծես թէ շանթէ դարնուելով դլու-
 խը ծռեց , լուռ եւ խոկուն :

« Այո , գիշեր ժամանակ պատէ անցնելով
 կամ դուռ կտորելով բնակարան մը մտնել . . .
 օրէնքը բացորոշ է . . . վախճանը թիարան է »
 գոչեց Ակրիքօլ գոհ ըլլալով իր խօսքին ըրած
 ազդեցութենէն եւ միանգամայն հօրը սրտա-
 բեկու-թեանը վրայ տրամելով . « Այո , հայր
 իմ , թիարան է , եթէ գործած ժամանակդ
 բռնուիս . եւ այնպէս ըլլալիքն ալ հարիւրին
 իննսուն յայտնի է . վասն զի , ինչպէս որ Մա-

յէօ արդէն ըսաւ քեզ , վանքին մէջ դդուշա-
ւոր պահպանութիւն կայ . . . : Նիժէ այս առա-
ւօտ , ցերեկ ժամանակ աղջիկներն ազատելու
փորձ փորձէիր , քեզ կը բռնէին ու կը բանտար-
կէին . բայց գոնէ յայտնապէս դործուած ըլլա-
լուն համար անկեղծ յանդգնութեան մը կեր-
պարանք կունենար , որ ետքը թերեւս ներո-
ղութեան ալ արժանի կըլլար . . . : Բայց դի-
շերանց պատէն անցնելով ներս մտնել . . . նո-
րէն կրակեմ , ուղղակի թխարան կրթալ է . . . :
Հիմա , հայր իմ , որոշէ ընելիքդ . . . ինչ որ
դուն ընես , ես ալ պիտի ընեմ . . . վասն զի
չեմ թողուր որ դու մինակ կրթաս . . . ճն . . .
բաէ . . . որ կես մը շինեմ քեզ . ես պահարա-
նին տակը կռան մ' եւ ազգաններ ունիմ . . . եւ
մէկ ժամէն կրնանք կրթալ : »

Երիտասարդին այս խօսքերէն ետեւ խոր
լռութիւն մը աիրեց , որ մերթ ընդ մերթ Ծրան-
սօսողի հեկեկանօքը կ'ընդ միջէր . ողորմելին յու-
սահատութեամբ կը մրմնջէր . « Աւանդ . . . Աստ-
ուած իմ . . . այս ինչ փորձութիւն էր եկաւ
մեր դիտուն . . . Տիւպօս արբային խօսքը մը-
տիկ ընելուս համար . . . : »

'Ի դուր Մայէօ կը միտիթարէր դժբանասօղ .
ինքն ալ սարսափ կ'զգար սրտին մէջ . վասն զի
հօրականը թիարանէ ալ վախոյղ մարդ չէր . եւ
այն ժամանակ Ակիթօյ հօրը վտանգին բաժա-
նորդ ըլլալ պիտի ուզէր : Տակօսէս , որչափ որ
անվեհեր եւ խիզախ բնաորութեան տէր էր ,

ապշած մնացեր էր : Իր գինու-որական ունակու-
թեանց համեմատ՝ կարծեր էր թէ ընելիք գի-
շերային ձեռնարկու-թիւնը տեսակ մը պատե-
րազմական դաւ է , զոր իր արդար իրաւունքն եւ
իր կացութեան անողոք հարկը կը ներէին 'ի գործ
դնել . բայց որդւոյն զարհուրելի խօսքերն իր
կարծիքը շտկեցին , եւ հիմա կը մնար՝ կամ Սիմօն
մարաջախտին վատահու-թեան ու որբերուն մօրը
վերջին բաղձանաց դրժել , կամ սարսափելի վա-
տանու-նութեան վտանգի մէջ ձգել ինքզինք . . .
մանաւանդ իր որդին . . . եւ այս ալ՝ առանց
վատահ ըլլալու թէ պիտի կրնար որբերն աղա-
տել . . . :

Յանկարծ Յրանսօաղ արտասու-աթուրմ աչ-
քերը սրբելով՝ անակնկալ ազդեցութենէ մը
ներշնչուածի պէս դռչեց . « Ս.՛հ , միտքս բան
մ'եկաւ . . . կարելի է որ առանց բռնութեան
այս սիրելի տղայքը վանքէն հանելու գիւրին մի-
ջոց մը կայ :

Ի՞նչպէս , մայր իմ , ըսաւ խակոյն Ակրիքօլ .
— Զանոնք Պ. Տիւպօա արբան դրկեց հոն . . .
բայց Քարբիէլի ենթադրութեան նայելով , խոս-
տովանահայրս այս բանը Պ. Ռօտէնի խորհրդովն
ըրեր է . . . : — Երբոր այդպէս ըլլայ , սիրելի
մայր իմ , Պ. Ռօտէնի դիմելն անօգուտ է . բան
մը չենք կրնար ստանալ անկէ : — Անկէ ոչ ,
բայց թերեւս այն դօրաւոր արբայէն՝ որ Քար-
բիէլի մեծաւորն է , եւ կղերանոցը մտնելէն 'ի
վեր զայն միշտ պաշտպանած է : — Ո՞ր արբան ,

մայր իմ : —Պ. Տէկրինեի արբան : —Յիրաւի ,
մայր իմ , քահանայ ըլլալէն առաջ զօրական էր
. . . թերեւս ուրիշներէն աւելի դիւրամատոյց
է . . . եւ սակայն . . . : —Տ'էկրինեի , գոչեց
Տակօպէս սոսկում եւ միանգամայն ասելու
թիւն մը ցուցնելով դէմքին վրայ . միթէ այս
հողկալի դաւարանութեանց մէջ Տ'էկրինեի ա-
նունով մարդ մ'ալ կայ , որ քահանայ ըլլալէն
առաջ դիւրութեան էր : —Այո , հայր իմ ,
Տ'էկրինեի մարքիզը . . . որ Պուրպանեանց վե-
րահաստատութենէն առաջ . . . Ռուսիոյ ատե-
րութեան ծառայած էր , եւ 1845 ին Պուրպան-
ները զօրագունդի մը հրամանատար ըրին զայն :
—Նոյն ինքն է ըսաւ Տակօպէս զայրադին .
դարձեալ ան , միշտ ան . . . չար սատանայի
պէս . . . թէ որբերուն թէ անոնց հօրը եւ թէ
մօրը դէմ : —Ի՞նչ կրսես հայր իմ : —Տ'էկրին-
եի մարքիզը , գոչեց Տակօպէս . դիտէք ինչ-
պէս մարդ է : Քահանայ ըլլալէն առաջ այս աղ-
ջկանց մօրը դահիճն եղաւ իր սէրն արհամար-
հելուն համար : Քահանայ ըլլալէն առաջ իր հայ-
րենեաց դէմ կռուեցաւ , եւ երկու անգամ պա-
տերադմի մէջ Սիսօն զօրապետին հետ դէմ առ
դէմ պանուեցաւ . . . : Այո , երբոր զօրապե-
տը Վիրսիկայի պատերազմին մէջ գերի կիցնար ,
եւ Ասթերլոի ճակատամարտին մէջ ալ վերքե-
րով կը ծածկուէր , աղգուրաց մարքիզն յաղ-
թանակ կը կանգնէր Ռուսաց եւ Մեղղիացւոց
հետ : Պուրպանեանց օրով ալ , այդ աղգուրացը

պատիւներով յղիացեալ՝ անգամ մ'ալ դէմ առ
դէմ գտնուեցաւ հալածեալ կայսրութեան զօ-
րականին հետ : Այս անգամ կատաղի մենամարտ
մ'ըրին իրարու հետ . . . մարքիզը վիրաւորե-
ցաւ . բայց Սիմօն զօրապետն ալ մահուան դա-
տապարտուելով Նաղդիայէն հեռացաւ . . . :
Հիմա այդ ազգութայր քահանայ եղեր է . . .
կըսէք : Ուրեմն տարակոյս չունիմ որ Ռօզն ու
Պլանչն ալ այդ անգգամը յախշտակել տուաւ
մեր ձեռքէն , որպէս զի անոնց հօրն ու մօրը
դէմ ունեցած ատելութիւնը յազեցընէ . . . :
Ըսել է որ աղջիկներն հիմա այդ թշուառականին
ձեռքին տակն են : Ուրեմն հիմա ոչ միայն այս
տղայոց ապագայ բաղդը պաշտպանելու հար-
կադրեալ եմ , այլ եւ կեանքը . . . կը հասկը-
նամք . . . կեանքը . . . : — Հայր իմ , կը կար-
ծէք որ այդ մարդը կարող ըլլայ . . . : — Հայ-
րենիքը մասնող դաւաճան մը՝ որ վերջապէս վա-
տանուն քահանայ մը կըլլայ , ամեն բան ընելու
կարող է . կըսեմ ձեզ թէ կարելի է որ այս
ժամուս տղայքը ծանր ծանր կը մեռցընէ . . .
գոչեց զօրականը սրտակէզ ձայնիւ , վասն զի
զանոնք իրարմէ բաժնելն արդէն սպաննել ըս-
կըսիլ է . . . » : Յետոյ աննկարագրելի զայ-
րութով մ'աւելցուց . « Սիմօն մարաջախտին ազ-
ջիկները Տ'Ակրինելի մարքիզին եւ անոր ջոլիբին
ձեռքն իյնան . . . եւ ես զանոնք ազատելու
վարանիմ . . . թիարանէ վախնալով . . . : Թիա-
րան , աւելցուց հեզնական քրքիջով , ինչ կընէ

ինձ թիարանը . միթէ կրնան իմ դիակա դնել
հոն . միթէ այս վերջին փորձն ընելէս ետեւ , եր-
բոր չյաջողի , իրաւունք չպիտի ունենամ ատըր-
ճանակով դուխս ջախջախելու : Երկաթդ կրակը
դիր , տղան . շուտ ըրէ , ժամանակ չկայ , դարբ-
նէ . . . դարբնէ երկաթը : — Բայց տղադ հե-
տըդ պիտի դայ , դոչեց Ֆրանսօազ մայրական
յուսահատութեան ճայնով մը : Յետոյ ոտքի վրայ
ելաւ ու Տակօպէսի ոտքն ինկաւ ըսելով . « Եթէ
դու բռնուիս , ան ալ պիտի բռնուի . . . : — Թիա-
րան չերթալու համար . . . ինձ պէս թող ընէ
. . . ատրճանակա երկուք է . . . : — Բայց ես . . .
դոչեց տարաբաղդ կինն իր աղերաստոր ձեռ-
քերն երկնցընելով , առանց քեզ . . . առանց
անոր . . . ինչ պիտի ընեմ . . . : — Իրաւունք
ունիս . . . ըրածս անձնասիրութիւն էր . . .
ես մինակ կերթամ , ըսաւ Տակօպէս : — Մինակ
չպիտի երթաս . . . հայր իմ . . . կրկնեց Ակ-
րիքօլ : — Բայց մայրդ . . . : — Ահա Մայէօ կը
տեսնէ այս անցքերը , կերթայ կը պատմէ վար-
պետիս՝ Պ . Հարաիին՝ որ մարդոց ամենէն ա-
ռատասիրտն է . . . եւ մայրս բնակարան եւ
հայ կուսնեայ մինչեւ իր կենաց վերջը : — Եւ
այս ամենուն պատճառն ես եմ . . . դոչեց Ֆը-
րանսօազ յուսահատաբար իր ձեռուրներն ոլո-
րելով : Պատժէ դիս , Աստուած իմ . . . պատժէ
դիս . . . ես եմ յանցաւորը . . . ես տուի տղայ-
քը . . . եւ դաւկիս մահուամբը պիտի պատ-
ժուիմ : — Ակրիքօլ , դու հետս չպիտի դաս .

չեմ ուզեր, ըսաւ Տաղօպէս ամենայն դօրու-
թեամբ որդին գրկելով: —Յ՞ս, հայր իմ, վը-
տանդը քեզ ցուցընելէս ետեւ ետ քաշուիմ . . .
կարելի բան է: Միթէ ես ալ մէկը չունիմ ա-
ղատելիք: Քարասովիլ օրիորդը, այն բարի եւ
ազնուասիրտ օրիորդը՝ որ գիտ բանտէն աղա-
տել ուզեր էր, նայնպէս բանտարկուած չէ . . .
դարմանաատան մէջ: Հետդ պիտի դամ, հայր իմ,
իրաւունքս է, պարտականութիւնս է, կամքս
է: »

Այս ըսելով Ակրիքօյ ճանկ շինելու սահ-
մանուած ունելին վառարանին բորբոքեալ կը-
րակին մէջ դրաւ:

« Աւանդ, Աստուած իմ, ողորմէ մեզ, կը-
սէր հէք մայրը հեծելով՝ միշտ ծռնողի վրայ,
մինչդեռ դօրականն ալ ներքին բուռն կռուով
մը տաղնապեալ կերեւէր:

« Մի լար այդպէս, սիրելի մայր իմ, սիր-
արս կը կարտես, ըսաւ Ակրիքօյ՝ Մայէօի օդ-
նութեամբ ոտքի վրայ հանելով իր մայրը. մի
վախնար, ես դիտեմամբ այս ձեռնարկութեան
վտանդը մեծցուցի հօրս աչքին. բայց երբոր
երկուքս ՚ի միասին ըլլանք, եւ խոհեմութեամբ
դործենք, առանց վտանգի կրնանք յաջողիլ .
այնպէս չէ, հայր իմ, ըսաւ Ակրիքօյ աչք ընե-
լով Տաղօպէսի. ուստի նորէն կըսեմ, մի վախ-
նար, բարի մայրս . . . ես ամեն բան վրաս
կառնում . . . Սիմօն մարաջախտին աղջիկներն
ու Քարասովիլ օրիորդը կրնանք աղատել . . . »

Մայէ՛՛՛՛՛՛՛, ազգաններն ու կռանը պահարանին տակէն հանէ եւ ինձ տուր : »

Գործաւորուհին՝ արտառքը արբելով Ակրիքօլի ըսածը կատարեց, մինչդեռ երիտասարդը վերցնով հրատը կը փչէր եւ ունելին կը տաքցընէր :

« Ահաւասիկ գործիքներդ . . . Ակրիքօլ » ըսաւ Մայէ՛՛՛՛՛՛՛ աչլայլեալ ձայնիւ եւ իր դողդոջուն ձեռքը դանձնք երկաթագործին տալով, որ ազգաններուն օգնութեամբ քիչ մ'ետքը ասորաչէկ ունելին կրակէն հանեց եւ կռանահարութեամբ ճանկի ձեւ տալ սկսաւ անոր ձոյլ երկաթէ վառարանին վրայ՝ զոր սալի տեղ կը դործածէր :

Տակօպէս լուռ եւ խոկուն կեցեր էր : Յանկարծ Գրանսօադի ձեռքը բռնելով ըսաւ . « Գուն կը ձանչես որդիդ . դինքը հետս դալէ արդելու՛ն անհնարին բան է . . . : Բայց մի՛ վախնար, սիրելի կինս . . . կը յուսամ որ կը յաջողինք . . . : Նի՛՛՛՛՛՛՛՛ չյաջողինք . . . եթէ բռնուինք, Ակրիքօլ ու ես . . . նէ . . . ոչ վատութիւն կընենք, ոչ ինքդինքնիս կ'սպաննենք . . . այլ հայր ու տղայ բանար կերթանք թեւ թեւի տուած, բարձրագլուխ եւ խրոխտագէմ, իբրեւ երկու արիասիրտ մարդիկ՝ որ իրենց պարտքը կատարած են մինչեւ վերջը . . . : Գառատանին օրը կուգայ . . . ամեն բան կը պատմենք ուղղութեամբ, անկեղծութեամբ . . . կըսենք թէ յուսահատութեան վերջին ծայրը հասնելով . . . »

բնաւ օղնութիւն մը , օրինաց կողմէն պաշտ-
պանութիւն մը չդանելով , բռնութեան դիմե-
լու հարկադրեցանք . . . : Գործդ նայէ տղան ,
դարբնէ , յաւելցուց Տակօպէս որդւոյն դառնա-
լով , որ կարմրացած երկաթը կը կռէր , դարբ-
նէ , դարբնէ , մի վախնար . դատաւորները
պարկեշտ մարդիկ են , պարկեշտ մարդոց բան
չեն ըներ : — Այն , առաքինի հայրս , իրաւունք
ունիս . հող մի ըներ , սիրելի մայրս . դատա-
ւորները գիւրաւ կը տեսնեն գիշեր ժամանակ
գողութիւն ընելու համար պատերէ անցնող շա-
րագործներուն եւ ծեր դօրականի մ'ու անոր
որդւոյն մէջ եղած տարբերութիւնը , որք իրենց
ազատութիւնը կեանքն ու պատիւը վտանգի
մէջ դնելով խեղճ գոհեր ազատելու ելած են :
— Եւ եթէ այս լեզուն չհասկըցուի , յարեց Տա-
կօպէս , դարձեալ հող չէ . . քու այրդ եւ որ-
դիդ դարձեալ պատիւնին չեն կորանցըներ պար-
կեշտ մարդոց առջեւ . . . : Եթէ մեզ թիա-
րանը դնեն . . . եթէ ապրելու արիութիւն
ունենանք . . . երկուքս ալ , հայր եւ որդի ,
պարծանօք կը կրենք մեր շղթաները . . . եւ
ազգութաց մարքիղը , վատանուն քահանայն ,
մեզնէ աւելի ամօթապարտ կըլլայ աշխարհի
առջեւ . . . : Յ'ն , դարբնէ երկաթը եւ բնաւ
մի վախնար , տղան . թիարանը չկրնար բարի
խղճմտանքն ու պատիւը եղծանել . . . : Հիմա
երկու խօսք ալ քեզ հետ ընենք , բարի Մայէօ .
ժամանակը կարճ է եւ մեզ կ'ստիպէ : Պարտէզն

իջած ժամանակդ վանքին դատիկոնները դիտեցիր, բարձր էին : — Աչ, շատ բարձր էին, պարոն Տակօպէս, մանաւանդ Քարաօվիլ օրիորդին վակուած յիմարատան կողմը նայող դրատիկոնը : — Ն^օ նշալէս կրցար խօսակցիլ այդ օրիորդին հետ : — Սրկու պարտէզներն իրարմէ բաժնող տախտակէ վանդակորմի մը միւս կողմն էր : — Շատ աղէկ, ըսաւ Ակրիքօլ միանգամայն իր երկաթը կռելով, մէկ պարտէզէն միւսը դիւրաւ կրնանք մտնել . . . եւ թերեւս առաւել դիւրին եւ ապահով կըլլայ յիմարատունէն դուրս ելնել . . . : Գժբաղդաբար Քարաօվիլ օրիորդին սենեակն ուր ըլլալը չես գիտեր : — Գիտեմ . . . ըսաւ Մայէօ իր յիշողութիւնն ամփոփելով . քառակուսի սենեակի մը մէջ կը բընակի, որուն պատուհանին վրայ՝ ուր առաջին անգամ դինքը տեսայ, քիւի պէս բան մը դուրս յցուած է կապուտ ու ճերմակ ներկով : — Ասա . . . չեմ մտնար դայդ : — Արդեօք իմ խեղճ տղոցս խուցերուն ալ ո՞ր կողմ ըլլալը կրցար հասկընալ » ըսաւ Տակօպէս :

Աայրկեան մը խորհելէ ետեւ՝ Մայէօ պատասխանեց . « Քարաօվիլ օրիորդին բնակած սենեակին դիմացն են . վասն զի երկու օրէ 'ի վեր պատուհանէն նշանացի խօսակցեր է անոնց հետ . եւ հիմա կը յիշեմ որ ըսաւ ինձ թէ երկուքին խուցերը տարբեր յարկերու մէջ են . մէկը գետնի վրայ, միւսն առաջին դատիկոնը : — Պատուհանները վանդակապատ են ,

հարցուց երիտասարդը : — Ձեռք գիտեր : — Հող
չէ , չհորհակալ եմ , բարի աղջիկս , այդ տե-
ղեկութիւններով կրնանք ճանբանիս ուղղել ,
ըսաւ Տաղօպէս . մնացեալին համար գիտեմ ը-
նելիքս : — Սիրելի Մայէօ , ջուր բեր , ըսաւ
Սկրիքօլ , որպէս գի երկաթս պաղեցրնեմ » :
Յետոյ հօրը գառնալով հարցուց . « Այս կեռը
աղէկ է : — Այո , տղաս , պաղելուն պէս պա-
բանը կանցունենք . . . » :

Այս անցից եւ խօսակցութեանց միջոցին
Յրանսօսող Պօտուէն ծունդի վրայ եկած ջեր-
մեռանդութեամբ կաղօթէր : Ա՛աղաչէր զՍատ-
ուած որ զթայ Սկրիքօլի եւ Տաղօպէսի վրայ ,
որք իրենց դժբաղդ տղիտութեամբը մեծ ոճիր
մը պիտի գործէին . գլխաւորապէս կը խնդրէր
Աստուծակէ , որ իր երկնային ցառուն իր վրայ
միայն թափէ , որովհետեւ ինքն էր միայն պատ-
ճառ իր որդւոյն եւ էրկանը մտաբերած ձախող
ձեռնարկին :

Տաղօպէս եւ Սկրիքօլ լռութեամբ իրենց
պատրաստութիւնը կը լմնցրնէին . երկուքն ալ
դժգոյն եւ խռկուն էին . կ'զգային թէ սրչափ
մտանգաւոր էր իրենց այս յուսահատական ձեռ-
նարկութիւնը : Քանի մը վայրկեան ետքը Սէն
Մէրիի ժամացոյցը տանն դարկաւ : Ժամացոյ-
ցին ձայնը մրրկին հովին ու անձրեւին մոնչիւ-
նէն խափանուելով խիստ տկար հնչեց :

« Ժամը տանն է . . . ըսաւ Տաղօպէս ցրն-
ցուելով . վայրկեան մ'անդամ չկայ կորսնցը-

նելիք . . . : Ակրիքօլ, առ պարկը : — Այո՛ ,
հայր իմ : »

Պարկը բերելու գացած ժամանակ Ակրի-
քօլ Մայէօի քով դնաց՝ որ հաղիւ ոտքի վրայ
կենալու կարող էր, եւ կամացուկ մ'ըսաւ ա-
նոր . « Եթէ վաղ առաւօտ հոս դարձած չըլ-
լանք . . . մայրս քեզ կը յանձնեմ : Կերթաս Պ.
Հարաիին , որ թերեւս ետ դարձած է ուղեւո-
րութենէն : Օ՛ն , քոյր իմ , մի վհատիր , համ-
բուրէ զիս . խեղճ մայրս քեզ կը թողու՛մ » :

Եւ երիտասարդը փղձկելով Մայէօյի փաթ-
թուեցաւ եւ խանդաղատանօք սեղմեց : Գոր-
ծաւորուհիին վրայ մարելիք եկաւ .

Օ՛ն , ծերունի Ռասպա-Ժօաս , քալէ նայինք,
ըսաւ Տակօպէն , պահնորդութիւն ըրէ մեզ . . . »
Յետոյ կնոջը քով երթալով , որ ոտքի վրայ
ելած եւ որդւոյն գլուխը կուրծքին դրած ար-
տասուազին համբոյրներով կը ծածկէր , զօրա-
կանն ըսաւ անոր՝ ինքզինք հանդարտ ու զը-
ուարթ ցուցնելու ջանալով . « Օ՛ն , սիրելի
կինս , խելքդ գլուխդ բեր , եւ լաւ կրակ մը
պատրաստէ մեզ . . . երկու երեք ժամէն եր-
կու խեղճ աղջիկ եւ գեղեցիկ օրիորդ մը պի-
տի բերենք հոս . . . : Համբուրէ զիս , որ գոր-
ծըս դիւրաւ յաջողի » :

Ճրանսօազ ամուսնոյն պարանոցն ինկաւ
տոանց խօսք մ'արտասանելու : Այս մունջ
բայց խուլ հեծութիւններով եւ ջղային գողով
չեղաւած յուսահատութիւնը՝ տեսնողին աղիքը

կը արորէր : Տակօպէս ինքզինք կնոջը թեւե-
րուն մէջէն դրեթէ բռնի աղաատեց , եւ սրտին
յուզմունքը ծածկելով այլայլեալ ձայնով մ'ը-
սաւ որդւոյն . « Երթանք . . . երթանք . . .
մօրդ ըրածը սիրաս կը կտրտէ . . . : Բարի Մա-
յէօ , հսկէ վրան . . . Ակրիքօլ . . . քալէ : »

Եւ զօրականը՝ ատրճանակներն զգեստին
գրպանը խօթելով դէպ 'ի դուռը դիմեց , Բա-
պա-ժօա ալ կտեւէն :

« Արդեակ . . . եկ անդամ մ'ալ համբու-
րեմ քեզ . . . սէ . . . թերեւս այս վերջինն է ,
դոչեց վատաբաղդ մայրը՝ շկրնալով ստքի վրայ
եղնել , եւ թեւերն Ակրիքօլի երկնցընելով ,
հերէ ինձ . . . իմս է յանցանքը » ըսաւ :

Երիտասարդն ետ դարձաւ , իր արտասուքը
մօրն արտասուաց հետ խառնեց , եւ հեղձամղձուկ
ձայնով մը մրմնջեց . « Մնաս բարով , սիրելի
մայրիկ . . . մի վախնար . . . քիչ ժամանա-
կէն իրար կը տեսնենք . . . » :

Յետոյ Ծրանսօաղի թեւերուն մէջէն խու-
ռելով վազեց հօրն կտեւէն հասաւ սանդուղին
վրայ : Ծրանսօաղ Պօտուէն երկար հառաչք մ'
արձակեց եւ նուաղեալ ինկաւ Մայէօի թեւե-
րուն վրայ :

Տակօպէս եւ Ակրիքօլ՝ Պրիզ-Միշ փողոցէն
դուրս ելան հովին ու բուքին մէջ , եւ խոչոր
քայլերով Օբիթալի ծառուղւոյն ճանքան բըռ-
նեցին , Բապա-ժօա ալ կտեւնուն :

ՎԵՐԵԼԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՌԵԱԲԱՐՈՒՄ

Ժամը տասն եւ մէկ ու կէս կը դարնէր եր-
 րոր Տակօպէս ու որդին Օրիթալի ծառուղին հա-
 սան : Հովը սաստիկ կը փչէր , եւ անձրեւն հե-
 ղեղի պէս կը տեղար . բայց անձրեւարեր ամ-
 պերուն թանձրութեան հակառակ՝ եւ լուսինն
 ալ ուշ ելնելուն՝ գիշերը բաւական լուսա-
 ւոր էր : Խոշոր սեւ ծառերն ու վանաց պարտէ-
 զին սպիտակ պատերը . . . կրնային որոշուիլ այս
 աղօտ լուսաւորութեան մէջ : Հեռուն՝ հովէն տա-
 տանեալ լապտերի մը կարմրորակ լոյսն հաղի-
 անձրեւին ու մէզին մէջ նշմարուելով՝ այն ամայի
 ծառուղւոյն զիստ մայթին վրայ կը պլպլար :
 Մերթ ընդ մերթ հեռուէն . . . խիստ հեռուէն ,
 ուշ մնացած կառքի մը թաւալման դռնչիւնը կը
 լսուէր . յետոյ տխուր լռութիւն մը կը տիրէր :

Տակօպէս եւ որդին՝ Պրիզ-Միշ փողոցէն
 մեկնելէն՝ ի վեր հաղիւ քանի մը խօսք ըրեր
 էին իրարու հետ : Ս,յս երկու քաջասիրտ մար-
 դոց նպատակն ազնիւ ու վեհանձնական էր .
 եւ թէպէտ սրտերնուն մէջ վախ չկար , բայց
 իրենք մտախոհ էին , եւ գիշերային եղեռնա-
 դործութեանց պարապող աւազակներու պէս
 մութին մէջ գողունի կը սահէին : Ակրիքօլ ուսը
 պարկ մը բեռցած էր , որուն մէջ պարան մը :

կեռ մը եւ երկաթէ ձողակ մը կային . Տակօ-
պէռ որդւոյն թեւին կրթնած էր . Ռապա-Ժօա
ալ տիրոջն ետեւէն կերթար :

« Յերեկը նստած նստարաննիս հոս պէտք
է ըլլայ , ըսաւ Տակօպէռ կանգ առնելով : — Այո ,
ըսաւ Ակրիքօլ չորս կողմը նայելով . ահա , հայր
իմ : — Գեռ ժամը տասն եւ մէկուկէսն է , պէտք
է որ կէս դիշեր ըլլալուն սպասենք , ըսաւ Տա-
կօպէռ . քիչ մը նստինք հոս յողնութիւն առ-
նունք , եւ մեր ընելիքներուն վրայ խորհրդակ-
ցինք . . . »

Պահ մը լռութենէ ետեւ , զօրականը խը-
ռովեայ ձայնիւ եւ որդւոյն ձեռքը սեղմելով
ըսաւ . « Ակրիքօլ , զաւակս , դեռ ժամանակ
կայ . . . կաղաչեմ . . . դիս մինակ թող տուր
. . . ես կրնամ դործս տեսնել . . . քանի ժա-
մանակը մօտենայ , իմ ալ երկիւղս կաւելնայ
որ քեզ վստանգի մէջ պիտի ձգեմ , — Ես ալ ,
առաքինի հայր , քանի ժամանակը կը մօտենայ ,
կը համոզուիմ որ քեզ օգտակար կրնամ ըլլալ .
ինչ որ ալ ըլլայ վախճանը , բարի կամ չար ,
բաղդիդ բաժանորդ պիտի ըլլամ . . . մեր նը-
պատակը բարի է . . . դուն պատուոյ հարկ մը
պիտի հատուցանես . . . կուզեմ որ կէսը ես
վճարեմ : Ես խօսքէս չեմ դառնար հիմա . . .
Ուրեմն , քաջարանց հայր . . . մեր ընելիքին
վրայ խորհինք : — Հասկըցայ , տղաս , դուն ան-
պատճառ հետս պիտի գաս , ըսաւ Տակօպէռ
հառաչքը խեղդելով : — Այնք է , հայր իմ , ա-

ռանց արգելքի յաջողիլ, եւ կը յաջողինք . . . :
 Պահ մ'առաջ անշուշտ նշմարեր էիր որ այս
 պարտէզը փոքրիկ դուռ մ'ունի պատին ան-
 կիւնին մօտ . . . այն դուռը խիստ աղէկ կու-
 դայ մեր գործին : Անկէց պարտէզը կը մտնենք
 եւ ծայրը վանդակորմ մ'ունեցող պատով մը
 բաժնուած շէնքը կը փնտռենք : — Այո . . .
 վասն զի վանդակորմին մէկ կողմը Քարտօվիլ
 օրիորդին բնակած յարկն է, միւս կողմն ալ
 վանքին այն մասն է՝ ուր զօրապետին ազջիկ-
 ները փակուած են » :

Այս միջոցին Ռասպա-ժօա՝ որ Տակօպէտի
 ոտքին տակը նստած էր, մէկէն ոտքի վրայ
 ելաւ ականջները անկելով եւ կարծես թէ մը-
 տիկ ընելով :

« Կերեւի թէ Ռասպա-ժօա բան մը լսեց,
 ըսաւ Ակրիքօլ, ականջ դնենք » :

Բայց փողոցին մեծամեծ ծառերը տատա-
 նող հովին ձայնէն զատ ուրիշ բան չլսուեցաւ :

« Կը մտածեմ, հանր իմ, թէ պարտէզին
 դուռը բացուելէն ետեւ՝ Ռասպա-ժօան հետեր-
 նիս ներս տանելու ենք : — Այո . . . այո . ե-
 թէ ներսը պահապան շուռ մը դանուի, Ռա-
 սպա-ժօա անոր գործը կը լմնցընէ . ասկէց զատ,
 հսկողութիւն ընող մարդոց մօտենալը կիմա-
 ցընէ մեզ, եւ ով գիտէ . . . այնչափ ուշիմ է
 եւ այնչափ Ռօզին ու Պլանչին յարեալ է, որ
 թերեւս անոնց եղած տեղը դանելու ալ կ'օգ-
 նէ մեզ, արդէն քսան անգամ տեսած եմ որ

կարգէ դուրս բնազդմամբ մը գացած անտան-
ներուն մէջ դանձնք գաած է » :

Ծանր բայց քաջահնչուն դնդիւն մը՝ հովին
չչմանը յաղթելով՝ տասներկու ք դարնել սկսաւ :
Այս դնդիւնը կարծես թէ ցաւագին արձագանք
մը տուաւ Ակրիքօլի եւ հօրը սրտին մէջ . եր-
կուքն ալ՝ լռին եւ յուզեալ՝ վեր ցատկեցին
. . . եւ միահաղոյն շարժմամբ իրարու ձեռք
բռնեցին եւ ուժով մը սեղմեցին : Կրկնց սրտին
ամեն մէկ դարկն ակամայ ժամացոյցին բազ-
խուժներուն կը պատասխանէր , որուն հնչումը
գիշերին արտուր լռութեան մէջ աւելի կերկրն-
նար . . . : Վերջին հարուածին՝ Տակօպէռ ան-
յողողող ձայնիւ մ'ըսաւ որդւոյն . « Ահա կէս
գիշեր է , տղաս , համբուրէ զիս եւ գործի սկը-
սինք » :

Հայրն ու որդին իրար համբուրեցին : Վայր-
կեանք վճռական եւ ծանրակշիռ էր :

« Հիմա , հայր իմ , ըսաւ Ակրիքօլ , արկղ
բանալու գացող գողերու պէս ճարպիկու-
թեամբ եւ միանգամայն յանդգնութեամբ գոր-
ծենք » :

Այս ըսելով երկաթագործը պարկին մէջէն պա-
րանն ու կեռը հանեց , Տակօպէռ ալ երկաթէ ձո-
ղակն առաւ , եւ երկուքը մէկէն դդուչութեամբ
պտտին տակէն՝ քալելով՝ դէպ 'ի փողոցին ու ծա-
ռուղւոյն ձեւացուցած անկեան մօտը դանուող
փոքր գունդ երթալ սկսան , մերթ ընդ մերթ կանգ
առնելով եւ ուշադրութեամբ ականջ դնելով ,

որպէս զի անձրեւին ու բռնաշունչ քամիին շա-
ռաշիւնէն տարբեր ձայները որոշեն : Գիշերը
բաւական լուսաւոր ըլլալով՝ կրնային ամեն բան
դիւրութեամբ զանազանել : Աերջապէս զօրա-
կանն ու երկաթագործը փոքր դրանքով հա-
սան , եւ զննելով տեսան որ տախտակները
ճճեկեր եւ խախուտ էին :

« Շատ աղէկ , ըսաւ Ակրիքօլ իր հօրը ,
մէկ հարուածով կը բացուի » :

Եւ երբ երիտասարդը կրնակը դրան կըր-
թընցընելով ամենայն զօրութեամբ զայն հրե-
լու կը պատրաստուէր , Ռասպա-Ճօա անոր ա-
ռաջքն առնելով մոնչեց : Տակօպէս իսկոյն լռե-
ցուց շունը , եւ մէկէն որդւոյն թեւէն բռնե-
լով կամացուկ մ'ըսաւ . « Կեցի , մի խլրտիւր
. . . Ռասպա-Ճօա մարդու հոտ առաւ պարտի-
զին մէջ . . . » :

Ակրիքօլ եւ հայրը քանի մը վայրկեան ան-
շարժ կեցան՝ ականջ դնելով եւ շնչառութիւն-
նին իսկ դադրեցընելով . . . : Շունը տիրոջը
հրամանին հնազանդելով ալ չմոնչեց , բայց տա-
տամսութիւնն ու յուզմունքը կաւեղնար : Այսու
ամենայնիւ բան մը չլսուեցաւ :

« Շունը սխալած ըլլալու է , հայր իմ , ը-
սաւ Ակրիքօլ հծծելով : — Անտարակոյս եմ որ
սխալած է , պատասխանեց Տակօպէս . չշար-
ժինք . . . »

Քանի մը վայրկեան ալ սպասելէ ետեւ՝ Ռա-
սպա-Ճօա մէկէն պառկեցաւ եւ ցռուկը կրցածին

չափ դրանք սեփին աակը խօթեց ուժով մը
փշելով :

« Մարդ կուգայ . . . ըսաւ Տաղօպէս որդ-
ւոյն : — Ուրեմն հեռանանք հոսկէ , յարեց Ակ-
րիքօլ : — Ահ , ըսաւ հայրը , ախանջ դնենք
եթէ դուք բանալու ըլլան՝ կրնանք փախ-
չիլ . . . : Հոս , Ռասպա-Ժօն , հոս . . . »

Շունը հնազանդելով՝ հեռացաւ դռնէն եւ
եկաւ տիրոջը ոտքին առջեւ պառկեցաւ . . .
Քանի մը վայրկեան ետքը՝ անձրեւաթուրմ գետ-
նին վրայ ծանր քայլերու ճզփիւն մը լսուեցաւ ,
որ ջուրերու մէջ քայլելու կը նմանէր . յետոյ
մարդոց խօսակցութեան շշնջիւն մը , որ հովէն
տարուելով չկրցաւ դօրականէն ու երկաթա-
դործէն հասկցաւ իլ :

« Հսկողութեան ելնողներն են՝ որոց համար
խօսեցաւ Մայէօ , ըսաւ Ակրիքօլ իր հօրը : — Ա-
ւելի աղէկ , պատասխանեց Տաղօպէս , երկրորդ
անգամ այս կողմը շուտով չեն դար , եւ գոնէ
երկու ժամ հանգիստ կը թողուն մեզ . . .
Հիմա մեր դործն աւելի ապահով է » :

Արդարեւ սոնաձայնը քիչ քիչ հեռացաւ .
յետոյ բոլորովին անլսելի եղաւ . . .

« Օ՛ն , շուտ , ժամանակ չկորսնցընենք , ը-
սաւ Տաղօպէս իր որդւոյն՝ տասն վայրկեանի չափ
անցնելէ ետեւ . մարդիկը հեռացան , հիմա այս
դուք բանալու ջանանք » :

Ակրիքօլ իր հաւժուէ կրնակը գրան կըր-
թնցուց եւ ուժով մը հրեց . բայց դուք՝ որ-

չափ եւ հին էր՝ դիմացաւ : « Նդովանձ , ըսաւ Ակրիքօլ , ներսէն նիգերով ամբացած է , ապա թէ ոչ՝ այս անպիտան տախտակները չէին կըրնար դիմանալ : — Ի՞նչ ընենք հիմա : — Պարանին եւ կեռին օգնութեամբ պատին վրայ կելնեմ . . . եւ ներս անցնելով կը բանամ :

Այս ըսելով Ակրիքօլ պարանն ու կեռն առաւ , եւ քանի մ'անգամ նետելէ ետեւ՝ վերջապէս յաջողեցաւ ճանկը պատին կատարին վրայ ձգելու :

« Հիմա , հայր իմ , դու ինձ սանդուղ եղիր , եւ պարանին օգնութեամբ պատին վրայ ելնելով կեռն անդին դարձնեմ եւ դիւրութեամբ պարտէզն իջնեմ » :

Զօրականը պատին կրթնեցաւ , երկու ձեռքն իրար կցեց , եւ երիտասարդը մէկ ոտքն իր հօրը ձեռաց փորոքին մէջ դնելով անկէց անոր կորովի ուսերուն վրայ ելաւ , եւ պարանին ու պատին խորտուքորտերուն օգնութեամբ կատարն հասաւ : Գծբաղդարար երիտասարդը չէր նշմարեր որ պատին կատարը սեւ սրուակի կըտորուանքներով պատած էր , որք իրեն ծունդն ու ձեռու ըները վիրաւորեցին . բայց Տակօպէտի վախ չտալու համար՝ մէկէն 'ի մէկ զգացած ցաւը զսպեց , ճանկը միւս կողմ դարձուց եւ պարանն 'ի վար սահելով գետինն իջաւ : Գունը մօտ էր , ուստի մէկէն հոն վազեց եւ տեսաւ որ ետեւէն հաստ փայտ մը նեցուկ դրուած էր : Աղպանքն այն ատիճան դէշ վիճակի մէջ

էր որ Ակրիքօլի բռնաբարութեանը չկրցաւ դիմանալ : Դուռը բացուեցաւ եւ Տակօպէս Պարտէզը մտաւ Ռապա-Ժօայի հետ :

« Հիմա , ըսաւ դօրականը որդւոյն , քու շնորհիւդ դործին դժուար մասը կատարուեցաւ . խեղճ աղջիկներուս եւ Քարաօլիլ օրիորդին համար փախուստի ապահով միջոց մ'ունինք : Բանը հիմա զանոնք դանելն է այս ժամուս մէջ . . . առանց արգելքի պատահելու . . . : Ռապա-Ժօս , առջեւնիս ինկիր իբրեւ ռահանորդ . ծն , քալէ՛ շունս , աւելցուց Տակօպէս , մանաւանդ ձայն մի հաներ » :

Իսկոյն ուշիմ կենդանին յառաջ անցաւ հոտտակով , ախանջ դնելով , հետադօտելով եւ խուզարկու քերձէի պէս խոհեմութեամբ եւ ըզդուշաւորութեամբ քալելով : Տակօպէս եւ որդին՝ ամպածածուկ լուսնին կէս լուսովը բոլորաթիքնին յաղթ ծառերու շարք մը տեսան՝ որուն քանի մը ծառուղիներ կը յանդէին : Չկրնալով որ ձանքէն երթալիքնին որոշել , Ակրիքօլ ըսաւ հօրը . « Պատին առջեւի ծառուղին բռնենք , անշուշտ շէնքի մը քով կը հանէ մեզ : — Աւզիդ է ըսածդ , անկէց երթանք , եւ փոխանակ ցեխին մէջէն քալելու՝ եղերքի մարդերուն վրայէն քալենք , որպէս զի ոտքերնուս ձայնը չելնէ » :

Հայրն ու որդին՝ Ռապա-Ժօայի առաջնորդութեամբ բաւական քալեցին պտուտաւոր ծառուղիի մը մէջէ որ պատէն շատ չէր հեռանար

Տեղ տեղ կանգ կանուխն ականջ դնելու . . .
կամ ծառերուն ու թռչիւրուն շարժական երեւ-
ւոյթը խոհեմութեամբ ստուգելու համար , որք
հովէն տատանելով եւ լուսնին աղօտ նշոյլովը
լուսաւորուած՝ շատ անգամ զարմանալի ձեւեր
կանուխն : Աէս դիշեր ու կէս կը դարնէր եր-
բոր Ակրիքօլ ու հայրը երկաթէ լայն վանդա-
կորմի մը քով հասան , որ վանքին մեծաւորուհ-
ւոյն յատուկ եղած պարտէզը կը բաժնէր : Այս
չրջափակին մէջ մտեր էր Մայէօ նոյն առաւօ-
տուն՝ երբոր Միսօնեան Աօղին խօսակցիլը տե-
սեր էր Քարաօվիլ օրիորդին հետ : Յ.յս վան-
դակապատին ետեւէն Ակրիքօլ եւ հայրը տախ-
տակէ շերտափակ որմ մը տեսան , որուն ծայրը
նորակառօցյ մատուռի մը քով կը հասնէր , եւ
անոր միւս կողմն ալ քառակուսի յարկ մը կար :
«Ահա անշուշտ այս պիտի ըլլայ դարմանա-
տան այն մասը՝ ուր Քարաօվիլ օրիորդ դրուած
է , ըսաւ Ակրիքօլ : Եւ ատոր դիմացն ալ այն
շէնքն է ուր Աօղի ու Պլանշի սենեակները կը
դանուին , բայց մեք չենք կրնար հոսկէ տես-
նել , ըսաւ Տակօպէն : Խեղճ տղայքս հոս կը հե-
ծեն ողբոց եւ յուսահատութեան մէջ , աւել-
ցուց դօրականն յուզեալ սրտիւ : — Միայն թէ
այս վանդակին դռնն ամրափակեալ չըլլայ , ը-
սաւ Ակրիքօլ : — Չեմ կարծեր , վասն զի վան-
քին ներսի կողմն է , ըսաւ Տակօպէն . յուշիկ
երթանք » :

Եւ քանի մը քայլափոխով Տակօպէն ու որ-

դին վանդակէ դրան քով հասան , որ սկարդ սող-
նակով մը միայն գոցուած էր :

Տակօպէս զայն բանալու վրայ էր , Ակրի-
քօլ ըսաւ անոր .

« Զգուշացիր , հայր իմ , չըլլայ թէ բացած
ժամանակդ ճանչէ . . . : — Գու՛ն մէկդի գնա ,
ես կը բանամ , ըսաւ Ակրիքօլ :

Եւ այնպէս ուժով մը բացաւ որ սկար ճը-
ռինչ մ'արձակեց . բայց որչափ եւ սկար ըլլար
ճռինչը՝ դարձեալ կրնար լսուիլ գիշերին խոր
լռութեան մէջ , մանաւանդ որ նոյն վայրկենին
հովին մռնչիւնն ալ միջոց տուած էր : Ակրի-
քօլ ու հայրը պահ մ'անշարժ կեցան սրտատան-
ջութեամբ , ականջ դրին եւ վանդակադռ-
նէն ներս մտնելու չհամարձակեցան , որպէս զի
ես քաշուելու ճանքանին չգոցուի : Բայց բնաւ
չարժում մը չլսուեցաւ եւ խորին լռութիւնը շա-
րունակեց : Ակրիքօլ ու հայրը քաջալերուելով
ներքին պարտէզը մտան : Եունը՝ հոն մտնելուն
պէս՝ կարգէ գուրս ուրախութեան նշաններ
ցոյց տալ սկսաւ . ականջները տնկած , պոչը
կողերուն դարնելով ու ցատկըտելով խկոյն
տախտակէ շերտափակին քով հասաւ ուր առա-
ւօտուն Ռօդ Սիմօնեան վարկեան մը խօսակցեր
էր Քարտօվիլ օրիորդին հետ : Հոն ուշիմ կեն-
դանին կանգ առաւ անհանդարտ եւ անհամբեր ,
անդադար կը դառնար եւ մէկ ու միւս կողմ
կը դիմէր ճանքայ փնտուելու կերպով : Տակօ-
պէս եւ որդին՝ շունն իր բնազդմանը թող տա-

լով անոր շարժումները կը դիտէին տատամ-
տառ ու շարժութեամբ, եւ ամեն բան անոր ու-
շիմութենէն ու որբերուն վրայ ունեցած սէրէն
կը յուսային :

« Անշուշտ այս շերտավակին քով կը դրա-
նուէր Ռօզ՝ երբոր Մայտօ դայն տեսեր է, ը-
տաւ Տակօպէռ . Ռապա-ժօա անոր հետքը կը
փնտռէ . թողունք որ դանէ : »

Քանի մ'երկվայրկեան հետքը շունը դար-
ձաւ Տակօպէռի նայեցաւ, եւ Ատրիէնի բնա-
կած յարկին դիմացի շէնքին գեանայարկը դրա-
նուած դրան մը քով վազելով հոն պառկեցաւ
եւ կարծես թէ Տակօպէռի կ'սպասէր :

« Տարակոյս չմնաց, աղայքն այս շէնքին
մէջն են, ըտաւ Տակօպէռ Ռապա-ժօայի քով
երթալով . առաւօտուն Ռօզը հոս բերած փա-
կած են : — Նայինք թէ պատուհանները երկա-
թէ վանդակ ունին թէ ոչ, ըտաւ Ակրիքօլ հօրն
եսուէն երթալով :

Երկուքն ալ Ռապա-ժօայի քով հասան :
է՛, ծերուկս, ըտաւ անոր զօրականը ցած
ձայնիւ եւ շէնքը ցուցնելով, Ռօզ եւ Պլանշ
հոս են, այնպէս չէ՞ » :

Շունը դլուխը անկեց եւ ուրախութեան
մտունչ մ'արձակեց հանդերձ թեթեւ հաչիւ-
նով : Տակօպէռ խկոյն շանը ցուկը ձեռքին
մէջ առաւ որ ձայնը չլսուի :

« Գործը վտանգի մէջ պիտի ձգէ . . . դո-
կեց երիտասարդը . թերեւս լսեցին ձայնը . . . »

— Աչ, ըսաւ Տակօպէս, ալ տարակոյս չկայ,
տղայքն հոս են :

Այս միջոցին, երկաթէ վանդակադուռը՝
ուսկէց զօրականն ու որդին պարտէզը մտեր
եւ բաց թողեր էին, շառաչմամբ դոցուեցաւ :

« Մեզ հոս կը փակեն, ըսաւ մէկէն Ակրի-
քօլ, եւ ուրիշ ճանքայ չկայ դուրս ելնելու » :
Վայրկենի մը չափ հայր ու որդի սասանած մէկ
մէկու երես նայեցան : Բայց յանկարծ Ակրիքօլ
վրայ բերաւ . « Թերեւս դրան վանդակափեղկն
իր ծանրութեամբը ծղխնիներուն վրայ դառնա-
լով ինքնիրեն դոցուեցաւ . երթամ նայիմ . . .
եւ եթէ կրնամ նորէն բանամ : — Շուտ ըրէ,
ըսաւ Տակօպէս, ես ալ պատուհանները քննեմ » :

Ակրիքօլ շտապաւ վանդակադրան քով վա-
զեց . նոյն միջոցին Տակօպէս ալ պատին տա-
կէն սողոսկելով գեանայարկին պատուհաննե-
րուն առջեւ հասաւ : Պատուհանները չորս էին
եւ վանդակապատ չէին . առաջին դատիկոնին
նայելով տեսաւ որ շատ բարձր չէր, եւ պա-
տուհաններն ալ վանդակապատ չէին . ուստի
մտածեց որ երկու քոյրերէն որն որ այն յարկը
կը բնակէր, իմանալուն պէս կրնար անկողնի
սաւան մը կապել պատուհանի երկաթին, եւ
սահելով վար իջնել, ինչպէս որ Փօքօն-Պլանի
պանդոկէն փախչելու համար ըրեր էին . բայց
դժուարութիւնն էր հասկընալ նախ թէ որ սն-
եակը կը բնակէր : Տակօպէս խորհեցաւ որ գետ-
նայարկը բնակող քրոջմէն կրնար իմանալ . բայց

հոս ալ ուրիշ դժուարութիւն մը կար . չորս պատուհաններէն որը բախելու էր : Ակրիքօլ վազելով հօրը քով եկաւ :

«Անդակադրան գոցուիլը հովէն է եղեր . ըսաւ . նորէն բացի եւ առջեւը քար մը դրի . . . բաց շուտ ընենք : — Ի՞նչպէս գտնենք այս խեղճ աղջիկներուն խուցին պատուհանը , ըսաւ Տակօպէս անձկութեամբ : — Ճշմարիտ է , ըսաւ Ակրիքօլ տատամսելով . ի՞նչպէս ընենք : — Եթէ ըստ դիպաց դիրենք կանչենք , ըսաւ Տակօպէս , կրնայ ըլլալ որ միւսներն արթնցընելով ինքզինքնիս մատնենք . . . : — Տէր Աստուած , ըսաւ Ակրիքօլ առաւելագոյն անձկութեամբ , մինչեւ հոս գտնք իրենց պատուհաններուն ներքեւ . . . եւ չդիտնանք : — Ժամանակ չկայ , ըսաւ մէկէն Տակօպէս որդւոյն խօսքը կտրելով . ինչ կըլլայ թող ըլլայ , կանչենք աղջիկները : — Ի՞նչ կըսէք , հայր իմ : — Ի՞նչ պիտի ըսեմ . Ռօզ ու Պլանշ պիտի կանչեմ բարձրաձայն . անոնք հիմա յուսահատական վիճակի մէջ ըլլալով անշուշտ քնացած չեն . առաջին անգամ կանչելուս ոտքի վրայ կեննեն , եւ առաջին գոտիկոնք բնակողն անկողնին սաւանը պատուհանին կապելուն պէս՝ հինգ վայրկեան չտեւեր մեր քով կիջնէ : Կսկ գետնայարկը բնակողը՝ եթէ պատուհանը վանդակապատ չէ , վայրկենի մը մէջ քովերնիս կը հասնի : Եւ եթէ պատուհանը վանդակապատ է , ձողերուն մէկը քաշելնուս պէս կը փրցընենք : — Բայց , հայր իմ ,

բարձր ձայնով կանչել ինչպէս կրնայ ըլլալ :
— Թերեւս ուրիշները չեն լսեր . . . : — Բայց
եթէ լսեն՝ ամեն բան կը կորսնցընենք : — Ո՞վ
գիտէ , մինչեւ որ անոնք երթան պահապան-
ներուն իմաց տան եւ քանի մը դռներ բանան ,
մեք աղջիկները կրնանք ձեռք անցունել եւ ծա-
ռուղիին դռնէն փախչիլ . . . : — Ատանդաւոր է
այդ միջոցը , բայց ուրիշ միջոց ալ չեմ տեսներ :
— Եթէ պահապանները երկուք են , ես ու Ռապա-
-ժօա կրնանք դանոնք արդելուլ՝ թէ որ մեր փա-
խուստը կատարուելէ առաջ վրայ հասնին .
դուն ալ նոյն միջոցին աղջիկները կը փախցընեն :
— Հնչր իմ , ապահով միջոց մը . . . ապահով
միջոց մը , գոչեց յանկարծ Ակրիքօլ : Մայէօ
ըսաւ մեզ թէ Բարտօլի օրիորդը նշանացի կը
խօսակցէր Ռօզին ու Պլանչին հետ : — Այո՛ :
— Ուրեմն անոնց բնակած սենեակներն ալ գիտէ ,
որովհետեւ աղջիկներն ալ իրենց պատուհանէն
պատասխան կուտային անոր : — Իրաւունք ու-
նիս . . . ուրեմն ասկէց ուրիշ միջոց չկայ . . .
երթանք Ատրիէնի բնակած յարկը : Բայց ինչ-
պէս դանենք իր խուցը . . . : — Մայէօ ըսաւ
ինձ թէ օրիորդին սենեկին պատուհանը վրան
քիւի պէս բան մ'ունի դուրս ցցուած : — Օ՛ն ,
չուտով հոն երթանք , տախտակէ շերտ մը կուտ-
րելը՝ բան մ'ըսել չէ . . . : Աղցանդ քովդ է :
— Ահաւասիկ : — Ուրեմն քալէ . . . : »
Քանի մը քայլ առնելուտն պէս Տալիօպէո
եւ որդին այն տղար անջրպետին քով հասան ,

եւ Ակրիքօյ երեք տախտակ փրցընելուն պէս
դիւրին ճանքայ մը բացաւ :

«Գուն հոս կեցիր հսկողութիւն ըրէ, հայր
խմ, ըսաւ Տակօպէտին եւ ինք տոքթոր Պայէ-
նիէի պարտէզը մտաւ :

Մայէօի նշանակած պատուհանը դիւրաւ կը
ճանչուէր. բարձր եւ լայն էր, վրան ալ տե-
սակ մը քիւ դուրս ցցուած էր, վասն զի առաջ
դուռ է եղեր, յետոյ մինչեւ երրորդ մասը պատ
հիւսուած եւ իրարմէ բաւական հեռու վանդա-
կաձողերով պատասպարուած էր : Քանի մը վայր-
կենէ 'ի վեր անձրեւը դադրեր էր. լուսինը՝ զին-
քը ծածկող ամպերէն ազատելով Քարտօվիլ օ-
րիորդին բնակած յարկը լիովին կը լուսաւորէր :
Ակրիքօյ պատուհանին մօտենալով տեսաւ որ
սենեակին մէջ մութ էր. բայց ետեւի կողմը կի-
սարայ դուռ մը կար որուն մէջէն բաւական
պայծառ լոյս մը կերելէր : Նրիտասարդն յու-
սալով որ Քարտօվիլ օրիորդը դեռ նստած էր,
կամացուկ մը պատուհանին ապակիներուն դար-
կաւ :

Քանի մը վայրկեան ետքը սենեակին ներսի
դուռը բոլորովին բացուեցաւ, եւ Քարտօվիլ
օրիորդը՝ որ դեռ պառկած չէր՝ երկրորդ սեն-
եակը մտաւ : Մայէօի հետ տեսնուած ժամա-
նակի զգեստներովը : Չեռքը ճրագ մը բռնած
ըլլալով, իր դմայլելի դէմքը պայծառ կը տես-
նուէր եւ կարծես թէ դարմանք ու սրտատան-
ջութիւն ցոյց կուտար նոյն միջոցին . . . :

Օրիորդը ձեռքի աշտանակը սեղանի մը վրայ
դրաւ եւ դէպ 'ի պատուհանն երթալով ուշադ-
րութեամբ մտիկ ըրաւ . . . : Բայց յանկարծ
վեր ցատկելով մէկէն կանգ առաւ : Պատուհա-
նին ապակիներուն ետեւէն ներս նայող մար-
դու մը գէմքը տեսեր էր աղօտ կերպով : Ակ-
րիքօլ վախնալով որ չըլլայ թէ Քարտօվիլ օրի-
որդը զարհուրելով միւս սենեակը փախչի, նո-
րէն պատուհանը բախեց, եւ դուրսէն լսուիլն
ալ հոգ չընելով, բաւական ամուր ձայնիւ մ'ը-
սաւ . Ակրիքօլ Պատուէնն է » :

Այս խօսքը լսեց Ատրիէն, եւ իսկոյն Մա-
յէօի հետ ըրած խօսակցութիւնը յիշելով մա-
կաբերեց որ Ակրիքօլ ու Տակօպէս վանքը մը-
տեր էին աղջիկները վերցընել տանելու համար .
ուստի պատուհանին քով վազելով, լուսնին
պայծառափայլ լուսովը կատարելապէս ճանչեց
դԱկրիքօլ եւ դգուշութեամբ պատուհանը բա-
ցաւ :

«Օրիորդ, ըսաւ շուտով երիտասարդը, վայր-
կեան մ'անդամ չկայ կորսնցընելիք . Մօնօգօն
կոմսը Փարիզ չէ . հայրս ու ես ձեզ ազատե-
լու եկած ենք : — Շնորհակալ եմ, Պ. Ակրի-
քօլ, ըսաւ օրիորդը խանդաղատազին երախ-
տադիտութեան աւաչով մը . բայց նախ Միսօն
զօրապետին աղջիկներն ազատելու նայեցէք . . .
— Մեր ջանքն այդ ալ է, օրիորդ, եւ ձեզ տես-
նելուս մէկ պատճառն ալ ձեզ հարցնել է թէ
աղջիկներուն պատուհաններն որոնք են : — Մէ-

կուսը գեանի վրայ է, եւ պարտիզին կողմի վեր-
ջին պատուհանն է. միւսինն ալ ճիշդ անոր վրայ
է: — Ուրեմն հիմա ազատեցան, գոչեց երիտա-
սարդը: — Բայց, կարծեմ թէ, ըսաւ Ատրիէն,
առաջին դասիկոնը բաւական բարձր է. հոս
նորակառոյց մասուռին քով տախտակամած յե-
նարաններէ քակուած երկայն ձողեր կան, որք
կրնան ծառայել ձեզ: — Այո, առաջին դասի-
կոնի պատուհանին հասնելու համար սանդուղի
տեղ կրնայ ծառայել ինձ: Հիմա ձեր ազատու-
թեանը նայինք, օրիորդ: — Առ այժմ որբերն
ազատելու ջանացէք, ժամանակն ստիպողա-
կան է. թող անոնք այս դիշեր ազատին. ինձ
համար հոգ չէ օր մ'երկուք աւելի մնալ հոս:
— Ոչ, օրիորդ, ըսաւ երիտասարդը, ընդհակա-
ռակն ձեր այս դիշեր հոսկէց դուրս ելնելն ա-
մենամեծ կարեւորութիւն ունի ձեզ համար.
այնպիսի շահեր կան՝ որոց անտարակոյս եմ որ
դուք անտեղեակ էք: — Ի՞նչ ըսել կուզէք:
— Հիմա երկարօրէն հասկցնելու ժամանակ չու-
նիմ. բայց կաղաչեմ, օրիորդ, քալէ երթանք.
ես այս պատուհանին վանդակաձողերէն երկու-
քը կրնամ փրցընել. . . երթամ ազցան մը բե-
րեմ: — Ատոր հարկ չկայ, ըսաւ օրիորդը, այս
յարկին դուռը դուրսէն պարզ սողնակով մը դոց-
ուած է, եւ մէջն ալ ինձմէ դատ մարդ չկայ.
ուստի կղպանքը կոտրելը դիւրին է ձեզ: — Եւ
տանն վայրկենէն փողոցն ենք, ըսաւ երիտա-
սարդը, ուրեմն շուտ ըրէք, օրիորդ, պատ-

րաստուեցէք, շալ մ'եւ փեղոյր մ'առէք, վա-
սըն զի շատ ցուբա է: Ես հիմա շուտով կու-
գամ: — Պարոն Ակրիքօլ, ըսաւ Ատրիէն ար-
տասուալից աչօք, դիտեմ ինչ մեծ վտանգի մէջ
ինքզինքնիդ կը ձգէք ինձ համար. կը յուսամ
որ օր մը փորձով պիտի ցուցնեմ ձեզ թէ ես
ալ ձեզ պէս լաւ յիշողութիւն ունիմ: Ա՛հ, դու
եւ հողեքոյրդ՝ երկուքդ ալ աշնիւ եւ քաջ ա-
րարածներ էք, եւ ինձ ալ քաղցր է երախտա-
պարտ ըլլալ ձեզ . . . բայց մինչեւ որ Սիսօն
դօրապետին աղջիկներն ազատած չըլլաք, դիս
առնելու մի գաք: — Չեր տուած տեղեկութեան
չնորհիւ անոնց ազատութիւնն արդէն կատար-
ուած է, օրիորդ, երթամ հայրս գտնեմ եւ ձեզ
առնելու գանք »:

Ակրիքօլ՝ Քարտովիլ օրիորդին խելացի խոր-
հըրդին հետեւելով գնաց մատուռին պատին
տակէն երկայն եւ հաստ ձող մ'առաւ, իր կո-
րովի թիկանց վրայ վերցուց եւ շուտով հօրը
քով գնաց: Սակայն Ակրիքօլ շերտափակէն դուրս
ելնելով մատուռին կողմը գացած ժամանակ,
Քարտովիլ օրիորդին այնպէս թուեցաւ որ վան-
քին պարտիզին թաւախիտ թուփերուն մէջէն
մարդակերպ բան մ'ելաւ, վազելով ծառուղի-
ին մէջէն անցաւ եւ բարձրաբերձ տօսխնե-
րու կոյտի մ'ետեւ աներեւոյթ եղաւ: Ատրիէն
զարհուրելով ՚ի զուր ցած ձայնով զԱկրիքօլ
կանչեց որ իմաց տայ. բայց Ակրիքօլ չէր կըր-
նար լսել դայն. վասն զի արդէն հօրը քով հա-

սած էր : Իսկ Տակօպէս սրտատանջ անհամբե-
րութեամբ մէկ պատուհանէն միւսը կերթար
ականջ կը դնէր :

« Աղատեցանք , ըսաւ անոր Ակրիքօլ ցած
ձայնիւ . ահա խեղճ աղջկանց պատուհանները .
այս գետնայարկինն է , այն ալ առաջին դասի-
կոնին : — Աերջապէս » ըսաւ Տակօպէս անպատ-
մելի ուրախութեամբ . եւ վազեց պատուհան-
ները զննելու :

« Անդակապատ չեն եղեր , գոչեց : — Նախ
ստուգենք թէ աղայոց մէկն հոն է , ըսաւ Ակ-
րիքօլ . յետոյ այս երկայն ձողը պատին դնե-
լով մինչեւ առաջին դասիկոնին պատուհանը
կելնեմ , որ շատ բարձր չէ : — Շատ աղէկ ,
աղան , հոն ելնելուդ պէս՝ պատուհանը կը բա-
խես , եւ Ռօզ կամ Պլանչ կը կանչես . երբոր
պատասխան տայ , վար կիջնես , ձողը պատու-
հանին կը կրթնցընենք եւ աղջիկը սահելով վար
կիջնէ . անոնք ճարպիկ եւ սրտոտ են . . .
չուտ ըրէ , չուտ : — Ետքն ալ կերթանք Քար-
տովիլ օրիորդը կազատենք » :


Մինչդեռ Ակրիքօլ ձողը վերցընելով պա-
տին կը դնէր եւ վեր ելնելու կը պատրաստուէր ,
Տակօպէս գետնայարկի վերջին պատուհանին
տպակին բախելով , ամուր ձայնիւ մ'ըսաւ .

« Ես եմ . . . Տակօպէսն եմ » :

Ռօզ Միսօնեան օրիորդն այն սենեկին մէջ
էր : Տարաբաղդ աղջիկը քրոջմէն բաժնուելուն
վրայ յուսահատած՝ սաստիկ տենդէ կը տազնա-

պէր եւ անկողնին բարձն արտաւ քովը կ'ոռո-
գէր : Տակօպէսի պատուհանը բախելէն՝ նախ
վախնալով վեր ցատկեց , բայց երբոր զօրակա-
նին ձայնը , այն սիրելի եւ ծանօթ ձայնը լսեց ,
աղջիկն ելաւ նստաւ անկողնին մէջ եւ ձեռքը
ճակտին տարաւ ստուգելու համար թէ երազ
չըլլայ . յետոյ իր երկայն ու ճերմակ գիշերազ-
գեստին մէջ փաթ թուելով ուրախութեամբ դէպ
'ի պատուհանը վազեց : Բայց պատուհանը բա-
նալուն չմնաց , յանկարծ հրացանի երկու պայ-
թիւն լսուեցաւ եւ անոր հետ «Պահապան դին-
ւորք , հասէք . . . գող կայ , գող կայ » գոչե-
լու ձայներ :

Խեղճ որբը սարսափէն քար կտրեցաւ մնաց ,
աչուրները մեքենայաբար պատուհանին վրայ
տնկած , որուն ետեւէն լուսնին լուսովը եւ
խառնաշիտթ կերպիւ քանի մը մարդոց կատա-
ղարար կռուիլը տեսաւ , մինչդեռ Ռապա-ժօ-
այի ալ մոլեգին հաչիւնը կը խափանէր այս ան-
դադար կրկնուած աղաղակը . « Պահապան դին-
ւորք , հասիք . . . գող կայ . . . մարդասպան
կայ . . . »



ՄԵԾ ԱԻՈՒՐ Մ' ԱՌՁԻ ԵՐԻԿՈՒՆԸ

Սէնթ-Մարիի վանքին մէջ նախընթաց իրողութիւններն անցնելէն երկու ժամու չափ առաջ, Ռօտէն եւ հայր Տ'Էկրինեի՝ Միլիէօ-Տէզ-Իւրսէն փողոցը գումարուած էին նոյն սենեկին մէջ՝ ուր արդէն ընթերցողք տեսած են զիրենք։ Յուլիսի յեղափոխութեանէն ետեւ հայր Տ'Էկրինեի խոհեմութիւն համարեր էր իր ուխտին գաղանի դիւանն ու թղթակցութիւններն առժամանակեայ կերպով Միլիէօ-Տէզ-Իւրսէն փողոցի տունը փոխադրել։ Վասն զի կը կասկածէր որ կառավարութիւնը գուցէ վաճառէ վերապատուելի յիսուսեան հայրերը Ռիւ-Տէ-Բօսթ փողոցի հոյակապ եւ գեղեցիկ ապարանէն՝ զոր Պուրպոնեանք ճրիապէս շնորհեր էին անոնց։

Ռօտէն միշտ գծուծ, միշտ աղտոտ ու ճենճոտ, իր գրասեղանին առջեւ խոնարհաբար նըստած՝ քարտուղարութեան համեստ պաշտօնը կը կատարէր։ պաշտօն մը, որուն ներքեւ ինչպէս արդէն տեսնուեցաւ՝ ուրիշ աւելի կարեւոր պաշտօն մը ծածկուած էր, այն է՝ ուխտին սահմանադրութեան համեմատ՝ իր մեծաւորէն չի դատուիլ, անոր վրայ հսկողութիւն ընել, անոր ամենափոքր գործերը՝ ամենաթեթեւ տպաւորութիւնները լրտեսել եւ Հռոմի տեղեկութիւն տալ։ Ռօտէն իր սովորական անդգամութեանը

հակառակ՝ մտահոգ եւ սրտատանջ կերեւէր .
հայր Տ'Էկրինեիի հրամաններուն կամ հարցմանց
սովորականէն աւելի կարճ կերպով կը պատաս-
խանէր :

« Իմ բացակայութեանս միջոցին նոր բան
մը պատահեցան , հարցուց Ռօտէնի . հետզհե-
տէ եկած տեղեկութիւններն յաջող են : — Խիստ
յաջող : — Կարդացէք նայիմ : — Չանոնք կար-
դալէ առաջ , ըսաւ Ռօտէն , պէտք է իմացընեմ
ձեր Արժանապատուութեան թէ Մօսօք երկու-
օրէ 'ի վեր հասէ : — Ի՞նչ կրտէք , ըսաւ Տ'Էկ-
րինեի « բբան զարմանալով : Ես կը կարծէի թէ
Գերմանիայէն ու Չուիցցերիայէն մեկնած ժա-
մանակ Գաղղիոյ հարաւային դաւառներն եր-
թալու հրաման ստացեր էր Չրիպուրկէն : Նի-
մի ու Ալինեօնի մէջ այս միջոցին շատ օգ-
տակար կրնար ըլլալ . վասն զի բողոքական-
ներն իրար անցած են եւ կը վախցուի որ կա-
թոլիկաց դէմ հակառակութիւն մը կեղնէ :
— Չեմ գիտեր թէ , ըսաւ Ռօտէն , արդեօք իր
ճանքան փոխելու մասնաւոր պատճառ մը ու-
նեցած է Մօսօք : Իր խօսքին նայելով , հաս-
ներկայացումներ պիտի տայ : — Ի՞նչպէս : — Այո-
նէն անցած ժամանակ թատերական գործակա-
տար մը բարձր դիմեր խոստանալով Բօրթ-Սէն-
-Մարթէնի թատրոնին մէջ ներկայացումներ
տալ առաջարկեր է . ինք ալ չէ ուղեր այս շա-
հաւէտ առաջարկութիւնը մերժել : — Այնպէս
թող ըլլայ , ըսաւ հայր Տ'Էկրինեի ուօերը թոթ .

ւելով . բայց գրքոյկներ բաժնելով , վարդարան-
ներ եւ պատկերներ վաճառելով , ինչպէս նաեւ
Գաղղիոյ հարաւային գաւառաց եւ Պրըթայնի
կրօնասէր եւ ազէա ժողովրդաց վրայ անտա-
րակոյս 'ի գործ դնելիք ազդեցութեամբ այնպի-
սի ծառայութիւններ կրնար ընել , որ Փարիզի
մէջ անհնարին է : — Ինք հոս վարն է հակայ մար-
դու մը հետ . վասն զի իբրեւ վաղեմի ծառայ
ձեր Արժանապատուութեան՝ Մօսք կը յուսայ
այս երկուսն ձեր աջն համբուրելու պատիւն ու-
նենալ : — Անհնարին է . . . անհնարին . . . :
Դուք գիտէք որչափ դժբաղմունք ունինք այս ե-
րկուսն . . . : Սէն—Պրանսօա փողոցը գացին :
— Այո , գացին : Յերունի հրեայ պահապանը
կրտէ թէ նօտարն արդէն իմաց տուեր է իրեն
որ վաղը ժամը վեցին որմնադիրներ պիտի եր-
թան պատով դոցուած դուռը քակեն , եւ հա-
րիւր յիտուն տարիէ 'ի վեր առաջին անգամ այն
տունը պիտի բացուի : »

Հայր Տ'էկրինեի վայրկեան մը խորհրդածեց .
յետոյ ըսաւ Ռօտէնի . « Այսպիսի վճռական վայր-
կեան մը մօտեցած ժամանակ՝ բնաւ բան մը զանց
ընելու չենք . ամեն բան մտքերնուս մէջ պատ-
րաստ պէտք է ունենանք : Անգամ մ'ալ կարդա-
ցէք այն ծանօթութիւնը՝ որ ասկէց դար ու կէս
առաջ ընկերութեան մատենաներուն մէջ ար-
ձանագրուած է Պ. Ռէնրօնի վրայ :

Քարտուղարը դարակի մը մէջէ թուղթ մը
հանեց եւ հետեւեալը կարդաց .

« Այսօր , 19 փետրւար 1682, վերապատ-
« ւելի գաւառական հայր Ալէքսանդր Պուրտոն
« հետեւեալ աղղարարութիւնը դրկեց , որոյ լու-
« սանցքին վրայ Ապագային համար վերջին ծայր կարեւոր
« խօսքը գրուած է :

« Մեր ուխտին հայրերէն մէկը հողեւարք
« մը խոստովանցընելով ամենակարեւոր գաղտ-
« նիք մ'իմացուած է :

« Պ. Մարիոս Ռէնբօն , բողոքական կրօ-
« նին ամենէն եռանդուն եւ ահաւոր գլխաւոր-
« ներէն եւ մեր սուրբ ընկերութեան ամենէն
« ոխերիմ թշնամիներէն մէկը՝ առ երեւոյթս մեր
« մայրենի եկեղեցւոյ փարախը դարձեր էր ,
« որպէս զի իր անկրօն եւ մեղապարտ ընթացից
« պատճառաւ գրաւման վտանգի մէջ ինկած
« հարատութիւնն ազատէ : Մեր ընկերութեան
« անդամներէն այլ եւ այլ անձինք հաստատելով
« թէ Ռէնբօնի դարձն անկեղծ չէր եւ սրբա-
« պիղծ խայծ մը կը ծածկէր , ուստի յիշեալ պա-
« րօնը հերեօթիկութեան մէջ ինկած նկատ-
« ուելով իր գոյքը մեր վեհափառ Նուդովիկոս
« ԺԳ թագաւորէն գրաւեցաւ , եւ յիշեալ Պ.
« Ռէնբօն ալ մշտնջենապէս թիարան երթալու
« դատապարտուեցաւ . բայց անձնասպան ըլլա-
« լով թիարան չգնաց . այս նողկալի ոճրագոր-
« ծութեան պատճառաւ իր մարմինը փողոցնե-
« րուն մէջ քարշուելով շուներուն առջեւ ձրդ-
« ւեցաւ :

« Այս յառաջարանէն ետեւ գանք մեր ըն-

« կերութեան ապագային եւ շահուն համար վեր-
« ջին ծայր կարեւորութիւն ունեցող գաղանի
« բանին :

« Ահապիտ Նուդով իկոս ԺՊ, եկեղեցւոյ
« եւ մասնաւորապէս մեր ուխտին վրայ ունե-
« ցած հայրական եւ կաթողիկէ խնամօքն՝ այս
« դրաւման արդիւնքը մեզ շնորհած էր, փոխա-
« բէն այն ծառայութեան դոր ըրեր էինք՝ Պ .
« Ռէնբօնի հերետիկոս սրբապիղծ եւ վատա-
« նուն մարդ մ'ըլլալը երեւան հանելու գոր-
« ծակցելով . . . :

« Հաւաստի կերպով կիմանանք որ այս գը-
« բաւումէն աղատ պահուեր եւ հետեւաբար մեր
« ընկերութեան ձեռքէն գողցուեր են՝ Փարի-
« ղի Սէն—Ֆրանսուա փողոցի թիւ 3 տունը եւ
« յիսուն հազար ոսկւոյ գումար մը :

« Տունը՝ գրաւումէն առաջ՝ կեղծ վաճառ-
« մամբ մը Պ. Ռէնբօնի մէկ բարեկամին արուեր
« է . յիշեալ բարեկամը դժբաղդարբար ջերմե-
« ռանդ կաթողիկ մ'ըլլալուն՝ չենք կրնար խըս-
« տութիւն բանեցընել անոր դէմ :

« Ս.յն տանը գուռը յիշեալ բարեկամին մե-
« դապարտ բայց անպատուհասելի կամակցու-
« թեամբը պատ հիւսուեր է, եւ Պ. Ռէնբօնի
« վերջին կամաց համեմատ դար ու կէսէն ետեւ
« պիտի բացուի :

« Իսկ յիսուն հազար ոսկին դժբաղդարբար
« մինչեւ հիմա մեզ անձանօթ մնացած ձեռքե-
« բու յանձնուեր է, որպէս ղի շահու դրուե-

« լով մինչեւ հարիւր յիսուէն տարի տակոսը վրան
« դարնուի եւ յետոյ Պ. Ռէնբօնի թուներուն
« բաժնուի . գումար մը՝ որ այնչափ տարուան
« շահերու դիզմամբն ահագին կերպով պիտի
« մեծնայ եւ հարկաւ քառսուն կամ յիսուէն մի-
« լիոն ֆրանքի պիտի հասնի :

« Պ. Ռէնբօն՝ անժանօթ մնացած պատճառ-
« ներով դորս կաակագրի մը մէջ նշանակած է ,
« յիսուէն հազար ոսկիին ուր յանձնուած ըլլալը
« գաղանի պահած է իր ընտանիքէն, որ բողո-
« քականաց դէմ ելած հրովարտակներով Գաղ-
« ղիայէն վճնատուած ու Յերոպա աքսորուած է .
« միայն թէ պատուիրած է իր ազգականաց , որ
« իրենց զաւակներուն որդւոց յորդի պատուի-
« րեն որպէս զի հարիւր յիսուէն տարի անցնելէ եւ-
« տեւ, 1832 փետրվար 13ին Փարիզ Մէն-Պրան-
« սօս փողոցը դանուին . եւ այս աւանդական
« պատէրը չմոռցուելու համար ո՞վ ըլլալն ան-
« յայտ՝ բայց դէմքին նկարագիրն առնուած մար-
« դու մը յանձնարարութիւն ըրեր է պղնձէ մի-
« տալներ շինել տալ , որոց վրայ իր այս կամքն
« ու թուականը փորագրուին , եւ իր ընտանեաց
« անդամներուն մէկ մէկ հաս դրկել : Այս անօ-
« բէնութիւնը մանաւանդ անոր համար հարկա-
« լոր է , որ ուրիշ անժանօթ պատճառաւ մը՝
« որ նոյնպէս կաակագրին մէջ բացատրուած կը
« կարծուի , ժառանգները՝ նոյն օրը կէս օրէն
« առաջ անձամբ պիտի ներկայանան եւ ոչ փո-
« խանորդի միջոցաւ . ապա թէ ոչ՝ ժառան-

« դու թեան բաժանորդ ու թեանէն դուրկ պիտի մը-
« նան :

« Անձանօթ մարդը՝ որ այս միտալները Աէն-
« բօնի ազգականաց բաժնելու դացած է, երե-
« սուն ու վեց տարեկան անձ մ'է, խրոխտ ու
« ամուր դէմքով եւ բարձր հասակաւ . սեւ
« հաստ եւ զարմանալի կերպով իրարու կցուած
« յօնք ունի . իր անունը Յովսէփի կոչել կու-
« տայ . կը կարծուի որ այս ճանապարհորդը
« փութաջան եւ փտանդաւոր լրտես մ'է եօթն
« Միացեալ-Պաւտայ կատաղի հասարակապե-
« տականներուն եւ բողոքականաց կողմանէ :

« Վերոյգրեալներէն կը հետեւի որ այս դու-
« մարը՝ զոր հաւատարացն այնպէս գտնաւոր-
« դի կերպով անձանօթ ձեռքի մը աւանդած
« է, մեր ամենատիրելի թագաւորին մեղ շնոր-
« հած դրաւումէն խուսափած է . հետեւարար
« ամենամեծ վնաս մ'է, այլանդակ գողութիւն
« մ'է, զոր գտնելու եւ ձեռք անցունելու հա-
« մար ամեն ջանք 'ի դործ պէտք է գնենք, ե-
« թէ ոչ ներկայիս՝ գոնէ ապագային մէջ :

« Մեր ընկերութիւնը՝ վասն ամենամեծ վա-
« ռայն Ատուծոյ եւ մեր սուրբ հօր՝ անկո-
« բուստ ըլլալով, դիւրին կըլլայ մեղ՝ քարոզ-
« շութեանց եւ ուրիշ հաստատութեանց միջո-
« ջաւ աշխարհի ամեն կողմի հետ մեր ունեցած
« յարաբերութեանց շնորհիւ՝ հիմակուց Աէնբօնի
« ընտանիքը որդւոց յորդի հետագօտել եւ բնաւ
« աչքէ չկորսնցընել, որպէս զի հարիւր վառնե

✓
93

« տարի ետքը , այս շեղջակուտեայ ամբառ հա-
« բրատութեան բաժնուած ժամանակ՝ մեր ըն-
« կերութիւնը կարենայ տէր ըլլալ այս գոյքին՝
որ նենգութամբ իր ձեռքէն յափշտակուած է ,
« եւ տէր ըլլալ՝ ամեն հնարք եւ միջոց բանե-
« ցընելով , մինչեւ անգամ դաւով եւ բռնու-
« թեամբ . որովհետեւ այն պիղծ եւ գարշելի
« հերետիկոսէն շարութեամբ գողցուած մեր այս
« գոյից սպառաշին մէջ տէր ըլլալ ուղղներուն
« դէմ՝ մեր ընկերութիւնն ուրիշ կերպով վար-
« ւելու պարտական չէ . վասն զի վերջապէս ար-
« դար եւ օրինաւոր է պաշտպանել պահել եւ
« վերատին ձեռք անցունել մեր գոյքը՝ այն ա-
« մեն միջոցներով զորս Աստուած կուտայ մեզ :
« Ահնրօնի դերդաստանը՝ մինչեւ որ այս
« հարատութիւնն ամբողջ մեզ չհատուցանէ ,
« մեղապարտ եւ դատապարտելի պիտի մնայ
« իբրեւ անիծեայ սերունդ այս նոր հաւատու-
« րաց Վայէնին , եւ անխնայ հսկողութեան մը
« ներքեւ պիտի մնայ միշտ :

« Ասոր համար՝ հարկ է որ այս օրէն սկըս-
« եալ ամեն տարի՝ յիշեալ ընտանեաց ամեն մէկ
« անդամոց յաջորդական կացութեան ու վիճա-
« կին վրայ տեսակ մը քննութիւն հաստատուի : »

Ռօտէն Նիթերցումը կարելով ըսաւ հայր
Տ'էկրինելի . « Ասկէ ետեւ կուգայ Ռէնրօնեան
ընտանիքին 1682էն մինչեւ մեր օրն՝ ունեցած
վիճակին վրայ տարուէ տարի շարունակուած
տեղեկագիրը՝ զոր անօգուտ կը համարիմ կարդալ

ձեր Արժանապատուութեան :— Խիստ անօգուտ ,
ըսաւ հայր Տ'Ալկրինեի . այդ ծանօթութիւնն ա-
մեն պէտք եղածը կը բովանդակէ . . . : Յե-
տոյ , պահ մը լռութենէ ետեւ՝ յաղթական ամ-
բարտաւանութեամբ մը յարեց . «Տ'ըչափ մեծ է
ընկերակցութեան դօրութիւնը՝ երբ որ աւան-
դութիւնն ու յաւէրժութիւնն իրեն նեցուկ ու-
նի . . . : Դար ու կէսէ՛ի վեր մեր դիւանին մէջ
պահուած այդ ծանօթութեան շնորհիւ , այդ ըն-
տանիքը որդւոց յորդի շարունակ հակողութեան
ներքեւ դրուեր է . . . մեր ուխտը միշտ իր աչ-
քն անոր վրայ ուղղեր , եւ աքսորի երեսէն
երկրագունտիս ամեն կողմը ցան եւ ցիր եղող
ամեն մէկ անդամոց ետեւէն պարտեր է . . . :
Վերջապէս վաղը ձեռք պիտի անցունենք մեր
առնելիքը՝ որ 'ի սկզբան մեծ բան մը չէր , բայց
հարիւր յիսուն տարուան մէջ թագաւորական
հարատութեան հասած է . . . : Այո՛ , պիտի
յաջողինք , վասն զի ամեն հաւանական արդելք-
ներուն առաջքն առած եմ . . . : Այսու ամե-
նայնիւ մէկ մտատանջութիւն մ'ունիմ : — Ի՞նչ
է , հարցուց Ռօտէն : — Այս է որ այնչափ աշ-
խատեցանք ու չկրցանք Յէն—Տրանսօս փողո-
ցի տան պահապանէն մեր ուղած տեղեկութիւն
ներն ստանալ : Վերջին անգամ մ'ալ ջանք ե-
ղաւ , ինչպէս որ հրամայեր էի : — Նղաւ , բայց
այս անգամ ալ դարձեալ ծերունի հրէին բեր-
նէն բան մը քաղել անհնարին եղաւ : Մնաց որ
այդ հրեայն դրեթէ սղու պէս բան մ'եղած է .

կինն ալ անկէ վար չմնար : — Նրբ կը խորհիմ
որ , ըսաւ հայր Տ'էկրիմեի , Սէն—Ֆրանսուա փո-
ղոցին տունը հարիւր յիսուն տարի առաջ գոց-
ուելէ ու պատով հիւսուելէ 'ի վեր , անոր պահ-
պանութիւնը որդւոց յորդի շարունակած է այդ
Սամուէլի տոհմին մէջ , չեմ կրնար հաւա-
տալ որ այդ մարդոց եւ ոչ մէկն իմացած ու
գիտցած չըլլայ թէ այդ ամբաւ հարստութեան
յաջորդական աւանդապահներն որոնք եղած են
մինչեւ այսօր : — Ս, յս գործին վերաբերեալ ծա-
նօթագիրերէն տեսաք որ , ըսաւ Ռօաէն , մեր
ուխար 1682էն 'ի վեր մեծ խնամով հետամուտ
եղած է : Հայր Պուրտօնի ծանօթագրին այդ
մութ կէտին վրայ քանի մը տեղեկութիւն ըս-
տանալու համար ժամանակ ժամանակ փորձեր
եղած են . բայց ամեն անգամ ալ այդ հրեայ
պահապաններուն ցեղը համբ կեցած է , որմէ
պէտք է եզրակացընենք թէ բան մը չէին գի-
տեր : — Ահա այդ ըսածնիդ անհնար երևցած
է ինձ . . . վասն զի վերջապէս այդ ամեն Սա-
մուէլներուն հաւն ասկէց հարիւր յիսուն տա-
րի առաջ տանը գոցուելուն ներկայ գտնուած
է : Մեր քով եղած տեղեկութիւնները կրտն
թէ Պ. Ռէնքօնի հաւատարիմ գործակալը կամ
ծառայն էր . ուստի անհնար էր որ շատ բանե-
րու ծանօթ չըլլար , որոց աւանդութիւնն ան-
շուշտ յաւերժացած է իր ընտանեաց մէջ : — Ս-
թէ ներուի ինձ փոքրիկ գիտողութիւն մ'ընել ,
ըսաւ Ռօաէն խոնարհաբար : — Թօսեցէք . . . :

— Գեո շատ տարի չէ, խոստովանանքի միջոցաւ ստուգուեցաւ որ ստակները կեցած էին եւ ահագին գումարի մը հասած էին : — Անտարակոյս, այդ յայտնութիւնն էր որ մեր վերապատուելի հանրահօր խորին ուշադրութիւնը հրաւիրեց այս գործին վրայ . . . : — Ըսել է է որ այդ ժառանգութեան անհուն արժէքը գիտցող կայ, թէ եւ շատ հաւանական է որ Ռէնքօնի տոհմին ամեն ժառանգները չեն գիտեր : — Այո, պատասխանեց հայր Տ'Էկրիմեի, այս տեղեկութիւնը խոստովանահայր քահանային տուող կինը խիստ արժանահաւատ է . . . : Գեո վերջին ժամանակներս նոյն յայտարարութիւնը նորոգեց. եւ թէպէտ խոստովանահայրը շատ ստիպեց դայն որ ստակներն որու քով ըլլալն ալ յայտնէ, բայց կինը չուզեց յայտնել. սակայն հաստատեց որ վերջին ծայր հաւատարիմ մարդու ձեռք է : — Ուրեմն ինձ կը թուի թէ, ըսաւ Ռօտէն, գիտնալու ամենակարեւոր բանն հաւաստի կերպով գիտցող կայ : — Եւ ո՞վ գիտէ թէ այս ահագին գումարին աւանդապահը՝ որչափ եւ հաւատարիմ ու անխարդախ մարդ մը կը կարծուի, վաղը Սէն—Ֆրանսօա փողոցի տունը պիտի ներկայանայ : Ասոր համար ահա՛ քանի որ ժամանակը կը մօտենայ՝ իմ ալ սրտատանջութիւնս ահամայ կաւելնայ . . . : Ա՛հ, յարեց հայր Տ'Էկրիմեի վայրկեան մը լռութենէ ետեւ, այս գործին մէջ այն աստիճան մեծ շահեր կան, որ յաջողութեան հետեւանքն անհաշուելի է . . . :

վերջապէս , գոնէ ինչ որ հնարաւոր էր՝ ամենն
ալ փորձուեցաւ . »

Այս խօսքերուն՝ զորս հայր Տ'Եկրինեի Ռօ-
տէնի կուղղէր՝ անոր հաւանութիւնը խնդրելու
կերպով , լրտեսը պատասխան չտուաւ . . . :

Աբբան զարմացմամբ անոր նայելով ըսաւ .
« Ձեր կարծիքն ալ այս չէ . աւելի բան մ'ընե-
լու կրնայի՞նք համարձակիլ . միթէ հնարաւոր
ին մինչեւ ամենավերջին ծայրը չգացի՞նք : »

Ռօտէն ակնածութեամբ խոնարհեցաւ , բայց
դարձեալ խօսք մը չարտասանեց :

« Եթէ կը կարծէք որ նախադրուշութիւն
մը մտացուած է , գոչեց հայր Տ'Եկրինեի սրտա-
տանջ անհամբերութեամբ , ըսէք . . . դեռ ժա-
մանակ կայ . . . : Արկին կը հարցընեմ . կը կար-
ծէք թէ ինչ որ հնար էր ընել՝ կատարուեցաւ :
Ամեն ժառանգներն արդիլուած են . Գաբրիէլ
վաղը Սէն—Ֆրանսօսա փողոցը ներկայանալով՝
Ռէնբօնի ազգատոհմին միակ ներկայացուցիչն
եւ հետեւաբար այս ամբաւ հարստութեան միակ
ժառանգը չպիտի՞ ըլլայ : Արդ՝ իր հրաժարման
եւ մեր ուխտին օրինաց համեմատ՝ ո՞չ ապաքէն
մեր ուխտը պիտի ժառանգէ այն հարստութիւ-
նը : Կարելի՞ էր ասկէ աղէկ կամ ուրիշ կեր-
պով գործն այս վիճակին հասցընել : — Ես չեմ
համարձակիր այդ մասին կարծիք մը յայտնել ,
ըսաւ Ռօտէն խոնարհաբար գլուխը նորէն ծռե-
լով , յաջողութիւնը կամ անյաջողութիւնը պիտի
պատասխանէ ձեր Արժանապատուութեան . . . »

Հայր Տ'Էկրինեի ուսերը թոթվելով զղջաց
այս գրութեան մեքենային խորհուրդ հարցը-
նելուն վրայ, որ ըստ իւր կարծեաց՝ երեք ձիրք
միայն ունէր. յիշողութիւն, խորհրդապահու-
թիւն եւ ճշդութիւն:



ԳԼՈՒԽ ԺԱ.

ԽԵՂԴԻԶԸ

Պահ մը լուռ կենալէ ետեւ՝ հայր Տ'Էկրինեի
ըսաւ. « Կարդացէք նշանակեալ անձանց
իւրաքանչիւրին՝ վրայ այս օրուան տեղեկագրերը:
— Ահաւասիկ այս երիկուանը . . . որ հիմա
բերին :

— Տեսնենք : »

Ռօտէն հետեւեալը կարդաց :

« Ժաք Ռէնքօն, Քուչ-Թու-Նիւ մական-
« ւանեալ, այս երիկուն ժամ ութին պարտա-
« պանաց բանտին մէջ տեսնուեցաւ . . . : »

— Վաղն այդ մարդէն վախ չունինք . . .
եւ . . . շարունակեցէք :

— Սէնթ-Մարիի վանքին մեծաւորուհի տի-
« կինը՝ Սէն-Տիդիէ իշխանուհւոյն ազգարարու-
« թեան համեմատ՝ պարտք համարեց Ռօզ եւ
« Պլանչ Սիմօնեան օրիորդներն առաւել խստիւ
« արգելափակ ընել : Այս երիկուն ժամ իննին
« զգուշութեամբ իրենց խցիկներուն մէջ փակ-

« ւեցան , եւ դիշերս ալ դինեալ պահապաններ
« հսկողութիւն պիտի ընեն վանքին պարտիզին
« մէջ : »

— Այդ զգուշութեանց շնորհիւ այդ կողմէն ալ երկիւղ չկայ , ըսաւ հայր Տ'էկրինեի շարունակեցէք :

— Պ. Տոքթոր Պալէնիէ ալ Սէն-Տիգիէ իշ-
« խանուհւոյն ազդարարութեան համեմատ Քար-
« տովիլ օրիորդին վրայ հսկողութիւնը կը շա-
« րունակէ . ութը երեք քառորդ անցած՝ օրիոր-
« դին բնակած յարկին դուռը կղպուեցաւ : »

— Ատկէց ալ վախ չմնաց . . . :

— Գալով Պ. Հարտիի , յարեց Ռօտէն , այս առաւօտ դիր մ'ստացայ Թուլուղ գտնուող Պ. Տը Պրէսաքէն , որ Պ. Հարտիի մտերիմ բարեկամն է , եւ մեզ ալ խիստ յաջող կերպիւ ծառայեց քանի մ'օրէ 'ի վեր յիշեալ տարազագործը Փարիզէն հեռացընելով : Գրին մէջ Պ. Հարտիի մէկ նամակը կայ՝ զոր իր մէկ բարեկամին ուղղած է : Պ. Տը Պրէսաք պարտք համարեր է այն նամակը ճանբէն դարձունելով մեզ զրկել իբրեւ ապացոյց իր բանեցուցած հնարից յաջողութեան , որոց յարգը կը յուսայ թէ կը ճանչուի մեզնէ . վասն զի , կըսէ , մեզ ծառայելու համար իր մտերիմ բարեկամն անարժան կերպիւ կը խաբէ՝ նողկալի կատակերգութիւն մը խաղալով : Ուստի Պ. Տը Պրէսաք տարակոյս չունի որ այս ըրած կարեւոր ծառայութենէն ետեւ՝ մեր բացարձակ իշխանութեան ներքեւ մտնե-

լու համար պէտք եղած գիրերը կը դրկենք խրեն , որովհետեւ այն գիրերը կրնան յաւիտեան կորսնցընել իր սիրած մէկ կիսը , որուն հետ պոռնկական տափանօք կապուած է . . . Վերջապէս կը խնդրէ որ գթանք իր գտնուած սարսափելի վիճակին վրայ , որով հարկադրեալ է՝ կամ իր պաշտած կիսը կորսնցընել ու անպատուել , կամ իր մտերիմ բարեկամը վատարար դաւաճանել :

— Ս. յգլխի պոռնկական տրտունջները գըթութեան արժանի չեն , պատասխանեց հայր Տ'էկրիննի արհամարհոտ կերպով . սակայն պէտք եղածը կը խորհուի . . . Պ. Տը Պրէսաք կրնայ տակաւին օգտակար ըլլալ մեզ , Բայց կարգացէք Պ. Հարաիի նամակը , նայինք ինչ գրեր է այդ ամբարիշտ եւ հասարակապետական տարազագործը՝ որ այն անիծեալ տոհմին արժանի թոռն է , եւ զոր շատ կարեւոր էր հեռացընել :

— Ահա Պ. Հարաիի նամակը , ըսաւ Ռօտէն . վաղը կը դրկենք որու որ ուղղուած է . Քե հետեւեալը կարգաց :

« Թուրուգ 10 փետրվար »
 « Վերջապէս ահա ժամանակ կը գտնեմ , սիրելի պարոնս , ձեզ նամակ գրելու եւ յանկարծական ուղեւորութեանս պատճառը բացատրելու , որ եթէ ոչ սրտատանջութիւն՝ գոնէ զարմանք պատճառեց ձեզ : Միանգամայն ծառայութիւն մը պիտի խնդրեմ ձեզնէ , Գործը երկու խօսքով հասկցընեմ : Ար յիշէք անշուշտ որ շատ

անգամ Յէլիքս Պրէսաքի խօսքն ըրած եւ ձեզ ,
որ տղայութեան ընկերներէս մէկն է , բայց
տարիքով ինձմէ փոքր է . զիրար միշտ գորո-
վանօք սիրած ենք , եւ մէկ մէկու սրտագին
բարեկամութեան ապացոյցներ տուած ըլլալով
կատարեալ վստահութիւն ունինք իրարու վը-
րայ . մէկ խօսքով ամենասիրելի եղբայր մ'է
ինձ : Այս խօսքով ինչ ըսել ուզելս կը հաս-
կընաք : Քանի մ'որ առաջ գիրք մը գրեց ինձ Թու-
լուզէն , ուր ժամանակ մը կենալու գացած էր :

« Եթէ դիս կը սիրես , Թուլուզ եկու , շատ
պէտք ունիմ քեզ , կըսէր . անմիջապէս ճան-
բայ ել . . . քու մխիթարութիւններդ թերեւս
ապրելու քաջութիւն տան ինձ . . . Եթէ ուշ
հասնիս , ներէ ինձ եւ մերթ ընդ մերթ յիշէ այն
անձը՝ որ մինչեւ վերջը քու լաւագոյն բարե-
կամդ եղած է :

« Կրնաք դատել զգացած կսկիծս ու սար-
սափս : Իսկոյն ձիեր բերել կուտամ . գործարա-
նապետս՝ որ պատուական ծերունի մ'է՝ եւ զոր
շատ կը յարգեմ , Սիմօն զօրապետին հայրը , իմա-
նալով որ Քաղղիոյ հարաւակողմը կերթայի , աղա-
չեց որ զինքն ալ հետս տանիմ : Քանի մ'որ զայն
Քրէօզի դաւառը պիտի թողուի , ուր նոր հաս-
տատուած շոգեշարժ գործարանները կուզէր
զննել : Սիրով հաճեցայ հետս տանիլ զայն , մանա-
ւանդ այս պատճառաւ որ գոնէ Պրէսաքի նամա-
կէն զգացած ցաւս ու տապնապս կրնայի անոր
յայտնել :

« Թուլութիւն կուգամ , եւ կիմացընեն ինձ թէ
առջի օրը քաղաքէն մեկնեմ է՝ զէնք տանելով
իր հետ եւ սաստիկ յուսահատութեամբ տաղ-
նապետալ : Անհնար եղաւ հասկընալ նախ թէ
նոր գացած էր . երկու օր ետքը մեծ դժուար-
ութեամբ քանի մը տարտամ տեղեկութիւններ
քաղելով՝ որ կողմ երթալն իմացայ . վերջապէս
հազար փնտռութիւնքէ ետեւ՝ խեղճ գեղի մը մէջ
զինքը գտայ : Երբէք , բնաւ երբէք այնպիսի
յուսահատութիւն տեսած չէի . բուն բան մը չի
կար , բայց միայն չարագուշակ սրտաբեկու-
թիւն մը , վայրագ լռութիւն մը : 'Ն սկզբան
գրեթէ զիս մերժեց . յետոյ իր սոսկալի տրտա-
մութիւնը վերջին դառնութեան հասնելով՝ քիչ
քիչ թուլցաւ , եւ քառօրդ մ'ետքը լալով թե-
ւերուս մէջ ինկաւ . . . : Ատրճանակները լը-
ղուն քովը կեցած էին : Նթէ օր մ'ալ ուշա-
նայի . . . թերեւս իր գործը լմնցած էր . . . :
Չեմ կրնար իր զարհուրելի յուսահատութեան
պատճառը քեզ հասկըցընել , այս գաղտնիքն
իմս չէ . բայց իր յուսահատութիւնը զիս չզար-
մացուց . . . : Ի՞նչ ըսեմ ձեզ . կատարեալ բը-
ժըչկութիւն մը կայ ընելիք : Հիմա պէտք է
այս անգթաբար կեղեքեալ խեղճ սիրտն ամո-
քել , դարմանել եւ՝ սպիացընել : Բարեկամու-
թիւնը միայն կրնայ այս դժուար գործին ձեռ-
նարկել , եւ ես մեծ յոյս ունիմ . . . : Չինքը
համոզեցի ելնել ասկէց եւ առժամանակ մը ճա-
նապարհորդութիւն ընել . շարժումը , մտա-

յին զբաղմանց փոփոխութիւնը կրնան օգտա-
կար ըլլալ իրեն . . . : Չինքը Նիս պիտի տա-
նիմ . վաղը ճանբայ կելնենք . . . : Եթէ այս
ուղեւորութիւնը երկարել ուզէ , պիտի երկա-
րենք , վասն զի գործերս այնչափ խախտուա-
կան չեն , եւ մինչեւ մարտի վերջը կրնամ ֆա-
րիդէն հեռու մնալ :

« Իսկ ձեզնէ խնդրելիք ծառայութիւնս
թէական է : Ահաւասիկ իրողութիւնը :

« Մօրմէս մնացած քանի մ'ընտանեկան
թուղթերէ կերելի որ ինձ համար շահ մը կայ
փետրվար 13ին ֆարիդ Սէն—Պրանսօս փողոցը
3 թիւ տունը գանուելու : Հարց ու փորձ ըրելի
բան մը չէի կրցած իմանալ , բայց միայն թէ
այն ամենահին երեւոյթով տունը հարիւր յի-
սուն տարիէ 'ի վեր գոցուած էր իմ մայրական
հաւերուս մէկուն արտառոց մէկ տնօրէնութեամ-
բը , եւ ներկայ փետրվար ամսոյս 13 ին պիտի
բացուէր 'ի ներկայութեան ժառանգակիցներուս ,
որոց ո՛վ ըլլալն իսկ չեմ գիտեր : Արդ՝ ես ան-
ձամբ չկրնալով ներկայ գանուել , գրեցի գոր-
ծարանապետիս , Միմօն զօրապետին հօրը , գոր-
Ֆրէօզի գաւառը թողուցեր էի եւ որոյ վրայ
լիակատար վստահութիւն ունիմ , որպէս զի ֆա-
րիդ երթայ եւ տանը բացուելուն ներկայ գրա-
նուի , ոչ թէ իբրեւ փոխանորդ , վասն զի անօ-
գուտ է , այլ իբրեւ հետաքրքիր , եւ իմ նախ-
նի ազգականիս այս վիպասանական կամքին ար-
դիւնքն ինչ ըլլալը գրով իմացընէ ինձ 'ի Նիս :

Նւ որովհետեւ կրնայ ըլլալ որ դործարանապետս
 ուչ հասնի Փարիզ եւ այս պաշտօնը չկրնայ կա-
 տարել, մեծապէս շնորհակալ կըլլամ ձեզ եթէ
 մեր տունն երթաք 'ի Բլէսիս եւ իմանաք թէ
 դործարանապետս հոն հասած է, եւ եթէ չէ
 հասած, անոր տեղ դուք երթաք Սէն—Յրան-
 սօս փողոցի տան բացուելուն ներկայ գտնուիք :

«Ար կարծեմ որ այն օրը Փարիզ շրանուե-
 լալս աննշան գոհողութիւնս մ' ըրած պիտի ըլ-
 լամ իմ խեղճ Պրէսաք բարեկամիս . բայց եթէ
 գոհողութիւնս շատ մեծ ալ ըլլար, դարձեալ
 գոհ պիտի ըլլայի, վասն զի իմ խնամքս ու բա-
 րեկամութիւնս հարկաւոր էին այնպիսի անձի
 մը՝ զոր ինձ եղբայր կը համարիմ :

«Քւտի կաղաչեմ որ տանը բացուելուն
 ներկայ գտնուիք, եւ ձեր հետաքրքրական պաշ-
 տօնին արդիւնքը գրով խնայընէք ինձ 'ի Նիս,
 եւ այլն : »

ՅՐԱՆՍՍՍ ԶԱՐՏԻ

«Թէպէտ եւ Սիմօն մարաջախտին հօրը ներ-
 կայութիւնը մտատակար կարեւորութիւնս մը չու-
 նի մեզ համար, բայց եւ այնպէս աւելի լաւ
 կըլլայ որ ան ալ վաղը ներկայ չգտնուի տանը
 բացուելուն, ըսաւ հայր Տ'Ակրինելի . սակայն
 հոգ չէ . Պ . Հարտիի բացակայ ըլլալն աներկ-
 քայելի է : Ար մեայ հնդիկ իշխանազուէնը : Ս.յն
 երիտասարդին նկատմամբ, յարեց հայր Տ'Ակ-
 րինելի խոկուն գէմքով, շատ աղէկ ըլլինք Պ .
 Նորիալը թող տալով որ Քարտօլիլ օրիորդին
 դրկած ընծայներն անոր տանի : Պ . Նորիալի հետ

գայուղ բժիշկը՝ որ Պ. Պալէնիէի ընտրածն է՝
բնաւ կասկած չազդեր : — Բնաւ, սլաստասխա-
նեց Ռօտէն : Մեզ գրած երէկուան նամակը
վերջին աստիճան ասպահովիչ էր : — Ուրեմն հըն-
դիկ իշխանագնէն ալ վախնալու բան մը չկայ,
ըսաւ հայր Տ'էկրինեի . ամեն բան յաջող վիճա-
կի մէջ է : — Իսկ Գաբրիէլի գալով, յարեց Ռօ-
տէն, այս առաւօտ վերստին դիր գրած է, եւ
երեք օրէ 'ի վեր ձեր արժանապատուութեան
հետ անգամ մը տեսակցելու համար անգա-
գար եւ 'ի դուր ըրած խնդիրը դարձեալ կը
կրկնէ : Մեր տան մէջ հինգ օրէ 'ի վեր արդիւ-
եալ մնալու եւ բնաւ դուրս չելնելու խիստ պա-
տիժը շատ տրամեցուցեր է զինքը : — Վաղը . . .
Սէն—Ֆրանսօս փողոցը զինքը տարած ատե-
նրս . . . մտիկ կընեմ իր ըսելիքը . . . ժամա-
նակ կուենենանք . . . : Ըսել է որ այս ժամուս,
աւելցուց հայր Տ'էկրինեի յաղթական գոհու-
թեամբ, այդ ընտանեաց բոլոր ժառանգները՝
որոց ներկայութիւնը կրնար մեր խորհուրդները
տապալել, վաղը կէս օրէն առաջ Սէն—Ֆրանսօս
փողոցը գանուելու անհնարութեան մէջ են .
եւ միայն Գաբրիէլ պիտի գանուի հոն . . . :
Վերջապէս մեր նպատակին մօտեցած ենք : »

Այս միջոցին դուռն երկու անգամ մեղմով
զարնուելով հայր Տ'էկրինեի խօսքն ընդմիջեց :

« Մտէք » ըսաւ :

Սեւաղգեսա ծերունի ծառայ մը ներս մտ-
նելով ըսաւ . « Վարը մարդ մը կայ որ հիմա Պ.

Ռօտէնը տեսնել կուզէ ամենահարկաւոր գործի մը համար :

— Անուէն ինչ է, արցուց հայր Տ'էկրինեի : — Անուէնը չգրուցեց, բայց ըսաւ թէ ճաշի կղզին բնակեալ Պ. Ժօզիւէ վաճառականին կողմէն եկած է : »

Հայր Տ'էկրինեի եւ Ռօտէն դարմայմամբ եւ գրեթէ սարսափմամբ իրարու երես նայեցան :

« Տեսէք ինչ մարդ է այդ . . . ըսաւ հայր Տ'էկրինեի Ռօտէնին՝ առանց իր տատամսութիւնը կարենալ ծածկելու, եւ շուտով լուր բերէք ինձ : » Յետոյ ծառային դառնալով, « Ներս բերէք այն մարդը : »

Այս ըսելով հայր Տ'էկրինեի Ռօտէնի հետ նշանական ակնարկ մը փոխանակեց եւ կողմնական դռնէ մ'աներեւոյթ եղաւ :

Վայրկեան մ'ետքը, Ֆարէնկա՝ խեղդհաց աղանդին նախկին գլուխը՝ Ռօտէնի առջեւ ելաւ, որ խկոյն դայն ճանչեց՝ Քարաօվիլի մարանոցին մէջ տեսած ըլլալը յիշելով :

Ռօտէն մէկէն 'ի մէկ ցնցուեցաւ, բայց չուղեց դայն ճանչելը յայտնել : Ուստի գրասեղանին վրայ ծռած, եւ Ֆարէնկան շտեմնել ձեւացրնելով առջեւը կեցած թուղթի մը վրայ շտապով քանի մը խօսք գրեց :


« Պարոն, ըսաւ ծռայն Ռօտէնի լռութեանը վրայ դարմանալով, ահա այն մարդը . . . : »

Ռօտէն՝ դրած թուղթը ծալեց եւ սպասա-

ւորին տուաւ ըսելով . « Այս գիրն անոր դր-
կէ . . . պատասխանը պիտի բերեն ինձ : »

Շառայն ողջունելով դուրս ելաւ :

Այն ժամանակ Ռօտէն՝ առանց ոտքի վրայ
ելնելու՝ իր օձային փոքրիկ աչքերը Ֆարէնկայի
վրայ ուղղեց , եւ քաղաքավարութեամբ ըսաւ .
« Պարոն , որո՞ւ հետ խօսելու պատիւ ունիմ : »



ՔԼՈՒԽ ԺԲ .

ԲԱՐԻ—ԳՈՐԾԻՆ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ֆարէնկա՝ Հնդկաստանի մէջ ծնած էր ,
եւ ինչպէս արդէն ըսուած է՝ շատ երկիրներ
պարտած եւ Ասիոյ այլ եւ այլ մասանց մէջ դըրտ-
նուող եւրոպական վաճառանոցներն յաճախած
էր . լաւ անգղիերէն ու գաղղիերէն կը խօսէր .
հանճարեղ ու նրբամիտ եւ կատարելապէս քա-
ղաքակրթեալ մարդ մ'էր :

Փոխանակ Ռօտէնի հարցման պատասխանե-
լաւ , անթարթ եւ սուր աչքով մ'անոր երեսը
կը նայէր : Ռօտէնի համբերութիւնը հատնելով
այն լռութեան վրայ , եւ տարտամ սրտատան-
ջութեամբ մ'ողալով որ Ֆարէնկայի գալն ուղ-
ղակի կամ անուղղակի յարաբերութիւն մ'ու-
նէր ճալմայի բաղդին հետ , վերջինս աստիճանի
պաղարխունութիւն մը ցոյց տալով կրկնեց . « Ռ-
որո՞ւ հետ խօսելու պատիւ ունիմ , պարոն :

—Չիս չճանչեցիք, ըսաւ Յարէնկա երկու քայլ
Ռօտէնի աթոռին մօտենալով: —Չեմ կարծեր
որ ձեզ երբէք տեսնելու պատիւն ունեցած ըլ-
լամ, պատասխանեց Ռօտէն պաղութեամբ:
—Ես ձեզ կը ճանչեմ, ըսաւ Յարէնկա. շողե-
նաւին ու եռակայմին ցամաք ինկած օրը ձեզ
Քարտօւլիլի ապարանքը տեսայ: —Քարտօւլի-
լի ապարանքը . . . հաւանական է, պարոն, յի-
րաւի հոն էի այդ հաւաքելու թեան օրը: —Եւ
այն օրը ես ձեզ յանուանէ կոչեցի: Դուք ալ
հարցուցիք ինձ թէ ինչ կը խնդրէի ձեզնէ . . . :
Պատասխանեցի թէ «հիմա բան մը չեմ խնդ-
րեր, եղբայր . . . բայց ետքը շատ պիտի խնդ-
րեմ . . . : Ահա ժամանակն եկաւ . . . եւ ես
ալ ձեզնէ շատ բան խնդրելու եկայ: —Սիրե-
լի պարոն, ըսաւ Ռօտէն միշտ անդդած, այս
խօսակցութիւնը շարունակելէ առաջ, որ մին-
չեւ հիմա բաւական մթին կերելի ինձ, կը փա-
փաքիմ դիտնալ թէ որով հետ խօսելու պատիւ
ունիմ . . . : Դուք հոս մտած ժամանակնիդ ի-
մաց տուիք թէ Պաթալիա բնակեալ Պ. Ժօզիւէ
Վան—Տաէլ յարդի վաճառականէն յանձնարա-
րութիւն մ'ունիք, եւ . . . : —Կը ճանչէք Պ.
Ժօզիւէի դիրք, ըսաւ Յարէնկա Ռօտէնի խօս-
քը կարելով: —Իհաս աղէկ կը ճանչեմ: —Նայե-
ցէք . . . : » Եւ խառնածինն իր եւրոպական
խեղճուկ զգեստին գրպանէն հանեց այն եր-
կար նամակը, զոր ճալացի մաքսանունդ Մա-
հալը խեղդելով վրայէն առած էր, եւ Ռօտէնի

ցոյց տուաւ՝ առանց անոր ձեռքը տալու :

« Արդարեւ Պ. Ժօղիւէի դիրն է , ըսաւ Ռօտէն եւ ձեռքը նամակին երկնցուց . բայց Ֆարէնկա խկոյն զայն գրպանը դրաւ նորէն : — Սիրելի պարօն , ներեցէք ինձ ըսել ձեզ , որ դուք զարմանալի եղանակ մ'ունիք յանձնարարութիւն կատարելու . . . ըսաւ Ռօտէն : — Այդ նամակն ինձ գրուած է . . . եւ Պ. Ժօղիւէ ձեզ յանձնած է որ . . . : — Այս նամակը Պ. Ժօղիւէ չյանձնեց ինձ , ըսաւ Ֆարէնկա Ռօտէնի խօսքը կտրելով : — Ուրեմն ինչպէս ձեր ձեռքն անցեր է : — Ճավայի մաքսանկնդ մը դիս մատներ էր : Ժօղիւէ այն մարդուն նաւողչէն վճարեր էր Աղէքսանդրիա դրկելու համար , եւ այս նամակն ալ անոր տուեր էր , որպէս զի նաւը տանելով Ներոպիոյ ծրարին յանձնէ : Ես ալ մաքսանկնդը խեղդելով նամակն առի , նաւ նստայ . . . եւ ահա հոս եկայ . . . : » Խեղդիչն այս խօսքերն անագորուն պարծանքով մ'արտասանեց , իր ամենի եւ խիղախ նայուածքը չխոնարհեցաւ Ռօտէնի սուր նայուածքին առջեւ , որ այս տարօրինակ խոստովանութիւնը բաժ ժամանակ մէկէն գլուխը անկելով ուշադրութեամբ դիտել սկսաւ այս սարսափելի անձը :

Ֆարէնկա կը կարծէր որ իր վայրագ մեծաբանութեամբ պիտի հիացընէր կամ վախցընէր Ռօտէն . բայց մեծ եղաւ զարմանքը՝ երբոր Ռօտէն՝ դիակի պէս անդդած՝ պարզաբար ըսաւ իրեն . « Ա՛ . . . Ճավայի մէջ այդպէս մարդ կը

խեղդեն : — Ուրիշ տեղեր ալ . . . պատասխանեց Յարէնկա դառն ժպտով : — Ձեր խօսքին չեմ ուզեր հաւատալ . . . բայց դարմանալի անկեղծութիւն մը կը տեսնեմ ձեր վրայ , պարոն : Անուննիդ ի՞նչ է : — Յարէնկա : — Ուրեմն , պարոն Յարէնկա , ի՞նչ ըսել կուզէք : Դուք ինձ ուղղուած նամակ մը նողկալի սճրագործութեամբ ձեռք անցուցեր էք , եւ հիմա չէք ուզեր ինձ տալ դայն . . . : — Ասան զի կարդացի դայն . . . եւ կրնայ օգտակար ըլլալ ինձ : — Ա . . . կարդացիք դայն , ըսաւ Ռօտէն վայրկեան մը շփոթելով . յետոյ յարեց . ճշմարիտ է որ ուրիշի նամակներն այդ կերպով ձեռք անցունող մարդէ մը մեծ խորհրդապահութիւն չի կրնար սպասուիլ . . . : Պ. Ժօզիւէի նամակէն ի՞նչ իմացաք , որ կարենայ ձեզ օգտակար ըլլալ : — Իմացայ , եղբայր . . . որ դուք ալ ինձ պէս Բարի—Գործին որդին էք : — Ի՞նչ Բարի—Գործ է ըսածնիդ , հարցուց Ռօտէն բաւական դարմանքով :

Յարէնկա երգիծական հեղձութեամբ մը պատասխանեց . « Ժօզիւէ իր նամակին մէջ այսպէս կըսէ ձեզ .

« Հնազանդութիւն եւ արիութիւն , գաղտնիք եւ համբերութիւն , դաւ եւ յանդգնութիւն , սերտ միութիւն մեր մէջ՝ որ հայրենիք
« ունինք մեզ զաշխարհ , ընտանիք ունինք՝ մեր
« ուխտին անդամները , եւ թագուհի՝ Հոռոմ : »

— Կարելի է որ Պ. Ժօզիւէ այդպէս գրած

ըլլայ ինձ , բայց ի՛նչ կը հետեւի աղկէց , պարտն : — Մեր գործն ալ , եղբայր , ձերինին պէս՝ հայրենիք ունի իրեն զաշխարհ , ընտանիք ունի իր անդամները , եւ թագուհի՝ Պօհլանին : — Այդ սուրբը չեմ ճանչեր , ըսաւ Ռօտէն խոնարհութեամբ : — Մեր Հռոմն ալ այս է , պատասխանեց խեղդիչն եւ շարունակեց . « Ժողիւ է կրսէնաեւ թէ ձեր գործին անդամները բոլոր աշխարհի վրայ ցրուած՝ ձեր թագուհւոյն՝ Հռոմի փառացը համար կաշխատին . . . : Մեր գործին անդամներն ալ զանազան երկիրներու մէջ ցրուած՝ Պօհլանի փառացը համար կաշխատին : — Ո՞վ են այդ Պօհլանի որդիքը , պարտն Ծարէնկա : — Անվեհեր , յանդուգն , համբերող , խորամանկ եւ յամառ մարդիկ , որք Բարի-Գործին փառացն ու յաղթութեանը համար իրենց հայրենիքը ծնողքն ու ազգականները կը գոհեն եւ իրենցմէ՝ չեղողն իբրեւ թշնամի կը նկատեն : — Ար տեսնեմ որ շատ լաւ բաներ կան այդ գործին յարատեւ ու բացառիկ ոգւոյն մէջ , ըսաւ Ռօտէն համեստ եւ երկիւղած դէմքով մը . միայն թէ ատոր դիտումն ու նպատակը դիտնալ պէտք է : — Մեք ալ ձեզ պէս , եղբայր , դիակներ կը շինենք : — Այլակներ , գոչեց Ռօտէն : — Իր նամակին մէջ , պատասխանեց Ծարէնկա , Ժողիւ է այսպէս կրսէ . « Մեր ուխտին ամենէն մեծ « փառքն է՝ մարդը դիակ դարձընել^{*} : » Մեր

* Յիշեցընենք ընթերցողին որ կրաւորական եւ բացարձակ հնազանդութիւնը՝ որ ճիղով լի թաց

դործն ալ նոյնպէս մարդը կը դիակնացընէ. մար-
դոց մահը քաղյր է Պօհվանիի . . . : — Բայց . . .
պարոն , գոչեց Ռօտէն , Պ. Ժօղիւէի խօսքը
հողիի կամքի եւ մտաց վրայ է , որք պէտք
է հրահանգով ջնջուին : — Ճշմարիտ է . ձերին-
ները հողին կը մեռցընեն . . . մեք մարմինը կ'ըս-
պաննենք . . . ձեռքդ ինձ տուր , եղբայր , դուք
ալ մեզ պէս մարդու որսորդ էք : — Բայց կըր-
կին կըսեմ , պարոն , մեր դործը՝ մարդուն կամ-
քըն ու միտքը մեռցընել է , ըսաւ Ռօտէն — Բայց
առանց կամքի եւ խօրհրդածութեան մարմինն ալ
դիակ չէ , ըսաւ Չարէնկա . . . : Օ'ն , եղբայր ,
մեր խեղդանով սպաննուած մարդիկը ձեր հը-
րահանգով սպաննուածներէն աւելի անկենդան
եւ պաղ չեն : Օ'ն , ձեռքդ ինձ տուր , եղբայր . . .
չառմ եւ Պօհվանի քոյր են : »

Ռօտէն՝ իր առերեւոյթ հանդարտութեան
հակառակ՝ չէր կրնար առանց ներքին անձկու-
թեան տեսել Չարէնկայի պէս սրիկայ մարդ
մը՝ Ժօղիւէի երկար նամակը ձեռքն անցուցած ,
որուն մէջ հարկաւ ճալմայի վերաբերեալ կա-
րեւոր տեղեկութիւններ կային : Արդարեւ Ռօ-
տէն աներկբայ էր որ հնդիկ երիտասարդն հե-
տեւեալ օրը Փարիզ գտնուելու անհնարութեան
մէջ դրած էր , բայց նաւարեկութենէն ետեւ ա-

ընկերութեան գլխաւոր լծակն է , Վոյօլայի մե-
ռած ժամանակ ըսած հետեւեալ սոսկալի խօս-
քին մէջ կը բովանդակի . « Այսին առիտ անդամու-
րեանց ճշմարտաց յերոնն զիլ դիտիլ պէս դիտիլ է լիւան : »

նոր եւ խառնածնին մէջ եղած յարաբերութիւնը
չգիտնալով, հաւանականաբար խիստ վտանգաւոր
մարդ մը կը համարէր Պարէնկա :

Ռօտէն՝ որչափ 'ի ներքուստ տատամսութեան
մէջ էր, այնչափ ինքզինք հանդարտ ու արհամարհոտ
ցուցընել կը ջանար . ուստի ըսաւ .
« Անշուշտ, Հոսմի եւ Պօհվանիի մէջ եղած այդ
նմանողական համեմատութիւնը քիչ հետաքրքրական
չէ . . . բայց վերջապէս ի՞նչ ըսել կուզէք, պարոն : — Առեղեմ ցուցընել ձեզ, եղբայր,
թէ ես ի՞նչ եմ եւ ի՞նչ բանի կարող եմ, որպէս զի
համողութիւք թէ աւելի լաւ է զիս բարեկամ
ունենալ ձեզ՝ քան թէ թշնամի : — Բացայայտ
խօսելով, պարոն, ըսաւ Ռօտէն արհամարհոտ
հեղնութեամբ, դուք Հնդկաստանի մարդախոշոչ
աղանդներէն մէկուն հետեւող մ'ըլլալով,
թափանցիկ այլաբանութեամբ մ'ինձ զգացընել
կուզէք այն մարդուն ըրածնիդ, որուն ձեռքէն
յափշտակեր էք ինձ ուղղուած նամակները :
Ես ալ հիմա իմ կողմանէս կը համարձակիմ
խոնարհաբար իմացընել ձեզ, պարոն Պարէնկա,
որ հոս մարդ չեն խեղդեր, այլ եթէ ձեր
Պօհվանի Աստուծոյն սիրոյն համար մէկը
դիակի վոխարկելու կամք ունենաք, ձեր վիզը
կը կտրեն 'ի սէր ուրիշ Աստուծոյ մը՝ որուն
ռամկօրէն Արդարութիւն կըսեն : — Եթէ
մէկը թունաւորել ուզեմ, այն ատեն ի՞նչ կընեն
ինձ : — Դարձեալ խոնարհաբար կ'իմացընեմ
ձեզ, պարոն Պարէնկա, որ եղեռնական

օրէնսագիտութեան դաս խօսելու ժամանակ չո-
նիմ : Միայն թէ խրատ կուտամ ձեզ , որ մարդ
խեղդելու կամ թունաւորելու փորձ չընէք :
Անրջին խօսք մ'ալ : Պ. Ժօզիւէի նամակն ինձ
կուտա՞ք թէ ոչ : — Ճալմա իշխանագունի^նն վե-
րաբերեալ թուղթերը , ըսաւ խառնածինը եւ
ուշադրութեամբ Ռօտէնի նայեցաւ , որ զգա-
ցած յանկարծական եւ բուռն անձկութեան հա-
կառակ՝ անթափանցելի մ'նաց եւ ամենապարզ
կերպով պատասխանեց . « Ձեր դրաւած նա-
մակներուն պարունակութիւնը չգիտնալով , ան-
հընար է ինձ պատասխանել ձեզ , պարոն .
ուստի կաղաչեմ , եւ եթէ պէտք ըլլայ՝ կը հը-
րաւիրեմ ձեզ որ կամ նամակներն հիմա ինձ
յանձնէք . . . կամ այս տեղէն դուրս ելնէք :
— Քանի մը վայրկեան ետքը ոտքս իյնալով պի-
տի աղաչէք ինձ որ հոս կենամ , եղբայր : — Ձեմ
կարծեր : — Երկու խօսք բաւական են այս հը-
րաչքը գործելու : . . . : Քիչ մ'առաջ թունա-
ւորութեան վրայ խօսելուս պատճառն այս էր ,
եղբայր , որ դուք Քարտօլիլի ապարանքը բը-
ժիշկ մը զրկած էք որ ճալմա իշխանագունը
թունաւորէ . . . առժամանակեայ կերպով : »
Ռօտէն ականայ ցնցուեցաւ աննշմարելի կեր-
պով , եւ ըսաւ . « Ձեմ հասկընար : — Արդարեւ
ես խեղճ օտարական մ'եմ որ անշուշտ լաւ չեմ
կրնար արտասանել ձեր լեզուն , բայց պիտի
ջանամ աւելի պարզ խօսիլ : Ժօզիւէի նամակ-
ներէն հասկըցած եմ թէ որչափ մեծ շահ կայ

ձեզ համար որ շարժա իշխանադուհը հոս չի գտնուի . . . վաղը , եւ թէ ասոր համար ինչ միջոցներ 'ի դործ դրած էք : Ար հասկընամք ըսածս : — Պատասխան չունիմ ձեզ տալիք :

Դուռն երկու անգամ զարնուելով խօսակցութիւնն ընդմիջեց :

« Մտէք , ըսաւ Ռօտէն : — Նամակն իր հասցէին տարուեցաւ , պարոնք , ըսաւ ծերունի ըսպասաւոր մը խոնարհելով , եւ ահա պատասխանը :

Ռօտէն սպասաւորին ձեռքէն թուղթն առաւ , եւ բանալէ առաջ՝ քաղաքավարութեամբ մ'ըսաւ Ծարէնկայի . « Ար ներէք պարոն : — Անհանգիստ մի ըլլաք , ըսաւ խառնած ինը : — Շատ բարեսիրտ էք , պատասխանեց Ռօտէն , եւ նամակը կարդալէն ետեւ՝ շտապաւ քանի մը խօսք դրեց այն բերուած պատասխանին ներքեւ եւ նորէն սպասաւորին տալով ըսաւ . « Նոյն հասցէին դրկեցէք , »

Սպասաւորը խոնարհելով դուրս ելաւ :

« Արնամ խօսքս շարունակել , հարցուց խառնած ինը Ռօտէնի : — Անշուշտ , — Աւրեմն շարունակեմ , ըսաւ Ծարէնկա . . . : Նախընթաց օրը , երբ իշխանը՝ թէ եւ վիրաւորեալ իմ յորդորանօքս Փարիզ դալու վրայ էր , գեղեցիկ կառք մ'եկաւ հոն փառաւոր ընծաներով զորս անծանօթ բարեկամ մը շարժայի կը դրկէր : Առաքին մէջ երկու մարդ կային . մէկն անծանօթ բարեկամէն զրկուած էր , միւսն ալ բժիշկ մ'էր

ձեր կողմէն դրկուած, որպէս զի ճարմայի օգ-
նութիւնն ընէ եւ մինչեւ Փարիզ անոր ընկերակ-
ցի . . . : Այս ըրածնիդ մարդասիրութիւնն մ'է .
այնպէս չէ, եզրայր : — Շարունակեցէք ձեր
պատմութիւնը, պարոն : — Ճարմա երէկ ճան-
բայ ելաւ Քարտօլիլի ամարանոցէն . . . : Բը-
ժիշկը յայտարարութիւնն ըրաւ որ եթէ իշխա-
նազունը մինչեւ վերջը կառքին մէջ պառկած
չկենայ, վերքը ծանր կերպով կը գէշնայ . այս
կերպով անժանօթ բարեկամին դրկած մարդը
չկրցաւ հետերնին կառքը նստիլ եւ միայնակ
Փարիզ դարձաւ : Բժիշկը զիս ալ հեռացընել
ուզեց, բայց ճարմա այն աստիճան ոտք կոխեց
որ երեքս 'ի միասին ճանբայ ելանք, բժիշկը,
իշխանազունն ու ես : Արէկ իրիկուն, կէս ճան-
բան հասեր էինք, բժիշկն ըսաւ թէ գիշերը
պանդոկի մը մէջ պէտք է անցունել, եւ թէ
առաւօտուն նորէն ճանբայ ելնելով կրնայինք
ամենայն դիւրութեամբ այս իրիկուն Փարիզ
հասնիլ . որովհետեւ իշխանազունն իմացուցեր
էր թէ ԱՅին իրիկունն անպատճառ Փարիզ պէտք
էր գանուիլ : Բժիշկը շատ աշխատեցաւ՝ որ իշ-
խանազնին հետ մինակ ինք երթայ : Ես Ժօ-
զիւէի նամակէն գիտնալով որ ԱՅին ճարմայի
հոս գանուիլը ձեր բանին չէր դար, միտքս
կասկած ծագեցաւ : Հարցուցի բժիշկին թէ ձեզ
կը ճանչէր . շիտթութեամբ պատասխանեց . . .
ասկէց կասկած ստուգութեան փոխուեցաւ . . . :
Պանդոկը հասնելնէս ետեւ, երբոր բժիշկը ճար-

մայի քով նստած էր, ես բժշկին սենեակն ե-
լայ եւ հոն տուի մը տեսայ զոր բժիշկն իր
հետը բերած էր: Տուիին մէջ քանի մը մանր
շիշեր կային, որոց մէկը ախիոնով լի էր . . . :
Գուշակեցի . — Ի՞նչ գուշակեցիք, պարոն:
— Պիտի իմանաք . . . : Բժիշկը մեկնելէն ա-
ռաջ ըսաւ ճալմայի . « Ձեր վերքը լաւ վիճակի
մէջ է, բայց ճանքուն յոգնութիւնը կրնայ
զայն բորբոքել . ուստի լաւ կըլլայ որ վաղը
ցերեկը հանդարտեցուցիչ դեղ մը խմէք, զոր ես
այս իրիկուն պիտի շինեմ, որպէս զի կառքին
մէջ սրտրաստ ունենանք . . . : » Բժշկին հա-
շիւը խիստ պարզ էր, աւելցուց Յարէնկա,
Հետեւեալ օրը, որ է այսօր, իշխանադունը
իրիկուն ժամ չորսին կամ հինգին միջոցները
դեղը կը խմէ, եւ շատ չանցած խորունկ քունի
մէջ կիչնայ . . . : Բժիշկը որպէս թէ վախնալով իրի-
կունը կառքը կը կեցընէ եւ կըսէ թէ ճանքան
չարունակելը վտանգաւոր է . ուստի պանդոկ
մը կիջնեն գիշերն անցունելու, եւ ինքն ալ
իշխանադնին քով կը նստի, որպէս զի թմրու-
թիւնը ձեր բանին եկած ժամանակը դադրի :
Այս էր ահա ձեր խորհած հնարքը, եւ կը
տեսնեմ որ բաւական հանճարեղ է . ուստի ես ալ
ինձ համար դորժած ել ուղեցի զայն եւ յաջողեցայ :
— Այդ ամեն ըսածնիդ, սիրելի պարոն, եր-
բայեցերէն են ինձ համար, ըսաւ Ռօտէն ե-
ղունդը կրծելով : — Անշուշտ այնպէս պիտի թը-
ւին արտասանութեանս պատճառաւ . . . բայց

ըսէք ինձ , Արեւ-ման կը ճանչէք : — Ոչ : — Այի-
սոս որ չէք ճանչեր . ճալա կղզւոյն սքանչելի
բերքերէն մէկն է եւ առատ թոյն ունի : — Ին-
չուս պէտք , ըսաւ Ռօտէն սուղ ձայնիւ եւ հաղիւ
իր անձկութիւնը ծածկելով , որ քանի կերթար
կաւելնար : — Շատ պէտք է ձեզ : Մեք Պօհ-
վանիի որդիքս՝ արիւն թափելէ կը դարչինք ,
ըսաւ Պարէնկա . բայց խեղդանը դիւրութեամբ
մեր դո՛հերուն վիզն անցունելու համար՝ կ'ըս-
պասենք որ ննջեն . . . : Երբոր քուներնին
բաւական խորունկ չէ , ուղածնուս չափ կա-
ւելցընենք . մեք խիստ ճարպիկ ենք մեր գոր-
ծին մէջ . օձը մեզ չափ սպրդուն չէ , ոչ ալ
առիւծն աւելի յանդուգն : Ճալմա մեր գրոյձը
կը կրէ իր վրայ . . . : Արեւ-ման անչօշափելի
նրբութեամբ փոշի մ'է . քունի մէջ քիչ մը հո-
տտել տալով , կամ արթնութեան ժամանակ
ծխախոտի մէջ խառնելով , մեր սպանդն այն-
պիսի թմրութեան մը մէջ կը ձգենք , որ անհնար
է դայն արթնցընել : Եթէ մէկէն 'ի մէկ աւե-
լի քանակութեամբ հոտտել տալը վտանգա-
ւոր տեսնենք , քունին մէջ մերթ ընդ մերթ քիչ
քիչ հոտտել տալով՝ որչափ ժամանակ որ մարդ
մ'առանց ուտելու խմելու կրնայ ապրիլ , այն-
չափ կրնանք անոր քունն երկնցընել անվտանգ ,
այսինքն երսուն կամ քառսուն ժամ : Ահա կը
տեսնէք թէ այս հրաշալի թմբադեղին քով
ափիոնի գործածութիւնը որչափ անհեթեթ
է . . . : Ես քիչ մը բան հետս բերեր էի ճա-

վայէն . . . հետաքրքրութեան համար . . .
առանց անդեղան ալ մոռնալու : — Ա՛, անդե-
ղանց ալ կայ , ըսաւ Ռօտէն մեքենաբար : — Ինչ-
պէս որ մեր Բարի—Քործին եղբայրներուն հա-
կառակ մարդիկ կան . . . : Ճակարկիք այսերկ-
րորդ արմատին հիւթը Թոմօսէ կը կոչեն , որ Ա-
լեյ-Տոմի պատճառած թմրութիւնը կը փարատէ ,
ինչպէս արեգակն ամպերը . . . : Արդ , երէկ
իրիկուն , ձեր լրտեսին ճալմայի վրայ ունեցած
գիտաւորութիւնը հասկընալով , սպասեցի որ
այդ բժիշկը պառկի ու ննջէ . . . : Յետոյ սո-
ղալով իր սենեակը մտայ . . . եւ այնչափ Ա-
լեյ-Տոմ հոտտակ տուի իրեն . . . որ անշուշտ
մինչեւ հիմա կը քնանայ . . . : — Թշուառա-
կան , գոչեց Ռօտէն եւս քան զեւս զարհուրելով
այս պատմութեան . վասն զի Յարէնկա սար-
տափելի հարուած մը կուտար Ռօտէնի եւ իր
բարեկամաց մեքենայութիւններուն . հասցա բը-
ժիշկը թունաւորէի՞ք : — Հասցա ան ալ ճալման
թունաւորէր : Այս առաւօտ ես ու ճալմայ
կառքը նստանք ու ճանրայ ելանք՝ ձեր բը-
ժիշկը պանդոկը թողլով խոր քունի մէջ : Եւ
որովհետեւ ճալմա ալ՝ իբրեւ բնիկ հրնդ-
կատանցի՝ ծուխ կը քաշէ , քիչ մը Ալեյ-Տոմի
փոշի խառնեցի ծխախոտին հետ , իր երկայն
ծխապամօրճը լցուցի , եւ շատ չանցած՝ վրան թըմ-
րութիւն եկաւ . այն ժամանակ քիչ մը փոշի
ալ հոտտակ տուի եւ խոր քնոյ մէջ ինկաւ ,
այնպէս որ այս ժամուս՝ Փարիզ մեր իջած պան-

դուկին մէջ գեռ կը ննջէ . . . : Հիմա , եղբայր . . . իմ ձեռքս է մինչեւ վաղ իրիկունս դինքը խոր թմրութեան մէջ պահել , կամ հիմա երթալ արթնցընել . . . : Ուստի ձեր գիտն ընելէն կամ չընելէն կախեալ է վաղը ճալմայի Սէն—Պրանսօս փողոցը 3 թիւ տունը գրտնուիլը կամ չգտնուիլը : »

Այս ըսելով Պարէնկա գրպանէն ճալմայի միտալը հանեց եւ Ռօտէնի ցուցընելով ըսաւ . « Կը տեսնէք անա որ սուտ չեմ խօսիր . . . : ճալմայի ննջած միջոցին այս միտալն առի վըրայէն , որով միայն կրնար վաղը գտնուելու տեղը գիտնալ . . . : Ուրեմն ուսկից որ սկսայ՝ անով կը լմնցընեմ՝ ըսելով ձեզ , « եղբայր , ձեզնէ շատ բան ուզելու եկած եմ : »

Պահէ մ'ի վեր՝ Ռօտէն՝ ինչպէս որ իր լռին եւ դսպեալ կատաղութեան ժամանակ սովորութիւնն էր , եղունգներն արիւնելու ատիճան կը կրծէր : Այս միջոցիս գոնապահի սենեկին դանդակն երեք անգամ մասնաւոր կերպիւ հընչեց : Ռօտէն այս ձայնին ուշադրութիւն չընել ձեւացուց , եւ սակայն իր օձական փոքրիկ աչերուն մէջ մէկէն 'ի մէկ կայծակ մը փայլատակեց , մինչդեռ Պարէնկա՝ թեւերը խաչածեկուրծքին վրայ դրած՝ յաղթական եւ արհամարհոտ գոռողութեամբ մ'անոր կը նայէր :

Ճիզվիթը լռութեամբ գլուխը ծռեց , գրասեղանին վրայէն մեքենարար գրիչ մ'առաւ , եւ քանի մը վայրկեան անոր փետուրին մազերը

ծամծմեց՝ որպէս թէ Յարէնկայի ըսածին վրայ
խոր մտածութեան մէջ ընկղմեալ : Վերջա-
պէս գրիչը գրասեղանին վրայ նետելով, մէկէն
խառնածնին դարձաւ, եւ վերջին ծայր արհա-
մարհոտ դէմքով մ'ըսաւ . « Պարոն Յարէնկա,
միթէ ձեր այդ պատմութիւններովը մեր վրայ
ծիծաղիլ կուզէք : »

Խառնածինն՝ իր յանդգնութեան հակառակ՝
ապշելով քայլ մ'ետ քաշուեցաւ :

« Ի՞նչպէս, պարոն, յարեց Ռօտէն, այս-
պիսի յարգելի տուն մը կուգաք եւ կը պար-
ծիք թէ նամակ մը գողցած էք, մարդ մը խեղ-
դած էք, միւս մ'ալ թմբրադեղով թունաւո-
րած էք : Բայց այդ ըրածնիդ դառանցանք է,
պարոն . ես մինչեւ վերջը ձեզ մտիկ ըրի որ-
պէս զի տեսնեմ թէ յանդգնութիւնը մինչեւ
ունի կը հասցընէք . . . վասն զի կարգէ դուրս
սրիկայ մը միայն կրնայ այդպիսի սարսափելի
ոճրագործութեանց վրայ պարծիլ . բայց ես կու-
զեմ հաւատալ որ ասոնք ձեր երեւակայութեան
մէջ միայն տեղի ունին : »

Ռօտէն այս խօսքերն իր սովորականէն
դուրս ազդուութեամբ մը խօսելով ոտքի վրայ
ելաւ եւ քալելով քիչ քիչ վառարանին մօտե-
ցաւ, մինչդեռ Յարէնկա՝ դարմանքէն ապշած
անոր կրնայէր լռութեամբ : Բայց քանի՜ մը վայր-
կեան ետքը՝ ինքզինք ամփոփելով տխուր եւ
վայրապ դէմքով մ'ըսաւ . « Զգուշացիք, եղ-
բայր . . . զիս մի հարկադրէք խօսքերուս ճշ-

մարտութիւնը փորձով հաստատելու : — Քնա
բանդ , պարսն , հակոտնէից երկրէն ելեր հոս
եկեր էք՝ կարծելով որ դիւրութեամբ դադղիա-
ցւոց քիթէն կրնաք բռնել : Արսէք թէ օձի խո-
րամանդութիւն եւ առիւծի քաջասրտութիւն
ունիք : Քաջասիրտ առիւծ մ'ըլլալնիդ չեմ գիտեր .
բայց խորամանդ օձ մը չըլլալնիդ հասկըցայ . . . :
Արայնիդ Պ . Ժօղիւէի մէկ նամակն ունիք որ
կրնայ դիւ մատնել , ենթադրելով որ այդ ա-
մենը շինծու առասպել մը չըլլայ . Ճալմա իշ-
խանապուռնն այնպիսի թմրութեան մը մէջ ին-
կած է , որ կրնայ իմ դիտաւորութեանցս ծա-
ռայել , եւ որմէ դուք միայն կրնաք զայն հա-
նել . վերջապէս իմ շահուցս ահագին հարուած
մը կրնաք տալ կըսէք . եւ չէք խորհիր , սար-
սափելի առիւծ , խորամանդ օձ , որ ինձ հա-
մար բանը քսան եւ շորս ժամ վաստըկելու վը-
րայ է : Դուք Հնդկաստանի խորերէն Փարիզ
եկեր էք . օտար եւ անծանօթ մարդ մ'էք .
դիւ ձեզ պէս սրիկայ մը կը կարծէք , որովհե-
տեւ դիւ եղբայր կը կոչէք , եւ չէք խորհիր թէ
դուք հոս իմ ձեռքս էք . թէ այս փողոցն ա-
մայի է . թէ այս տունն առանձին է . թէ կըր-
նամ հիմա շորս հինգ մարդ բերել տալ որ ձեզ
բռնածնուն պէս կաշկանդեն , որչափ եւ խեղ-
դիչ մ'ալ եղած ըլլաք . . . եւ այս ամենը կա-
տարելու համար բաւական է միայն այս հնչակը
քաշել , աւելցուց Ռօտէն հնչակին շուանը ձեռ-
քնն առնելով : Բայց մի վախնաք , յարեց սա-

տանայական ժպիտով մը՝ երբ տեսաւ որ Պարէնկա դարմանաց եւ երկիւղի շարժում մ'ըրաւ . եթէ այնպիսի բան մ'ընել ուզէի՝ կանխաւ կիմացընէի ձեզ . . . : Օ՛ն , պատասխան տուէք նայիմ . . . : Եթէ ըսածիս պէս ձեզ կապել տամ եւ հոս քսան եւ չորս ժամ արդելափակ ընեմ , ինչպէս կրնաք մնասել ինձ : Միթէ այն ժամանակ չեմ կրնար ծօղիւէի թուղթերն ու ճալմայի միտալը դիւրութեամբ ձեր վրայէն առնուլ . ճալմա ալ մինչեւ վաղ իրիկուն թրմբած մնալով բնաւ հող չկրնար պատճառել ինձ . . . : Ահա կը տեսնէք , պարո՛ն , որ ձեր սպառնալիքը ոչինչ է . . . վասն զի սուտերու վրայ հիմնեալ է . վասն զի ճշմարիտ չէ որ ճալմա իշխանադուհը հոս ձեր ձեռքն եղած ըլլայ . . . : Օ՛ն , դուրս ելէք հոսկէ , եւ ուրիշ անդամ եթէ մէկուն քիթէն բռնել ուզէք , լաւ ընտրութիւն ըրէք : »

Պարէնկա ապշած մնացեր էր . լսած ըստ սպառնալիքը խիստ հաւանական կը թուէին իրեն . Ռօտէն կրնար զինքը բռնել , ծօղիւէի նամակն ու ճալմայի միտալը ձեռքէն առնուլ , եւ զինքը հոն արդիլափակ ընելով ճալմայի արթըննալն անհնար ընել . եւ սակայն Ռօտէն դուրս ելնել կը հրամայէր իրեն՝ Պարէնկայի՝ որ ինքզինք ահաւոր կը կարծէր . ճիղվիթին այս անիմանալի վարմունքին պատճառները մտքին մէջ փնտռելով խառնածինը երեւակացեց , եւ արդարեւ չէր կրնար ալ ուրիշ կերպ մտածել որ

իր բերած ապացոյցներուն հակառակ՝ Ռօտէն
չէր հաւատար որ ճալմա իր ձեռքն էր . ուստի
Ժօզիւէի թղթակցին արհամարհանքը բնականա-
բար ասով կը բացատրուէր : Ռօտէն խիստ յան-
դուգն եւ խիստ ճարտար խաղ մը կը խաղար :
Նրեանց ինքզինք բարկացած կը ցուցընէր եւ
քթին տակէն կը մրմռար . բայց մտօքը խեղդի-
չին դէմքը կը զննէր տազնապաղին անձկու-
թեամբ :

Իսկ Յարէնկա , Ռօտէնի վարմունքին դաղտ-
նի պատճառն հասկընալուն վրայ գրեթէ հա-
ւաստի ըլլալով ըսաւ . « Գուրս կելնեմ . . .
բայց խօսք մ'ալ ըսեմ . . . : Գուք կը կարծէք
թէ սուտ կը խօսիմ ես : — Տարակոյս չունիմ ,
պատասխանեց Ռօտէն . խել մը սուտեր թա-
փեցիք իմ առջեւ . եւ ես ալ խել մը ժամանակ
կորուսի ձեզ մտիկ ընելով . կաղաչեմ որ մնաց-
եալ սուտերնիդ ձեզ պահէք . . . : Ժամանակն
ուշ է , կը խնդրեմ զիս մինակ թողէք : — Վայր-
կեան մ'ալ . . . կը տեսնեմ որ դուք այնպիսի
մարդ մ'էք , որմէ բան մը պահել չըլլար , ը-
սաւ Յարէնկա . այս ժամուս ճալմայէն ուրիշ
բան չեմ կրնար սպասել , բայց միայն տեսակ
մ'ողորմութիւն եւ ծանր արհամարհանք , որով-
հետեւ այնպիսի բնութիւն մ'ունի , որ եթէ ը-
սեմ իրեն թէ « Շատ բան տուէք ինձ , վասն
զի կրնայի ձեզ մատնել եւ չմատնեցի » , իր ցա-
սումն'ու արհամարհանքը կը հրաւիրեմ վրաս . . . :
Նս կրնայի մինչեւ հիմա քսան անգամ դինքն

սպաննել . . . բայց դեռ օրն եկած չէ , ըստ
խեղդիչը դժնեայ դէմքով . այն աւուր եւ ու
րիչ չարաչուք աւուրց սպասելու համար ոսկի
պէտք է ինձ , շատ ոսկի . . . այն ալ դուք կըր-
նաք տալ ինձ՝ 'ի վարձատրութիւն ճալմայի նը-
կատմամբ ընելիք դաւաճանութեանս , որ մի-
այն ձեզ օգտակար պիտի ըլլայ : Ձիս մտիկ ը-
նել չէք ուղեր , վասն զի կը կարծէք թէ սուտ
կը խօսիմ . . . : Ես մեր իջած պանդոկին հաս-
ցէն ալ առած եմ , որ ահա այս է : Մէկը դըր-
կեցէք , թող ստուգէ ըսածս , եւ այն ժամա-
հակ հաւատացէք ինձ . բայց դաւաճանութեանս
գինը սուղ պիտի ըլլայ , եւ ես շատ պիտի ու-
ղեմ ձեզնի : »

Այս ըսելով Փարէնկա տպագրեալ հասցէ
մը ներկայացուց Ռօտէնի . բայց ձիգվիթը՝ որ
աչքին ծայրովը Փարէնկայի ամեն շարժումնե-
րը կը դիտէր , ինքզինքը խոր մտածութեամբ
գրադեալ ձեւացընելով խնոր ըսածը չլսելու
դարկաւ եւ չպատասխանեց :

« Առէք այս հասցէն եւ ստուգեցէք որ ը-
սածս սուտ չէ , կրկնեց Փարէնկա՝ հասցէն վե-
րըստին Ռօտէնի ներկայացնելով : — Ի՞նչ է այդ ,
ըստ ձիգվիթը գողարար արագ նայուածք մը
ձգելով հասցէին վրայ եւ դայն իակոյն կարդա-
լով , բայց առանց դալչելու : — Կարդացէք այս
հասցէն , կրկնեց խառնածինը , եւ կրնաք ստու-
գել որ . . . : — Յիրաւի , պարոն , դոչեց Ռօ-
տէն ձեռքովը հասցէն ետ հրելով , ձեր անա-

մօթութիւնը դարմանք կը պատճառէ ինձ : Արր-
կին կըսեմ թէ ձեզ հետ դործ չունիմ եւ չեմ
ուզեր ունենալ : Աերջին անգամ կը հրաւիրեմ
ձեզ որ դուրս ելնէք . . . : Չեմ գիտեր ո՛վ է
ճալմա իշխանադուհը . . . : Ինձ մնաս կրնաք
հասցընել, կըսէք, հասուցէք եւ բնաւ միմտմտաք.
Բայց, Աստուծոյ սիրոյն, դուրս ելէք հոսկէց : »

Այս ըսելով Ռօտէն հնչակն ուժով մը քա-
չեց : Փարէնկա շարժում մ'ըաւ ինքզինք պաշտ-
պանել ուզելու կերպով : Իսկոյն ծերունի եւ
հեղադէմ սպասաւոր մը ներս մտաւ :

« Վարիէն . . . ճրագ բռնեցէք պարոր-
նին » ըսաւ Ռօտէն՝ ձեռքովը Փարէնկան ցոյց
տալով :

Խառնածինը՝ Ռօտէնի հանդարտութենէն
դարհուրելով կը վարանէր դուրս ելնելու :

« Բայց, պարոն, ըսաւ Ռօտէն անոր շփո-
թութիւնն ու վարանումը նշմարելով, ինչ կըս-
պասէք : Ես մինակ մնալ կուզեմ : — Ըսել է որ,
պարոն, ըսաւ Փարէնկա ծանրաքայլ ետ ետ եր-
թալով, առաջարկութիւններս չէք ընդունիր :
Բայց լաւ մտածեցէք . . . վաղը գղջալնիդ օ-
դուտ չընէր : — Ծառայ եմ պարոն, երթաք բա-
րով : »

Եւ քաղաքավար խոնարհութեամբ մը Ռօտէն
դայն ողջունեց : Խեղդիչը դուրս ելաւ, եւ
դուռը վրայէն գոցուեցաւ . . . : Իսկոյն հայր
Տ'Էկրինեի քովի սենեկին դուռը բանալով ներս
մտաւ դժգոյն եւ խռովեալ գիւմօք :

« Ի՞նչ բրիք , գոչեց Ռօտէնին . ես ամեն
բան լսեցի . . . : Այդ թշուառականին ըսած
ները դժբաղդաբար ճշմարիտ են . . . Հնդկին
անոր ձեռքն է , հիմա անոր քով պիտի երթայ :
— Չեմ կարծեր , ըսաւ Ռօտէն խոնարհաբար ծը-
ռելով եւ նորէն իր սովորական հլու եւ կախ
դէմքն առնելով : — Ո՞վ կրնայ արդելուլ այն
մարդը որ իշխանազունին քով չերթայ : — Նե-
րեցէք , վերապատուելի հայր . . . : Երբոր այն
սարսափելի սրիկան ներս մտցուցին , իսկոյն
ճանչեցի զինքը . ուստի իրեն հետ խօսելէ ա-
ռաջ՝ խոհականութեամբ քանի մը տող գիր գը-
րեցի Մօռօքին , որ վարի դահլճին մէջ ձեր Ար-
ժանապատուութեան մէկ անդրադժամանակին
կապատէր Գողիաթին հետ : Քիչ մը ետքը , մեր
խօսակցութեան միջոցին , երբոր Մօռօքի պա-
տասխանը բերին ինձ թէ պատրաստ էր հրա-
մանս կատարելու , գործին դարձուածին նայե-
լով նոր հրահանգ մը գրեցի անոր : — Ի՞նչ օ-
գուտ ունին այդ բաները , քանի որ մարդն
հոսկէց դուրս ելաւ գնաց : — Չեր արժանա-
պատուութիւնը կը հաճի թերեւս դիտել որ իմ
այնպէս արհամարհանօք վարուելու անմեղ հնա-
շիմացութեանս՝ նորհիւն էր որ Հնդկին բնակած
պանդոկին հասցէն մինչեւ որ ինձ ցոյց չտուաւ՝
դուրս չելաւ . . . : Այժէ այսպէս չըլլար , Ծա-
րէնկա թէպէտ Գողիաթին ու Մօռօքին ձեռքը
պիտի իյնար , որք այս ասն գոնէն երկու քայլ
անդին փողոցին մէջ զինքը կ'սպասէին , ըսց

մեք ալ մեծ տաղնապի մէջ պիտի իյնայինք ,
վասն զի ճարմա իշխանազունին ուր բնակած
ըլլալը չէինք գիտեր : — Գարձեալ բռնութի՞ւն,
ըսաւ հայր Տ'Եկրինեի դժգոհութեամբ : — Յա-
ւալի բան է . . . խիստ ցաւալի , պատասխա-
նեց Ռօտէն , բայց մինչեւ հիմա ընդունուած
գրութեան հետեւիլ հարկ եղաւ : — Յանդի-
մանութի՞ւն մ'է այդ որ կուղղէք ինձ , ըսաւ
հայր Տ'Եկրինեի , տեսնելով որ Ռօտէն իր կար-
ծածին պէս լոկ գիր գրելու մեքենայ մը չէր :
— Ես չեմ կրնար յանդգնիլ Ձեր արժանապատ-
ւութեան յանդիմանութիւն ուղղել , ըսաւ Ռօ-
տէն մինչեւ գետին խոնարհելով . բայց մեր ը-
նելիքն այն մարդը քսան եւ շորս ժամ արդե-
լուլ է : — Այնուհետեւ . . . եթէ իշխանու-
թեան բողոքէ : — Այնպիսի շարագործ մը չկըր-
նար բողոքելու համարձակիլ . մանաւանդ որ
հոսկէց աղատութեամբ դուրս ելաւ : Մօռօք եւ
Գողիաթ զայն բռնելնէն ետեւ աչքը պիտի կա-
պեն : Այս տունն ուրիշ դուռ մ'ունի Աիէյլ-
Տէզ-Իւրսէն փողոցին վրայ : Այս ժամուս եւ այս
մրրկեալ օդին ժամանակ մարդ չանցնիր այս ա-
մայի փողոցէն : Ուստի թշուառականն ուր տար-
ուիլը չկրնար գիտնալ . զինքը նոր չէնք ին տա-
կի նկուղներէն մէկը կիջեցրնեն , եւ վաղ գի-
չեր այս ժամուս նոյն դգուշութիւններով զինքը
թող կուտան . . . : Իսկ շնորհիկ իշխանազու-
նին ուր բնակիլը գիտենք հիմա . . . հաւա-
տարիմ անձ մը պէտք է զրկենք անոր քով :


եւ եթէ թմրութենէն ելնէ, խիստ պարզ եւ ըստ իմ դատման գիւրին միջոց մը կայ զայն վաղուան օրը Սէն-Ֆրանսուա փողոցէն հեռի պահելու : »

Նոյն հեղադէմ սպասաւորը՝ որ Ֆարէնկայի ներս մտած ու դուրս ելած ժամանակ առաջնորդեր էր, զգուշաբար դուռը բախելէ ետեւ ներս մտաւ ձեռքը այծեման մորթէ քսակ մը բռնած, զոր Ռօտէնի տուաւ ըսելով. « Պ. Մօռօք բերաւ զայս Վիէյլ-Տէղ-Իւրսէն փողոցի կողմէն : »

Սպասաւորը դուրս ելաւ : Ռօտէն քսակը բացաւ եւ մէջէն միտալ մ'եւ Ժօզիւէի նամակը հանելով ըսաւ հայր Տ'Էկրինեի. « Տեսէք ինչպէս ճարպիկութեամբ եւ շուտով գլուխ հանեց Մօռօք այս դործը : — Վտանգէ մ'ալ ազատեցանք, ըսաւ մարքիզ արբան, բայց ցաւալի է որ այդպիսի միջոցներ 'ի դործ կը դրուին : — Յանցանքն այն թշուառականին է՝ որ այսպէս ընելու մեզ հարկադրեց . . . : Հիմա ես շուտով մէկը պիտի դրկեմ շնորհ կին դտնուած պանդոկը : — Եւ առաւօտեան ժամ եօթնին Գարրիէլը Սէն-Ֆրանսուա փողոցը պիտի տանիք . հոն մտիկ կընեմ իր խօսելիքը՝ որուն համար երեք օրէ 'ի վեր զիս կը թախանձէ : — Արդէն իմաց տուած եմ իրեն, եւ պատրաստ է ձեր հրամանը կատարելու : — Վերջապէս, ըսաւ հայր Տ'Էկրինեի, այսչափ մրցումէ, այսչափ սրտադողերէ եւ այսչափ արգելքներէ ետեւ՝ քանի մը ժամ

միայն մեզ կը բաժնէ այն ցանկալի վայրկենէն՝
որուն այսչափ երկար ժամանակէ 'ի վեր կ'ըս-
պասենք : »

Հիմա ընթերցողը Սէն-Ֆրանսուա փողոցի
տունը տանինք :



ՄԱՍՆ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՓԵՏՐՎԱՐԻ ՏԱՍՆԵՐԵՔ



ՓՈՂՈՒԹ Մ. Ա.

ՍԷՆ — ՖՐԱՆՍՕՍԱ ՓՈՂՈՑԻ ՏՈՒՆԸ

Այս պատմութեան ժամանակները, Փարիզի Տօռէ փողոցէն Սէն-Ֆէրվէ փողոցը մտնողին դիմացը բարձր պատ մը կելնէր, որուն քարերը տարիներէ սեւցած եւ կարծես թէ որդերէ ծակ-ծրկած էին։ Այս պատը՝ որ այն ամայի փողոցին դրեթէ մէկ ծայրէն միւսն երկնցած էր, ծառաղարդ բարձրաւանդակի մը հաստարան եղած էր։ Բարձրաւանդակը փողոցին քարայտակէն քառսուն ռանաչափ բարձրութիւն ունէր, եւ վրան տնկուած հարիւրամեայ ծառոց թաւոսերուն մէջէն հինաւուրց տան մը քարաշէն ճակատը, սրածայր տանիքը եւ աղիւսէ մեծ ծիւնելոյղները կը տեսնուէին։ Տանը մուտքը Սէն—Ֆրանսօսա փողոցին մէջ 3 թիւ դուռն էր, Սէն-Ֆէրվէի փողոցին անկիւնէն քիչ հեռու։

Խիստ տխուր տեսք մ'ունէր այս տունը — Յրանսօա փողոցին կողմէն ալ բարձր որմով մը շրջապատեալ էր, որուն վրայ երկու երեք լուսամուտ կային ամուր վանդակներով պատած. կաղնի փայտէ երկաթապատ եւ վըրան խոշոր բուռներ գամուած մեծ դուռ մը, որուն նախկին գոյնը երկար ժամանակէ 'ի վեր աներեւոյթ եղած էր ցեխի փոշիի եւ ժանգի թանձր ծածկոյթին ներքեւ. Այս դուռը կամարածեւ ըլլալով, պատին տարապայման հաստութեան պատճառաւ խորունկ կամարայարկի մ'երեւոյթ ունէր. երկու լայն փեղկերէն մէկուն մէջ երկրորդ փոքրիկ դուռ մը կար, յորմէ ներս կը մանէր այս տխրատեսիլ տան պահպանը՝ Սամուէլ հրեայն. Գոնէն ներս ալ կամարայարկ մը կար՝ փողոցին վրայ նայող շէնքին ներքեւ. Այս շէնքին մէջ էր Սամուէլի բնակարանը. պատուհանները ներսի կողմէն ընդարձակ բակի մը վրայ կը նայէին, որ երկաթէ վանդակորմով պարտէզէն բաժնուած էր:

Պարտիզին մէջ տեղը կրկնայարկ տուն մը կը տեսնուէր կոխածոյ քարերով շինուած, եւ այնպէս տարօրինակ կերպիւ բարձրացած, որ քսանօտանեայ կրկին սանդուղէ մը վեր ելնել հարկ էր տանը դուռը հասնելու համար. այս դուռն՝ հարիւր յիսուն տարիէ 'ի վեր պատով փակուած էր: Պատուհաններուն գրսի փեղկերը լայն եւ հաստ կապարեայ տախտակներէ շինուած, ամրապէս իրարու մածուցած եւ երկաթէ շրջանակներով

քարին մէջ հաստատուած էին: Ասկէց զատ օդն ու
լոյսը բոլորովին արգիլելու եւ ներքին ու արտա-
քին ապականութեան առաջ քն առնլու համար,
տանիքն ալ հաստ կապարեայ տախտակներով
ծածկուած էր, ինչպէս նաեւ աղիւսէ բարձր ծրխ-
ներլոյզներուն ծակերը կըրով ու քարով խցուելէ
ետեւ նոյնպէս կապարէ տախտակով պատած էին:
Նոյնը ըրած էին նաեւ տանը վրայի փոքրիկ քա-
ռակուսի հովանոցի մը, որուն ապականիելի
վանդակը յարկին մածուցեալ կապարեայ տախ-
տակներով զոցուած էր. միայն թէ, զարմա-
նալի կամահաճութեամբ մը, հովանոցին չորս
դէմքը ծածկող չորս կապարեայ տախտակաց
ամեն մէկը՝ աշխարհի չորս կողմերուն կը պա-
տասխանէին, եւ վրայնին ալ եօթն փոքրիկ կը-
լոր ծակեր կային խաչի ձեւով, որ դուրսէն
դիւրութեամբ կը տեսնուէին: Ուրիշ ամեն պա-
տուհաններուն կապարեայ տախտակները միա-
կըտուր եւ անծակ էին: Այս նախազգուշու-
թիւններով եւ տանը շէնքն ալ ամուր ըլլալով,
հազիւ հարիւր յիսուն տարուան մէջ քանի մ'ար-
տաքին նորոգութիւններ հարկ եղած էին. իսկ
ներքին յարկերն ու սենեակները՝ դուրսի օդին
ազդեցութենէն բոլորովին ազատ ըլլալով, փակ-
ուած ժամանակի վիճակին մէջ անտխնդ ինա-
ցած էին:

Ճաթրտած պատերու, փտած ու խորտա-
կած փեղկերու, կիսափուլ ցուերու եւ վայ-
րի խոտերով ծածկուած պատուհաններու տես-

քրն այնչափ տխուր չէր, որչափ այս երկաթ ա-
պատ ու կապարապատ քարաշէն տունը, որ
հին դամբարանի մը պէս մ'նացած էր: Պարտէ-
ղը, որ բոլորովին անխնամ թողուած էր, եւ
որուն մէջ Սամուէլ պահապանը միայն կը մըտ-
նէր իր շարաթական հսկողութիւնն ընելու, մա-
լաբոյսերու եւ մացառներու աննկարագրելի
խառնուրդ մը կը ներկայացընէր, մանաւանդ
ամառը: Ծառերն իրենց վիճակին թողուած ըլ-
լալով ամեն կողմ ոստեր արձակած եւ իրարու
հետ խառնուած էին: Քանի մ'որթեր՝ բարու-
նակներէ աճած, եւ գետնին երեսը սողալէ ե-
տեւ՝ ծառոց բուներուն փաթ թուելով վեր ե-
լած եւ իրենց ուռերուն թաւահիւս ցանցն ա-
նոնց ամենաբարձր ոստերուն վրայ տարածած
էին: Այս կոյս անտառին մէջէն անցնելու հա-
մար՝ միայն մէկ շաւիղ մը կար զոր պահապա-
նը բացած էր վանդակորմէն տուն երթալու հա-
մար: Տանը շուրջը թեթեւ դառ 'ի վայրի ձե-
ւով յարդարուած եւ տասն ոտնաչափ լայնու-
թեամբ ամուր սալայատակ շինուած էր, որպէս
զի շուրերը վար քալեն: Աւրիշ նեղ ճանքայ մ'ալ
պատերուն շուրջը կար, ուր ամեն գիշեր եր-
կու կամ երեք պիրենեան խոշոր դամիռներ
պտրտելով հսկողութիւն կընէին: Այս հաւատա-
րիմ շուներուն սերունդն ալ հարիւր յիսուն տա-
րիէ 'ի վեր այս տան մէջ շարունակած էր: Այս-
պէս էր ահա Աէնքօնի տոհմին ժառանգաց ժա-
մադրութեան տեղի ըլլալու սահմանուած տունը:

Փետրվար 12ը 13էն բաժնող դիշերը լուս-
նայու մօտ էր : Փոթորիկը հանդարտած էր ,
անձրեւը դադրած , օդը բացուած , աստղերն
երեւան ելած , լուսինը՝ պակասելու մօտ՝ քաղ-
ցըր պայծառութեամբ կը փայլէր եւ տխրորակ
լոյս մը կը ծաւալէր այս լքեալ եւ լռին բնա-
կարանին վրայ , որուն սեմէն ներս այնչափ տա-
րիներէ՝ ի վեր մարդկային ոտք կոխած չէր : Պա-
հապանի բնակարանին պատուհաններուն մէ-
կէն պայծառ լոյս մը դուրս՝ զարկած ըլլալով ,
կը հասկցուէր որ հրեայն գեռ նստած էր : Ե-
րեւակայելու է բաւական ընդարձակ սենեակ
մը , վերէն ՚ի վար ընկուղին ՚ի հաստ եւ հնու-
թեան պատճառաւ սեւցած տախտակներով դըր-
ուադեալ . վառարանին մէջ երկու կիսայր-
եաց փայտ գեռ կը մխայլին , եւ անոր մօխրագոյն
քարէ սեղանատախտակին վրայ երկաթ է աշտա-
նակ մը կար բարակ մոմով մը , եւ դլուխը շի-
ջուցիչ մ'անցուցած . քովն ալ դոյզ մ'աարը-
ճանակ եւ որսի սուր դանակ մը , որուն բա-
նած պղնձ կոթը՝ եօթնեւտասներորդ դարուն
գործն էր . ասոնցմէ զատ վառարանին մոյթե-
րէն մէկուն քով հրացան մը կեցած էր , Չորս
անյենարան աթոռ , հին կաղնիէ պահարան մը ,
եւ գալարուն ոտքով քառակուսի սեղան մը՝ սե-
նեկին միակ կարասին էին . Փայտակուռ որմե-
րէն յարմարածիւ կերպով զանազան մեծու-
թեամբ բանայիներ կախուած էին , որոց ձե-
ւէն հնու թիւննին յաչանիէր , եւ ասին մէկուն

մէկուն օղակին վրայ այլ եւ այլ նշանակներ դրու-
ւած էին :

Աստի՛կ հին պահարանին ծածուկ եւ շարժուն
չափակը փորոքի մը մէջ ահեկով բացուած էր ,
եւ պատին մէջ ամբասպէս դետեղուած երկաթէ
լայն ու խորունկ արկղ մը կը տեսնուէր , որուն
փեղկը բացուելով՝ վեշտաաներորդ դարուն հը-
նարուած Յլօրէնտեան կղզանքներուն ճարտա-
բաղիւտ կաղմուածքը երեւան կը հանէր , որ ար-
դի նորահնար կղզանքներուն ամենէն աւելի կը
դիմանար բռնարարութեան , մանաւանդ այն
ժամանակի դաղափարաց համեմատ՝ արկղին ներ-
սի կողմը՝ շրջապատէն բաւական հեռաւորու-
թեամբ՝ ամիանդէ հաստ աստառ մը քաշուած էր
երկաթէ թելերով , որպէս զի եթէ հրդեհ պա-
տահի՝ մէջի նիւթերն անկիղելի մնան : Արկղին
մէջէն եղեւնափայտէ փոքրիկ մնասուկ մը հան-
ուած ու աթոռակի մը վրայ դրուած էր . եւ
այս վերջինին մէջ բաղմաթիւ թուղթեր կային
խնամով շարուած եւ ամեն մէկուն վրայ նը-
շանակներ դրուած : Պղնձէ կանդեղի մը լուսով
ձերունի Սամուէլին կինը՝ Բերսաբէ՝ տեսրակ մը
կը կարդար եւ Սամուէլ ալ տուժարի մը մէջ
կը դրէր :

Սամուէլ գրեթէ ութսունուերկու տարու-
էր այն ատեն . բայց եւ այնպէս դլուխը մոխ-
րադոյն թաւ մաղերով ծածկուած էր . մարմ-
նով փոքր նիհար եւ ջղոտ էր , եւ իր սթափ ու
արագ շարժմունքէն կը տեսնուէր որ տարինե-

րըն իր աշխոյժն ու ժրաջանութիւնը չէին տր-
կարացուցած . թէպէտ թաղին մէջ , ուր խիստ
քիչ կերեւնար , ինքդինք գրեթէ աղու պէս կը
ցուցընէր , ինչպէս որ Ռօտէն ալ ըսած էր հայր
Տ'էկրինեիի : Այժի մազէ լայն թեւերով շագա-
նակագոյն հին գիշերազգեստ մը գլինքը բոլորո-
վին պարածածկած էր մինչեւ ոտքը : Դէմքը՝
իւր ազդին յատուկ արեւելեան պատկերը կը
հերկայացընէր . գոյնը ճերմակ էր եւ քիչ մը
դեղինի կը դարնէր . քիթը արծուային . կզակը
ճերմակ մօրուքի փոքրիկ փունջով մը հովանա-
ւորեալ . ճնօտները դուրս ցցուած ըլլալով իր
փոսցած ու խորշոմած այտերուն վրայ բաւա-
կան անախորժ ստուեր մը կը ձգէին : Դէմքին
գծադրութիւնը նրբամիտ ու հանձարեղ էր :
Ղայն ու բարձր ճակատն ուղղութիւն անկեղ-
ծութիւն ու հաստատամտութիւն կը ցուցընէր .
աչքերն արարացի աչաց պէս սեւ ու փայլուն
էին եւ սուր ու միանգամայն քաղցր նայուածք
մ'ունէին :

Կինը՝ Բերսաբէ՝ տասնեւհինգ տարու փոքր
էր Աամուէլէն , բայց բարձրահասակ էր քան
դայն եւ սեւեր հագած : Նուրբ կտաւէ ճերմակ
գտակ մը՝ հին Իսրայէլեան ձեւով շրջանակած
էր իր դժգոյն եւ լուրջ դէմքը , որ ժամանա-
կաւ հազուագիւտ եւ խրոխտ դեղեցկութիւն
մ'ունեցած էր : Ճակտին վրայ քանի մը խոր-
շոմներ , որք իր դորշ յօնքերը գրեթէ շարու-
նակ կնճռելէն յառաջ կուգային , կը ցուցընէին

որ այս կինը յաճախապէս խոր տխրութեան
մ'ենթակայ էր : Այն միջոցին իսկ Բերսաբէի
դէմքն անբայատրելի տխրութեամբ զգածեալ
կերեւէր . նայուածքն անթարթ . գլուխը կուրծ-
քին վրայ ծռած . աջ ձեռքը՝ որով փոքրիկ
տեարակ մը բռնէր էր , ծունդին վրայ ձգած էր .
միւս ձեռքովն ալ ամուր մը կը սեղմէր յակիտի
(սեւ սաթ) պէս սեւ ու փայլուն մաղի հիւսք
մը՝ զոր քայռի պէս սլարանոցը կախած էր ,
եւ մէջ տեղն ալ քառակուսի բթաչափ մեծու-
թեամբ ոսկի ճարմանդ մը կար , որուն մէկ կող-
մը բիւրեղէ փոքրիկ տախտակ մը մասնատուփի
պէս ծածկած էր , եւ մէջը քառակուսի ծալ-
լուած կտաւի կտոր մը կը տեանուէր գրեթէ
բոլորովին թուխ-կարմիր բիծերով , որք երկար
ժամանակէ 'ի վեր չորցած արեան կը նմանէին :

Պահ մը լռութենէ ետեւ , որոյ միջոցին
Սամուէլ իր առմարին վրայ կը գրէր , բարձր
ձայնով իր գրածը կարդաց ըսելով . « Միւս
կողմանէ 5000 աւստրիական արծաթ դրամ 1000
ֆիօրինի արծողութեամբ , եւ թուական 19
հոկտեմբեր 1826 : » Այս ընթերցումէն ետեւ
Սամուէլ գլուխը վեր առնլով եւ կնոջը դառ-
նալով աւելցուց . « Ճիշդ այսպէս է , Բերսաբէ ,
քու տեարակիդ հետ բազդատեցիր : »

Բերսաբէ պատասխան չտուաւ : Սամուէլ
անոր երեսը նայեցաւ , եւ տեսնելով որ խոր
տխրութեան մէջ էր , սրտատանջ գորովով մ'ը-
սաւ անոր . « Ի՞նչ ունիս , Բերսաբէ , ի՞նչ կայ :

— 19 հոկտեմբեր 1826 . . . ըսաւ հեկեկեկով ,
աչքը միշտ անթարթ անկած եւ սպարանոցին սեւ
մազերուն հիւսքը ձեռքին մէջ սեղմելով . չա-
բաշուք թուական մ'է այս , Սամուէլ . . . խիստ
չարաշուք . . . վասն զի վերջին նամակին թը-
ւականն է , զոր ստացանք . . . : »

Բերասբէ շիրոցաւ շարունակել , երկար հա-
ռաչք մ'արձակեց եւ երեսը ձեռքին մէջ ծած-
կեց :

« Ա՛հ , կը հասկընամ , ըսաւ ծերունին խը-
ռովեալ ձայնիւ . հայր մը կրնայ ծանր դրադ-
մունքով իր կակիծը երբեմն մտնալ . բայց մօր
մը սիրտը , աւանդ , միշտ արթուն է : »

Եւ դրիչը սեղանին վրայ նետելով Սամու-
էլ ճակատը ձեռքին վրայ կրթնցուց վշտահար :

Բերասբէ նորէն սկսաւ խօսիլ որպէս թէ
իր դառն յիշատակութիւններէն ամառանք մ'ըզ-
դալով . « Ա՛յն . . . այս թուականը վերջին օրն
է , ուր մեր սիրելի Աբէլ որդին Չերմանիայէն
նամակ գրեց մեզ խմացընելով թէ հոսկէց տա-
րած ստակը ձեր հրամանին համեմատ գործա-
ծեր էր , եւ թէ ուրիշ գործողութեան մը համար
լեհաստան երթալու վրայ էր : — Եւ լեհաստանի
մէջ նահատակի մահուամբ մեռաւ , յարեց Սա-
մուէլ . . . ստանց պատճառի , առանց սպա-
ցուցի . վասն զի բոլորովին սուտ էր . անիրա-
ւութեամբ ամբաստանեցին զինքը որպէս թէ
մաքսանկնդութիւն կազմելու գացեր էր հոն . . .
եւ Ռուսաց կառավարութիւնն ալ այնպէս վար-

ուկցաւ անոր հետ՝ ինչպէս որ մեր եղբայրնե-
րուն հետ կը վարուին այն անադորուն բռնա-
ւորութեան երկիրներուն մէջ . Քնութով ձաղ-
կելու զարհուրելի պատժոյն դատապարտել տը-
ւաւ դայն . . . առանց անոր երեսը տեսնելու ,
ոչ ալ մտիկ ընելու : Նոյն կեղնէ հրեայ մը մտիկ
ընելէ . . . հրեան ով է . սորու կէ մ'աւելի ցած
արարած մը . . . : Միթէ այն երկրին մէջ ան-
դադար անոնց երեսին չեն զարներ անարդ-
ասրկութենէ յառաջ եկած ամեն մոլութիւն-
ները՝ որուն մէջ զանոնք կ'ընկղմեն : Հրեայ մը
ծեծի տակ մեռեր է . որուն հոգն է : — Աւ մեր
խեղճ Սքէլը , հեղ եւ աննենդ զաւակնիս խա-
րազանին ներքեւ մեռաւ՝ կէս մ'ամօթէն , կէս
մ'ալ ցաւէն , ըսաւ Տերաբէ ցնցուելով . մեր
Ղեհաստանցի եղբայրներէն մէկը մեծ դժուա-
րութեամբ թոյլտուութիւն ստացաւ դայն թա-
ղելու . . . անոր դեղեցիկ սեւ մաղերը կտրեց,
եւ այն մաղէն ու մեր սիրելի որդւոյն արեամ-
բը ներկուած այս լաթի կտորէն զառ ուրիշ
բան չէ մնացած մեզ անկէ » դոչեց Տերաբէ ,
եւ խանդակաթ ըղձիւ մաղերուն հիւսքն եւ
ճարմանդը կրկին կրկին համբուրեց :

Աւագ , ըսաւ Սամուէլ արասուքք սրբե-
լով , որ այս աղեկտուր յիշատակութեան մի-
ջոցին թորել սկսեր էր , գոնէ Տէրը զաւակնիս
այն ժամանակ առաւ մեր ձեռքէն՝ երբոր մեր
ընտանեաց դար ու կէսէ 'ի վեր հաւատարմու-
թեամբ շարունակած պաշտօնն իր վախճանին կը

մօտենար . . . : Այսուհետեւ մեր ազգատոհմն ինչ պիտի ընէ աշխարհիս վրայ , աւելցուց Սամուէլ խորին դառնութեամբ . միթէ մեր պարտազանութիւնը կատարուած չէ . . . : Միթէ այս անտուկը թագաւորական հարստութիւն մը չի պարունակեր . միթէ հարիւր յիսուն տարիէ 'ի վեր պատուի վակուած այս տունն այսօր չի պիտի բացուի իմ հաւիս բարերարին սերնդոցը . . . : »

Այս խօսքն ըսելով Սամուէլ գլուխը դէպ 'ի տունը դարձուց՝ դոր իր պատուհանէն կը տեսնէր : Նոյն միջոցին արշալոյսը ծագելու վրայ էր : Առտինը մայրը մտեր էր : Տանը վրայի հովանոցը , ինչպէս նաեւ սրածայր տանիքն ու ծխնելոյղները՝ աստեղադարդ հաստատութեան աղօտափայլ կապուտին վրայ նսեմաստուեր կը նկարուէին : Յանկարծ Սամուէլ դեղնեցաւ եւ մէկէն ոտքի վրայ ելնելով դողդոջուն ճայնիւ եւ տունը ցուցնելով ըսաւ կնոջը . « Բերաբէ , եօթն լուսեղէն կէտերը նայէ , ինչպէս որ երտուն տարի առաջ տեսանք . . . նայէ . . . նայէ : »

Արդարեւ , հովանոցին պատուհանները ծածկող կապարեայ տախտակներուն վրայ ժամանակաւ բացուած խաչաձեւ եօթն կլոր ծակերը՝ եօթն լուսաւոր կէտերու պէս լոյս կը փայլատակէին , որպէս թէ ներսէն մէկն այս ամբափակ տան վրայ ելած ըլլար :



ՏԱԼԻՔ ԱՌՆԵԼԻՔ

Քանի մը վայրկենի չափ Սամուէլ եւ Բեր-
 տաբէ անշարժ մնացին՝ սրտատանջ զարհուրա-
 նօք աչքերնին այն եօթն լուսափայլ կէտերուն
 տնկած, որք գիշերուան վերջին պայծառու-
 թեան մէջ հովանոցին վրայ կը շողշողէին,
 մինչդեռ տանը ետեւէն՝ հորիզոնին վրայ վար-
 դագոյն նուազ լոյս մը՝ արշալուսոյն ծագումը
 կաւետէր : Սամուէլ նախ լուսթիւնը խղեց, եւ
 ձեռքը ձակտին վրայ տանելով՝ ըսաւ կնոջը. «Մեր
 տարաբաղդ որդւոյն յիշատակութենէն զգացած
 կակիճնիս չթողուց մեզ խորհիլ թէ այս երեւոյ-
 թէն պէտք չէ զարհուրինք : — Ինչ կըսես,
 Սամուէլ : — Հայրս չըսաւ ինձ թէ ինք եւ հաւս
 քանի մ'անգամ այսպիսի լուսափայլութիւններ
 տեսած էին երկարժամանակեայ միջոցներու մէջ :
 — Այո՛, Սամուէլ . . . բայց անոնք ալ մեզ պէս
 պատճառը չէին կրցած հասկընալ : — Հօրս եւ
 հաւուս պէս մեք ալ պէտք է կարծենք թէ ան-
 նոնց ժամանակը՝ ինչպէս հիմա ալ՝ անժամօթ
 ճանրէ մ'այս տունը մտնող ելնող անձինք կան՝
 որք գաղտնի պաշտօն մը կը կատարեն հոն :
 Հայրս պատուիրեց ինձ նաեւ թէ չվախնանք այս
 տարօրինակ երեւոյթէն՝ որ երեսուն տարի ա-
 ռաջ ալ անգամ մը պատահեցաւ : — Ինչ որ ալ
 ըլլայ, Սամուէլ, այս երեւոյթը դերբնական

բան մը թուելով զիս կը զարհուրեցընէ : — Հը-
րաշքի ժամանակն անցած է , ըսաւ հրեայն զը-
լուխը տխրութեամբ երեբցընելով . այս թաղին
մէջ շատ հին տուներ կան՝ որք ստորերկրեայ
ճանքաներով հեռու տեղերու հետ հաղորդակ-
ցութիւն ունին . ոմանց համար կըսուի թէ մին-
չեւ Աէն գետը եւ հին ժամանակէն մնացած ստո-
րերկրեայ գերեզմաննոցները կը հասնին . . . :
Անշուշտ այս տունն ալ այնպիսի ճանքայ մ'ու-
նենալու է , եւ ժամանակ ժամանակ հոս երեւ-
ցող անձինքն ալ այն ճանքէն կը մտնեն : — Բայց
հովանոցին այսպէս լուսաւորուելուն ինչ ըսենք :
— Շէնքին ծրագրին նայելով զխտեա որ այս հո-
վանոցը՝ տանը վերի դասիկոնին մէջ սգոյ դահ-
լիճ ըսուած սրահին լուսամուտը կամ լապտերն
է : Աւ որովհետեւ բոլոր պատուհաններուն դոց-
ուած ըլլալուն պատճառաւ տանը մէջ խոր մը-
թութիւն կը տիրէ , ուստի սգոյ դահլիճն ել-
նելու համար հարկաւ ճրագ կը դորձածեն :
Արսուի թէ այն դահլիճն մէջ խիստ տարօրինակ
եւ չարագոյծ բաներ կան . . . » յաւելցուց
հրեայն ոահմուկելով : Բերսաբէ ալ էրկանը պէս
ուշադրութեամբ այն եօթն լուսախայլ կէտե-
րուն կը նայէր , որոց պայծառութիւնը հետըզ-
հետէ կը պակսէր՝ քանի որ առաւօտեան լոյսը
կաւելնար :

« Ինչպէս որ կըսես , Սամուէլ , այս դադա-
նիքն այդպէս կրնայ մեկնուիլ , ըսաւ ծերու-
նիին կինը : Ասկէց զատ , այս օրը՝ Աէնբօնեան

աղգատոհմին համար այն աստիճան կարեւոր օր
մ'է, որ այսպիսի պարագայի մը մէջ այս երեւ-
ւոյթը պէտք չէ մեզ դարմացընէ: — Եւ խոր-
հիլ որ, յարեց Սամուէլ, դար ու կէսէ 'ի վեր
այս լուսափայլութիւնը քանիցս անգամ երեւ-
ցած է: Ուրեմն ուրիշ ընտանիք մ'ալ կայ, որ
մեզ պէս յորդուոց որդի երկիւղած պարտակա-
նութիւն մը կատարելու անձնուէր եղած է . . . :
— Բայց ի՞նչ պարտականութիւն է կատարածը .
թերեւս այսօր ամեն բան պիտի յայտնուի . . . :
— Օ'ն, օ'ն, Բերսաբէ, ըսաւ յանկարծ Սա-
մուէլ իր մտախոհութենէն ելնելով եւ կարծես
թէ պարապ կենալուն վրայ զղջալով. ահա
լուսցաւ, եւ պէտք է որ ժամ ութէն առաջ
անտուկին վիճակը պարզի եւ այս ամբաւ հա-
րրատութեան թուղթերը դասակարգին (եւ ե-
ղեւնափայտէ անտուկը ցոյց տուաւ), որպէս զի
որու որ անկ է՝ անոր ձեռքն յանձնուին: — Ի-
րաւունք ունիա, Սամուէլ, այս օրը մերը չէ . . .
նշանաւոր օր մ'է . . . եւ գեղեցիկ, սէ, շատ
գեղեցիկ պիտի ըլլայ մեզ համար . . . եթէ այսու-
հետեւ գեղեցիկ օր մը յուսալ կարելի է մեզ, ը-
սաւ Բերսաբէ դառնութեամբ իր որդին միտքը
բերելով: — Բերսաբէ, ըսաւ Սամուէլ ախրու-
թեամբ ձեռքը կնոջը ձեռքին վրայ դնելով, դո-
նէ՞ պարտաւորութիւննիս կատարած ըլլալու գո-
հութիւնը կ'զգանք . . . : Միթէ Տէրը մեզ նպաս-
տաւոր չեղաւ, թէպէտ մեր որդւոյն մահուամբն
ալ մեզ խստիւ փորձեց: Միթէ իւր նախախնա-

մութեան շնորհը չէր որ իմ ազգատոհմիս երեք
սերունդը կրցին այս մեծ դործն սկսիլ, շարու-
նակել եւ աւարտել: — Այո՛, Սամուէլ, ըսաւ
հրէուհին գորովանօք, եւ դոնէ քեզ համար
այս գոհունակութեան հետ սրտի անդորրու-
թիւնն ալ պիտի միանայ, վասն զի երբոր կէս
օրը հնչէ, սարսափելի պատասխանատուութե-
նէ մը պիտի ազատիս: »

Այս ըսելով Բերսարէ եղեւնափայտէ սրն-
տուկը ցուցուց:

« Ճշմարիտ է, պատասխանեց ծերունին.
ես առաւել կը սիրեմ այս ամբաւ հարստութիւ-
նըն իր օրինաւոր տէրանց ձեռքը տեսնել՝ քան
թէ իմ: Բայց այսօր անոնց աւանդապահն ըլ-
լալէ պիտի դադրիմ . . . : Ուրեմն վերջին ան-
գամ հաշիւներն աչքէ անցունեմ, եւ յետոյ
իմ տումարս քու ձեռքի տեսրակիդ հետ բաղ-
դատենք: »

Բերսարէ գլխովն հաւանութեան ակնարկ
մ'ըրաւ: Սամուէլ դրիչը ձեռքն առաւ, եւ ու-
շադրութեամբ իր պանքայի հաշիւներուն ըզ-
բաղիլ սկսաւ. կինն ալ ակամայ վերստին իր
տխուր մտածութեանց մէջ ընկղմեցաւ, դորս
ձախող թուական մը մտքին մէջ արթնցուցեր
էր՝ որդւոյն մահը յիշեցընելով:

Հոս հարեւանցի կերպով ներկայացնենք
50000 ոսկիին ամենապարզ՝ բայց ըստ երեւու-
թին վիպասանական եւ հրաշակերպ պատմու-
թիւնը: Այս փոքր գումարը, իմաստուն եւ հա-

ւատարիմ անտեսութեամբ, հարիւր յիսուն տարուան մէջ բնականաբար կամ մանաւանդ բըռնաբար այնպիսի գումարի մը հասած էր, որ հայր Տ'Էկրինելի կարծած քառսուն միլիոնէն շատ մեծ էր: Հայր Տ'Էկրինելի ոչ միայն կատարեալ տեղեկութիւն մը չունէր այս հարստութեան վրայ, այլ եւ ճախող հաւանականութիւններն ալ հաշուի կը դնէր, ինչպէս են կորուստները սնանկութիւնները եւայլն՝ որք այնչափ տարինէ՛ ՚ի վեր կրնային պատահիլ այս ընչից յաջորդական աւանդապահներուն մէջ: Հանդերձ այսու ամենայնիւ, քառսուն միլիոնի գումարը խիստ մեծ կը դանէր:

Այս հարստութեան պատմութիւնը հարկաւ կապակցութիւն ունէր Սամուէլի տոհմին հետ, որ երեք սերունդէ՛ ՚ի վեր դայն կը շահեցընէր: Ուստի երկու խօսք ընենք այս ընտանեաց վրայ:

1670ին ատենները, Պ. Մարիոս Ռէնբօն, մեռնելէն քանի մը տարի առաջ Բորթուկալի մէջ ճանապարհորդութիւն մ'ըրած ժամանակ՝ զօրաւոր միջնորդներու շնորհիւ թշուառ հրէի մը կեանքն ազատեր էր, զոր հաւատաքննութիւնը կրօնի պատճառաւ խարոյկի դատապարտած էր . . ., Այն հրեայն՝ որ Իսահակ Սամուէլ կը կոչուէր, Սէն—Ֆրանսօա փողոցի տանը պահպանութիւն ընող Սամուէլի հաւն էր:

Սղնուասիրտ մարդիկ շատ անգամ իրենց երախտապարտ եղողներուն գոնէ այնչափ կը

յարին , որչափ երախտաւորեալներն իրենց բարեբարներուն : Պ . Ռէնքօն հասկնալով նախ որ իսահակ Վիդպոնի մէջ փոխանակութեան փոքր տուրեւառ մը կընէր , անխարդախ , գործունեայ , աշխատասէր եւ հանճարեղ էր , եւ որովհետեւ ինքն ալ այն ժամանակ Գաղղիոյ մէջ շատ հարստութեան տէր էր , առաջարկեց հրէին որ իր հետ Գաղղիա դայ եւ իր հարստութիւնը անտեսէ : Հրէից դէմ ամեն ժամանակ ցոյց տրուած ատելութիւնն ու անխտանութիւնն այն ատենները վերջին աստիճանի հասած էին : Ուստի իսահակ կրկնապատիկ շնորհակալ եղաւ Պ . Ռէնքօնի տուած այս վստահութեան փորձէն : Ընդունեց անոր առաջարկութիւնը , եւ այն օրէն խոստացաւ իր բոլոր գոյութիւնն անոր ծառայութեան նուիրել , որ իր կեանքն ազատելէ ետեւ՝ իր ուղղութեանն ու հաւատարմութեանը կը վստահէր , իրեն՝ որ ընդհանրապէս կասկածելի ատելի եւ արհամարհելի եղած ազգի մը զաւակ էր : Պ . Ռէնքօն , վեհաիրտ հանճարեղ եւ նրբախոհ մարդ , իր ընտրութեան մէջ չէր սխալած : Իր հարըստութիւնը՝ մինչեւ որ ձեռքէն գնաց՝ սքանչելի կերպով աճեցաւ իսահակ Սամուէլի անտեսութեամբ , որ գործի մէջ ունեցած զարմանալի յաջողակութիւնը մի միայն իր բարեբարին շահուցը նուիրած էր :

Եկան հալածանքն ու Պ . Ռէնքօնի կործանումը : որուն ինչքը գրաւուելով մեռնելէն

քանի մ'օր առաջ ճիզվիթաց ընկերութեան վերապատուելի հայրերուն թողուեցաւ, որք զայն ամբաստանած ու մատնած էին: Ռէնքօն իր կեանքը բռնաբար վերջացրնելու համար տեղ մը պահուըտած ըլլալով, Իսահակ Սամուէլը գաղտնաբար հոն կանչել տուաւ եւ անոր 50000 սուկի յանձնեց, որ իր անցեալ հարստութեան միակ մնացորդն էր: Հաւատարիմ ծառայն այս գումարը պիտի շահեցընէր, տոկոսները դիզէր եւ նորէն շահու տար: Նթէ արու զաւակ ունենար, այս պարտականութիւնն անոր պիտի աւանդէր. իսկ եթէ արու զաւակ չունենար, իր ազգականներէն հաւատարիմ մէկը պիտի գըտնէր ու անոր աւանդէր այս անտեսութիւնը, որուն համար պատշաճ փարձք մ'ալ պիտի սահմանուէր: Այս անտեսութիւնն այսպէս յորդուց որդի եւ մերձաւորէ մերձաւոր յաջորդաբար աւանդուելով մինչեւ հարիւր յիսուն տարի պիտի շարունակէր: Պ. Ռէնքօն աղաչեր էր նաեւ Իսահակայ, որ մինչեւ իր կենաց վերջը Սէն-Ֆրանսուա փոզոցի տանը պահապան ըլլայ, հոն ձրիապէս բնակի, եւ եթէ հնար է՝ իր պաշտօնն իր զաւակաց կտակէ:

Նթէ Իսահակ Սամուէլ զաւակ ալ չունենար, համերաշխութեան զօրաւոր հողին՝ որ շատ անգամ քանի մը հրեայ ընտանիք իրարու կը կապէ, Պ. Ռէնքօնի վերջին կամքը կրնար գործադրելի ընել: Իսահակայ ազգականներն՝ անոր բարերարին նկատմամբ ունեցած երախ-

տագիտութեան կընկերանային, եւ իրենցմէ մէկուն վրայ գրուած պարտականութիւնը իրենք ու սերունդնին երկիւղած հաւատարմութեամբ կը կատարէին: Բայց Իսահակ՝ Ռէնբօնի մահուանէն քանի մը տարի ետքը որդի մ'ունեցաւ: Այն որդին, Ղէվի Սամուէլ, ծնեալ 1689 ին, իր առաջին կնոջմէն զաւակ չունենալով, վաթսուն տարու մօտ նորէն կարգուեր եւ 1750 ին որդի մը ծներ էր, Գաւիթ Սամուէլ, Սէն—Ֆրանսուա փողոցի տան պահապանը, որ 1832 ին (այս պատմութեան ժամանակը) ութսունուերկու տարու էր, եւ տակաւին յոյս կուտար հօրը չափ երկար ապրելու, որ իննսուն երեք տարու մեռած էր: Ըսենք փերջապէս, որ Աբէլ Սամուէլ, Բերսարէի դռնապէս կսկծացած որդին՝ 1790 ին ծնած եւ քսան եւ վեց տար եկան հասակին մէջ Ռուսիոյ Քնութիւն ներքեւ մեռած էր:

✓ Այս համեատ ազգաբանութենէն զիւրաւ կը հասկցուի թէ Սամուէլի տոհմին այս երեք անդամոց յաջորդաբար երկարակեցութիւնը, որով որմափակ տան պահպանութիւնը շարունակած եւ իննեւտասներորդ դարը եօթնեւտասներորդին կապուած էր, Պ. Ռէնբօնի կըտակին գործադրութիւնը պարզեր ու զիւրացուցեր էր: Պ. Ռէնբօն որոշապէս յայտներ էր Սամուէլներուն հաւին թէ իր փափաքն այս էր որ թողուցած ստակը հարիւրին հինգ շահով բանի, եւ տոկոսները դրամագլխին վրայ զար-

նուելլով աւելնան, որպէս զի այս հարստութիւնն
ապօրինաւոր շահերէ անարատ հասնի իր ժա-
ռանդաց ձեռքը :

Սամուէլի տոհմին կրօնակիցները՝ որք ա-
ռաջին հնարողն են փոխանակագրին, որով կա-
րող եղան միջին դարուց մէջ մեծագումար հա-
րրստութիւն գաղտնաբար աշխարհի մէկ ծայ-
րէն միւսը փոխադրել, իրենց հարստութիւնը
ծածկել եւ իրենց թշնամեաց յափշտակութե-
նէն ապահովել, հրեայները, կըսենք, մինչեւ
ութեւտասներորդ դարուն վերջը փոխանակու-
թեան եւ ստակի տուրեւառը գրեթէ միայնակ
կատարելով, Սամուէլի տոհմին դրամական գոր-
ծողութեանցն ու գաղտնի տուրեւառութիւն-
ներուն շատ նպաստեցին, որ մինչեւ 1820 թը-
ւականը, իր ձեռքն եղած եւ հետզհետէ ահագին
գումարի հասած հարստութիւնը Յւրոպայի հըր-
եայ սեղանաւորաց ամենէն փարթամ տուներուն
տուած էր : Այս ապահով եւ անքոյթ գործո-
ղութեան եղանակը թոյլ տուեր էր Սէն—Յը-
րանսօս փողոցի այժմեան պահապանին՝ պարզ
վճարագրով կամ փոխանակագրով ծածկաբար
ամենամեծ գումարներ բաղմաթիւ մեծ տու-
ներու վրայ անցունել . վասն զի գլխաւո-
րապէս ասոր անտեսութեան օրովն էր որ դը-
րամագլխեալ շահերը դիզուելով անհաշուելի
ընդարձակութեան հասած էին . իր հայրը եւ
մանաւանդ հաւը՝ իրեն հետ համեմատութեամբ՝
խիստ փոքր գումար մ'ունէին շահեցընելիք :

Թէպէտ իր գործը պարզապէս եւ անմիջաբար ստակ բանեցընելու ապահով տեղեր գտնել էր որպէս զի ստակն ապարդիւն չմնայ, բայց եւ այնպէս այս վիճակին հասցընելու համար սեղանաւորական մեծ յաջողակութիւն հարկ էր, մանաւանդ երբոր յիսուն միլիոններու խնդիր եղաւ : Այս յաջողակութիւնը՝ արդէն Սամուէլ իր հօրմէն վարժուած՝ վերջին աստիճանի հասուց, ինչպէս որ քիչ մ'ետ քը յիշուելիք արդիւնքէն պիտի տեսնուի :

Արդարեւ խիստ սրտաշարժ ազնիւ եւ յարգելի է այս հրեայ գերդաստանին անդամոց վարմունքը, որք իրենցմէ մէկուն յանձն առած երախտագիտական պարտականութեան այսպէս բաժանորդ ըլլալով՝ այսչափ երկար աարիներ ուղղութեամբ իմաստութեամբ եւ անչահասիրութեամբ կաշխատին թագաւորական հարստութիւն մը գոյացընելու, որմէ իրենք բնաւ մաս չունին, եւ իրենց ձեռօք ամբողջ եւ անարատ իրենց հաւուն բարերարին ժառանգացը պիտի հասնի : Վերջապէս թէ աւանդող աքսորելոյն եւ թէ դայն ընդունող հըրէին ասկէց աւելի պատիւ բերող բան չկրնար ըլլալ, որ հարիւր յիսուն տարի ետեւ արդիւնք բերելիք այսպիսի մեծ գործ մը՝ առանց փոխադարձ վստահութենէ եւ համարումէ դատ ուրիշ երաշխաւորութեան՝ պարզ խոստումներովրայ միայն հիմնեալ էր . . . :

Սամուէլ իր հաշուեցոյցն ուշադրութեամբ

դատել ևսու ըսաւ կնոջը . « Յաւելու մտերուս
ճշդութեանը վրայ կասկած չունիմ . հիմա եկ ,
քու ձեռքի տետրակիդ հետ բաղդաստենք այս
տուճարին մէջ դրածներս . միանգամայն ստու-
գեմ թէ մուրհակներն ու արժէթուղթերը կար-
գաւ դատուած են սնտուկին մէջ . վասն զի այս
տուճար ամենն ալ նօտարին պիտի յանձնեմ
երբոր կտակը բացուի :

— Սկսէ , սիրելիս , ես սլաորաստ եմ » ը-
սաւ Բերսաբէ :

Սամուէլ ալ հետեւեալ հաշուեցոյցը կար-
գաց՝ հետզհետէ սնտուկին մէջ ստուգելով :

Պ. Եւ Ռեմբոնէ Ժառանգաց հաշուոյն Բաժանորակութեանը ,
Գաւիթ Սամուէլին յանձնած .

Պ Ա Ր Տ Ք

2,000,000	Ֆրանք տարեկան եկամուտ բերող
	դաղղիական հարիւրին 5 արժէթուղթ յան-
	ւանէ նշանակեալ եւ ներկայացնողին վճա-
	րելի , գնեալ 1825էն մինչեւ 1832 , ըստ վա-
	ւերական ստացագրոց , հարիւրը միջին գնով
99	Ֆրանք 50 տանթիւմ Ֆր. 39,800,000
900,000	Ֆր. տարեկան եկամուտ բե-
	րող դաղղիական այլ եւ այլ արժէ-
	թուղթ նոյն տարիներուն մէջ գրն-
	եալ , հարիւրը միջին գնով 74 Ֆր.
50	տանթ Ֆր. 22,275,000
5000	Ֆր. եկամուտ բերող դաղղիա-
	կան Պանքայի բաժին՝ ընկերու-
	թեամբ գնեալ , ամեն մէկը 1900 Ֆր. 9,500,000

300 բաժին Չորս ջրանցից , գնեալ
 1115 ֆր. միջին գնով ֆր. 3,345,000
 125000 տուքաթ բերող Նարսիսի ար-
 ժէթուղթ , 82 ֆր. միջին գնով .
 —2,050,000 տուքաթ , 4 ֆր. 40
 սանթիմէն ֆր. 9,020,000
 5000 աւտորիական գրամաթուղթ
 1000 ֆիօրիննոց , 93 ֆիօրին մի-
 ջին գնով — 4,650,000 ֆիօրին 2
 ֆր. 50 սանթիմէն ֆր. 11,625,000
 75,000 անգղ. լիրայի հարիւրին 3 ուլ
 քօնասօլիտէ 88³/₄ գնով —2,218,750
 լիրա 25 ալան ֆրանքէն . . ֆր. 55,468,750
 1,200,000 հոլանտական 60 ֆրանքնոց
 ֆիօրինի թուղթ հարիւրին 2¹/₂ շա-
 հով —28,860,000 ֆիօրին 2 ֆր.
 10 սանթ. գնով ֆր. 60,606,000
 Յաւելեալ գրամ սակի եւ արծաթ եւ
 Պանքայի տոմսակ ֆր. 535,250
 ֆր. 212,175,000

Պ Ա Հ Ա Ն Ձ Ք

150,000 ֆր. 1682ին իմ հաւս' Իսա-
 հակ Սամուէլ՝ Պ. Տը Ռէնրօնէն ըս-
 տացած , եւ իր , հօրս եւ իմ ձեռօք
 հեռագհեաէ հարիւրին 5 տոկոսով
 շահու արուելով , եւ ամեն վեց
 ամիս տոկոսը գլխոյն վրայ բար-
 գուելով ըստ ներօրիակեալ հաշւոյն
 գոյացուցին ֆր. 225,950,000

Բայց այս գումարէն պէտք է վար եր-
թանք՝ ըստ ներփակեալ հաշուե-
ցուցին՝ անանկութիւններէ յառաջ
եկած կորուստները, դանադան ան-
ձանց վճարուած յանձնարարու-
թիւններն ու միջնորդ չէքները եւ
երեք յաջորդաբար տնտեսողնե-
րուն վարձքը

Ֆր. 13,775,000

Ֆր. 212,175,000

Փարիզ 12 փետրւար 1832

« Ճիշդ այսպէս, ըսաւ Սամուէլ անտուկին
մէջի թուղթերն ստուգելէ ետեւ : Ուստի Ռէն-
բօնի տոհմին ժառանգաց տրուելու համար սըն-
տուկին մէջ կը մնայ երկու հարիւր տասներկու
միլիոն հարիւր եօթանասուն եւ հինգ հազար
Ֆրանք : »

Եւ արդար պարծանքով մը ծերունին կհո-
ջը նայեցաւ :

« Անհաւատալի բան է այդ, գոչեց Բեր-
սարէ ապշելով . ես գիտէի որ ձեռքդ մեծա-
գումար հարստութիւն կար, բայց երբէք չէի
կրնար հաւատալ որ ասկէց հարիւր յիսուն տա-
րի առաջ թողուած 150,000 Ֆրանքն այդ ան-
հաւատալի հարստութեան միակ աղբիւրն ըլ-
լար : — Եւ սակայն միակ աղբիւրն է, Բերսա-
րէ . . . պատասխանեց ծերունին գոռոզութեամբ :
Անշուշտ, իմ հաւս հայրս ու ես այս ստակին
տնտեսութեան մէջ կատարեալ հաւատարմու-
թիւն ու ճշգրտութիւն 'ի գործ դրած կենք, ան-

չուչտ շահեցրնելու տեղեր բնութելու համար շատ
զգուշութիւն ու խոհականութիւն պէտք եղաւ
մեզ՝ մանաւանդ քաղաքական յեղափոխութեանց
եւ առեւտրական տագնապներու ժամանակ .
բայց Ներսիսյի ամեն կողմը դանուող մեր կը-
րօնակցաց հետ առեւտրական յարաբերութիւն-
ներ ունենալնուս պատճառաւ դժուարութիւն
չքաշեցինք . սակայն ոչ ես եւ ոչ հայրերս եր-
բէք չուղեցինք՝ բարձր վաշխերով եւ ոչ իսկ
օրինաց հաստատած տակոսէն քիչ մը բարձր
դնով ստակ շահեցրնել . . . : Պ . Ռէնբօնի կամ-
քըն այս էր . ուստի կրնամ բսել թէ աշխարհի
մէջ ասկէց աւելի մաքուր եւ արդար հարրու-
տութիւն չկրնար ըլլալ . . . : Ն[թէ] այսպէս ան-
շահասէր կերպով չվարուէինք եւ քանի մը յա-
ջող պարագայներէ ալ օգուտ քաղել ուղէինք ,
այս հարստութիւնն երկու հարիւր տասներկու
միլիոնէն շատ աւելի կը հասնէր : — Բայց այդ
դումարն ալ արդէն անհուստալի կերելի ինձ ,
ըսաւ Ներսարէ : — Հաշիւը խիստ պարզ է , պա-
տասխանեց Սամուէլ . ամեն մարդ գիտէ որ դը-
րամագլուխ մը հարիւրին 5 շահ բերելով եւ
շահը վրան դարնուելով տասնեչորս տարուան
մէջ կը կրկնապատկի : Հիմա մտածէ որ հա-
րիւր յիսուն տարուան մէջ տասն անգամ տա-
ւըն եւ չորս տարի կայ , եւ առաջին հարիւր
յիսուն հազար Փրանքը տասն եւ չորս անգամ
կրկնապատկէ , կը տեսնես որ դարմանալի ե-
րեւցածը խիստ պարզ բան մ'է : 1682 ին Պ .

ար Ռէնքօն 150,000 ֆրանք յանձներ էր իմ հաւ
ւիս . այս դումարը՝ շահը վրան դարնուելով
տասն եւ չորս տարի ետքը՝ այսինքն 1696 ին
300,000 ֆր. եղեր էր : Այս ալ 1710ին կրկնա
պատկելով 600,000 ֆր. եղեր էր : 1719ին՝ հաւ
ւիս մեռած ժամանակ՝ դումարն արդէն մէկ
միլիոն ֆրանքի կը հասնէր : 1724ին մէկ միլիոն
200,000 ֆր. եղած էր : 1738ին 2 միլիոն 400,
000 ֆր. 1752ին՝ իմ ծնանելէս երկու տարի ետ
քը՝ 4 միլիոն 800,000 ֆր. 1766ին՝ 9 միլիոն
600,000 ֆր. 1780ին՝ 19 միլիոն 200,000 ֆր.
1794ին՝ 38 միլիոն 400,000 ֆր. 1808ին՝ 76 միլի
ոն 800,000 ֆր. 1822ին՝ 153 միլիոն 600,000 ֆր.
Վերջապէս այսօրուան օրս տասն տարուան շա
հերը բաղադրելով առ նուազն 225 միլիոնի հա
սած ըլլալու էր . բայց կորուստներ եւ անհր
րաժեշտ ծախքեր եղած ըլլալով, որոց մանրա
մասն հաշիւը կեցած է, այս դումարը 212 մի
լիոն 175,000 ֆրանքի իջուցած են, որոց ար
ժէթուղթերն ահա այս սնտուկին մէջ պատրաստ
կը կենան : — Հիմա կը հասկնամ, սիրելիս, ը
սաւ Յերասրէ մտախոհութեամբ . բայց նրչափ
անհաւատալի դօրութիւն է եղեր շահուց բա
ղադրութեան ու կուտակութեան դօրութիւնը,
եւ ներկայիս մէջ ամենափոքր դրամագլխով մ'ա
պագային համար ինչ դարմանալի դործեր չեն
կրնար կատարուիլ : — Այդ եղած է անշուշտ
Պ. ար Ռէնքօնի դիտաւորութիւնն ալ . վասն զի
ինչպէս որ հայրս կը սպասէր, հաւս կրտէ եւ

դեր թէ Պ. ար Ռէնբօն իր ժամանակի մեծահան-
ճար մարդոցմէն մէկն էր, պատասխանեց Սամու-
էլ եղեւնեայ սնտուկը գոցելով: — Աստուած տայ
որ իր թռչներն արժանի մարդիկ ըլլան այդ թա-
գաւորական հարստութեան, եւ ազնիւ կերպով
գործածեն, ըսաւ Բերաարէ՛ ոտքի վրայ ելնելով:

Նոյսը կատարելապէս ծագեր էր, եւ ժամը
եօթն դարկաւ:

« Հիմա որմնադիրները կուգան » ըսաւ Սա-
մուէլ եղեւնեայ փոքր սնտուկը նորէն կաղնիէ
պահարանին ետեւ ծածկուած երկաթէ մեծ արկ-
ղին մէջ դնելով. եւ յարեց. « Նս ալ, Բերաարէ՛,
քեզ պէս սրտատանջութեամբ հետաքրքիր եմ
գիտնալու թէ ո՞վ են Պ. Տը Ռէնբօնի ժառանգ-
ները՝ որ այսօր հոս պիտի ներկայանան . . . »

Այս միջոցին փողոցի մեծ դրան երկաթէ
ուռն երկու երեք անգամ ուժգնութեամբ դար-
նուեցաւ, եւ պահապան շուներն հաշել սկսան:
Սամուէլ ըսաւ կնոջը. « Անշուշտ որմնադիր-
ներն են՝ դորս նօտարը կը դրկէ գրագրի մը հետ.
կաղաչեմ, բոլոր բանալեաց տրցակները մէկ
տեղ հաւքէ իրենց նշանակներովը, մինչեւ որ
ես երթամ դուռը բանամ ու վեր ելնեմ: »

Այս ըսելով Սամուէլ՝ իր հասակին հակա-
ռակ արագութեամբ մը սանդուղէն վար իջաւ,
դրան քով գնաց եւ զգուշութեամբ պատու-
հան մը բանալով տեսաւ որ որմնադրի կերպա-
բանօք երեք գործաւոր էին՝ սեւապղեամ երի-
տասարդի մը հետ:

« Ի՞նչ կուզէք, պարոններ, հարցուց հրե-
եայն դուռը բանալէ առաջ, որպէս զի ո՛վ ըլ-
լալնին լաւ մը ստուգէ: — Պ. Տիւմէնիլ նօտա-
րին կողմէն կուգամ, պատասխանեց երիտա-
սարդ գրագիրը, որպէս զի որմափակ գրան-
բացուելուն ներկայ գտնուիմ. ահաւասիկ մե-
ծաւորիս նամակը՝ զոր այս տան պահպանու-
թիւն ընող Պ. Սամուէլին գրած է: — Սամուէլն
եւ եմ, պարոն, ըսաւ հրեայն, հաճեցէք այդ
նամակը տըւփին մէջ ձգել, որպէս զի գամ
առնում:

Նօտարին գրագիրն ուսերը տնկելով Սա-
մուէլի խնդիրը կատարեց: Ասակածոտ ծերուն-
ւոյն առաջարկութիւնը խիստ ծաղրելի կը թը-
ւէր իրեն:


Պահապանը նամակատուփը բանալով գիրն
առաւ, կամարայարկին ծայրը գնաց որպէս զի
լուսով կարդայ, գրպանէն նոյն նօտարին մէկ
ուրիշ նամակը հանեց եւ ստորագրութիւնն ու-
շագրութեամբ բաղդատեց: Այս նախազգու-
շութիւններէն ետեւ, գամփուերը շղթայի դար-
կաւ, եւ յետոյ գնաց փողոցին դուռը բացաւ
գրագրին եւ որմնադրաց:

« Ի՞նչ է այս, պարոն ծերուկ, ըսաւ գրա-
գիրը ներս մտած ժամանակ, բերդի դուռ որ
ըլլար՝ այսչափ զգուշութիւններ ու ձեւեր պէտք
չէին ըլլար բանալու համար . . . : Հրեայն խո-
նարհութիւն ըրաւ առանց պատասխանելու:

« Խո՛ւլ էք, բարեկամ, գոչեց գրագիրը

Սամուէլի ահանջն 'ի վար : — Աջ , պարոն , բա-
սա Սամուէլ քաղցրութեամբ ժպտելով եւ քա-
նի մը քայլ առնելով դէպ 'ի կամարայարկէն
դուրս , յետոյ տունը ցուցնելով աւելցուց . « Ա-
հա , պարոն , բացուելիք որմափակ դուռը :
Ասկէց զատ պէտք է քակել աջ կողմի երկրորդ
պատուհանին երկաթէ ու կապարէ շրջանակը :
— Ինչո՞ւ համար ամեն պատուհանները չէք բա-
նայ տար , հարցուց դրագիրը : — Վասն զի այն
պէս պատուէր եղած է ինձ , պարոն : — Ա՞՞՞՞վ
տուաւ ձեզ այդ պատուէրը : — Հայրս , պա-
րոն , անոր ալ հաւս պատուիրեր էր՝ տանտիրոջ
կողմէն . . . : Երբոր ես պահապան ըլլալէ դադ-
րիմ , եւ այս տունն իր նոր տիրոջ ձեռքն անց-
նի , ինչպէս ուզէ՝ այնպէս թող ընէ : — Շատ
աղէկ կըլլայ » ըսաւ դրագիրը դարմացմամբ .
յետոյ որմնադրաց դառնալով յաւելցուց . « Մը-
նացեալը ձեզ կը վերաբերի . փոքեցէք դրան
պարս եւ աջ կողմի երկրորդ պատուհանին ալ
երկաթէ շրջանակը քակեցէք : »

Երբոր որմնադիրները դրագրին հսկողու-
թեամբ գործի կ'սկսէին , կառք մ'եկաւ կեցաւ
փողոցի մեծ դրան առջեւ , եւ Ռօտէն Գար-
բիէլի հետ Սէն—Ֆրանսսա փողոցի տունը մը
տան . . .



Սամուէլ դնաց դուռը բացաւ Քաբրիէլի
 ու Ռօտէնի : Այս վերջինն ըսաւ հրեային . « Դու ք
 էք , պարոն , այս տան պահապանը : — Այո ,
 պարոն , պատասխանեց Սամուէլ : — Ահա Քաբ-
 րիէլ Ռէնբօնեան արբան , ըսաւ Ռօտէն իր ըն-
 կերը ցուցընելով , Ռէնբօնի տոհմին ժառանգ-
 ներէն մէկը : — Ա՛ , շատ աղէկ , պարոն , ըսաւ
 հրեայն դրեթէ ակամայ Քաբրիէլի հրեշտա-
 կային դէմքէն զարնուելով , վասն զի նորաւի
 քահանային հողւոյն ազնուութիւնն ու պայ-
 ծառութիւնն իր լուսաւորայլ աչքերուն եւ ար-
 դէն մարտիրոսական պսակով ծածկուած անա-
 բատ եւ սպիտակ ճակտին վրայ նկարուած էր :
 Սամուէլ քաղցր եւ համակրական հետաքրքրու-
 թեամբ Քաբրիէլի կը նայէր . բայց քիչ մ'ետ-
 քըն զգալով որ այս լռին հայեցուածքը Քաբ-
 րիէլի շփոթութիւն կը պատճառէր , ըսաւ ա-
 նոր . « Նօտարը , պարոն Արբայ , ժամը տաս-
 նին պիտի գայ : »

Քաբրիէլ զարմացմամբ մ'անոր երեսը նա-
 յեցաւ ու ըսաւ . « Ո՞ր նօտարը , պարոն : — Հայր
 Տէկրինեի կը հասկըցնէ ձեզ , ըսաւ իսկոյն Ռօ-
 տէն , եւ Սամուէլի դառնալով՝ աւելցուց . « Մեք
 քիչ մը կանուխ եկանք . . . չենք կրնար հոս
 աւ մը սպասել մինչեւ որ նօտարը գայ : — Ե-

Թէ մեր սենեակը գալու հաճիք, պատրաստ
եմ ձեզ հոն տանելու, ըսաւ Սամուէլ: — Շը-
նորհակալ եմ ձեզ, պարոն, կրնդ ունիմ ձեր
առաջարկութիւնը, ըսաւ Ռօտէն: — Ուրեմն
հաճեցէք հետս գալ, պարոններ, ըսաւ ծերունին:

Քանի մը վայրկեան ետքը դեռահասակ
քահանայն եւ ձիզվիթը Սամուէլի առաջնոր-
դութեամբ փողոցին վրայի շէնքին ստորնայար-
կը սենեակ մը մտան, որ Սամուէլի ձեռքն էր
եւ բակին վրայ կը նայէր:

« Պ. Տ'էկրինեի օբբան, որ Գաբրիէլի խը-
նամակալութիւն ըրած է, հիմա պիտի դայ մեզ
հարցընէ, ըսաւ Ռօտէն. կը բարեհաճի՞ք դին-
քը հոս բերել, պարոն: — Գլխուս վրայ » ը-
սաւ Սամուէլ դուրս ելնելով:

Ռօտէն եւ Գաբրիէլ մինակ մնացին:
Փոխանակ այն պաշտելի քաղցրութեան՝ որ
քարոզչին դէմքն այնչափ սրտագրաւ կերպով
կը գեղեցկացնէր, տխրութեան, արիութեան
եւ խստութեան նշանաւոր ապաւորութիւն մը
յաջորդած էր: Ռօտէն՝ քանի մ'օրէ 'ի վեր
Գաբրիէլը տեսած չըլլալով անոր վրայ երեւցած
այս փոփոխութեան վրայ մեծ մտմտութի մէջ
ինկած էր: Տէ-Բօսթ փողոցէն մինչեւ Սէն—
Պրանսօա փողոցն եկած ժամանակնին լու-
թեամբ զայն դիտեր էր: Նորատի քահանայն՝
ըստ սովորութեան՝ երկայն սեւ պատմուճան մը
հագած էր, որ դէմքին փայլուն գունատու-
թիւնն առաւել զգալի կընէր: Երբոր հրեայն

դուրս ելաւ , Գաբրիէլ անյողդողդ ձայնով մ'ը-
սաւ Ռօտէնի : « Պիտի խմացնէք ինձ վերջա-
պէս , պարոն , ինչո՞ւ համար քանի օրէ 'ի վեր
անհնար եղաւ ինձ վերապատուելի հայր Տ'էկ-
րինելի հետ խօսիլ . ինչո՞ւ համար այս տունը
խօսակցութեան տեղի ընտրեց : — Անհնար է
ինձ այդ հարցմանց պատասխանել , ըսաւ Ռօ-
տէն պաղութեամբ : Նորին վերապատուութիւ-
թիւնը հիմա շատ չքշեր կուգայ , անոր կըր-
նաք հարցնել : Իմ գիտցածս այս է որ մեր վե-
րապատուելի հայրն ալ ձեզ չափ կը փափաքի
այդ տեսակցութեան : Իսկ այս տունն ընտրե-
լուն պատճառն այն է , որ դուք հոս գտնուե-
լու շահ ունիք . . . եւ այս ալ դուք քաջ գի-
տէք . . . թէպէտ քիչ մ'առաջ պահապանը
նօտարի խօսք ըրած ատեն դարմանք ցոյց աը-
ուիք : »

Այս ըսելով Ռօտէն հետաքնին եւ տա-
տամստ աչօք Գաբրիէլի նայեցաւ , որուն երե-
սը դարմանքէ դատ ուրիշ բան չէր յայտներ :

« Չեմ հասկընար , պատասխանեց Գաբրի-
էլ , թէ ի՞նչ շահ կրնամ ունենալ ես հոս այս
տան մէջ գտնուելէ : — Արկին կըսեմ , անհնար
է որ չգիտնաք , ըսաւ Ռօտէն՝ ուշադրութեամբ
Գաբրիէլի երեսը դիտելով միշտ : — Ըսի ձեզ ,
պարոն , թէ չեմ գիտեր , պատասխանեց Գաբ-
րիէլ՝ Ռօտէնի պնդելէն դրեթէ վիրաւորուելով :
— Աւրեմն ի՞նչ եկաւ ըսաւ ձեզ երէկ ձեր մայ-
րագիրը : Ինչո՞ւ համար՝ առանց վերապատուելի

հայր Տ'Էկրինեիէն հրաման ստանալու՝ այն կիսն
ընդունեցիք, ինչպէս որ այս առաւօտ իմացայ :
— Միթէ ձեզ փողոցէն գտած ու իր քովն ա-
ռած ժամանակ ձեր վրայէն ելած ընտանեկան
թուղթերու խօսք չըրուէ ձեզ : — Ոչ, պարոն,
ըսաւ Գաբրիէլ, այն թուղթերն այն ժամանակ
մայրագրիս խոստովանահօրը տրուած են, եւ
ետքն ալ վերապատուելի հայր Տ'Էկրինեի ձեռ-
քըն անցած են : Այնչափ տարիներէ 'ի վեր
այս առաջին անգամ է որ այն թուղթերուն
խօսքը կը լսեմ : — Ըսել կուզէք ուրեմն թէ
Ֆրանսոսազ Պօտէնի երէկ ձեզ դալն ու խօ-
սակցիլն այս բանին վրայ չէր, յարեց Ռօտէն
ծանր ծանր շեշտելով : — Այս երկրորդ անգամն
է, պարոն, որ իմ հաստատած խօսքիս վրայ
կասկած կը ցուցնէք, ըսաւ նորատի քահանայն
քաղցրութեամբ եւ իր համբերութեան հատ-
նիլը զսպելով : հաւատացէք որ ըսածս ճշմա-
րիտ է : — Բանէ մը տեղեկութիւն չունի, ը-
սաւ Ռօտէն մտօքը, վասն զի Գաբրիէլի ան-
կեղծութեանը քաջածանօթ ըլլալով, այսպիսի
դրական յայտարարութենէ մ' ետեւ՝ ամենա-
փոքր կասկած մ' իսկ չէր կրնար մնալ : — Ար
հաւատամ ձեր խօսքին, ըսաւ Ռօտէն, ես այն-
պէս կարծեր էի՝ խորհելով որ անշուշտ ծա-
նոր պատճառ մ' ունենալու էիք վերապատ-
ուելի հայր Տ'Էկրինեի հրամանին հակառակ
վարուելու, որ բացարձակ առանձնութիւն
պատուիրեր էր ձեզ, եւ հետեւաբար դուրսի

հետ քնաւ հաղորդակցութիւն չէիք կրնար ու-
նենալ . . . : Ասկէց աւելին կայ . մեր տանը
կանոնին հակառակ՝ ձեր խուցին դուռը գոցե-
լու համարձակեցաք , որ կիսաբաց պէտք է
մնայ որպէս զի մէկ մէկու վրայ փոխադարձա-
բար հսկելու պարտականութիւնն իս դիւրաւ
կատարենք . . . : Ձեր այս ծանր կանոնադան-
ցութեանց պատճառը փնտռելով կարծեր էի թէ
ձեր մայրադրին հետ ամենակարեւոր խօսակ-
ցութիւն մ'ընելու հարկէն առաջ եկած էր :
— Պատուէն տիկինը զիս իբրեւ քահանայ եւ
ոչ իբրեւ իր որդեգիրը տեսնել ու հետս խօ-
սիլ կուզէր . ես ալ խորհեցայ որ կրնայի իր փա-
փաքը կատարել , պատասխանեց Քարբիէլ ծան-
րութեամբ . ուստի խոստովանութիւն ըլլալուն
համար դուռս գոցեցի : — Ի՞նչ ստիպողական
բան ունէր Պատուէն տիկինը ձեզ խոստովանե-
լու : — Քիչ մ'ետքը նորին վերապատուութեան
ըսելու ատենս կիմանաք , եթէ հաճի որ դուք
ալ մտիկ ընէք » պատասխանեց Քարբիէլ :

Այս խօսքն այնպէս կտրուկ կերպով մ'ը-
սաւ Քարբիէլ , որ բաւական երկար լռութիւն
մը յաջորդեց :

Յիշեցնենք ընթերցողին որ Քարբիէլի մե-
ծաւորները մինչեւ այն ժամանակ ծածուկ պա-
հած էին իրմէ այն ընտանեկան մեծ շահերը՝ ո-
րոց համար հարկ էր իրեն Աէն-Պրանսօս փողոցի
տունը գանուիլ : Նախընթաց օրը , Պրանսօսի
Պատուէն իր գառն կսկիծովն զբաղած՝ մոռցեր

էր Գաբրիէլի ըսել թէ որքերն ալ այն օրը Սէն—
Տրանսօա փողոցը պէտք էր գտնուէին, բայց ե—
թէ մտցած ալ չըլլար, Տակօպէսի սաստիկ
պատուէրներն արգելք պիտի ըլլային իրեն այս
կարեւոր կէտը նորապի քահանային յայանե—
լու: Ուստի Գաբրիէլ բնաւ չէր գիտեր որ Սի—
մօն մարաջախտին աղջիկները, Քարտովիլ օրիոր—
դը, Պ. Հարաի, Ճալմա իշխանագունը եւ Քուշ—
թու—Նիւ իրեն ազգական էին. մէկ խօսքով,
եթէ այն ժամանակ յայտնէին իրեն թէ ինքը
Պ. Մարիոս Ռէնբօնի ժառանգն էր, պիտի կար—
ծէր թէ այն ազգատոհմին միակ մնացորդն ինք
էր: Ռօտէնի հետ ըրած խօսակցութեան յաջոր—
դող լռութեան միջոցին՝ Գաբրիէլ նստած սե—
նեկին պատուհանէն որմնադիրներուն աշխա—
տութիւնը կը դիտէր, որք տանը դրան պատը
փլցընելով՝ քարերը մէկ կողմ կառնուին, Այս
առաջին դործը լմնալէ ետեւ, որմնադիրնե—
րը դրան գուրսի կողման երկաթէ ձողերը քա—
կել սկսան: Այս միջոցին՝ հայր Տ'Էկրինեի՝ Սա—
մուէլի առաջնորդութեամբ սենեակէն ներս մը—
տաւ: Գաբրիէլ որմնադրաց աշխատութիւնը
դիտելու զբաղած ըլլալով, մինչեւ որ հայր
Տ'Էկրինեի ներս մտնելն իմացաւ ու դըռնին այն
կողմը դարձուց, Ռօտէն ժամանակ ունեցաւ
կամացուկ մը վերապատուելիին ըսելու. « Բը—
նաւ անդեկութիւն չունի, հնդիկէն ալ վախ—
նալու բան մը չկայ: »

Հայր Տ'Էկրինեի որչափ որ ինքզինք անհող

ու զուարթ երեւցընել կուղէր, գէմքը գեղ-
նած ու կծկած էր՝ այն խաղամու մարդոց պէս՝
որ ահագին կորուստ կամ շահ մ'ընելու կէ-
տին մէջ են։ Մինչեւ այն ժամանակ ամեն բան
ընկերութեան զխառմաներն յաջողեցընելու նը-
պաստեր էին։ Բայց սարսափելով կը մտածէր
որ իր վախճանին հասնելու համար դեռ չորս
ժամ կար։ Գարբիէլ գլուխն այս կողմ դարձը-
նելով, հայր Տ'Էկրինեի սիրալիր ժպտով մ'ա-
նոր մօտեցաւ, եւ ձեռքն երկնցընելով ըսաւ.
& Միրելի որդեակ, շատ կը ցաւիմ որ ձեր Փա-
րիզ դառնալէն ՚ի վեր ինձ հետ տեսնուելու
փափաքնիդ չկրցայ կատարել։ Նմանապէս շատ
կը ցաւիմ որ ձեզ քանի մ'օր առանձին կենա-
լու հարկադրեցի։ Թէպէտ ձեզ ըրած հրաման-
ներուս վրայ բացատրութիւն տալու պարտա-
կան չեմ, բայց եւ այնպէս արժան կը համա-
րիմ ըսել ձեզ թէ այս ըրածս ձեր օգտին հա-
մար էր։ — Ձեր վերապատուութեան խօսքին
պէտք է հաւատամ» պատասխանեց Գարբիէլ
խոնարհելով։

Գեռահասակ քահանայն ակամայ տարտամ
երկիւղ մը կ'զգար սրտին մէջ. վասն զի մին-
չեւ Ամերիկա քարոզչութեան դացած ժամա-
նակ, հայր Տ'Էկրինեի՝ որուն ձեռք Գարբիէլ
ձիզվիթաց ընկերութեան հետ անդառնալի կեր-
պիւ կապուելու ահաւոր ուխտն ըրած էր, հայր
Տ'Էկրինեի՝ այն սարսափելի ազդեցութիւնը գոր-
ծածեր էր իր վրայ, որ բռնաւորական իշխա-

նութեամբ ճնշմամբ եւ անարկութեամբ՝ հող-
ւոյն կենդանի զօրութիւնները կը խորտակէ ,
եւ սմբած անարեկ եւ անդդայ վիճակի մը մէջ
կը ձգէ : Մանկութեան տպաւորութիւններն
անեղծանելի են . Գաբրիէլ՝ Ամերիկայէն դառ-
նայէն 'ի վեր այս առաջին անգամ էր որ հայր
Տ'Էկրինելի հետ կը գանուէր . ուստի , որչափ
որ իր մտաց որոշման վրայ անխախտ կեցած
էր , կը ցաւէր որ իր յուսացածին համեմատ
չէր կրցած Ակրիքօլի ու Տակօպէսի հետ բա-
ցայայտ խօսակցութիւն մ'ընելով նոր զօրու-
թիւն մ'ստանալ :

Հայր Տ'Էկրինելի՝ մարդկային բնաւորութեան
քաջածանօթ ըլլալով՝ նորապի քահանային սրբ-
տայրուղութիւնը նշմարելու պատճառն ալ հաս-
կրցեր էր : Այս տպաւորութիւնը բարեգուշակ
թուեցաւ իրեն . ուստի քաղցրութիւնն ու փա-
ղաքչանքը կրկնապատկեց , իրեն վերապահե-
լով դարձեալ պէտք եղած ժամանակ ուրիշ դի-
մակ մ'առնուլ : « Սիրելի որդեակ , ըսաւ նըս-
տելով մինչդեռ Գաբրիէլ ու Ռօտէն ակնա-
ծութեամբ ոտքի վրայ կանգնած էին , ինձ հետ
ամենակարեւոր խօսակցութիւն մ'ընելու կը
փափաքիք , այնպէս չէ : — Այո՛ , հայր իմ , ը-
սաւ Գաբրիէլ՝ իր մեծաւորին խոշոր ու պայծա-
ռափայլ աչաց առջեւ ակամայ իր աչքը խո-
նարհեցնելով : — Ես ալ խիստ շահաւէտ բաներ
ունիմ ձեզ իմացնելիք . ուստի նախ զիս մտիկ
ըրէք . . . եւ ապա դուք խօսեցէք : — Պատրաստ

եմ, հայր իմ : — Տասներկու տարիի չափ կայ՝
սիրելի որդեակ, ըսաւ հայր Տ'Եկրինեի սիրա-
լիք քաղցրութեամբ, ձեր մայրազրին խոստո-
վանայրը՝ Պ. Ռօտէնի միջնորդութեամբ ինձ դի-
մելով եւ Եղբարց վարժարանին մէջ ձեր ըրած
դարմանալի յառաջդիմութիւնը հասկըցնելով ու-
չազրութիւնս ձեր վրայ հրաւիրեց : Արդարեւ
խմացայ ստուգեցի որ ձեր ամենագովելի վար-
քը, քաղցր եւ համեատ բնաւորութիւնը, ձեր
կանխահատ հանձարը գորովայիք համակրութեան
արժանի էին . այն օրէն 'ի վեր աչքերնիս ձեր
վրայ եղաւ . ժամանակէ մ'ետեւ՝ տեսնելով որ
ձեր գովելի ընթացից մէջ կը յարատեւէք, խոր-
հեցայ որ դուք արհեստաւոր ըլլալէ աւելի բար-
ձրը միճակի մ'արժանաւորութիւն ունէիք .
ուստի ձեր մայրազրին հետ խօսուեցաւ եւ իմ
խնամօքս ձրիարար մեր ընկերութեան վարժոց-
ներէն մէկուն մէջ դրուեցաք : Ասանկով մէկ
կողմանէ ձեզ որդեգրող պատուական կնոջ բեր
թեթեւցաւ, միւս կողմանէ մեծ յոյսեր խոս-
տացող աղայ մը մեր հայրական խնամօք կրօ-
նական կրթութեան ամեն բարիքն ստացաւ . . . :
Ըսածս ճշմարիտ չէ, սիրելի որդեակ : — Ճշմա-
րիտ է, հայր իմ, պատասխանեց Քարբիէլ առ-
ջեւը նայելով : — Քանի որ կը մեծնայիք, մի-
անդամայն գերազանց եւ հազուագիւտ առա-
քինութիւններով ալ կը զարգանայիք . ձեր հը-
նադանդութիւնը, մանաւանդ հեղութիւնն օ-
րինակ ըլլալու արժանի էր . ուսմանց մէջ ալ

արագ յառաջդիմութիւն կընէիք : Ես չէի գի-
տեր այն ժամանակ թէ դուք ինչ ապագայ վի-
ճակի կը փափաքէիք . բայց հաւաստի էի որ ձեր
ապագայ վիճակն ինչ որ ալ ըլլար , Նկեղեցւոյ
սիրելի որդի պիտի մնայիք : Այս յոյսս սխալ
չեղաւ , կամ մանաւանդ , սիրելի որդեակ , յու-
սացածէս աւելին եղաւ : Բարեկամ մը խորհրդ-
դարար խմացուց ինձ թէ ձեր մայրադիրն ե-
ռանդեամբ կը փափաքէր որ կրօնաւորական
սքեմ հաղնիք . դուք ալ այն պատուական կը-
նող փափաքն ազնուարար կատարեցիք՝ փոխա-
րէն ձեզ ըրած երախտեաց . . . : Բայց որով-
հետեւ Տէրը միշտ արդար է իր ըրած վարձատ-
րութեանց մէջ , կամեցաւ որ ձեր մայրադիրն
ցոյց տուած այս արտադին երախտագիտու-
թեանդ փորձը միանգամայն հողեւորապէս ալ
օգտակար ըլլայ ձեզ . ասոր համար մեր սուրբ
Նկեղեցւոյ զինուորեալ անդամոց մէջ մացուց
ձեզ : »

Հայր Տ'Նկրինելիի այս խօսքին վրայ՝ Գաբ-
րիէլ Ծրանսօազի դառն խոստովանութիւնները
յիշելով ցնցուեցաւ , բայց իր շարժումը դապեց ,
մինչդեռ Բօտէն ոտքի վրայ կեցած եւ արմու-
կովը վառարանին անկիւնին կրթնած՝ յամառ
եւ կարգէ դուրս ուշադրութեամբ զինքը կը
դիտէր :

Հայր Տ'Նկրինելի շարունակեց . « Ձեմ ծած-
կեր ձեզնէ , սիրելի որդեակ , թէ ձեր այս որո-
շումը զիս ուրախութեամբ լցուց : Ասան զի

հասկըցայ որ դուք Նկեղեցւոյ ապագայ լոյսերէն մէկը պիտի ըլլայիք, ուստի նախանձելով փախաքեցայ որ այդ լոյսը մեր ընկերութեան մէջ փայլի: Մեր դժուար տաժանելի եւ բազմազան փորձերն արիարար կրեցիք. մեր մէջ ընդունուելու արժանի դատուեցաք, եւ վասն ամենամեծ փառացն Աստուծոյ դձեղ յախտեան մեր ընկերութեան կապող անդարձ եւ սուրբ երդումն ինձ տալէ ետեւ, փախաքեցաք մեր սրբազան Հօր բարեյօժար եւ անձնուէր հողիներու ըրած հրաւերն ընդունիլ, եւ կաթովիկ հաւատքը բարբարոսաց մէջ քարոզելու երթալ: Թէպէտ դառն էր մեզ բաժնուիլ մեր սիրելի որդիէն, բայց ձեր աստուածահաճոյ բազմանաց չէինք կրնար դէմ կենալ. ուստի ելաք դացիք իբրեւ խոնարհ քարոզիչ, եւ դարձաք եկաք իբրեւ փառաւոր նահատակ, եւ հիմա իրաւամբ կը պարծինք ձեզ մեր մէջ եւ մեր ընկերութեան անդամ ունենալնուս վրայ: Անցելոյն այս համառօտ նկարագիրը, սիրելի որդեակ, հարկաւոր էր բուն խօսելիքիս համնելու համար: Խնդիրը՝ եթէ հնար է՝ ձեզ մեր ընկերութեան հետ միացնող կապերն աւելի սեղմելու վրայ է: Ուրեմն լաւ մտիկ ըրէք զիս, սիրելի որդեակ, ըսելիքս ամենակարեւոր դադանիք մ'է՝ ոչ միայն ձեզ՝ այլ եւ մեր ընկերութեան համար . . . : — Ուրեմն . . . հայր իմ . . . դու չեց մէկէն Գարրիէլ հայր Տ'Եկրինելի խօսքը կարելով, չեմ կրնար եւ պէտք չէ որ ձեզ մտիկ

ընեմ . » եւ նորապի քահանային երեսին գոյնը
նեաեց : Պէմքին այլայլութենէն տեսնուեցաւ
որ սրտին մէջ բուռն կռիւ մը կար . բայց շու-
տով իր առաջին որոշմանը դառնալով գլուխը
բարձրացուց եւ անվեհեր նայուածք մը ձգե-
լով հայր Տ'Եկրինեի եւ Ռօտէնի վրայ , որք
զարմացած իրարու երես կը նայէին , շարունա-
կեց . « Արկին կըսեմ ձեզ , հայր իմ , եթէ ըն-
կերութեան վրայ դադանի բաներ ունիք ըսե-
լիք անհնար է որ ձեզ մտիկ ընեմ : — Ստու-
գիւ , սիրելի որդեակ , մեծ զարմանք կը պատ-
ճառէք ինձ . . . : Ք'նչ կայ . . . ինչ կըլլաք . . .
երեսնիդ այլայլեցաւ . . . սրտերնուդ վրդովու՛մը
յայտնի կը տեսնուի . . . խօսեցէք . . . մ'ի վախ-
նաք . . . ըսէք նայինք . . . ինչու համար չէք
կրնար այլ եւս մտիկ ընել դիս : — Չեմ կրնար
ըսել ձեզ , հայր իմ , մի՛նչեւ որ ես ալ համառօ-
տիւ ձեր անցեալը չնկարագրեմ , ինչպէս որ ժա-
մանակէ մ'ի վեր հասկըցած ու դատած եմ . . . :
Այն ժամանակ կը հասկընաք , հայր իմ , որ ես
այլ եւս իրաւունք չունիմ ձեր դադանեաց խոր-
հրդականն ըլլալու . վասն զի քիչ ժամանակէն
անշուշտ մեծ վիճ մը պիտի բացուի մեր մէջ : »

Գարրիէլի այս խօսքին վրայ՝ անհնար է նը-
կարագրել Ռօտէնի եւ հայր Տ'Եկրինեի մէկ
մէկու հետ փոխանակած նայուածքը : Ռօտէն
եղունգները կրծել սկսաւ իր դրդուեալ օձի աչ-
քը Գարրիէլի վրայ անկելով . հայր Տ'Եկրինեի
դէմքը կապուացաւ եւ ճակատը պող քրտինքով

ծածկեցաւ : Սարսափով կը հարցընէր ինքնիրեն
թէ արդեօք իրենց նստատակին հասնելու վայր-
կենին մէջ արդեւքը Չարրիէլէն պիտի դար-
որուն օգտին համար ամեն արդեւք հեռացը-
նելու այնչափ ճիւղ թափուած էր : Այս մտածու-
թիւնը մարդ կը յուսահատեցընէր . եւ սակայն
վերապատուելի հայրն ինքզինք խիստ աղէկ
բռնեց , անվրդով կեցաւ եւ փաղաքուշ կեղ-
ծաւորութեամբ մ'ըսաւ . « Անհնար է ինձ հա-
ւատալ , սիրելի որդեակ , որ դուք եւ ես վի-
հով մը բաժնուինք երբէք . . . եթէ ոչ այն
տրամութեան վիհով զոր ձեր հողւոյն փրկու-
թեան եկած ծանր մնաս մը կրնայ ինձ պատճա-
ռել . . . բայց . . . խօսեցէք . . . խօսեցէք . . .
եւ մտիկ կընեմ ձեզ . . . : — Արդարեւ տաս-
ներկու տարիի չափ կայ , հայր իմ , ըսաւ Չար-
րիէլ համարձակ ձայնիւ եւ հեռոհեռէ ողելա-
ռելով , ձեր խնամօք ձիւղվիթայ ընկերութեան
գպրոցներէն մէկը մտայ . . . : Հոն մտած ժա-
մանակս՝ ընկերասէր անկեղծ եւ վստահ բնա-
ւորութիւն մ'ունէի . . . : Մանկութեան այս
աղնիւ բնազդումները մէկէն 'ի մէկ ինչ կեր-
պով քաջալերուեցան . . . : Ահաւասիկ : Մը-
տած օրս մեծաւորը դիս կանչեց ու ինձմէ քիչ
մը մեծ երկու տղայ ցուցնելով ըսաւ ինձ . « Ա-
հա ասոնք պիտի ըլլան քու նախամեծար ըն-
կերներդ , երեքնիդ 'ի միասին պիտի պարտիք .
այս տան կանոնը կարգելու երկու տղոց իրա-
րու հետ խօսակցիլը . կանոնը կը պահանջէ նա-

ևւ որ ընկերացդ խօսակցութիւնն ուշադրու-
թեամբ մտիկ ընես, որպէս զի կարենաս ինձ
խմացընել. վասն զի այս սիրելի տղայքը կրնան
տունց գիտութեան գէշ խորհուրդներ ունե-
նալ, կամ սխալ գործեր մտաբերել. արդ՝ ե-
թէ դուն ընկերներդ կը սիրես, անոնց մնասա-
կար միտումները պէտք է խմացընես ինձ, որպէս
զի իմ հայրական յանգիմանութիւններովս սը-
խալմանց առաջքն առնուի եւ չսպառժուին . . .
վասն զի աւելի լաւ է գէշութեան առաջքն առ-
նուլ քան թէ սպառժել : » — Արդարեւ այդպէս
է, սիրելի որդեակ, ըսաւ հայր Տ'Եկրինելի,
մեր տուներուն կանոնը եւ անոնց մէջ մտնող
ամեն աշակերտաց տրուած պատուէրը : — Գի-
տեմ, հայր իմ, պատասխանեց Գօբրիէլ գառ-
նութեամբ. ուստի ես ալ՝ հլու եւ դիւրահա-
ւան խեղճ տղայ մը՝ երեք օր ետքն սկսայ միա-
մըտաբար լրտեսել ընկերներս, խօսակցութիւն-
նին մտիկ ընել եւ միտքս պահելով երթալ մե-
ծաւորին խմացնել, որ գոհ կըլլար եւ կը գովէր
զիս . . . : Այս ըրածս գարշելի բան էր . . .
եւ սակայն, գիտէ Ստուած, որ ես կը կար-
ծէի թէ քարեգործական պարտականութիւն
մ'էր . . . ուրախ կըլլայի մեծաւորին հրամա-
նին հնազանդելուս վրայ, զոր կը յարդէի, եւ
որուն խօսքը՝ իմ տղայական հաւատքովս՝ իբրեւ
Ստուծոյ խօսքը մտիկ կընէի . . . : Ժամանա-
կէ մ'ետեւ, օր մը տանը կանոնին հակառակ
վարմունքի մը մէջ գտնուած ըլլալուս համար

մեծաւորն ըսաւ ինձ . « Տղան , դուն ծանր պատ-
ժոյ արժանի յանցանք մը դորձած ես , բայց
պիտի ներուի քեզ՝ եթէ կարող ըլլաս ընկեր-
ներէդ մէկն այդ յանցանքին մէջ բռնել . . . :
Եւ վախնալով որ չըլլայ թէ՛ իմ կոյր հաւատ-
քիս եւ հնազանդութեանս հակառակ՝ անձնա-
կան շահու վրայ հիմնեալ քսութեան ու մատ-
նութեան քաջալերութիւնը նողկալի երեւի
ինձ , մեծաւորն աւելցուց . « Այս ըսածս , տղան ,
ընկերիդ օգտին համար է . վասն զի եթէ պատ-
ժէ աղատ մնայ , գէշութեան կը վարժուի . իսկ
երբոր յանցանքին մէջ բռնելով անոր պատ-
ժուելուն պատճառ ըլլաս , երկու օգուտ մէկէն կը
քաղես . այսինքն նախ անոր փրկութեանը օգնած
կըլլաս , եւ երկրորդ դուն պատժէ կադատիս ,
որովհետեւ ընկերիդ նկատմամբ ցոյց տուած
բարի եռանդովդ թողութեան արժանի կըլլաս »

— Անշուշտ , յարկեց հայր Տ'Ակրինեի եւս քան
դեւս վախնալով Վարրիէլի խօսքերէն , այդ ա-
մենը համաձայն է մեր դպրոցներուն մէջ հաս-
տատուած կանոնին եւ մեր ընկերութեան ան-
դամ եղող անձանց սովորութեան . « Ար՛ տանց
Իսխարարձ սերն աւ Բիւսթեանը զանց ընելա՛ երեւց հսկեորա-
կան մշտագոյն յարաւզդ ինտելեան համար դերար կամբարանէն , մա-
նասանդ երբար մշտարը հրամայած իմ ինդրած ըլլայ իման ո-
մեամե՞ծ փարայն Աստուծոյ » : — Վիտեմ , դոչեց Վար-

* Այս ամենը բառ առ բառ ճիշդիթաց սահ-
մանադրութեան մէջէն քաղուած են :

բիւլ , գիտեմ . մարդոց մէջ ամենէն սուրբ եւ
նուիրական ինչ որ կայ՝ անոր անուսով դիւ չա-
րութեան կը քաջալերէին : — Սիրելի որդեակ ,
ըսաւ հայր Տ'Եկրինելի՝ իր հետզհետէ աւելցած
սարսափը պատուոյ վիրաւորման երեւոյթի մը
հերքել ծածկելով , ձեզնէ ինձ . . . այդ խօս-
քերը գոնէ տարօրինակ են : «

Այս միջոցին Ռօտէն վառարանին քովէն
մեկնելով սկսաւ սենեկին մէջ երկայնքէն լայն-
քին ձեմել խոկուն դէմքով եւ եղունդներն ալ
չարունակ կրծելով :

Գառն է ինձ , աւելցուց հայր Տ'Եկրինելի ,
հարկադրիլ ձեզ յիշեցնելու , սիրելի որդեակ ,
որ ձեր կրթութիւնը մեզնէ առած էք : — Ասոնք
էին անոր պատուները , հայր իմ , շարունակեց
Գարրիւլ : Մինչեւ այն ժամանակ . . . ընկեր-
ներս տեսակ մ'անշահասիրութեամբ լրտեսեր
էի . . . բայց մեծաւորին հրամանները քայլ
մ'աւելի առնուլ տուին ինձ այս վատ ճանքուն
մէջ . . . արժանի պատժէ մ'ազատ մնալու
համար քսու եղեր էի : Եւ այն աստիճան հա-
ւասք խոնարհութիւն ու վատահոթիւն ու-
նէի , որ այս կրկնապատիկ նողկալի դերն ան-
մեղ միամտութեամբ կատարելու վարժուեցայ :
Սակայն անդամ մը , կը խոստովանիմ ահա ,
տարտամ խղճմտութեամբ մը տանջուելով , որ
սրտիս մէջ խեղդել ուղուած ազնիւ զգացմանց
վերջին մէկ թռիչն էր , հարցուցի ես ինձ թէ
այս քսութեանց եւ անընդհատ լրտեսութեանց

վրայ դրուած եղբայրսիրական ու բարեպաշտա-
կան նպատակը զիս քուելու բաւական էր : Այս
կասկածս մեծաւորին խնայուցի : Պատասխանեց
ինձ թէ դատողութիւն ընել չէր իյնար ինձ ,
այլ միայն հնազանդիլ , եւ թէ իմ դորձերուս
պատասխանատուութիւնն իրեն կը վերաբերէր :
— Շարունակեցէք , սիրելի որդեակ , ըսաւ հայր
Տէկրինեի ահամայ սրտաբեկութեամբ մը . ա-
ւանդ , նրչափ իրաւունք ունիմ եղեր ձեր Ամե-
րիկա երթալուն դէմ կենտարուս : — Եւ Նա-
խասնամութիւնը կամեցաւ որ այն նոր , բեղ-
նաւոր եւ ազատ երկրին մէջ դարմանալի դիպ-
ուածով մը ներկային ու անցեալին վրայ լուսա-
ւորուելով վերջապէս աչքս բացուի , դոչեց
Գաբրիէլ , Այն , Ամերիկայի մէջ էր՝ որ մանկու-
թեանս այնչափ տարիներն անցուցած միջին առե-
նէն ելնելով անհուն առանձնութեանց մէջ սը-
տրտած ժամանակս՝ առաջին անգամ աստուա-
ծային մեծ վայելչութիւնը դէմ առ դէմ տեսայ .
եւ հոն այնչափ մեծութեան ու փառաց առջեւ
ընկձելով՝ երգում ըրի . . . : Գաբրիէլ իր խօս-
քնն ընդ միջելէ ետեւ շարունակեց . « Մէկ պա-
հէն այն երգումս կը հասկըցնեմ ձեզ . բայց հա-
ւատացէք ինձ , հայր իմ , ձախող եւ շարաշուք
օր մ'էր այն օրը՝ ուր այնչափ երկար ժամա-
նակ օրհնած ու յարգածս՝ ստեղծալի համարելու
եւ ամբաստանելու պարտաւորեցայ . . . : Ա՛հ ,
հաւատացէք , հայր իմ , աւելցուց Գաբրիէլ
վշտագին ձայնիւ եւ արտասուելից աչքք , այն

ժամանակ ես իմ վրայ միայն չլացի : — Ար ճան-
չեմ ձեր սրտին բարութիւնը , սիրելի որդե-
կակ , յարեց հայր Տ'Էլիբինեի՝ Գարրիէլի փրղձ-
կումէն յուսոյ նշոյլ մը ծագելով մտքին մէջ .
Ար վախճամ որ չըլլայ թէ մուտրած ըլլաք .
բայց վտան եղիք մեր վրայ՝ իբրեւ ձեր հոգե-
ւոր հարց , կը յուսամ որ ձեր դժբաղդարար
խախտած հաւատքը կը վերահաստատենք եւ
ձեր տեսութիւնը մթաղնող խաւարը կը փարա-
տենք . . . վասն զի , աւանդ , սիրելի որդեակ ,
ձեր երեւակայական պատիր ցնորից մէջ՝ խաբու-
սիկ նշոյլներն արեղական ջինջ լոյս կարծեր
էք . . . : Եարունակեցէք . . . : »

Երբոր հայր Տ'Էլիբինեի այս խօսքը կըսէր ,
Ռօտէն կանգ առաւ , ծոցէն թղթապանակ մը
հանեց եւ վրան քանի մը ծանօթութիւն գրեց :

Գարրիէլ եւս քան զեւս դեղնած ու խոռ-
ված էր . այս խօսքերն ընելու համար մեծ քա-
ջասրտութիւն պէտք էր իրեն . վասն զի Ամե-
րիկա ճանապարհորդելէն 'ի վեր ճիզվիթաց ըն-
կերութեան ահաւոր իշխանութիւնը ճանչեր
էր . բայց անցելոյն այս յայտնութիւնը , առա-
ւել լուսաւորեալ ներկայի մը աչօք նկատելով՝
հորատի քահանային յայտնած նոր որոշման ար-
դարացուցիչ փաստը կամ մանաւանդ պատճա-
ռըն ըլլալով , կուզէր ամեն բան անկեղծարար
իր մեծաւորին աչքին առջեւ դնել , արհամար-
հելով այն փտանդը՝ որուն կամակար կը դիմա-
մադրաւէր : Աւտի այլայլեալ ճայնիւ շարունա-

կեց . Ե Վիտէք , հայր իմ , որ մանկութեանս
վերջին տարիները , անկեղծութեան եւ անտեղ
ու խանդակաթ ուրախութեան այն երջանիկ
հասակս , երկիւղի ճնշման եւ կասկածաւորու-
թեան մթնոլորտի մը մէջ անցաւ . սն , ի՞նչ-
պէս կրնայի ամենաախօքը վատահոլութեան ու ան-
կեղծութեան դործ մ'ընել՝ երբոր ամեն վայր-
կեան պատուէր կը տրուէր ինձ՝ որ հետս խօ-
սողին նայուածքէն զգուշանամ , որպէս զի ա-
նոր խօսքերէն . զգացած տպաւորութիւնս լաւ
ծածկեմ անկէ , ամեն զգացածս կեղծեմ , շուրջս
ինչ որ ըլլայ՝ դիտեմ , ինչ որ խօսուի՝ մտիկ ը-
նեմ : Այսպէս տասնեւհինգ տարու եղայ : Քիչ
քիչ այն ցանցառ այցելութիւնները՝ որ մայրա-
գլորիս կամ եղբօրս կը ներուէր ընել ինձ մեր
հայրերէն մէկուն անհրաժեշտ ներկայութեամբ ,
բոլորովին արգիլուեցան , որպէս զի սիրտս ա-
մեն գորովական եւ քաղցր զգացումներէ հեռու
մնայ : Տրտում ու երկչոտ , այն պաղ լոկն եւ
տխրատեսիլ մեծ տան խորը վրակուած , զգացի
որ ազատ եւ սիրագորով աշխարհէն օր քան
դօր զիս կը հեռացընեն . ժամանակս՝ ծարէն մէ-
ջէն յապաւեալ կիսատ եւ ապարդիւն ուսմանց ,
կրօնական նուրբ հրահանգաց եւ աւելորդա-
պաշտական երկար վարժութեանց մէջ բաժ-
նուած էր : Բայց , կը հարցնեմ ձեզ , հայր իմ ,
երբէք մեր մատաղ սիրտն աւետարանական սի-
բոյ եւ գորովանաց խօսքերով աաքցընելու
ջանք կըլլա՞ր : Աւանդ , ամենեւին ոչ . . . : Երկ-

հաւոր Տիրոջ աւանդած « Սիրեցէք զմիմեանս »
պաշտելի խօսքին տեղ՝ կարծես թէ « կասկա-
ծեցէք իրարմէ » խօսքը դրուած էր . . . : Վեր-
ջապէս , հայր իմ , հայրենեաց եւ ազատութեան
վրայ երբէք խօսք մը կըսուէր մեզ : Ոչ . . . ոչ ,
ոչ . վասն զի այս բառերը մարդուս սիրտը կը
թնդացընեն . եւ պէտք է որ սիրտը բարա-
խէ . . . : Մեր ուսմանց եւ կրօնական վար-
ժութեանց կը յաջորդէին՝ իբրեւ դբօսանք՝ ե-
րեքական եւ ոչ երբէք երկուքական ընկերով
քանի մը պատյա . վասն զի երեք անձանց մէջ
քսութիւնն աւելի զիւրին է* , վասն զի երկու
հոգւոյ մէջ մտերմութիւնը զիւրաւ կը հաս-
տատուի , կրնայ այնպիսի սուրբ եւ ազնիւ բա-
րեկամութիւններ հաստատուիլ , որք մարդուն
սիրտը բարախել կուտան , եւ պէտք է որ սիր-
տը բարախէ . . . : Ուստի , սիրտս այնչափ
ճնշուեցաւ , որ վերջապէս զգացողութիւնը կոր-
սընցուց : Վեց ամսէ՛ի վեր ոչ եղբայրս տեսած
էի եւ ոչ մայրազիրս . որ մը դպրոց եկան . . . :
Քանի մը տարի առաջ՝ ցնծայից եւ արտասուա-
խառն ուրախութեամբ կողջունէի զանոնք . . .
այս անգամ աչքերս ցամաք մնացին եւ սիր-

* Այս կանոնն այն աստիճան խիստ է ճիշդ-
վիժաց դպրոցներուն մէջ , որ եթէ երեք ա-
շակերտ 'ի միասին պարտած ժամանակնին՝ մէ-
կը վայրկեան մը հեռանայ ընկերներէն , միւս
երկուքն ալ իրարմէ հեռանալու կը պարտուո-
րին մինչեւ որ երրորդը դառնայ դայ :

արս ալ պաղ . մայրս ու եղբայրս լալով մեկնեցան
ինձմէ : Աւ սակայն անոնց այս փորութիւնը դպաւ
ինձ . . . այն ժամանակ սոսկալով հասկըցայ
այն սառնային անզգայութիւնը՝ որ այն դամբար-
անին մէջ բնակելէս 'ի վեր դրաւած էր դիս :
Չարհուրելով՝ ուղեցի դուրս ելնել հոնկէց քանի
որ դեռ ուժ ունէի . . . : Այն ժամանակ ար-
հեստ մ'ընտրելու խօսք բացի ձեզ , հայր իմ . . .
վասն զի այն արթնութեան քանի մը վայրկեան-
ներուն մէջ թուեցաւ ինձ թէ դորժունեայ եւ
բեղնաւոր կենաց , աշխատասէր եւ ազատ կե-
նաց , ընտանեկան դորովալից կենաց շքինդը
կը լսէի հեռուէն . . . : Ո՛հ , սրչափ կզգայի
այն ատեն շարժման ազատութեան եւ ազնիւ-
ու եռանդազին սրտայուզութեանց պէտքը . հոն
գոնէ պիտի գանէի սրտի կեանքը՝ որ կը փախ-
չէր ինձմէ . . . : Ըսի ձեզ , հայր իմ , ծուռ-
գերնուդ փաթթուելով եւ արտսուքովս թըր-
ջելով , արհեստաւորի կամ դորականի կեանք ,
որն որ ըլլար՝ կը յարմարէր ինձ . . . : Այն ժա-
մանակ իմացուցիք ինձ թէ մայրագիրս՝ որ դիս
թշուառ եւ մեռնելու վիճակի մէջ գտնելով ա-
ռեր՝ առանց իր աղքատութեանը նայելու իր
դաւկին հացին կէսն ինձ տուեր էր . . . սքանչելի
դոհողութիւն մօր մը համար . . . այն ժամա-
նակ . . . ըսաւ նորէն Քարբիէլ վարանելով եւ
աչքը խոնարհեցնելով , վասն զի այն ազնիւ բը-
նութիւններէն էր՝ որք իրենց եղած ապիրա-
տութեանց վրայ իրենք կամաչեն . . . այն ժա-


մանակ , հայր իմ , իմացուցիք ինձ թէ մայրա-
գիրս մէկ նպատակ , մէկ բաղձանք մ'ունէր .
այն է . . . — Ձեզ կրօնաւոր տեսնել , սիրելի
որդեակ , յարեց հայր Տ'Էկրինեի , որովհետեւ
այդ բարեպաշտ եւ կատարեալ կինը կը յուսար
որ դուք ձեր հողին փրկելով իրենն ալ կապա-
հովէք . . . բայց չէր համարձակեր իր այս փա-
փաքը ձեզ յայտնել , վախնալով որ շահասիրա-
կան բաղձանք մը կը կարծէք . . . — Բաւա-
կան է . . . հայր իմ , ըսաւ Քարրիէլ հայր Տ'Էկ-
րինեի խօսքն աղամայ արամտութեամբ կարե-
լով . Այդպիսի սխալ մը ձեզնէ լսել անտանելի
է ինձ . Տրանսօադ Պօտուէն երբէք այդպիսի
բան մը մտքէն անցուցած չէ . . . — Սիրելի
որդեակ , դուք շատ աճապարանօք դատողու-
թիւն կընէք , ըսաւ քաղցրութեամբ հայր Տ'Էկ-
րինեի . ես կը հաստատեմ որ ձեր մայրագրին
միակ բաղձանքն այս էր . . . — Մայրագիրս
երէկ ամեն բան պատմեց ինձ : Նա ալ ես ալ
փոխադարձաբար խաբուած ենք : — Ուրեմն ,
սիրելի որդեակ , ըսաւ հայր Տ'Էկրինեի խոժոռ
կերպիւ , ձեր մայրագրին խօսքն իմ խօսքէս
վեր կը բռնէք . . . — Ձիս մի ստիպէք , հայր
իմ , այնպիսի պատասխան մը տալու , որ ձեզ
ալ ինձ ալ միապէս դժնդակ ըլլայ , ըսաւ Քար-
րիէլ աչքը խոնարհեցնելով : — Կըսէք ինձ հի-
մա , կրկնեց հայր Տ'Էկրինեի անձկութեամբ ,
ինչո՞ւ համար դիս . . . »

Վերապատուելի հայրը չկրցաւ խօսքը լը-

մընցընել, Սամուէլ ներս մտնելով ըսաւ . «Բաւական տարւօք մարդ մ'եկեր Պ. Ռօտէնը տեսնել կուզէ : — Ես եմ, պարոն, շնորհակալ եմ, պատասխանեց Ռօտէն զարմացմամբ :

Յետոյ՝ իր թղթասպանակին թերթիկներէն մէկուն վրայ մատիտով դրուած քանի մը խօսք հայր Տ'Էկրինեի յանձնելով՝ տատամսոտ հետաքրքրութեամբ դուրս ելաւ հասկընալու թէ ով կրնար ըլլալ զինքը Սէն — Ֆրանսուազի փողոցը փնտռելու եկող մարդը :

Հայր Տ'Էկրինեի եւ Գարրիէլ մինակ մնացին :



ԳԼՈՒԽ Դ .

ԳԺՏՈՒԹԻՒՆ

Հայր Տ'Էկրինեի՝ այն աստիճան տաղնապի մէջ ինկած էր, որ Ռօտէնի տոմսակը մեքենարար առեր ձեռքին մէջ բռներ՝ բանալու միտք չէր ընել : Սարսափմամբ կը հարցընէր ինքնիրեն թէ ի՞նչ եզրակացութիւն պիտի տար արդեօք Գարրիէլ անցելոյն վրայ ըրած այս գանդատներուն : Մնոր յանդիմանութեանց պատասխանելու չէր համար ձակեր, վախնալով որ չըլլայ թէ աւելի գրգռի . վասն զի անհուն շահեր կախեալ էին դեռ անկէ : Ճիշդիթական սահմանադրութեանց համեմատ Գարրիէլ չէր կրնար ան-

ձամբ բանի մը տէր ըլլալ . ասկէց զատ , վերապատուելի հայրը կանխաւ հող տարեր՝ հրատարագիր մ' ստացեր էր անոր ձեռքէն , որով Գարրիէլ ընկերութեան կը թողուր ինչ հարստութիւն կամ դոյք որ ձեռքն անցնէր կամ որ մը ժառանգութեամբ իրեն իյնար : Բայց այս խօսակցութեան սկզբնաւորութենէն այնպէս կերեւէր որ Գարրիէլ իր միտքը փոխած էր , եւ կրնար ընկերութեան հետ զինքը կապող կապերը խզել , եւ այն ժամանակ ըստ օրինաց պարտաւոր չէր ըլլար յանձն առած պայմանները կատարելու : Հրիտակն իրօք կաւրուէր , եւ հայր Տ'Էկրիենի յոյսերը՝ որ Ռէնբօնի տոհմին ամբաւ հարստութիւնը ձեռք ձգելու երջանիկ կէտին հասած էին , սպառնալու կը փճանային : Այս մեծ ժառանգութեան համար ժամանակէ մ'ի վեր վերապատուելի հօր կրած այնչափ սրբատաանջութիւններէն եւ ոչ մէկն այս աստիճան անակնկալ եւ դարհուրելի եղած էր : Ուստի Գարրիէլի խօսքն ընդ միջելու կամ հարցմունք մ' ընելու համար ձախելով , լռին սարսափով մ' այս սպառնալից խօսակցութեան ելքին կ' սպասէր :

Քարոզիչը նորէն սկսաւ խօսիլ . « Իմ պարտքըս է , հայր իմ , անցեալ կենացս այս համառօտ նկարագիրը շարունակել մինչեւ Ամերիկա երթալու ժամանակս . եւ քիչ մը ետքը պիտի տեսնէք թէ ինչու համար այս բանը պարտք կը համարիմ ինձ : »

Հայր Տ'Էկրիենի գլխովը հաւանութիւն առ-

ևաւ խօսելու :

« Երբոր մայրապետիս կարծեցեալ փափաքն խմացայ, շանձն առի կրօնաւոր ըլլալ . . . թէ եւ սիրտս չէր փափաքեր . . . : Ելայ այն արխուր տունէն՝ ուր մանկութեանս եւ առաջին պատանեկութեանս մէկ մասն անցուցած էի, եւ մտայ ընկերութեանս կղերանոցներէն մէկը : Իմ առաջադրութիւնս կրօնական անդիմադրելի կոչումէ մ'առաջ եկած չէր . . . այլ մայրապետիս պարտք մը հատուցանելու փափաքէ : Սակայն Քրիստոսի կրօնին ճշմարիտ հոգին այն առաջնական կենդանարար է, որ ինքզինքս վառած ու բորբոքած տեսայ երկնաւոր Քրիստոսի պաշտելի պատուիրանքը կատարելու դադարաւորով : Այնպէս կը կարծէի թէ կղերանոցը՝ փախանակ այն դպրոցին նմանելու, ուր մինչեւ այն ժամանակ խիստ ճնշման մը ներքեւ ապրեր էի, օրհնեալ տեղ մ'էր, ուր աւետարանական եղբայրութեան ամենէն մաքուր ու կռանդուն սկզբունքը հաւասարական կենաց վրայ կը գործադրուէր . ուր անդադար օրինակաւ մարդկութեան ջերմ սէրը, կարեկցութեան եւ ներողամտութեան անձառելի քաղցրութիւնները կը քարոզուէին. ուր քրիստոսի անմահ խօսքն իր ամենընդարձակ եւ ամենաբեղնաւոր խմաստովը կը մեկնուէր . ուր ամենէն ազնիւ զգացմանց հանապազօրեացժաւալ մամբ վերջապէս՝ կը պատրաստուէին այն փառաւոր առաքելութեան, որուն պաշտօնն է հարուսաներն ու երջանիկ-

ներն իրենց եղբարց վիշտերուն ու տառապանաց վրայ 'ի գութ շարժել՝ մարդկութեան սոսկալի թշուառութիւններն անոնց անքին առջեւ դնելով . . . : Ասեմ եւ սուրբ բարոյական, որուն մէկը չկրնար դիմանալ երբոր արտասուալից աչօք եւ գթով ու կարեկցութեամբ զեղեալ սրտով քարոզուի :

Այս վերջին խօսքերը Պաբրիէլ անչափ խորին սրտայուզութեամբ ըսաւ, որ աչքը լըցւեցաւ, եւ դէմքն ալ հրեշտակային զեղեցկութեամբ փայլիլ սկսաւ :

Արդարեւ այդ է, սիրելի որդեակ, քրիստոնէութեան հոգին . բայց պէտք է մանաւանդ անոր գիրը սովորիլ ու մեկնել, պատասխանեց հայր Տ'Եկրինեի պաշտութեամբ : Այս ուսման համար մանաւորապէս ահամանուած են մեր ընկերութեան կղերանոցները : Չրոյն մեկնութիւնը լուծման հրահանգութեան եւ հնադանդութեան գործ է՝ եւ ոչ սրտի ու զգացման : — Խիտ աղէկ նշմարեցի այդ, հայր իմ, ըսաւ Պաբրիէլ : Այն նոր տունը մտած ժամանակըս, ո՛հ, տեսայ որ յոյսերուս մէջ խաբուած էի . սիրտս վայրկեան մը ծաւալելէ ետեւ՝ նորէն կ'ծկեցաւ . փոխանակ կենաց եւ սիրոյ վառարանին՝ զոր երազեր էի, այն լռին եւ սառնային կղերանոցին մէջ ալ ուրիշ բան չգտայ, բայց եթէ նոյն ճնշումն աղնիւ թռիչներու, նոյն անողոքելի հրահանգը, նոյն փոխադարձ քսուեթեան գրութիւնը, նոյն անվատահութիւ-

նր , եւ նոյն անյաղթելի արգելքն ամեն բա-
րեկամական կապակցութեանց դէմ : . . : Ուս-
տի հոգիս վայրկեան մը տաքցընող եռանդը
պաղեցաւ , եւ նորէն քիչ քիչ այն անշարժ
կրաւորական եւ մեքենական կենաց սովորու-
թիւններուն մէջ ինկայ , զոր անգութ իշխա-
նութիւն մը մեքենական ճշդութեամբ կը կա-
նոնաւորէր , ինչպէս որ ժամացուցի մ'անկեն-
դան շարժումը կը կանոնաւորեն : — Որովհե-
տեւ կարգը հնազանդութիւնը կանոնաւո-
րութիւնը մեր ընկերութեան առաջին հիմունքն
են , սիրելի որդեակ : — Աւանդ , հայր իմ , այն
կանոնաւորումը մահ էր՝ եւ ոչ կեանք : Ազ-
նուախոհ սկզբանց այն ջնջման մէջ՝ դպրոցա-
կան աստուածաբանութեան ուսմանն անճնա-
տուր եղայ : Տխուր եւ չարագուշակ ուսմունք .
խորամանկ սպառնալից կամ թշնամի գիտու-
թիւն , որ միշտ վտանգի կռուոյ պատերազ-
մի դաղափարներ կարթնցընէ եւ բնաւ երբէք
խաղաղութեան յառաջդիմութեան եւ աղա-
տութեան դաղափարներ : — Աստուածաբանու-
թիւնը , սիրելի որդեակ , ըսաւ խստութեամբ
հայր Տ'Եկրինելի , զրահ եւ սուր մ'է միանգա-
մայն , զրահ է կաթուղիկ հաւատքը ծածկելու
եւ պաշտպանելու համար . սուր է՝ հերետիկո-
սութիւնը զարնելու համար : — Սակայն , հայր
իմ , Քրիստոս եւ իր առաքեալներն այդ խաւա-
րամած գիտութիւնը չէին գիտեր : Իրենց պարզ
ու սրտաշարժ խօսքով մարդիկ կը նորոգուէին .

աղատութիւնը գերութեան կը յաջորդէր . . . :
Աւետարանը , այն երկնային օրինադիրքը բա-
ւական չէ մարդոց իրար սիրել սովորեցնե-
լու . . . : Քայց , աւանդ , այս եղբայրսիրական
պատուէրները չյիշելէ զատ , անդադար կրօ-
նական պատերազմներու վրայ կը խօսէին մեզ ,
եւ մանրամասնաբար կը թուէին այն արեան
հեղեղները՝ զորս Տէրոջը հաճոյ ըլլալու եւ հերե-
տիկօսութիւնը խեղդելու համար թափել պէտք
եղեր էր : Այս սոսկալի ուսմամբ մեր կեանքն
աւելի կը տխրէր : Քանի որ մեր պատանեկու-
թեան հասակը կանցնէր , մեր կղերանոցի յա-
րաբերութիւնները եւս քան զեւս դառնութեան
նախանձու եւ կասկածանաց կերպարանք կառ-
նուին : Քսութեան սովորոյթն առաւել մեծ եւ
կարեւոր իրաց վրայ գործածուելով՝ գաղանի
ատելութիւններ եւ խորին սխակալութիւններ կը
ծնանէին : Աւրիշներէն ոչ լաւագոյն էի եւ ոչ
չարագոյն . այլ ամենքս ալ տարիներէ՛ ՚ի վեր կոյր
հնազանդութեան երկաթէ լուծին վարժուած ,
քննութիւն եւ անճնիշխան դատողութիւն ը-
նելու սովորութիւնը կորուսած , մեր մեծաւոր-
ներուն առջեւ նուաստ եւ դողահար , ամենքս
ալ մի եւ նոյն ախուր դակահար եւ նկուն տը-
պաւորութիւնը կընծայէինք . . . : Աերջապէս
կարգ առի : Քահանայ ըլլալուս պէս՝ ճիղվի-
թաց ընկերութեան մէջ մտնելու հրաւիրեր է-
իք զիս , հայր իմ , կամ մանստանդ ես ինք-
նին անդգալարար եւ դողցեա առանց իմ գիտ-

նալուս այդ ընկերութեան մէջ մտեր էի . . . :
Ե՞նչպէս չեմ գիտեր . . . վասն զի երկար ժա-
մանակէ 'ի վեր ես իմ կամացս տէր չէի : Ամեն
փորձերը կրեցի եւ ամենէն սարսափելին վրձ-
ռական եղաւ : Քանի մ'ամիս խցիկիս լու-
թեանը մէջ ապրեցայ՝ ձեր ինձ հրամայած տա-
րօրինակ եւ մեքենական վարժութիւնն 'ի գործ
դնելով : Այն երկար միջոցին մէջ ձեր արժա-
նապատուութենէն զատ ոչ ոք քովս կուգար .
ձեր ձայնէն զատ ուրիշ մարդկային ձայն ական-
ջիս չէր հասներ . գիշերները երբեմն տարտամ
սոսկումներ կ'զգայի . . . : Միտքս՝ ծոմապա-
հութենէ խտամբերութիւններէ եւ առանձնու-
թենէ տկարացած , զարհուրելի ցնորական տե-
սութիւններով կը տագնապէր . երբեմն ալ՝ ընդ-
հակառակն՝ տեսակ մ'անգորրութեամբ լցուած
լքում մը կ'զգայի խորհելով որ ուխտս տա-
լէ ետեւ կամքի եւ խորհրդածութեան բնուէն
յաւիտեան պիտի աղատէի : Այն ժամանակ ան-
տանելի թմրութեան մը մէջ կիյնայի՝ այն տա-
րարազդ ճանապարհորդաց պէս , որք մէկէն 'ի
մէկ ձիւնի բռնուելով մարդածախ ցուրտի մը
մահաբեր թմրութեան անձնատուր կըլլան . . .
եւ այսպէս այն չարաշշուկ վայրկենին կ'սպա-
սէի . . . : Աերջապէս , հայր իմ , ինչպէս որ
հրահանգը կը պահանջէր , հողեվարական տագ-
նասլիս մէջ խեղդուելով մահամերձ կամացս
վերջին գործողութիւնը կատարելու վայրկեանը
կը փութացընէի , որ էր կամքիս գործածու-

Թե՛նէն իսպառ հրաժարիլ . . . : — Յիշեցէք ,
սիրելի՛ որդեակ , ըսաւ հայր Տ'Եկրինեի երեսին
դոյնը նեւած եւ հեազհեաէ սրտին տաղնապն
աւելնալով , յիշեցէք որ ձեր ուխտը տալուն
նախընթաց օրը՝ մեր ընկերութեան կանոնին
համեմատ իմացուցի ձեզ թէ կրնայիք մեր ուխ-
տին անդամ ըլլալէ հրաժարիլ , եւ կատարելա-
պէս ազատ թողուցի ձեզ , վասն զի ակամայ
կոչումներ չենք ընդունիր : — Ճշմարիտ է , հայր
իմ , պատասխանեց Պարրիէլ ցաւազին դառնու-
թեամբ . երբոր երեք ամիս առանձնութենէ եւ
փորձերէ ճնշեալ , ուժասպառ եւ կիսամեռ վիճակի
մէջ ինկած եւ շարժում մ'ընելու անկարող ժա-
մանակս խցիկիս դուռը բացիք ըսելով . « Յիշէ
կուզէք , ելէք կանգնեցէք . . . քալեցէք . . .
ազատ էք . » Աւանդ , վրաս կարողութիւն չկար .
երկար ժամանակէ 'ի վեր դօւայեալ եւ դգա-
յաղիրկ սրտիս միակ վափաքը գերեզմանական
հանգիստն էր . . . ուստի անդառնալի ուխտեր
արտասանեցի եւ դիակի պէս ձեր ձեռքին մէջ
ինկայ . . . : — Եւ մինչեւ հիմա , սիրելի՛ որդե-
ակ , երբէք չվրիպեցաք այդ դիակնակերպ
հնազանդութենէն . . . ինչպէս որ մեր ընկե-
րութեան փառաւոր հիմնադիրն ըսած է . վասն
զի այդ հնազանդութիւնը սրչափ աւելի բա-
ցարձակ ըլլայ , անչափ վարձուց արժանի է : »

Պահ մը լուռ կենալէ ետեւ՝ Պարրիէլ շա-
րունակեց . « Գուք միշտ ծածկեցիք ինձմէ այդ
ընկերութեան քուն նապատակները , որուն մէջ

կը մտնէի . . . կամքէս կատարելապէս հրա-
ժարիլ եւ դայն մեծաւորացս յանձնելն Աստու-
ծոյ ամենամեծ փառաց անունով կը խնդրուէր
ինձմէ . . . ուխտս տալէ ետեւ՝ ձեր ձեռաց
մէջ հլու եւ հնազանդ գործիք մը պիտի ըլլա-
յի . բայց կըսէիք ինձ թէ սուրբ գեղեցիկ եւ մեծ
պաշտօնի մը պիտի գործածուէի . . . : Հաւա-
տացի ձեր խօսքին , հայր իմ , եւ ինչպէս շի
հաւատայի . . . : Սպասեցի . . . արեւտալի
դէպք մ'եկաւ բազդս փոխեց . . . ծանր հի-
ւանդութիւն մը՝ որուն պատճառը . . . : — Որդ-
եակ , գոչեց հայր Տ'Եկրինեի Քարբիէլի խօսքն
ընդմիջելով , այդ պարագայներն յիշել աւելորդ
է : — Ներեցէք , հայր իմ , պէտք է որ ամեն
բան յիշեցընեմ , եւ իմ իրաւունքս կը պահանջէ
որ մտիկ ընէք , վասն զի չեմ ուզեր լռութեամբ
անցնիլ այն ամեն իրողութիւնները՝ որք ձեզ
ծանուցանելիք անխախտ որոշմանս թելադիր
եղան : — Նստեցէք ուրեմն , որդեակ իմ , ըսաւ
հայր Տ'Եկրինեի արտեւանունքը կնճռելով եւ
կարծեա թէ զարհուրելով երիտասարդ քա-
հանային ըսելիքէն , որուն մինչեւ այն ատեն
դեղնած այտերը՝ կենդանի կարմրութեամբ մը
գունաւորեցան : — Ամերիկա երթալէս վեց ա-
միս առաջ , շարունակեց Քարբիէլ աչքը խո-
նարհեցընելով , իմացուցիք ինձ թէ դիս իոս-
տովանահայր պիտի ընէիք . . . եւ . . . այս սուրբ
պաշտօնին ինքզինքս պատրաստելու համար . . .
գիրք մը տուիք ինձ . . . »

Գաբրիէլ նորէն վարանեցաւ: Երևօին կարմ-
րութիւնն աւելցաւ: Հայր Տ'Եկրինեի հաղիւ կըր-
ցաւ իր անհամբերութիւնն ու զայրոյթը դսպել:

« Գիրք մը տուիք ինձ, ըսաւ նորէն դե-
ռահասակ քահանան ինքզինք գրեթէ բռնադա-
տելով, որուն մէջ խել մը հարցումներ կային
դորս խոստովանահայր մը՝ մատաղ մանկանց, մա-
տաղ աղջկանց եւ ամուսնացեալ կանանց պի-
տի հարցընէր . . . երբոր խոստովանութեան ներօ-
կայանային . . . : Ո՛հ յաւելցուց Գաբրիէլ ցնցը-
ւելով, չպիտի մոռնամ երբէք այն սարսափելի
երկուհի . . . : Սենեակս քաշուեցայ այն գիր-
քը ձեռքս, դոր մեր հայրերէն մէկը շարագրեր
եւ սուրբ եպիսկոպոս մ'ալ կատարելագործեր
էր, ըսեր էիք ինձ:

Յարգանօք վստահութեամբ եւ հաւատով
լցուած . . . բացի այն գիրքը . . . : 'Ն սկզբան
չհասկըցայ . . . յետոյ վերջապէս . . . հասկը-
ցայ . . . : Ամօթէս ու սոսկումէս դողացի եւ
ապշեցայ. հաղիւ կրցայ դողդոջուն ձեռօք այն
դարչելի գիրքը գոցել . . . եւ իսկոյն վաղեցի
ձեր քով եկայ, հայր իմ, իմացընելութէ այն
գիրքը սխալմամբ տուեր էիք ինձ, եւ ես ալ
անգիտութեամբ անոր ամօթալի երեսներէն մէ-
կը կարդացեր էի . . . : — Յիշեցէք նաեւ, սի-
րելի որդեակ, ըսաւ հայր Տ'Եկրինեի ծանրու-
թեամբ, որ ես ալ ձեր խիղճը հանդարտեցուցի
ըսելով թէ քահանայն խոստովանութեան կըն-
քոյն ներքեւ ամեն բան լսելու եւ իմանալու

պաշտօն ունենալով, պէտք էր որ ամեն բան
դիտնար, ամեն բանի ծանօթ ըլլար, եւ ամեն
բան դատելու կարող ըլլար. թէ մեր ընկերու-
թիւնն այն գրքին ընթերցումն իբրեւ դասա-
կան գործ պարտք կը դնէր ամեն դեռահասակ
սարկաւազներու ընծայացուներու եւ նորատի
քահանայներու վրայ՝ որք խոստովանահայր ըլ-
լալու սահմանուած են . . . : — Հաւատացի ձեր
խօսքին, հայր իմ, կոյր հնազանդութեան վար-
ժութիւնն այն աստիճան զօրացած էր իմ վրայ,
հրահանգն այն աստիճան մոռցուցած էր ինձ
քննադատելու սովորութիւնը, որ 'ի սկզբան
զգացած սոսկմանս համար ինքզինքս իբրեւ ծա-
նրր սխալ մը գործած մեղադրելով նորէն առի
գիրքը սենեակս տարի ու կարգացի : Ա՛հ, հայր
իմ, թնչ սարսափելի յայտնութիւններ բղջախո-
հութեան ամենէն եղեռնային եւ անհեթեթ նր-
բութեանց վրայ . . . ես ալ երիտասարդական
ամենէն կրակոտ հասակիս մէջ էի . . . եւ մին-
չեւ այն ժամանակ իմ տղիտութիւնս եւ Աս-
տուծոյ օգնութիւնը միայն կրցեր էին զգայու-
թեանց հետ ունեցած բուռն կռիւներուս մէջ
զիս պաշտպանել . . . : Ա՛հ, թնչ գիշեր էր
այն . . . թնչ գիշեր : Քանի որ միայնութեանս
խոր լռութեան մէջ՝ ամօթէս ու սոսկումէս դո-
ղալով կը կարգայի այն անլուր ու անծանօթ
խենեչութեանց նկարագիրը . . . քանի որ այն
յայրատ ցոխութեանց պատկերները կը ներկա-
յանային երեւակացութեանս՝ որ մինչեւ այն ժա-

մանակ մաքուր եւ ամբիժ էր . . . դու գիտես , Աստուած իմ , խելքս տկարանալ կ'սկըսէր : Այո . . . եւ բոլորովին մոլորեցաւ . . . վասն զի քանի որ այն դժոխային գիրքը մէկ կողմ նետել կուզէի , չեմ գիտեր ինչ անգիմադրելի հրապոյր մը , անզուսպ հետաքրքրութիւն մը զիս շնչարգել եւ ուշակորոյս կը բռնէր կը կապէր այն դարշելի թերթերուն առջեւ . . . ամօթէս ու շիտթութենէս կը մեռնէի , եւ այտերս ակամայ կը բորբոքէին . երակներուս մէջ ծախիչ ջերմութիւն մը կը շրջագայէր . . . այն ժամանակ ահագին ցնորից մէջ իյնալով մոլորութիւնս լրացաւ . . . թուեցաւ ինձ թէ վաւաշոտ խօլականներ այն անիծեալ գրքին մէջէն դուրս կելնէին . . . եւ անոնց բոցակէզ ողջագուրանքէն փախչելու աշխատելով զգայութիւնս կորուսի : — Այդ գրքին վրայ ըրած խօսքերնիդ անվայել են , ըսաւ հայր Տ'Եկրիսնէի խոժոռ գէմքով . դուք ձեր երեւակայութեան չափազանց ջերմութեանը զոհեղեր էք . ուստի պէտք է որ անոր վերագրէք այդ ձախող սպաւորութիւնը զոր ստացեր էք այդ պատուական եւ իր յատկութեան մէջ անստղտանելի գրքէն , զոր Նկեղեցին ալ ընդունած է : — Ըսել է որ , հայր իմ , պատասխանեց Գաբրիէլ խորին դառնութեամբ , իրաւունք չունիմ դանդատելու թէ իմ մինչեւ այն ատեն անմեղ եւ կոյս երեւակայութիւնս յաւիտեան պղծեցաւ այնպիսի դարշութիւններով

որք երբէք մտքէս անցած չէին . վասն զի կաս-
կած ունիմ թէ այնպիսի պղծութեանց մէջ թա-
ւալողները կուգան քահանային կը խոստովա-
նին : — Ատոնք այնպիսի խնդիրներ են՝ զոր
դուք չէք կրնար դատել , պատասխանեց խըս-
տութեամբ հայր Տ'էկրինեի : — Ուրեմն ալ ա-
սոնց խօսքը չեմ ըներ » հայր իմ , ըսաւ Քար-
րիէլ եւ շարունակեց . « Այն սարսափելի դիշե-
րին երկար հիւանդութիւն մը յաջորդեց . ըսին
ինձ թէ շատ վախցեր են որ խելքս կը կորսն-
ցընեմ : Արբոր առողջացայ . . . անցեալը դժըն-
դակ երազ մը թուեցաւ ինձ . . . : Այն ատեն
ըսիք ինձ , հայր իմ , թէ քանի մը պաշտօններու
համար դեռ չափահաս չէի . . . : Ուստի ես ալ
թախանձանօք խնդրեցի ձեզնէ որ Ամերիկա քա-
րողչութեան երթամ . . . : Այս խնդիրս եր-
կար ժամանակ մերժելէ ետեւ՝ ընդունեցիք . . .
եւ ճանքայ ելայ . . . : Տղայութենէս 'ի վեր
դպրոցի կամ կղերանոցի մէջ ապրած էի յարա-
տեւ ճնշման ու հպատակութեան ներքեւ : Քը-
լուխս եւ աչքս անդադար խոնարհեցնելու վար-
ժուելով , երկինքը նայելու եւ բնութեան գե-
ղեցկութիւնները նկատելու սովորութիւնը գը-
րեթէ մոռցած էի . . . : Այս պատճառաւ նը-
չափ խոր եւ աստուածպաշտական երկիւղած
երջանկութիւն մ'զգացի երբոր յանկարծ ինք-
զինքս ծովուն ահաւոր ընդարձակութեան մէջ
փոխադրուած տեսայ . երբոր նաւարկութեան
ժամանակ ինքզինքս Ովկիանոսի եւ երկնից մէջ

տեղը տեսայ : Այն ժամանակ այնպէս թուեցաւ ինձ որ թանձր խաւարով ծածկուած տեղէ մը դուրս ելեր էի : Շատ տարիներէ 'ի վեր առաջին անգամ զգացի որ սիրտս ազատ կը բարախէր կուրծքիս մէջ . առաջին անգամ ինքզինքս իմ խորհրդածութեանս տէր զգացի եւ անցեալ կեանքս քննելու համարձակեցայ , ինչպէս որ մէկը բարձր լերան մը գլխէն մթին ձորի մը խորը կը դիտէ . . . : Այն ժամանակ տարօրինակ տարակոյսներ ծագեցան մտքիս մէջ : Հարցուցի ես ինձ թէ ինչ իրաւամբ , ինչ նշանակաւ այսչափ երկար ժամանակ իմ կամքիս՝ ազատութեանս եւ խելքիս գործածութիւնը ճնշեր ու ջնջեր էին , քանի որ Աստուած ինձ ազատութիւն կամք եւ խելք պարգեւած է : Բայց ետքն ալ ըսի թէ դուցէ այն մեծ դեղեցիկ եւ սուրբ գործը՝ որուն պիտի վաստակակցէի , այնպիսի նպատակներ ունէր՝ որ որ մը պիտի յայտնուէին , եւ իմ հնազանդութիւնս ու համբերատարութիւնս պիտի վարձատրուէր : »

Այս միջոցին Ռօտէն ներս մտաւ : Հայր Տ'Էկրիների հարցական նայուածք մ'ուղղելով անոր , Ռօտէն քովը գնաց եւ կամացուկ մ'ըսաւ՝ առանց Գարրիէլէն լսուելու . « Ծանր բան մը չկայ . . . լուր բերին ինձ թէ Սիմօն մարաջախտին հայրը Պ . Հարտիի գործարանը հասեր է . . . » :

Յետոյ Գարրիէլի վրայ նայելով Ռօտէն հայր Տ'Էկրիների հարցմունք մ'ընելու պէս ե-

րեւցաւ . բայց մարքիդ-արբան սրտաբեկ դէմ-
քով մ'առջին նայեցաւ , եւ յետոյ Քարբիէլի
դառնալով ըսաւ , մինչդեռ Ռօտէն ալ վերատին
արմուկով ը վառարանին վրայ կը կրթնէր . «Շա-
րունակեցէք , սիրելի որդեակ . . . որպէս զի
իմանամ թէ ի՞նչ է ձեր ըրած որոշումը : — Հի-
մա սխալի ըսեմ ձեզ , հայր իմ : Չարլսթօն հա-
սայ ընկերութեան նպատակին վրայ ու-
նեցած տարակոյսս՝ մեր այն քաղաքին մէջ հաս-
տատած վանքին մեծաւորին յայտնելով , մեծա-
ւորը սոսկալի անկեղծութեամբ բացատրեց ինձ
ընկերութեան նպատակը , որուն կը դիմէին՝ չէ
թէ ընկերութեան ամեն անդամները , վասն զի
չատերն ինձ պէս անտեղեակ էին , այլ այն նպա-
տակը՝ որուն ընկերութեան գլուխներն յամառ
յարատեւութեամբ հետամուտ եղած էին ուխտին
հաստատուելէն 'ի վեր Սարաափեցայ . . . :
Ներելի եւ աններելի մեղաց եւ խղճմտութեան
առիթներու վրայ մեր ուխտին վարդապետաց
գիրքերը կարդացի : Ա՛հ , այն ժամանակ ,
հայր իմ , յայտնութեանց նորն եւ ամենէն սար-
աափելին ներկայացաւ աչքիս , երբոր մեր հայ-
րերուն շինած այն գրոց ամեն մէկ երեւոյն մէջ
տեսայ որ գողութիւնը գրապարտութիւնը կու-
սապղծութիւնը շնութիւնը երդմնադանցութիւ-
նը մարդասպանութիւնը արքայաապանութիւնը
ներելի կը համարուէին եւ մինչեւ իսկ կար-
դարանային : Երբոր մտածեցի թէ ես՝ դը-
թութեան արդարութեան թողութեան եւ սի-

րոյ Աստուծոյն քահանայ՝ այնպիսի ընկերու-
թեան մ'անդամ եղած էի, որուն գլուխներն
այնպիսի վարդապետութիւններ կը դաւանին
եւ ասոնցմով կը փառաւորին, երդում տուի
Աստուծոյ որ այդ ընկերութեան հետ ունեցած
կապս յաւիտեան խղեմ . . . : »

Քարրիէլի այս խօսքը լսելնուն պէս՝ հայր
Տ'էկրինեի եւ Ռօտէն սարսափահար աչքով մ'ի-
րարու երես նայեցան : Ամեն բան կորսուած
էր . իրենց որսը ձեռքերնէն կը պրծէր : Քար-
րիէլ այս յիշատակութիւններով յուզեալ, վե-
րապատուելիին ու Ռօտէնին շարժումը չկրցաւ
նշմարել, եւ շարունակեց . « Բայց որչափ որ
ընկերութենէն բաժնուելու որոշում ըրի, այս
յայտնութիւնը շատ վշտացուց դիւ . . . : Ո՛հ,
հաւատացէք ինձ, արդարախոհ եւ բարի հոգւոյ
մը համար վերջին ծայր դառն է երկար ժամա-
նակ յարգած մէկ բանն ուրանալ եւ անկէ հը-
րաժարիլ . . . : Միտա այն աստիճան կը տա-
ռապէր, որ քարոզչութեան պաշտօնիս վտանգ-
ներուն վրայ խորհելով՝ ուրախութեամբ կը յու-
սայի որ թերեւս այն առթիւ Աստուած դիւ առ-
ինքն կը կոչէ . . . բայց՝ ընդհակառակն՝ նա-
խախնամական հոգածութեամբ հսկեց իմ վրայ : »

Այս խօսքն ըսած ժամանակ Քարրիէլ ցըն-
ցուեցաւ՝ միտքը բերելով այն սքանչելի կինը
որ իր կեանքն ազատեր էր Ամերիկայի մէջ .
Յետոյ, վայրկեան մը լուռ կենալէ ետեւ նորէն
շարունակեց . « Քարոզչութեան պաշտօնս ա-

ւարտելէ ետեւ Քաղղիա վերադարձայ , հայր իմ ,
հաստատութեամբ որոշած ըլլալով աղաչել ձեռ
որ աղատութիւն տաք ինձ եւ երդումէս ար-
ձակէք . . . : Քանիցս անգամ՝ բայց 'ի զուր'
տեսակցութիւն մը խնդրեցի՝ ձեզնէ . . . երէկ
Նախախնամութիւնը կամեցաւ որ երկար խօ-
սակցութիւն մ'ընեմ մայրքաղրիս հետ : Իմացայ
անկէ թէ իմ կոչումս բռնադատելու համար ի՞նչ
դաւ նիւթուեր է , եւ թէ ի՞նչպէս սրբապիղծ
կերպով խոստովանութիւնը չարաչար դործած-
ւեր է խեղճ կինն ստիպելու՝ որ ուրիշ անձանց
ձեռք յանձնէ այն երկու որբերը՝ զորս տարաբաղդ
մայր մը վերջին շունչն աւանդած ժամանակ
հաւատարիմ դորականի մը յանձնած էր : Ար
հասկընաք , հայր իմ , որ եթէ ձեզ հետ ունե-
ցած կապերս խզելու կը վարանէի , երէկուան
խմացածներս դիւ անդառնալի կերպով հաստա-
տեցին որոշմանս վրայ . . . : Բայց այս ծան-
րակշիռ վայրկենիս մէջ , հայր իմ , պէտք է ը-
սեմ ձեզ թէ ես բոլոր ընկերութիւնը չեմ ամ-
բաստաներ . ինձ պէս ուրիշ շատ պարզամիտ
դիւրահաւան եւ վստահ անձինք ալ անշուշտ
այս ընկերութեան անդամակից են . . . եւ կու-
րութեամբ հլու դործիք եղած՝ ինչ նպատակի
ծառայելնին չեն գիտեր . . . : Ար ցուիմ ա-
նոնց վրայ , եւ կաղաչեմ զՍտուած՝ որ զա-
նոնք ալ ինձ պէս լուսաւորէ : — Ըսել է թէ ,
որդեակ , ըսաւ հայր Տ'Եկրիսնի գունաթափ եւ
սրտաբեկ սօքի վրայ ելնելով , կը խնդրէք ինձ-


մէ որ ձեզ ընկերութեան հետ միացնող կապե-
րը խզեմ : — Ս. յո՛, հայր իմ . . . երգում մը
տուած եմ ձեզ , եւ հիմա կաղաչեմ որ զիս այն
երգումէն արձակէք : — Ըսել կուզէք թէ ժա-
մանակաւ ձեր ազատ կամօք տուած բոլոր խոս-
տումներն ունայն եւ չեղած համարուին , այն-
պէս չէ՞ : — Ս. յո՛, հայր իմ : — Ըսել է թէ այ-
տուհետեւ ընկերութեան հետ բնաւ կապակցու-
թիւն չպիտի ունենաք : — Ո՛չ , հայր իմ . . .
որովհետեւ եկեր կաղաչեմ ձեզ որ զիս ուխ-
տերէս արձակէք : — Բայց զիտէ՞ք , որդեակ ,
որ ընկերութիւնը կրնայ ձեզ արձակել , բայց
դուք չէք կրնար ինքզինքնիդ արձակել : — Ը-
րած խնդիրս ցոյց կուտայ ձեզ , հայր իմ , թէ
ի՛նչ աստիճան կարեւորութիւն տուած եմ երգ-
մանս , որովհետեւ եկեր արձակում կը խնդրեմ
ձեզնէ . . . : Սակայն եթէ չուզէք արձակել . . .
ես ալ այնուհետեւ ինքզինքս պարտաւոր չեմ
ճանչեր ոչ Աստուծոյ եւ ոչ մարդկան առջեւ :
— Ըսածը խիստ բացայայտ է » ըսաւ հայր Տ'Էկ-
րինեի Ռօտէնին , եւ յուսահատութենէն ձայնը
չրթունքին վրայ սպառեցաւ :

Երբոր Գարրիէլ աչքը խոնարհեցուցած հայր
Տ'Էկրինեի պատասխանին կապատէր , որ ան-
շարժ եւ լուռ կեցած էր , յանկարծ Ռօտէնի մըտ-
քին մէջ կարծես թէ լուսաւոր խորհուրդ մը
ծագեցաւ նշմարելով որ վերապատուելի հայրը
դեռ ձեռքին մէջ բռնել էր այն տոմսակը՝ զոր
քիչ մ'առաջ ինք մատիտով դրած ու անոր տուած

էր : Ուստի մէկէն հայր Տ'Եկրինեի մօտենալով
կասկածոտ եւ խուճապեալ դէմքով կամացուկ
մ'ըսաւ . « Արդեօք ձեզ տուած տոմսակս չկար-
դացիք : — Միտքս չեկաւ » պատասխանեց վե-
րապատուելին մեքենարար :

Ռօտէն կարծես թէ սաստիկ բարկացաւ ,
բայց ինքզինք զսպեց . յետոյ հանդարտ ձայնով
մ'ըսաւ հայր Տ'Եկրինեի . « Ուրեմն կարդացէք
չուտով . . . : »

Վերապատուելի հայրը տոմսակն աչքէ ան-
ցունելուն պէս՝ իր յուսահատ դէմքին վրայ
յուսոյ պայծառ նշոյլ մը ծագեցաւ . խսկոյն Ռօ-
տէնի ձեռքը սեղմեց շնորհակալու կերպիւ եւ
ցած ձայնով ըսաւ . « Իրաւունք ունիք . . .
Գարրիէլ մերն է : »



Գ. Լ. ՈՒԽ Ե .

ԳԱՐՁ

Հայր Տ'Եկրինեի՝ Գարրիէլի ըրած յայտա-
բարութեան պատասխանելէ առաջ՝ խոր մտա-
ծութեան մէջ ընկղմեցաւ . դէմքը՝ որ քիչ մ'ա-
ռաջ այլայլած էր՝ քիչ քիչ դուարթացաւ : Եր
խորհրդածէր եւ կարծես թէ իր ընելիք ճար-
տարխօսութեան աղղեցութիւնը կը հաշուէր
դերադանց եւ անվրիպելի փաստի մը վրայ

դոր Ռօտէն՝ դործին վաանգը տեանելով փու-
թացեր քանի մը տողով ծրագրեր էր , բայց վե-
րապատուելի հայրն իր տաղնապէն ու սրտաբե-
կութենէն մոռցեր էր կարգալ : Ռօտէն՝ հայր
Տ'Եկրինեի վրայ արհամարհոտ եւ սրամտեալ
դերազանցութեան հայեացք մը ձգելէ եւ ուսե-
րը թոթիվելէ ետեւ՝ վերատին իր դիտողութեան
տեղը դարձաւ եւ արմուկովը նորէն վառարա-
նին կրթնեցաւ : Այս ակամայ եւ հայր Տ'Եկրին-
եիէն բարերազգարար չնչմարուած ցոյցէն ետեւ՝
Ռօտէնի դիակնազոյն դէմքը նորէն իր սառնա-
յին հանդարտութիւնն առաւ . իր կթոտ արտե-
ւանունքը՝ պահ մը բարկութենէն ու անհամ-
բերութենէն բարձրանալէ ետեւ՝ նորէն վար ին-
կան եւ իր փոքրիկ ու տմոյն աչքերը կէս մը
կափուցին :

Պէտք է խոստովանիլ . հայր Տ'Եկրինեի՝ որ-
չափ որ ճարտարաբան եւ դեղեցկախօս էր , փա-
փուկ եւ հրապուրիչ ձեւեր ունէր , վայելչազէմ
էր եւ բարակ կրթութիւն ստացած աշխարհային
կատարեալ մարդու մը կերպարանք ունէր , հայր
Տ'Եկրինեի՝ շատ անգամ Ռօտէնի անողոք հաս-
տատամտութեան եւ սատանայական խորաման-
դութեան առջեւ կը պզտիկնար եւ անոր ազ-
դեցութիւնը կը կրէր , այն դժուծ աղտոտ ու
ցնցոտ ծերունիին , որ խիստ քիչ անգամ իր
քարտուղարի եւ համր ունկնդրի խոնարհ դերը
կը թողուր :

Կրթութեան ազդեցութիւնն այնչափ դժ-

րաւոր է ; որ Գարրիէլ՝ այսպէս բացարձակ կերպիւ բաժնուելու յայտարարութիւն ընելէ ետեւ՝ տակաւին երկիւղ կ'զգար հայր Տ'Եկրինեի առջեւ, եւ սրտատանջ անձկութեամբ կ'սպասէր անկնելու թէ դինքն իր վաղեմի երդումներէն արձակելու համար ըրած բացորոշ խնդրոյն ինչ պատասխան պիտի տար վերապատուելի հայրը : Հայր Տ'Եկրինեի, իր յարձակողական յատակագիծը ճարտարութեամբ պատրաստելէ ետեւ, վերջապէս լռութիւնը խղեց, խոր հառաչք մ'արձակեց, քիչ մ'առաջ խոժոռ եւ դրդուեալ դէմքին դողարիկ հեզութեան երեւոյթ մը տուաւ, եւ սիրալիր ձայնով մը Գարրիէլի ըսաւ. «Ներեցէք ինձ, սիրելի որդեակ, այսչափ երկար լուս կենտրուս համար . . . բայց ձեր անակընկալ որոշումը զիս անստիճան շուարեցուց, եւ անչափ դժնդակ խորհրդածութիւններ յարոյց մտքիս մէջ, որ հարկ եղաւ ինձ քանի մը վայրկեան ուշա ամփոփել որպէս զի ձեր այդ բաժանման պատճառը հասկընամ . . . եւ կարծես թէ յաջողեցայ : Արդ, սիրելի որդեակ, ձեր այդ որոշման ծանրութեանը վրայ լաւ խորհած էք : — Այո, հայր իմ : — Բացարձակապէս որ ոչանձ էք մեր ընկերութեանէն բաժնուիլ մինչեւ իսկ իմ հաճութեանս հակառակ : — Արդարեւ դժընդակ պիտի ըլլայ ինձ, հայր իմ, բայց յանձնառու պիտի ըլլամ : — Տարակոյս չունիմ որ դժընդակ պիտի ըլլայ, սիրելի որդեակ, եւ խիտադժնդակ . . . վասն զի ձեր աղառ կամօքն ան-

դառնալի երդում մ'ըրած էք, եւ այդ երդումը մեր սահմանադրութեան համեմատ ձեզ կը պարտաւորէր՝ որ առանց ձեր մեծաւորաց հաւանութեան ընկերութենէն չբաժնուիք: — Հայր իմ, քաջ գիտէք, որ ըրած խոստմանս ինչ ըլլալը չէի գիտեր այն ժամանակ: Հիմա աւելի լուսաւորուելով հրաժարիլ կուզեմ. իմ միակ փափաքս է Փարիզէն հեռու գիւղի մը քահանայութիւն ձեռք բերել: Այն խոնարհ եւ օգտակար պաշտօնին համար անդիմադրելի կուչում մը կզգամ վրաս. գեղերուն մէջ այն աշտիճան սոսկալի թշուառութիւն կայ, աղքատ երկրագործին վիճակը քիչ մը բարւոքելու միջոցներու մասին այն աստիճան ողբալի տգիտութիւն տիրած է, որ խեղճին կեանքը սեւ գերիներուն կեանքէն շտարբերի, վասն զի ինչ ազատութիւն, ինչ կրթութիւն ունի. ուստի կը կարծեմ որ գիւղի քահանայութեան մէջ մարդկութեան օգտակար ծառայութիւն մը կըրնամ ընել Աստուծոյ օգնութեամբ: Այս պատճառաւ մեծ ցաւ կըլլայ ինձ, հայր իմ, եթէ մերժէք այս . . . : — Մի վախնաք, որդեակ, ըսաւ անմիջապէս հայր Տ'Եկրիսեի, ես չեմ ուզեր մաքառիլ մեզնէ բաժնուելու փափաքնաւդդէմ: — Ուրեմն, հայր իմ . . . զիս կարճակէք ուխտերէս: — Աս իշխանութիւն չունիմ այդ բանն ընելու, սիրելի որդեակ, բայց անմիջապէս Հոռմ գրելով մեր ընդհանրական մեծաւորէն հրաման բերել կուտամ: — Շնորհակալ եմ,

հայր իմ : — Աւրեմն , սիրելի որդեակ , քիչ օրէն պիտի ազատիք այդ կապերէն՝ որ ձեզ ծանրր կուգան , եւ այն մարդիկը՝ զորս այդչափ դառնութեամբ կուրանաք , չպիտի դադրին դարձեալ ձեզ համար աղօթելէ . . . որպէս զի Աստուած ձեզ աւելի մեծ սխալանքէ պահպանէ . . . : Դուք զձեզ անջատեալ կը կարծէք մեզնէ , սիրելի որդեակ , բայց մեք ինքզինքնիս ձեզնէ անջատեալ չենք համարիր . վասն զի մեր մէջ հայրական կապակցութեան սովորութիւնն այդպէս չեն խորտակեր : Մեք մեր ձեռնասուէններուն պարտական կը համարինք զմեզ՝ նոյն իսկ մեր անոնց ըրած երախտիքներով . . . : Դուք աղքատ եւ որբ էիք , ձեռք երկնցուցինք ձեզ՝ ոչ միայն զթութեան արժանի ըլլալուդ , այլ եւ ձեր պատուական մայրադրին բեր թեթեւցրնելու համար : — Հայր իմ . . . ըսաւ Քարբիէլ զսպեալ սրտայուզութեամբ , ես ապաշընորհ չեմ : — Աուգեմ հաւատալ որ չէք , սիրելի որդեակ : Նրկար տարիներ հողեւոր եւ մարմնաւոր հաց տուինք ձեզ՝ իբրեւ մեր զաւկին . այսօր մեզ ուրանալ , մեզ թողուլ կուզէք . շատ շաւ . կը հաճինք : Հիմա որ մեզնէ բաժնուելուդ ճշմարիտ պատճառը հասկըցայ , պարտքս է ձեր երդումը քակել : — Ի՞նչ պատճառ է բաժնիդ , հայր իմ : — Աւնդ , սիրելի որդեակ , ձեր երկիւղը կը հասկընամ : Սյսօրուան օրս մեծ վտանգներ կ'ապառնան մեզ . . . քաջ գիտէք : — Վտանգներ մի , հայր իմ , գոչեց Քար-

րիէլ : — Անհնար է , սիրելի որդեակ , որ դուք
չգիտնաք թէ մեր օրինաւոր թաղաւորներուն
մեր բնական պաշտպաններուն անկմանէն ի վեր
յեղափոխական ամբարշտութիւնը եւս քան զեւս
սպառնալից կերպարանք մը կառնու . ամեն տե-
տակ հալածանք կը հանեն մեր դէմ . . . ուս-
տի , սիրելի որդեակ , կը հասկընամ ձեր պատ-
ճառը , որ այսպիսի պարագայից մէջ մեզնէ
բաժնուելու կը հարկադրէ ձեզ : — Հայր իմ ,
դոչեց Քաբրիէլ վիրաւորուելով . դուք այդպէս
չէք խորհիր իմ վրայ . . . չէք կրնար խորհիլ : »

Հայր Տ'էկրինելի՛ առանց Քաբրիէլի բողո-
քանաց ուշ դնելու՝ շարունակեց իր ընկերու-
թեան սպառնացող մտացածին վտանգներուն նը-
կարագիրը , մինչդեռ ընկերութիւնը վտանգի
մէջ չըլլալէ դատ՝ նորէն իր աղդեցութիւնը
ծածկարար ձեռք բերել սկսած էր :

« Ո՛հ , եթէ մեր ընկերութիւնն ամենազօր
ըլլար , ինչպէս որ էր քիչ տարիներ առաջ , ը-
սաւ վերապատուելի հայրը , եթէ այն ընդհա-
նուր ակնածութիւնն ու յարգանքը վայելէր ,
զոր ճշմարիտ հաւատացեալք կը պարտին մա-
տուցանել իրեն՝ առանց ունկն դնելու այն նող-
կալի շարախօսութեանց որովք մեզ կը զրպար-
տեն , թերեւս այն ժամանակ , սիրելի որդեակ ,
ձեր երդումն արձակելու վարանէինք . թերեւս
ձեր աչքը լուսոյն բանալու եւ այդ ճախող մոլո-
րութեան մէջէն ձեզ կորդելու աշխատէինք .
բայց այսօր տկար հարստահարեալ եւ ամեն կող-

մէ սպառնալեաց ներքեւ ըլլալով , մեր պարաքն է եւ մեր գթասիրութիւնը կը պահանջէ որ ձեզ բռնաբար մասնակից չընենք այն վտանգներուն որոցմէ խոհեմութեամբ ազատ մնալ կուզէք : »

Այս խօսքն ըսելով հայր Տ'Եկրինեի երազ նայուածք մ'ուղղեց Ռօտէնի , ան ալ հաւանու դական ակնարկ մ'ըրաւ անհամբեր շարժումով մը՝ որ կարծես թէ « Յառաջ քալէ . . . ճն , յառաջ քալէ » ըսել կուզէր :

Գաբրիէլ ծանրապէս վիրաւորուեր էր . վաստն զի անոր պէս ազնիւ անկեղծ եւ քաջ սիրտ քիչ կը գտնուէր աշխարհի մէջ : Ուստի ընթերցողին կը թողունք դատել թէ իր որոշման այսպէս մեկնութիւնը լաւ թաւն ուրչափ կը վըշտանար :

« Հայր իմ , ըսաւ խռովեալ ձայնիւ եւ աչքերն արտասուօք լցուած . ձեր խօսքերն անուգորուն են , անիրաւ են . . . վասն զի , դիտէք որ ես վատ չեմ : — Ոչ . . . ըսաւ Ռօտէն հայր Տ'Եկրինեի իր կարծ եւ կարուկ ձայնով , եւ արհամարհոտ նայուածքով մը Գաբրիէլն անոր ցուցնելով , ձեր սիրելի որդեակը . . . խոհեմ է : »

Ռօտէնի այս խօսքէն Գաբրիէլ ցնցուեցաւ . իր դժգոյն այտերը թեթեւ կարմրութեամբ դուստորեցան եւ կապոյտ խոշոր աչքերը վեհ զայրութով փայլիլ սկսան . բայց իր քրիստոնէական համբերատարութեամբն՝ ու խոնարհութեամբ այս վայրկենական ցասումը զսպեց , զըլուխը խոնարհեցուց , եւ սրտին վրդովումէն

չկրնալով մէկէն 'ի մէկ պատասխան տալ , լռեց
եւ արտառքը սրբեց : Այս արտառքը չվրիպե-
ցաւ Ռօտէնի աչքէն , որ յաջող նշան մը հա-
մարելով դայն՝ գոհութեան նոր ակնարկ մը փո-
խանակեց հայր Տ'Եկրինելի հետ :

Այս վերջինն այն միջոցին ամենաջերմ խնդ-
րոյ մը դպչելու կը պատրաստուէր . ուստի որ-
չափ որ ինքզինքին տէր էր , թեթեւ մ'այլայ-
լեցաւ՝ երբոր Ռօտէնի ուշադիր նայուածքէն
քաջալերուելով եւ կարծես թէ մղուելով ըսաւ
Գարրիէլի . « Ուրիշ պատճառ մ'ալ կայ՝ որ ձեր
խնդիրը կատարելու կը պարտաւորէ մեզ , սի-
րելի որդեակ . . . այս ալ խիստ փափուկ կէտ
մ'է . . . : Հաւանականաբար իմացաք երէկ ձեր
մայրազրէն թէ գուցէ ժառանգութիւն մը ձեռք
բերելու վրայ էք . . . որուն արժէքն յայտնի
չէ : »

Գարրիէլ մէկէն դլուխը վեր առնելով ըսաւ
հայր Տ'Եկրինելի . « Ննչպէս որ արդէն Պ. Ռօտէ-
նին ըսի , մայրազիրա մի միայն իր խղճի խայ-
թերուն վրայ խօսեցաւ ինձ հետ . . . եւ ես
բնաւ տեղեկութիւնս չունէի այդ ձեր ըսած ժա-
ռանգութեան , հայր իմ : »

Այս վերջին խօսքն այն աստիճան անհող
կերպով մ'ըսաւ նորաստի քահանայն , որ Ռօտէն
նշմարեց :

« Այդպէս թող ըլլայ , ըսաւ հայր Տ'Եկրին-
ելի , դուք չէիք գիտեր . . . կուզեմ ձեր խօս-
քին հաւատալ , թէ եւ ամեն երեւոյթներն հա-

կառակը ցոյց կուտան . . . եւ վերջապէս կը հաստատեն թէ այդ ժառանգութեան խնդիրն ալ մեզնէ բաժնուելնուդ պատճառներէն մէկն է : — Չեմ հասկընար ըսածնիդ , հայր իմ : — Ըսածս խիստ պարզ է . . . ըստ իս , ձեր բաժանումն երկու պատճառ ունի . առաջինն այս է որ մեք սպառնալեաց ներքեւ ենք . . . եւ դուք խոհեմութիւն կը դատիք մեզնէ բաժնըւիլ . . . : — Հայր իմ . . . : — Թողուցէք որ լմնցընեմ , սիրելի որդեակ եւ երկրորդ պատճառին անցնիմ . եթէ սխալ է ըսածս , պատասխան կուտաք : Ահա ասիկ եղելութիւնը : Ժամանակաւ ենթադրութիւն եղեր է թէ ձեր ընտանիքը , որոց ինչ եղած ըլլալը չէք գիտեր , թերեւս ձեզ հարատւութիւն մը ձգած կրնային ըլլալ . ուստի մեր ընկերութենէն տեսած խնամքնուդ փոխարէն՝ այն հաւանական ժառանգութիւնը կը տակ ըրած էիք չէ թէ մեզ . . . այլ աղքատաց , որոց բնական խնամակալն ենք մեք : — Ատկէց ի՞նչ կը հետեւի , հարցուց Քարբիէլ այս յառաջաբանին ուր կայանք գտնելիքը չգիտնալով : — Ատկէց կը հետեւի , սիրելի որդեակ , որ հիմա հանդիստ կեանք վարելու ապահովութիւն տեսնելով . . . կուզէք անշուշտ մեզնէ բաժնուելով ոչնչացնել ժամանակաւ ըրած հրատակնիդ : — Աւելի բացայայտ խօսելով՝ ձեր երդումը կը կոխէք , վասն զի մեք հալածեալ ենք , եւ վասըն զի ձեր հրատակն ետ առնուլ կուզէք , աւելցուց Քոտէն սուր ձայնիւ մը , որպէս թէ

ձիզվիթաց ընկերութեան նկատմամբ Գաբրիէլի
բռնած դիրքը բացորոշ եւ բիրտ կերպիւ մը հա-
մառօտել ուղեւոր :

Այս վատ ամբաստանութիւնը Գաբրիէլ լը-
սելուն պէս՝ մէկէն ձեռքերն ու աչքերը դէպ
երկինք վերցընելով՝ աղեկէղ մորմոքմամբ գո-
չեց . « Ա՛հ , Աստուած իմ . . . Աստուած իմ : »

Հայր Տ'էկրինէի՝ Ռօտէնի հետ նշանական
նայուածք մը փոխանակելէ ետեւ՝ որպէս թէ
անոր կոչտ անկեղծութիւնը կշտամբել ուղեւոր
խիստ ձայնիւ մ'ըսաւ . « Աարծեմ թէ չափա-
զանց հեռուն կերթաք : Մեր սիրելի որդին ձեր
ըսածին պէս վատ նենգութիւն մ'ըրած կըլլար
եթէ իր նոր ժառանգութեան ծանօթութիւն
ունեցած ըլլար . բայց որովհետեւ հակառակը
կը հաստատէ . . . պէտք է հաւատանք . . .
առանց երեւոյթներուն նայելու : — Հայր իմ , ը-
սաւ վերջապէս Գաբրիէլ երեսին գոյնը նետած ,
վրդովեալ , գողահար , եւ իր կսկծագին զայրու-
թը զսպելով , շնորհակալ եմ որ գոնէ ձեր դա-
տողութիւնը կախ կը թողուք . . . : Ոչ , ես
վատ չեմ , վասն զի վկայ է ինձ Աստուած , որ
ես ձեր ընկերութեան վտանգի մէջ ըլլալը չեմ
գիտեր . ոչ , ես նենգաւոր չեմ , ես ընչաքաղց
չեմ , վասն զի վկայ է ինձ Աստուած , որ ա-
ռաջին անգամ հիմա ձեզնէ կը լսեմ , հայր իմ ,
թէ կարելի է որ այս օրերս ժառանգութեան մը
տէր ըլլալու կոչուիմ . . . եւ թէ . . . : — Խօսք
մ'ալ , սիրելի որդեակ . վերջին օրերս դիպ-

ւածով մը տեղեկացայ այդ բանին , ըսաւ հայր
Տ'Էկրինեի Գարրիէլի խօսքն ընդմիջելով : Ձեր
մայրազիրը ժամանակաւ իր խոստովանահօրը
քանի մ'ընտանեկան թուղթեր յանձներ է , որք
յետոյ մեր դպրոցը մտած ժամանակնիդ մեզ ա-
ւանդեցան : Ձեր Ամերիկայէն վերադառնալէն
քանի մ'օր առաջ , ընկերութեան դիւանին դը-
րութիւնները կարգի դրուած ժամանակ այն
թուղթերը մեր վերապատուելի փոխանորդ հօր
աչքին հանդիպեր են , եւ քննուելով իմացուեր է
որ ձեր հայրենի հաւերէն մէկը՝ որ այս տան տէրն
է եղեր , կտակ մը թողուցեր է որ այսօր կէս
օրին պիտի բացուի : Գեռ երէկ իրիկուն մեք
ձեզ անդամ կը կարծէինք մեր ընկերութեան :
Մեր սահմանադրութիւնները կը պահանջեն որ
մեք անձնական սեփականութիւն չունենանք .
դուք ալ այն սահմանադրութեանց հաստատու-
թիւն տուեր էիք մեր խնամարկած աղքատաց ժա-
ռանդութեան համար հրիտակ մ'ընելով . ուստի
չէ թէ դուք , այլ ընկերութիւնը ձեր տեղ իմ
փոխանորդութեամբս իբրեւ ժառանգ պիտի ներ-
կայանար ձեր ժառանգական իրաւանց թուղթե-
րովը , որք ահա հոս իմ քովս են : Բայց հիմա ,
որ դուք մեզնէ կը բաժնուիք . . . ձեզ կիյ-
նայ ներկայանալ . մեք հոս իբրեւ լիազօր ե-
րեսփոխան եկած էինք աղքատաց կողմէն , ո-
րոց դուք ժամանակաւ բարեպաշտաբար թո-
ղուցեր էիք ինչ դոյք որ ապագային մէջ կրնա-
յիք ունենալ . . . : Բայց հիմա՝ ընդհակառակն՝

հարստութեան յուսով ձեր զգացումը կը փոխէք . կամքը ձերն է . ետ առէք ձեր հրիտակը : »

Գարրիէլ հայր Տ'էկրինիի այս խօսքերը վշտադին անհամբերութեամբ մտիկ ընելէ ետեւ , դռչեց . « Գուք , հայր իմ , դուք կը հաւատամք որ ընկերութեան ազնուարար ինձ տըւած կրթութեան փոխարէն երախտասպարսութիւնս ցուցնելու համար ազատ կամօք ըրած հրիտակս ետ առնում : Գուք դիս այնչափ փառ կը կարծէք որ տուած խօսքս ուրանամ՝ չափաւոր ժառանգութիւն մը ձեռք անցունելու յուսով : — Ս,յդ ժառանգութիւնը կրնայ խիստ փոքր ալ ըլլալ՝ խիստ . . . մեծ ալ : — Է՛ն , հայր իմ , թագաւորական հարստութիւն ալ ըլլայ , դռչեց Գարրիէլ ազնիւ եւ խրոխտ անտարբերութեամբ , ուրիշ կերպ չեմ խօսիր , եւ կարծեմ իրաւունք ունիմ պահանջելու որ հաւատաք ինձ : Ահա այս է իմ անխախտ որոշումս . կըսէք թէ ընկերութիւնը փտանդի մէջ է . այդ փտանդներուն սպառնալից ըլլալուն պիտի համոզուիմ . . . ուստի , հայր իմ , այս որոշումս պինդ բռնելով , որ դիս բարոյապէս ձեզնէ կը դատէ , մինչեւ որ ձեր փտանդներուն վերջը չի գայ՝ ձեր քովէն չպիտի մեկնիմ : Իսկ այդ ժառանգութիւնը՝ որուն դիս այնչափ ծարաւի կը կարծէք , բոլորովին ձեզ կը թողում , հայր իմ , ինչպէս որ ժամանակաւ ազատ կամօքս խօսք տուած եմ : Իմ բոլոր փափաքս այս է որ այն դոյքն աղքատաց մխիթարութեան գործած-

ւի . . . : Չեմ գիտեր ինչ է այդ հարստութիւնը , բայց թէ փոքր ըլլայ եւ թէ մեծ՝ ընկերութեան կը վերաբերի , վասն զի խօսքս մէկ է . . . : Ըօի ձեզ , հայր իմ , թէ իմ միակ փառքս է համեստ ժողովրդասպետութիւն մը ձեռք բերել աղքատ գիւղի մը մէջ . . . այն . . . աղքատ , որովհետեւ հոն իմ ծառայութիւններս աւելի օգտակար կրնան ըլլալ : Արդ , հայր իմ , երբ որ մարդ մը՝ որ կենացը մէջ երբէք սուտ խօսած չէ , կը հաստատէ թէ նուազաւոր եւ անշահատէր կեանք մը վարելու կը բաղձայ , այնպիսի մարդ մը կարծեմ թէ ըրած նուէրն աղահուժեամբ ետ առնելու անկարող պէտք է համարուի : »

Հայր Տ'Էկրիսնելի հաղիւ կրնար իր ուրախութիւնը ծածկել , ինչպէս որ քիչ մ' առաջ ալ հաղիւ սրտին տազնապը կրնար ծածկել . բայց եւ այնպէս ինքզինք բաւական հանդարտ ցուցընելով ըսաւ Քարբիէլի . « Ես ալ ձեզնէ ուրիշ կերպ չէի սպասեր , սիրելի որդեակ : » Յետոյ աչք ըրաւ Ռօտէնի որ միջամտէ :

Ռօտէն իր մեծաւորին միտքը հասկընալով՝ վառարանին քովէն ելաւ , եւ Քարբիէլի մօտ երթալով սեղանի մը վրայ կրթնեցաւ , ուր կազամար մ'եւ թուղթ կար . յետոյ իր ջղոտ եւ տափակ ու աղտոտ եղնգաւոր մատներուն ծայրովը մեքենաբար սեղանին վրայ թմբկահարելով ըսաւ հայր Տ'Էկրիսնելի . « Այդ ամենը քարի եւ գեղեցիկ են . բայց ձեր սիրելի որդին իր խոստ-

մանն ուրիշ երաշխաւորութիւնն չտար . . . այլ
միայն . . . երդում մը , որ բաւական չէ : — Պա-
րոնն , գոչեց Գաբրիէլ : — Թողութիւն ըրէք , ը-
սաւ Ռօտէն պաղութեամբ . օրէնքը՝ մեր գոյու-
թիւնը չճանչելով՝ չկրնար նաեւ մեր ընկերու-
թեան համար տրուած նուէրներն ու հրիտակ-
ները ճանչել . . . : Ուստի դուք ալ այսօր տը-
ւածնիդ վաղը կրնաք ետ առնուլ . . . : — Հա-
պա երդումս , պարոնն , գոչեց Գաբրիէլ :

Ռօտէն անոր երեսը նայելով պատասխա-
նեց . « Ձեր երդումը . . . : Բայց դուք յաւիտեան
հնազանդելու երդում ալ տուած էք ընկերու-
թեան . երդում ըրած էք որ յաւիտեան չբաժ-
նուիք անկէ . . . եւ հիմա այդ երդումն ի՞նչ
ծանրութիւն ունի ձեզ համար : »

Գաբրիէլ վայրկեան մը շփոթեցաւ . բայց
քիչ մը ետքն զգալով որ Ռօտէնի ըրած բաղդա-
տութիւնը սուտ էր , հանդարտ ծանրութեամբ
ոտքի վրայ ելաւ , գնաց դրասեղանին առջեւ
նստաւ , եւ դրիչ մ' ու թուղթ առնելով հետեւ-
եալը գրեց .

« Առաջի Աստուծոյ , որ դիտ կը տեսնէ ու
« կը լսէ . եւ առաջի ձեր , վերապատուելի հայր
« Տ'Էկրինելի եւ Պ. Ռօտէն , վկայք իմ երդմանս ,
« կամաւ եւ ազատութեամբ կը նորոգեմ այս
« ժամուս մէջ այն ամբողջ եւ բացարձակ նուի-
« բատութիւնը զոր ըրած եմ ձիզվիթ ընկե-
« րութեան , յանուն վերապատուելի հայր Տ'Էկ-

« րինեիի , իմ բոլոր ունենալիք գոյքս անոր
« թողլով, որչափ արժէք եւ ունենան : Աերդնում
« այս անդառնալի երդումս կատարել , որուն
« դորձադրութիւնը՝ երախտագիտական պար-
« տուց հատուցում մ'եւ բարեօրաշատական պար-
« տականութիւն մը կը համարիմ հողւով եւ
« խղճիւ . եթէ չկատարեմ , վատանուն ճանչ-
« ուիմ :

« Այս հրիտակին նախատակն անցեալ բարե-
« րարութիւններ փոխարինել եւ աղքատաց օգ-
« նութիւն ընել ըլլալով , ապագան՝ ինչ որ ալ
« ըլլայ՝ չկրնար փոփոխել . եւ դիտնալով որ հի-
« մա իմ յօժար կամօք տուած այս խոստումս
« օր մը կրնամ ըստ օրինաց ոչնչացընել տալ ,
« կը յայտնեմ որ եթէ երբէք՝ ինչ պարագայի
« մէջ եւ ըլլայ՝ ետ առնուլ ուղեմ , ամեն պար-
« կեշտ մարդոց արհամարհանաց եւ զղուանայն
« արժանի ըլլամ :

« Ի հաստատութիւն այսմ՝ սոյն խոստմնա-
« գիրը գրեցի 1832 փետրւոյ 13ին , իմ հայրե-
« նի հաւերէս մէկուն կտակին բացուելու ժա-
մանակը :

ԳԱՌՐԻԷԼ ՌԷՆՏՅՆ . »

Յետոյ ոտքի վրայ ելնելով՝ դեռահասակ
քահանայն այս խոստմնագիրը Ռօտէնի տուաւ
առանց խօսք մ'ըսելու : Ռօտէն ուշադրութեամբ
կարդաց՝ առանց ամենեւին տպաւորութիւն մը
դէմքին վրայ ցուցնելու , յետոյ Գաբրիէլի նա-

յնչով ըսաւ . « Գրաւոր երգում մ'է այս . . .
եւ ոչ աւելի :

Գաբրիէլ ապշեցաւ մ'նայ Բօտէնի յանդրդ-
նութեան վրայ , որ կը համարձակէր ըսել թէ
այս խոստմ'նագիրը՝ որուն մէջ ինքն այսպէս
անկեղծ վնասնէն եւ ինքնայօժար կերպով հր-
րիտակը կը նորոգէր , բաւական զօրութիւն
չունէր : »

Բօտէն նախ լռութիւնը խղեց եւ իր սլաղ
անամօթութեամբ հայր Տ'էկրիների դառնալով
ըսաւ . « Երկուքէն մէկը . կամ ձեր սիրելի Գաբ-
րիէլ որդին այս հրիտակը բացարձակապէս վա-
ւերական եւ անդառնալի ընելու դիտաւորու-
թիւն ունի . . . կամ . . . — Պարոն , գոչեց
Գաբրիէլ չկրնալով ինքզինք բռնել եւ Բօտէնի
խօսքը կարելով . այդպիսի վատ կարծիքէ մը
դիտ ալ ինքզինքնիդ ալ խնայեցէք : — Աւրեմն ,
ըսաւ Բօտէն միշտ անզգած դէմքով , որովհե-
տեւ դուք այդ հրիտակը վաւերական եւ ան-
դառնալի ընելու հաստատ որոշում ըրած էք . . .
ի՞նչ առարկութիւն կրնաք ունենալ ըստ օրի-
նայ ապահովուելուն դէմ : — Բնաւ առարկու-
թիւն չունիմ , պարոն ըսաւ Գաբրիէլ դառնու-
թեամբ , քանի որ իմ գրած ու երգմամբ հաս-
տատած խոստումս բաւական չէք համարիր . . . :
— Սիրելի որդեակ , ըսաւ հայր Տ'էկրիների սիրա-
լիր քաղցրութեամբ , եթէ իմ անձնական օգ-
տիս վերաբերեալ հրիտակ մ'եղած ըլլար , հա-
ւատացէք որ ձեր խօսքովը խիտ աղէկ կերաչ-

խաւորուէր . . . : Բայց հոս գործն ուրիշ է .
եւ , ինչպէս որ ըսի ձեզ , ընկերութեան փո-
խանորդ կամ մանաւանդ ձեր վեհանձնական
հրիտակէն օգուտ քաղելիք աղքատաց խնամա-
կալ գտնուելով , պէտք է որ մարդկութեան շա-
հուն համար այս գործն ամեն օրինական երաշ-
խաւորութիւններով ապահովի , որպէս զի մեր
տարաբաղդ խնամարկելոց համար ստուգու-
թիւն մ' եղած ըլլայ եւ ոչ տարտամ յոյս մը ,
զոր կամաց ամենափոքր փոխօխութիւն մը կըր-
նայ տապալել . ասկէց զատ . . . վերջապէս . . .
Աստուած կրնայ ձեզ մէկ ժամէն միւսն առ ին-
քըն կոչել . . . այն ժամանակ մի կրնայ ըսել
թէ ձեր ժառանգները ձեր ըրած երդումը կա-
տարելու փոյթ կունենան :

— Իրաւունք ունիք , հայր իմ , ըսաւ Գաբ-
րիէլ տխրութեամբ . այդ մահուան պարագայն
չէի մտածած . . . որ շատ հաւանական է : »

Այն միջոցին Սամուէլ սենեկին դուռը բա-
նալով ըսաւ . « Պարոններ , նօտարն եկաւ .
կրնամ հոս բերել : Ժամը ճիշդ տասնին տանը
դուռը պիտի բացուի ձեզ : — Գոհ կըլլանք Պ.
նօտարը տեսնելով , ըսաւ Ռօտէն , մանաւանդ
որ հետը խօսելիք ալ ունինք . հաճեցէք աղա-
չել իրեն որ հոս հրամէ : — Նրժամ իմացնեմ
իրեն , պարոն , ըսաւ Սամուէլ դուրս ելնելով :
— Ահա հիմա նօտար մ' ալ ունինք , ըսաւ Ռօ-
տէն Գաբրիէլի . թէ որ միշտ նոյն դիտաւորու-
թեան վրայ էք , կրնաք այս պաշտօնէին առ-

ջեւ ձեր հրիտակը կանոնաւորել , եւ ապագայ մեծ բեռէ մ'ազատիլ : — Պարոն , ըսաւ Չարիէլ , ինչ որ ալ ըլլայ , ես առաւել աննահանջելի կերպով ինքզինքս կապուած կը ճանչեմ այս երգմնագրով , զոր կաղաչեմ որ ձեր քով պահէք , հայր իմ , — եւ թուղթը հայր Տ'Էկրինելի տուաւ — քան թէ այդ ստորագրելիք օրինական խոստմնագրովս » յաւելցուց Ռօտէնի դառնալով : — Նռեցէք , սիրելի որդեակ , ահա նօտարն եկաւ » ըսաւ հայր Տ'Էկրինելի :

Արդարեւ նօտարը սենեակէն ներս մտաւ : Այս պաշտօնական անձը Ռօտէնի Չարիէլի եւ հայր Տ'Էկրինելի հետ խօսակցած միջոցին՝ ընթերցողն որմափակ տան ներսի կողմը տանինք :



ԳԼՈՒԽ Զ .

ԿԱՐՄԻՐ ԴԱՋԼԻՃԸ

Ինչպէս որ Սամուէլ ըսած էր , տանը դուռը դատաստարտող պատը , կասկարեայ տախտակն եւ երկաթէ շրջանակը քակուելով քանդակազարդ կաղնիէ դրան փեղկերն երեւան ելան նոյն անտխեղծ վիճակին մէջ՝ ուր կը դանուէին այն օրը որ օղին ու ժամանակին աղդեցութենէն ազատ մնալու կերպով փակուէր էին : Գործաւորները պատին քակտումն աւարտելէ ետեւ

դրան անջեւի պատշգամին վրայ կեցեր՝ իրենց
վրայ հսկողութիւն ընող նօտարի դրագրին հետ
անժոյժ հետաքրքրութեամբ դրանք բացուելուն
կ'ապասէին . վասն զի կը տեսնէին որ Սամու-
էլ՝ բանայիներու մեծ արցակ մը ձեռքը՝ պար-
տէզին կողմէն ծանր ծանր կուգար :

« Հիմա , բարեկամք , ըսաւ ծերուկը եր-
բոր պատշգամին սանդուղին տակը հասաւ .
ձեր դործը լմնցած է . պարոն դրագրին մե-
ծաւորը ձեր վարձքը պիտի վճարէ . ուստի
պէտք է որ ձեզ փողոցին դուռը տանիմ որ
դուրս ելնէք երթաք : — Ի՞նչ կըսէք բարեմիտ
ծերուկս , գոչեց դրագիրը , չէք մտածեր , ահա
ամենէն հետաքրքրաշարժ վայրկենին հասանք .
այս խեղճ որմնագիրներն ու ես անհամբերու-
թեամբ կը փափաքինք որ այս խորհրդածածուկ
տան ներսի կողմը տեսնենք , եւ դուք անխրդ-
ճարար ճանրել կուղէք մեզ անհնարին
է : — Շատ կը ցաւիմ որ այսպէս ընելու
պարտաւորուած եմ , պարոն . վասն զի նախ ես
միայնակ ներս պիտի մտնեմ , եւ յետոյ ժառանգ-
ները պիտի մտնեն կտակը կարդալու : — Բայց
նվ տուաւ ձեզ այդ ծաղրելի եւ բարբարոս հը-
րամանը , գոչեց դրագիրը զարմացմամբ եւ գրծդ-
մընելով : — Հայրս , պարոն : — Անշուշտ
չարդելի է հօր մը հրամանը . բայց կը խնդրեմ ,
ազնիւ պահապան , պատուական պահապան ,
այդչափ խիստ մի ըլլաք , ըսաւ դրագիրը . թող
տուէք որ դոնէ անգամ մը դոնէն ներս նայինք :

— Այո՛ , այո՛ , պարոնն , անդամ մը ներս նայինք ,
աւելցուցին որմնադիրներն աղերսաւոր դէմ-
քով : — Արդարեւ , չեմ ուզեր ձեր խնդիրը մեր-
ժել , պարոններ , պատասխանեց Սամուէլ , բայց
մինչեւ որ ես մինակ չմնամ՝ այս դուռը չպիտի
կրնամ բանալ : »

Որմնադիրները ծերուկին անդրդուելի որո-
շումը տեսնելով , տխրութեամբ սանդուղէն վար
իջան . բայց գրագիրը մեկնիլ չուզելով գոչեց .
« Ես մեծաւորիս պիտի սպասեմ , առանց անոր
դուրս չեմ ելներ այս տունէն . քանզի կրնայ
պէտք ունենալ ինձ . . . ուստի թէ՛ այս պա-
տըշգամին վրայ կենամ եւ թէ՛ ուրիշ տեղ , ձեզ
փոյթ չէ , բարի ծերուկս . . . : »

Գրագրին աղերսանքն ընդմիջեցաւ իր մե-
ծաւորէն , որ բակին ծայրէն ստիպաւ զինքը
կը կանչէր գոչելով . « Պարոն Բիսթօն , , պա-
րոն Բիսթօն , հոս եկէք շուտով : — Ի՞նչ պիտի
ընէ , ըսաւ գրագիրը բարկանալով , այնպիսի
միջոցի մը մէջ զիս կը կանչէ , ուր թերեւս պի-
տի կրնայի բան մը տեսնել . . . : — Պարոն
Բիսթօն , գոչեց նորէն ձայնը մօտենալով , չէք
լսեր , ձեզ կը կանչեմ : »

Մինչդեռ Սամուէլ որմնադիրներուն առջեւն
ինկած փողոցին դուռը կը տանէր , գրագիրը տե-
սաւ որ թանձրախիտ ծառոց մէջէն իր մեծա-
ւորը բաց դիտով եւ խուճապեալ դէմքով կը վա-
ղէր կուզար . ուստի պարտաւորեցաւ ահամայ
վար իջնել պատշգամէն եւ նօտարին քով երթալ .

« Պարոն , ըսաւ Պ. Տիւմէնիւ , ժամէ մը 'ի վեր ձեզ կանչելով ձայնս մարեցաւ : — Տէր իմ , չլսեցի , ըսաւ Պ. Բիսթօն : — Խուլ էք ուրեմն . . . վրայնիդ ստակ ունիք : — Այո , պատասխանեց դրազիրը դարմացմամբ : — Վազեցէք շուտով դրոշմաթուղթի ամենէն մերձակայ դրասենեակէն չորս դրոշմաւոր մեծ թուղթ բերէք վաւերագրի համար . Օն , վազեցէք , ժամանակ չկայ կորսնցնելու : — Եթեամ , տէր իմ , ըսաւ դրազիրն յուսահատ տխրութեամբ տանը դրանը հայելով : — Բայց աճապարեցէք , Պ. Բիսթօն , կրկնեց հօտարը : — Տէր իմ , չեմ գիտեր թէ հոս մօտերը դրոշմաւոր թուղթ ուր կրնամ գտնել : — Ահա պահապանը , անոր հարցուցէք , անշուշտ կը գրուցէ ձեզ :

Սամուէլ որմնադիրները մինչեւ փողոցին գուռը տանելէ ետեւ՝ դարձեր կուգար :

Պարոն , ըսաւ անոր հօտարը , այս կողմերը դրոշմաւոր թուղթ ուր կը գտնուի : — Հոս , մօտը , պարոն , Ռիւ-Վիէյլ-Տիւ-Թանրլ փողոցը թիւ 17 ծխավաճառին խանութը : — Կը լսէք , պարոն Բիսթօն , ըսաւ հօտարն իր գըրագրին . վազեցէք շուտով , վասն զի պէտք է որ հիմա՝ կտակը գեռ չբացուած՝ վաւերագիրը չխնուի : — Շատ աղէկ , տէր իմ , ահա կերթամ » պատասխանեց դրազիրը գծկամակ դէմքով , եւ իր մեծաւորին ետեւէն երթալ սկսաւ , որ շտապով սենեակը դարձաւ՝ ուր Ռօտէն Գարրիէլ եւ հայր Տ'էկրինեի իրեն կ'սպասէին :

Այս միջոցին, Սամուէլ՝ պատշգամբին աստիճաններէն վեր ելնելով՝ տանը դրան առջեւ հասաւ, որ՝ ինչպէս արդէն ըսինք՝ արդեւափակ ընող քարերէն երկաթէն ու կապարէն ազատելով երեւան ելած էր: Մերունիին սիրտը շարժեցաւ երբոր ձեռքի տրցակին մէջ դրան բանալին գտնելով կղզայանքին մէջ խօթեց եւ դուռը ծղխնիներուն վրայ դարձունելով բացաւ:

Կակոյն խոնաւ ու պաղ հով մ'երեւին զարկաւ, ինչպէս որ ստորերկրեայ նկուղ մը կամ մթերանոց մը մէկէն 'ի մէկ բացուած ժամանակ կը պատահի: Գուռը վերստին ներսէն խրնամով գոցելէ ետեւ, հրեայն յառաջ գնաց ընդարձակ դաւթի մը մէջ՝ որ դրան կամարին վրայ կիսաբոլորակ պատուհանէ մը լոյս կառնուր՝ ապակիներն իրենց թափանցկութիւնը կորուսեր անսխալ եւ անողորկ քարերու երեւոյթաւեր էին: զեափնը սեւ ու ճերմակ քառակուսի մարմարներով յատակեալ էր: Գաւթին ճակատը մեծ սանդուղ մը կար որ առաջին դասիկոնը կը հանէր: Պատերը՝ որ յղկեալ ու փայլուն քարերով պատած էին՝ հնութեան կամ խոնաւութեան երեւոյթ մը չունէին: սանդուղին երկաթէ վանդակաթեւերը բնաւ ժանդոտած չէին, եւ առաջին աստիճանին վրայի կողմէն կարծրակիճէ սեան մը փակած էին, որուն վրայ սեւ մարմարէ արաբի արձան մը կար՝ ձեռքն աչտահակ մը բռնած: Արձանը տարօրինակ երեւոյթ մ'ունէր. աչքին բիբերը ճերմակ մարմարէ էին:

Հրէին ծանրաքայլ սանաճայնը դաւթին
բարձր գմբեթին ներքեւ կը հնչէր : Կահակ
Սամուէլի թողը տխուր տպաւորութիւն մ'ըզ-
գաց խորհելով որ հարիւր յիսուն տարի առաջ
անշուշտ իր հաւին քայլերն ամենէն վերջը հըն-
չեր էին այս տան մէջ՝ երբոր դռները գոցեր
դուրս ելեր էր : Վասն զի այն հաւատարիմ
բարեկամը՝ որուն վրայ Պ. Տը Ռէնքօն կեղծ վա-
ճառմամբ տունը դարձուցած էր, ժամանակէ
մ'ետքը դայն Կահակ Սամուէլի անուանը վրայ
դարձուցեր էր, եւ ան ալ որդւոց յորդի իր
դաւակներուն թողուցեր էր իր բուն ժառան-
գութեանը պէս :

Այս մտածութեան վրայ կաւեչնար նոյն
առաւօտուն տանը վրայի պատշգամբին եօթն
լուսամուտներուն մէջէն երեւցած լոյսին դէպ-
քը . ուստի ծերունին՝ իր անյողդողդ բնառ-
ութեան հակառակ՝ ցնցում մ'ըզգաց երբոր իր
տրցակէն երկրորդ բանալի մ'առնելով որուն
պիտակին վրայ Բանալի Կարօր Դահլէն դրուած էր՝
երկփեղկեան մեծ դուռ մը բացաւ, որ ներսի
բնակարանները կը տանէր : Այս մեծ գահլիճը՝
քիչ մ'առաջ բացուած միակ պատուհանէն լոյս
կառնուր . պատերը դամասկեան ծիրանեգոյն
բեհեզով պատած էին, որուն գոյնը բնաւ չէր
աւրուած . դետինը Տաճկաստանի հաստ գորդ
մը փռուած էր . Նուզովիկոս ԺԳ. ի դարուն
խիտ ոճովը շինուած ոսկեզօծ փայտէ թիկնա-
թռններ պատերուն առջեւ կարդաւ շարուած

էին : Ներս մտնելու դրան դէմ երկրորդ դուռ
մը կար՝ որ ուրիշ սենեկի մը մէջ կը բացուէր :
Գուռներուն փեղկերը ինչպէս նաեւ ձեղունը
պատող շրջանակը ոսկեղօծ թուխ դրուագնե-
րով զարդարուած սպիտականերկ փայտէ էին :
Գրան երկու կողմը արոյրով ու անագով դր-
ւագեալ երկու պատուանդաններ կային՝ վրայ-
նին երկնագոյն մեծ ծաղկակաշխեր դրուած :
Պատուհանը վերջաւորներով պճնեալ դամաս-
կեան հաստ բեհեզէ վարագոյրներ ունէր , որոց
վրայ կամարածեւ երիզ մը կար ծայրերը մետաք-
սեայ ծոպերով երկու կողմէն կախուած . պա-
տուհանին դիմացը կապոյտ մարմարէ վառարան
մը կար դրչաքանդակ պղնձէ ձողակներով դար-
դարուած : Շքեղ ճրագարաններ եւ միւս կա-
հերուն ոճով ժամացոյց մը վենետիկեան հայելույ
մը մէջ կը ցտլային : Բոլորչի մեծ սեղան իմը՝
կարմիր թաւիչով ծածկուած՝ դահլճին մէջ տեղը
դրուած էր :

Սամուէլ՝ սեղանին քով երթալով ճերմակ
մագաղաթի կտոր մը տեճաւ՝ վրան այս խօսքը
դրուած .

« Այս դահլճին մէջ պիտի բացուի կտակա .
« միւս սենեակներն ու յարկերը դոց պիտի մը-
« նան մինչեւ որ որ իմ վերջին կամացս ընթեր-
« ցունն աւարտի : Մ. ՏԸ Ռ. »

Այն , ըսաւ հրեայն վրդովեալ սրախ այս
հինաւուրց տողերը նկատելով , այդ պատուէրը
հայրս ալ աւանդեր էր ինձ . վասն զի կերելի

Թէ այս տան միւս սենեակներուն մէջ ալ այնպիսի բաներ կան՝ որոց Պ. տը Ռէնբօն մեծ յարգ կուտար՝ ոչ թէ անոնց նիւթական արժէքին՝ այլ անոնց սկզբանը պատճառաւ, ինչպէս նաեւ կերելի որ Սոյ Գահլէն ալ տարօրինակ եւ խորհրդաւոր բան մ'է :

« Բայց, աւելցուց Սամուէլ տառատօկին գրպանէն սեւ կաշիով սրատած եւ պղինձ ճարմանդէ փոքրիկ փականքով կղպուած տուճար մը հանելով, եւ բանալին վրայէն հանելէ ետեւ սեղանին վրայ դնելով, ահա մատուկին մէջ գանուած արժէքներուն հաշուեցուցակը, որը ժառանգներուն գալէն առաջ հոս բերելու պատուէր եղած է ինձ : »

Խոր լռութիւն կը տիրէր գահլէին մէջ երբոր Սամուէլ տուճարը սեղանին վրայ դրաւ : Յանկարծ ամենաբնական եւ սակայն ամենազարհուրելի իրողութիւն մը զինքը մտածութեանէն արթնցուց : Սերձակայ սենեակէն ժամահար զանգակի սուր եւ յստակ հնչիւն մը լսեց որ ծանր ծանր ժամը տանն դարկաւ . . . :

Արդարեւ ժամը տանն էր :

Սամուէլ մշտնջենաւոր շարժման հաւատալու չափ տխամար չէր, այսինքն գիտէր որ ժամացոյց մը հարիւր յիսուն տարիէ 'ի վեր չէր կրնար բանիլ : Այս պատճառաւ դարմացմամբ եւ սարսափով հարցուց ինքնիրեն թէ ինչպէս եղեր էր որ ժամացոյցին ճօճանակն այսչափ տարիներէ 'ի վեր չէր դադրեր, եւ մանաւանդ այսպէս

Տշղութեամբ ներկայ ժամը կը հնչէր : Յերու-
նին՝ սրտատանջ հետաքրքրութեամբ յուզեալ
քիչ մնաց որ պիտի երթար այն սենեակը մրա-
նէր , բայց հօրը բացորոշ պատուէրները յիշե-
լով , որք Պ. Տը Ա.էնքօնի թողուցած վերոյիշ-
եալ քանի մը տողերուն մէջ ալ կրկնուած է-
ին , դրանը քով կանգ առաւ եւ ամենախո-
րին ուշադրութեամբ ականջ դրաւ : Բայց բան
մը չլսեց՝ բայց 'ի ժամացոյցի դանդակին վերջա-
նալու վրայ եղող թրթռումէն : Այս տարօրինակ
դէպքին վրայ երկար խորհելէ ետեւ , Սամու-
էլ տանը վրայի պատշգամին լուսամուտնե-
րուն մէջ նոյն առաւօտուն տեսնուած կարգէ
դուրս լուսափայլութեան հետ բազդատելով եղ-
բակացուց որ այս երկու դէպքերուն մէջ յա-
րաբերութիւն մը կար :

Յերունին թէ եւ չէր կրնար այս դարմա-
նալի երեւոյթներուն ճշմարիտ պատճառը դրա-
նել , գոնէ տանն ստորերկրեայ նկուղներէն հե-
ռաւոր տեղերու հետ հաղորդակցութեան ճան-
քաներ կեցած ըլլալուն աւանդութիւնը յիշելով
կը մեկնէր թէ գաղտնի եւ անձանօթ մարդիկ
քանի մ'անգամ կրցեր էին այս տունը մտնել :
Այս խորհրդածութիւններով դբաղած՝ Սամուէլ
վառարանին մօտ գնաց , որ ինչպէս ըսինք՝
պատուհանին ուղղապէս դիմացն էր : Արեգա-
կան պայծառ ճառագայթ մը՝ ամպերէն դուրս
թափանցելով եկաւ երկու մեծ պատկերներու
վրայ դարկաւ՝ որք վառարանին երկու կողմը

դրուած էին . հրեայն դեռ չէր նշմարած այն պատկերները , որք բնական մեծութեամբ ոտքի վրայ նկարուած այր եւ կին մ'էին :

Այս պատկերաց ընտիր եւ միանգամայն զօրաւոր գոյնէն եւ ընդարձակ ու կորովակի գծուածքէն դիւրաւ կը հասկցուէր որ վարպետի ձեռքէ ելած էին . ասկէց զատ ճարտար նրկարիչ մը ներշնչելու համար ասոնցմէ գեղեցիկ եւ յարմարաւոր տիպարներ գծուարաւ կրնար գտնուիլ :

Ահնր քսան եւ հինգէն երսուն տարեկան կերեւէր . ոսկեփայլ թուխ եւ խիտ վարսեր իր սպիտակ աղնիւ եւ բարձր ճակատը պսակած էին . գլխուն զարդարանքն՝ ասոնց նմանելու այն գտակին զոր Սէվինեէ տիկինը նորաձեւութեանց կարգ անցուցած էր Նուգովիկոս ԺԳ . ի օրով , ընդհակառակն Վէրօնէղի քանի մը պատկերներուն մէջ տեսնուած նշանաւոր գլխազարդերը կը յիշեցնէր , որք այսերը շրջանակաձեւ պատող կոհակաձեւ լայն ապարօշէ մ'եւ գլխուն ետեւէն պսակաձեւ բարձրացած մազերու հիւսքէ մը կը բաղկանային . արձակ յօնքեր՝ բոցափայլ շափիղաջներու պէս կապուտակ եւ խոշոր աչքերուն վրայ բարձրացած էին . նայուածքը միանգամայն խրոխտ ու տխուր էր . քիթը՝ խիտ բարակ էր եւ թեթեւապէս ծաւալեալ ունդերով կը վերջանար . բերանը գրբեթէ վշտահար կէս ժպիտով մը թեթեւ կերպիւ ձկտեալ էր . երեսը երկայն ձուածեւ էր .

գոյնը դժգոյն ձերմակ էր եւ հաղիւ այտերուն
վրայ թեթեւ վարդի գոյն մ'ունէր . պարանո-
ցին ձեւն ու գլխուն դիրքը բնածին ծանրութեան
եւ չնորհաց հազուադէպ խառնուրդ մը ցոյց
կուտային . սեւ ու փայլուն բեհեղէ տեսակ մը
չըջաղգեստ , ինչպէս կըսեն՝ կուտական ձե-
ւով շինուած , մինչեւ ուսերուն արմատը կը ծած-
կէր , եւ բարակ ու բարձր իրանին ձեւը գեղեց-
կապէս նկարելէ ետեւ մինչեւ ոտքերուն վրայ
կիջնէր , որք այս զգեստին քիչ մ'երկայն ծալ-
քերովը բոլորովին ծածկուած էին :

Ս.յս կնոջ կեցուածքը լի էր աղնուութեամբ
եւ պարզութեամբ : Նուսաւոր եւ սպիտակ
գլուխը պայծառապէս կորոշուէր մութ կապոյտ
երկնքի մը վրայ , որուն հորիզոնը քանի մը ծի-
րանեխառն ամպերով պատած էր , եւ ամպերուն
վրայ ալ հեռաւոր եւ ստուերի մէջ ծածկուած
բլրոց կապուտակ կատարներ կերեւէին : Պատ-
կերին դիրքը՝ ինչպէս նաեւ անոր ուրուազ-
րին ջերմ եւ յատակ գոյները՝ որք անխառն կեր-
պով կորոշուէին հեռաւոր յատակագրերէն ,
գիւրաւ գուշակել կուտային որ այս կինը բարձր
տեղ մը կեցած՝ բոլոր հորիզոնին վրայ կը նայէր :
Գէմքը խոկուն էր եւ բեկեալ . մանաւանդ իր
նայուածքին մէջ՝ զոր կէս մը դէպ երկինք վեր-
ցուցած էր՝ այնպիսի աղերսական եւ համբերա-
տար տխրութիւն մը կար՝ որ անհնար կը թուէր
նկարի մը մէջ ճշգիւ պատկերացնել :

Վառարանին ձախ կողմը միւս . պատկերը

կը տեսնուէր նոյն կորուսով նկարուած :

Այս երկրորդը երսուն կամ երասուն ու հինգ տարեկան մարդ մ'էր : Սեւաթոյր լաջն վերարկու մը վրան առած էր ազնուաբար, որուն ներքեւ սեւ բաճկոն մը կը տեսնուէր մինչեւ պարանոցը կոճկուած եւ վրան ալ ձերմակ քառակուսի օձիք մը դարձած : Ղեղեցիկ եւ վեհ գլուխ մ'ունէր, որ նշանաւոր էր զօրեղ եւ լուրջ գիծերով, բայց եւ այնպէս վշտակրութեան համբերատարութեան եւ մանաւանդ անպատմելի բարեսրտութեան սքանչելի նկարագիր մ'ունէր. մաղերը, ինչպէս նաեւ մօրուքն ու յօնքը սեւ էին . բայց վերջինը՝ բնութեան մէկ դարմանայի կամահաճութեամբ՝ փոխանակ երկու արտեւանանցը վրայ դատ դատ կ'ամարներ ձեւացնելու, մէկ քունքէն միւսն երկնցած էր ազդեղնաձեւ, եւ կարծես թէ մարդուն ճակտին վրայ սեւ նշան մը գծած էր : Պատկերին խորութիւնը մերկայացնէր կը ներկայացնէր . բայց քանի մ'տպառածներէ անդին ալ ծով մը կը տեսնուէր, որ կարծես թէ հորիզոնին մօտ սեւ առջակերու հետ խառնուած էր :

Արեւն իր ճառագայթներն ուղղապէս այս երկու ղեղեցիկ պատկերաց վրայ դարկած ըլլալով անոնց շքեղութիւնը կաւելցնէր, եւ կարծես թէ զանոնք անգամ մը տեսնողն անհնար էր որ յաւիտեան մտնար :

Սամուէլ իր խոր մտածութենէն արթննալով եւ աչքը դիպուածով պատկերներուն վր-

րայ դարձրնելով անոնց կենդանի կերպարանքէն դարնուեցաւ . . . :

« Ի՛նչ աշխու եւ գեղեցիկ դէմքեր են , դոչեց աւելի մօտերնին երթալով որպէս զի լաւ գննէ : Որով կենդանագիրն են արդեօք . Ռէնքօնի ընտանեաց պատկերները չեն . վասն զի հայրս կըսէր թէ ամենն ալ սգոյ դահլիճին մէջ են . . . : Աւանդ , աւելցուց ծերունին , երեսնուն վրայ տպաւորուած խոր տխրութեան նաշելով կարծես թէ ասոնք ալ սգոյ դահլիճը դըրուելու արժանի են : » Եւ վայրկեան մը լուռ կենալէ ետեւ՝ ըսաւ . « Զամանք ամեն բան պատրաստել այսօրուան մեծ ժողովին համար . . . վասն զի ժամը տասն դարկաւ : »

Այս ըսելով Սամուէլ ոսկեղօծ փայտէ թիկնաթոռները բոլորչի սեղանին շուրջը շարեց . յետոյ խոկուն դէմքով մ'ըսաւ : « Ժամանակն եկաւ , եւ դեռ հաւուս բարերարին ժառանգներէն մարդ երեւան չելաւ բաց 'ի դեռահատակ քահանայէ մը՝ որ հրեշտակի դէմք ունի . . . : Արդեօք Ռէնքօնի սերունդէն այս երիտասարդը միայն մնացած է . . . եւ այն ալ քահանայ . . . որով այս ազգատոհմը բոլորովին պիտի մարի : Աերջապէս , ահա ժամանակն եկաւ դուռը բանալու , որպէս զի կտակը կարգացւի . . . : Բերասրէ նօտարը հոս պիտի բերէ . . . : Դուռը կը դարնուի . . . ան է . . . : Սամուէլ վերջին անգամ մ'ալ նայելով այն սենեկին դըրանը՝ ուր ժամը տասն դարկեր էր , շատապով

դուրս ելաւ դաւթին դուռը բանալու , որուն
ետեւը մարդոց խօսակցութեան ձայն կը լսուէր :

Բանալին երկու անգամ փականքին մէջ
դառնալով դրան երկու փեղկը բացուեցաւ :
Սամուէլ տխրութեամբ տեսաւ որ դրան առ-
ջեւի պատշգամին վրայ Գաբրիէլ էր միայն՝
ձախ կողմը Ռօտէն եւ աջ կողմն ալ հայր Տ'Էկ-
րինեի : Բերսարէ ալ՝ որ անոնց առաջնորդ ե-
ղեր էր , նօտարին հետ Գաբրիէլի ետեւը կե-
ցած էին :

Սամուէլ հառաչք մ'արձակեց , եւ դրան
սեմին վրայ խոնարհութիւն ընելով ըսաւ . « Պա-
րօններ . . . ամեն բան պատրաստ է . . .
կրնաք ներս մտնել . . . : »



ԳԼՈՒԽ Է.

ԿՏԱԿԸ

Երբոր Գաբրիէլ , Ռօտէն եւ հայր Տ'Էկրինե-
ի կարմիր դահլիճը մտան , երեքն ալ տարբեր
խորհուրդներով զգածեալ էին :

Գաբրիէլ , դժգոյն եւ տխուր , դժնդակ
անհամբերութիւն մը կ'զգար : Կուզէր ժամ ա-
ռաջ դուրս ելնել այս տունէն , եւ ինքզինք
մեծ բեռէ մ'ազատած կը համարէր քանի որ
նօտարին առջեւ շինուած վաւերագրով եւ

ամեն օրինական երաշխաւորութեամբք իր ամեն իրաւունքներէն հրաժարեր եւ հայր Տ'Եկրինեի տուեր էր : Մինչեւ այն ժամանակ նորաստի քահանային մտքէն չէր անցեր , որ հայր Տ'Եկրինեի խաւարային դարանադործութիւն մը դուրս հանելու համար գինքը խնամեր եւ սրբապիղծ ստութեամբ մ'իր կոչումը բռնագատեր էր : Ղարբիէլին այսպէս իր ժառանգական իրաւունքներէն հրաժարումը չէ թէ չափազանց փափկասրտութեան զգացումով մ'էր . այլ վասն զի շատ տարիներ առաջ իր ազատ կամօք այս հրիտակն ըրած էր , եւ հիմա ետ առնուին իրեն սնարծան դործ մը կը համարէր : Արդէն իբրեւ վատ կասկածուիլը խիստ դառնօ կէր էր իրեն . . . եւ բնաւ յանձն չէր առնուր իբրեւ ընչաքաղց բամբասուիլ : Ասկէց կրնայ հասկցուիլ դեռահասակ քարոզչին ինչ հազուագիւտ եւ գերազանց բնութեան տէր ըլլալը , որուն երկիւղած ուղղութիւնը չէր կրցեր աւրուիլ ճիշդ իթներէն ստացած ապականարար եւ մահաբեր դաստիարակութեամբ : Այլ ինչպէս որ ցուրտը երբեմն նեխութենէ կը պահպանէ , այն սառնային միջնորդան ալ որուն մէջ Ղարբիէլ իր մանկութեան եւ պատանեկութեան մէկ մասն անցուցած էր , բարերազգարար թմրեցուցած էր միայն եւ ոչ թէ խանդարած իր ազնիւ բարեմասնութիւնները , որք աղատութեան կենդանարար ու ջերմ օդը չնչելուն պէս ողկւորեր էին :

Հայր Տ'Եկրինեի՛ Գարբիէլէն աւելի դեղ-
նած ու վրդոված էր, բայց սրտին տազնա-
պը մեկնելու եւ արդարացնելու ջանացեր էր
ըսելով թէ պատճառը իւր սիրելի որդւոյն
այնպէս անակնկալ կերպով ճիզվիթ ընկերու-
թենէն բաժնուիլն էր: Աօտէն՝ միշտ հանդարտ
եւ միշտ իր զգացումն ու կիրքը ծածկելու կա-
րող, սրտովը կը բարկանար հայր Տ'Եկրինեի
վրդովման վրայ, որ Գարբիէլէն պակաս վրա-
տահամիտ մարդու մը կրնար ծանր կասկածներ
ազդել. սակայն Աօտէն ալ՝ իր առերեւոյթ պաղ-
արիւնութեան հակառակ՝ թերեւս իր մեծաւո-
րէն աւելի տատամսոտ անհամբերութեամբ այս
ամենակարեւոր գործին յաջողութեանը կ'սպա-
սէր. Սամուէլ խիստ սրտաբեկ կերեւէր . . .
վասն զի Գարբիէլէն զատ ուրիշ բնաւ ժառանգ
մը չէր ներկայանար . . . : Տարակոյս չկայ որ
ծերունին մեծ համակրութիւն կ'զգար երի-
տասարդին վրայ. բայց այս երխտասարդը քա-
հանայ մ'էր, որուն հետ պիտի մարէր Աէն-
բօնի ազգատոհմին անունը, եւ այն անհուն
հարստութիւնը՝ որ այնչափ խնամով ու աշխա-
տութեամբ զիջուած էր, կտակողին բաղձա-
նաց համեմատ չպիտի բաժնուէր կամ գործած-
ւէր: Այս տեսարանին այլ եւ այլ դերասաննե-
րը բոլորչի սեղանին շուրջը կանգնած էին:

Երբոր նօտարին հրաւիրմամբը նստելու վը-
րայ էին, Սամուէլ սեւ կաշիով պատած տու-
մարը նօտարին ցուցնելով ըսաւ. « Պարոն, ինձ

հնաման կղած է որ այս տուժարը հոս գնեմ .
գոց է . երբոր կտակը կարդացուի , բանալին
ձեզ պիտի տամ : — Արդարեւ այդ անօրէնու-
թիւնը նշանակուած է կտակին հետ դրուած
այս ծանօթութեան մէջ , ըսաւ Պ . Տիւմէնիլ ,
երբոր 1682 ին՝ Փարիզի Շաթլէին նօտար եւ
թագաւորին խորհրդական Պ . Թօմա Նք Սըմէլիէի
գրատունը յանձնուեցաւ , որ այն ժամանակ
Բլաս—Ռօայալ հրատարակը թիւ 13 տունը կը
բնակէր :

Այս ըսելով Պ . Տիւմէնիլ կարմիր սեկէ թըղ-
թապանակի մը մէջէ մագաղաթեայ լայն պատ-
եան մը հանեց՝ որ շատ հին ըլլալուն համար
դեղնած էր . նոյն մագաղաթին հետ մետաք-
սեայ թելով ծանօթութիւն մը կապուած էր
նոյնպէս մագաղաթի վրայ :

« Պարոններ , ըսաւ նօտարը , եթէ կը հա-
ճիք նստիլ , այս ծանօթութիւնը պիտի կար-
դամ ձեզ որ կտակին բացուելուն համար կա-
տարուելիք արարողութիւնները կը կանոնաւո-
րէ : »

Նօտարը , Ռօտէն , հայր Տ'Էկրինեի եւ Գար-
րիէլ նստան : Նորատի քահանայն՝ կրնակը վա-
ռարանին դարձուցած ըլլալով երկու պատ-
կերները չէր կրնար տեսնել :

Սամուէլ՝ նօտարին հրաւիրանաց հակառակ՝
անօր թիկնաթոռին ետեւը ոտքի վրայ կեցաւ :

Նօտարը հետեւեալ ծանօթութիւնը կար-
դաց .

« 1832 փետրվար 13ին կտակագիրս Սէն
« Ծրանսօս փողոցը 3 թիւ տունը պիտի տարուի :

« Ժամը ճիշդ 10ին , տանը դեանայարկին
« կարմիր դահլիճը պիտի բացուի իմ ժառանգ-
« դացս , որք անշուշտ երկար ժամանակէ 'ի
« վեր Փարիզ հասնելով այն աւուր պիտի սպա-
« սեն , եւ մինչեւ այն ժամանակ իրենց ժա-
« ռանգութեան ապացոյցները վաւերացնել տա-
« լու միջոց կուենենան :

« Երբոր գումարուին , կտակս պիտի կար-
« դացուի , եւ կէս օրը դարնելուն պէս ժա-
« ռանգութիւնը պիտի գոցուի յօգուտ անոնց՝
« որ այս օրէն սկսեալ մինչեւ հարիւր յիսուն
« տարի՝ ինչպէս կը յուսամ՝ աւանդութեամբ
« որդւոց յորդի ընտանեացս մէջ յաւերժացած
« պատուէրիս համեմատ՝ անձամբ եւ ոչ թէ փո-
« խանորդի միջոցաւ՝ փետրվար 13ին կէս օրէն
« առաջ Սէն—Ծրանսօս փողոցը գտնուին : »

Այս տողերն յատակ ձայնով կարդալէ ե-
տեւ՝ նօտարը վայրկեան մը կանգ առաւ , եւ
յետոյ բարձր ձայնիւ ըսաւ . « Պ. Գաբրիէլ—Ծը-
րանսօս—Մարի Տը Ռէնբօն քահանայն , վաւե-
րական վկայագրով իւր հօրը կողմէն կտակարա-
րին եղբօրորդւոյն թոռն ըլլալը հաստատած եւ
մինչեւ այս ժամս Ռէնբօնի աղգատոհմէն մի-
նակ ինքը հոս ներկայացած ըլլալով , ըստ հը-
րամանի կտակարարին՝ կտակը կը բանամ իր
առջեւ : »

Այս ըսելով նօտարը պատեանին մէջէն

հաննց կտակը՝ զոր արդէն դատաստանին նա-
խագահն օրինաց պահանջած պայմաններով բա-
ցած էր :

Հայր Տ'Եկրինեի չկրնալով դժուարաշունչ
հառաչք մը զսպել, ծուցաւ եւ արմուկովը
սեղանին կրթնեցաւ : Չարբիէլ՝ առաւել հե-
տաքրքրութեամբ քան թէ շահադիտութեամբ
մտիկ ընելու կը պատրաստուէր : Ռօտէն սե-
ղանէն քիչ մը հեռու նստեր էր, երկու ծուն-
կերուն մէջ բռնելով իր հնտաի փեղոյրը, որուն
մէջ կապոյտ քառակուսի դոյներով նկարեալ
բամպակեայ դժուծ թաշկինակի մը ծալքերուն
ներքեւ իր ժամացոյցը դրած էր . . . : Երբ ոչոր
ուշադրութիւնն այն միջոցին դուրսէն լսուած
ամենափոքր ձայներուն եւ իր ժամացոյցի սք-
լաքին յամր շրջանին վրայ ամփոփած էր, եւ
կարծես թէ իր դրդուեալ փոքրիկ աչքերովն ա-
նոր ընթացքը կը փութացնէր . վասն զի ան-
դուսպ անհամբերութեամբ կէս օր ըլլալուն կը
փափաքէր : Նօտարը մտադաղաթեայ թերթը պար-
զելով հետեւեալը կարդաց, զոր խորին ուշադ-
րութեամբ մտիկ ըրին ներկայ դանուողները :

Վիլթանօզ դիւղ, 13 փետր. 1682 .

« Ինքզինքս մահուամբ պիտի ազատեմ թիա-
« բանի նախատինքէն, ուր ընտանեացս անհաշտ
« թշնամիները զիս դատապարտել տուին իր-
« բեւ հաւատուրաց :

« Ասկէց դատ, քանի որ զաւակս դադա-

« Կաճածուկ եղևոնազործութեան մը զոհ ըլլալ

« լով մեռաւ, կեանքս չափազանց դառն է ինձ :

« Տասն եւ ինն տարու մեռաւ . . . խեղճ

« Հենրիկոսս . . . զինքը մեռցրնողներն ան-

« յայտ են . . . ոչ . . . անյայտ չեն . . . եւ

« թէ իմ նախազգածութեանցս հաւատամ . . . :

« Հարատութիւնս այս դաւկիս պահելու

« համար՝ բողոքականութենէ հրաժարիլ կեղ-

« ծեր էի . . . : Քանի որ սիրելի դաւակս կեն-

« դանի էր, կաթոլիկ երեւոյթը խղճի մտօք

« պահեցի . . . : Այս կեղծաւորութիւնը սիր-

« արս չէր տաներ, բայց դաւկիս օգտին հա-

« մար ակամայ յանձն կառնուի . . . :

« Յրբոր սպաննեցին զայն . . . ալ չկրցայ

« հանդուրժել . . . բայց զիս լրտեսողներ կա-

« յին . ուստի ամբաստանուելով դատապար-

« տուեցայ իբրեւ հաւատուրաց հերեափկոս . . .

« ստացուածքս յարքունիս դրաւեցաւ եւ ես

« ալ շղթայակալ աշխատութեան դատապար-

« տուեցայ :

« Ա՛հ, ի՛նչ սարսափելի ժամանակի մէջ

« կապրինք . . . :

« Թշուառութիւն եւ դերութիւն . . . ա-

« թիւնուշտ բռնաւորութիւն եւ կրօնական

« աններողութիւն . . . : Ա՛հ, քաղցր է ինձ

« կեանքը թողուլ . . . եւ այսչափ չարիք . . .

« այսչափ վիշտ չտեսնել . . . ի՛նչ հանգստու-

« թիւն . . . : Եւ քանի մը ժամ կտքը . . .

« պիտի վայելեմ այն հանգստութիւնը . . . :

« Պիտի մեռնիմ . . . ուրեմն մեր ազգա-
« կանները մտածենք որ կապրին , կամ մանա-
« լանդ պիտի ապրին թերեւս լաւագոյն ժա-
« մանակներու մէջ . . . :

« Այնչափ հարստութիւններէս ընդ ամենը
« հարիւր յիսուն հազար ֆրանք մնացած է ,
« զոր բարեկամի մը քով աւանդ ձգած եմ :

« Չաւակ չունիմ , բայց բազմաթիւ ազ-
« դականներ ունիմ Յւրոպայի զանազան կող-
« մերն աքսորուած :

« Այն հարիւր յիսուն հազար ֆրանքը ե-
« թէ ազգականացս բաժնէի , մեծ օգնութիւն
« մը չպիտի կրնար ըլլալ անոնց . այս պատճա-
« ռաւ ուրիշ կերպ անօրինեցի՝ բարի մարդու
« մ'իմաստուն խորհրդին անապով , զոր մե-
« ծապէս կը յարդեմ իբրեւ Աստուծոյ կատար-
« եալ պատկերն աշխարհիս վրայ . . . վասն
« զի անոր իմաստութիւնն ու բարեարտութիւ-
« նը գրեթէ աստուածային են :

« Աննացս մէջ երկու անգամ տեսած եմ
« այն մարդը ձախող պարագաներու մէջ . . .
« երկու անգամ փրկեց զիս . . . անգամ մը
« հողիս , անգամ մ'ալ մարմինս :

« Աւանդ . . . թերեւս խեղճ դաւակաւ տլ
« կազատէր . բայց ուշ հասաւ . . . շատ ուշ . . . :

« Ինձմէ զատուելէն առաջ ուղեց որ մեռ-
« նելու դիտաւորութենէս զիս ետ դարձունէ .
« վասն զի ամեն բան դիտէր . բայց իր ձայ-
« նըն ազդեցութիւն չըրաւ . կսկիծս շատ մեծ

« էր . սրտաբեկութիւնս չափազանց էր
« Զարմանալի բան . . . երբոր լաւ հա-
« մոզուեցաւ որ կեանքս բռնաբար վերջացը-
« նելու որոշումս անխախտ էր , բերնէն սար-
« սափելի դառն խօսք մը թռաւ , որմէ այն-
« պէս կարծեցի թէ իմ վիճակիս . . . իմ մահ-
« ւանս կը նախանձէր :

« Արդեօք ապրելու դատապարտուած է
« ինքը :

« Այո , անշուշտ ապրելու դատապարտ-
« ւած է որպէս զի մարդկութեան օգուտ եւ
« օգնութիւն բնէ . . . եւ սակայն կեանքը
« ծանր կուգայ իրեն . ինչու որ օր մը յուսահատ
« ճանձրութեամբ մ'այս խօսքն ըսաւ , զոր եր-
« բէք չմոռցայ . « նհ , կեանք . . . կեանք . . .
« ո՛վ պիտի ազատէ զիս քեզնէ . . . » :

« Ըսել է թէ կեանքն անտանելի բեռ մ'ե-
« դած է իրեն :

« Քնաց . բայց այս վերջին խօսքերն աւել-
« լի զուարթութեամբ նկատել տուին ինձ մա-
« հը . . . :

« Անոր շնորհիւ՝ իմ մահս ամուլ չպիտի
« ըլլայ . . . :

« Անոր շնորհիւ՝ այս տողերը՝ զորս քանի
« մը ժամէ ետեւ մեռնելու վրայ եղող մարդ է՛ր
« կը դրէ այս միջոցիս , թերեւս դար ու կէս ետ-
« քը մեծ բաներ պիտի ծնանին . նհ , այո ,
« մեծ եւ աղնիւ բաներ . . . եթէ իմ վերջին
« կամքս երկիւղածութեամբ մտիկ ըլլուի իմ

« ապագայ տոհմայիններէս . վասն զի այս խօս-

« քերս անոնց կուղղեմ :

« Եւ որպէս զի լաւ հասկնան ու կատարեն

« իմ վերջին բաղձանքս , անոնք՝ որ դեռ ոչըն-

« չութեան մէջ են , ուր ես ալ նորէն պիտի մտ-

« նեմ , պէտք է որ ընտանեացս հաշածիչները

« ճանչեն , որպէս զի կարող ըլլան իրենց հա-

« ւուն վրէժն առնուլ , բայց ազնուական վր-

« րէժիմնդ բուժեամբ :

« Իմ հաւս կաթողիկ էր . նենգաւոր թե-

« լադ բուժեանց անապուլ մանաւանդ քան թէ

« կրօնական եռանդով՝ աշխարհական անդամ

« եղաւ այնպիսի ընկերութեան մը՝ որուն զօ-

« րութիւնը միշտ ահեղ եւ ծածուկ եղած է .

« այն է ճիզվիթական ընկերութիւնը . . . :

« Ատակին այս խօսքը լսելուն պէս՝ հայր

« Տ'Էկրինեի , Ռօտէն եւ Քարրիէլ իրարու նա-

« յեցան դրեթէ ահամայ : Նօտարն այս շար-

« թումը չնշմարելով՝ ընթերցումը կը շարունա-

« կէր :

« Քանի մը տարի բացարձակ անձնուիրու-

« թեամբ ընկերութեան ծառայելէ ետեւ , յան-

« կարծ անոր գաղտնի նապատակին եւ միջոց-

« ներուն վրայ սարսափելի բաներ իմանալով

« աչքը բացուեցաւ . . . :

« 1610 թուին էր , Հենրիկոս Գ . ի սպա-

« նութենէն ամիս մ'առաջ :

« Հաւս՝ զարհուրելով իրեն հաղորդուած

« գաղտնիքներէն , որ շատ շանցած աւելի կա-

Ե րեւապէս ստուգուեցաւ այն աղնիւ եւ բարի
 Ե թագաւորին մահուամբը, հաւս ոչ միայն
 Ե բաժնուեցաւ ճիզվիթաց ընկերութեանէն, այլ
 Ե եւ համայն կաթողիկոսութիւնը մասնակից կամ
 Ե երաշխաւոր կարծելով անոր եղեռնագործու-
 Ե թեանց, հռոմէական կրօնքն ալ թողուց եւ
 Ե բողոքական եղաւ :

Ե Անհերքելի ազատոյցներ կային իր ձեռ-
 Ե քը թէ ճիզվիթական ընկերութեան երկու
 Ե անդամք համախոհ էին Ռաւլայեաքի հա-
 Ե մախոհութիւն մը՝ որ նոյնպէս արքայասպան
 Ե ժան—Շաթէլի ոճրագործութեան ժամանակն
 Ե ալ հաստատուեցաւ :

Ե Այս եղաւ առաջին պատճառ այն ոխե-
 Ե րիմ ատելութեան՝ զոր ճիզվիթական ընկե-
 Ե րութիւնը տածել սկսաւ մեր ընտանեաց դէմ :
 Ե Բայց գոհութիւն Աստուծոյ, այն թուղթերը՝
 Ե որ հայրս ինձ յանձնած է՝ ապահով տեղ
 Ե դրուած են . եւ եթէ իմ վերջին կամքս գոր-
 Ե ծաղրի, այն թուղթերը՝ որոց վրայ Ա. Մ. Բ.
 Ե Տ. Ժ. տառերը դրոշմուած են, Սէն—Յրան-
 Ե սօս փողոցի տանը Սգոյ դահլիճը երեւոտէ
 Ե անտուկին մէջ կը գտնուին :

Ե Հայրս գաղտնի հալածանքներ ալ կրեց-
 Ե իր հարստութեան կործանումը եւ թերեւս մա-
 Ե հըն իսկ այն հալածանաց հետեւանքը պիտի
 Ե ըլլային՝ եթէ հրեշտականման կին մը չմիջա-
 Ե մտէր, որուն վրայ հայրս գրեթէ կրօնական խր-
 Ե կիւղած յարգանք մ'ունեցած է մինչեւ վերջը :

« Այն կինը եւ ալ ասկէց քանի մը տարի
« առաջ տեսնելով՝ թէ անոր եւ թէ իմ խորին
« յարգանքս գրաւող միւս մարդուն կենդանա-
« գիրները յիշատակի համար նկարեցի եւ Սէն—
« Ծրանսօս փողոցի տան կարմիր դահլճին մէջ
« դրի : Ար յուսամ որ ընտանեացս ապագայ
« թոռներն իրենց երախտագէտ մեծարանօք կը
« պատուեն այն երկու պատկերները : »

Քանի մը վայրկենէ՛ ՚ի վեր Գաբրիէլ առա-
ւել քան զառաւել ուշադիր եղեր էր կտակին
ընթերցմանը : Ար խորհէր որ զարմանալի զու-
գադիպութեամբ իր հաւերէն մէկը երկու հա-
րիւր տարի առաջ ճիզվիթական ընկերութենէն
բաժնուեր էր , ինչպէս որ ինքն ալ ժամէ մ'ի
վեր ըրեր էր . եւ այս երկերիւրամեայ անջա-
տու մէն . . . սկսած էր նաեւ այն ատելութիւնը՝
որով ճիզվիթական ընկերութիւնն անդադար իր
ընտանիքը հալածեր էր . . . : Նորատի քա-
հանայն նմանապէս կը զարմանար որ հարիւր
յիսուն տարի առաջ ճիզվիթական ընկերութե-
նէն այնչափ հալածանք կրող մէկ հաւուն թո-
ղուցած եւ իր ձեռքն ինկած այս մեծ ժառան-
գութիւնը՝ իր կամաւոր հրաժարմամբ նոյն ըն-
կերութեան կը դառնար . . . : Երբոր նօտարը
երկու պատկերաց վերաբերեալ հատուածը կար-
դաց , Գաբրիէլ՝ որ հայր Տ'Եկրինեիի պէս կըր-
նակը պատկերներուն դարձուցած էր , շորս դին
նայեցաւ որ զանոնք տեսնէ : Գեռահասակ քա-
րոզչին աչքը կնոջ պատկերին հանդիպելուն

պէս՝ զարմանաց եւ կարծես թէ զարհուրանաց
աղաղակ մ'արձակեց : Նօտարը մէկէն կտակին
ընթերցումը դադրեցուց եւ նորատի քահանա-
յին նայիլ սկսաւ տատամտա դէմքով :



ԳԼՈՒԽ Ը .

ՄԻՋՅՈՐԷՒ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԸ

Գարրիէլի պօռալուէն վրայ նօտարը կտակին
ընթերցումն ընդմիջեր էր , եւ հայր Տ'Էկրին-
եի ալ իսկոյն դեռահասակ քահանային քով
վազեր էր , որ ոտքի վրայ ելած՝ դողալով եւ
ապշութեամբ կնոջ պատկերին կը նայէր :

Քանի մը վայրկեան նայելէ ետեւ՝ կամաց
մ'ըսաւ . « Կարելի՞ բան է , Աստուած իմ , որ
դիպուածն այսպիսի նմանութիւններ յառաջ բե-
րէ : Այս խրոխտ եւ միանգամայն տրտում աչքերն
. . . անորն են . . . եւ այս ճակատը . . . եւ
այս դեղնութիւնը . . . այո՛ , ճիշդ անոր դէմ-
քըն է : — Սիրելի որդեակ , ի՞նչ ունիք , ի՞նչ
կայ , հարցուց հայր Տ'Էկրինեի՝ Սամուէլին ու
նօտարին հետ զարմանալով : — Ութ ամիս ա-
ռաջ , ըսաւ նորատի քարոզիչն յուզեալ ձայնիւ
առանց աչքը պատկերէն զատելու , Ամերիկայի
հնդիկներուն ձեռքն ինկած էի՝ ապառաժուա
լերանց մէջ . . . : Զիս խաչափայտի մը վրայ

պրկելով յօշօտելու վրայ էին . . . Աստուածա-
յին նախասխնամութիւնն անակնկալ օգնութիւն
մը դրկեց ինձ . . . : Այո՛, այս կի՛նը զիս ա-
զատեց Այս կի՛նը յ գոչեցին միաձայն
Սամուէլ, հայր Տ'էկրինեի եւ նօտարը :

Միայն Ռօտէն անզգայ եւ անտարբեր կերե-
ւէր այս անցքին մէջ . զայրագին անհամբերու-
թեամբ դէմքը կնճռած անդադար եղունգները
կը կրծէր եւ իր ժամացոյցի սլաքին դանդաղ
ընթացքը կը դիտէր անձկութեամբ :

« Ի՛նչ կըսէք . այս կի՛նը ձեր կեանքը ա-
զատեց, ըսաւ նորէն հայր Տ'էկրինեի, — Այո՛,
այս կի՛նն էր, պատասխանեց Գաբրիէլ աւելի
ցած ձայնով եւ դրեթէ սարսափելով . այս կի-
նը . . . կամ մանաւանդ ասոր համանման կի՛ն
մը . . . այնչափ համանման, որ եթէ այս պատ-
կերը հարիւր յիսուն տարիէ 'ի վեր հոս զրուած
չլլար, պիտի ըսէի թէ անոր նայելով շինուած
է . . . վասն զի չեմ հասկընար թէ ինչպէս այս
աստիճան նմանութիւն մը դիպուածի արդիւնք
կրնայ ըլլալ . . . : Վերջապէս, աւելցուց վայր-
կեան մը լռութենէ ետեւ խոր հառաչք մ'ար-
ձակելով, բնութեան գաղանիքն եւ Աստուծոյ
կամքն անհասանելի են : »

Այս ըսելով Գաբրիէլ շուարեալ ինկաւ թիկ-
նաթոռին վրայ : Պահ մը լռութենէ ետեւ հայր
Տ'էկրինեի ըսաւ, « Կարգէ դուրս նմանութիւն
մ'ըլլալու է այդ եւ ոչ ուրիշ բան . . . սիրե-
լի որդեակ . . . միայն թէ ձեր ազատարարին

նկատմամբ ունեցած բնական երախտադիտու-
թիւննից հրաշալի կարեւորութիւն մը կուտայ
բնութեան այդ տարօրինակ խաղին : »

Ռօտէն անհամբերութեամբ տոչորելով ը-
սաւ նօտարին, որուն մօտ նստած էր : « Ինձ կը
թուի թէ , պարոն , այս փոքրիկ վիպասանու-
թիւնը կտակին հետ բնաւ յարաբերութիւն չու-
նի : — Իրաւունք ունիք , պատասխանեց նօ-
տարը նորէն նստելով . բայց այս դէպքն այն
աստիճան կարգէ դուրս եւ ինչպէս որ կըսէք՝
վիպասանական է , որ մարդ չկրնար պարոնին
թոր զարմացմանը չմասնակցիլ . »

Եւ ձեռքը Գաբրիէլը ցուցուց , որ թիկ-
նաթոռին վրայ կրթնած եւ ճակատը ձեռքին
վրայ դրած՝ խոր մտածութեան մէջ ընկղմեալ
կերեւէր : Նօտարը կտակին ընթերցումը վե-
րբասին շարունակել սկսաւ այսպէս .

« Այսպէս ահա ընտանիքս անխնայ հալած-
ւեցաւ ճիզվիթական ընկերութենէն :

« Այս ընկերութեան ձեռքն է հիմա իմ
« գրաւեալ հարստութիւնս : Ես ալ պիտի մեռ-
« նիմ Երանի՛ թէ իր ատելութիւնը մահ-
« ւանս հետ վերջանայ եւ ազգատոհմս խնա-
« յէ . ազգատոհմս , որուն ապագայ վիճակին
« վրայ միայն կը մտածեմ այս վերջին վայրկե-
« նիս մէջ :

« Այս առաւօտ մարդ մը քովս կանչեցի ,
« որուն ուղղութիւնը երկար ժամանակէ՛ ի վեր
« փորձած եմ . իսահակ Սամուէլ , որ իր կեան-

« քրն ինձ պարտական է , եւ ես ալ միշտ դռն
« եղած եմ այնպիսի պատուական եւ պարկեշտ
« մարդու մը կեանքն ազատած ըլլալուս վրայ :

« Ստացուած քս՝ դրաւուելէն առաջ՝ Իսահակ
« Սամուէլի մատակարարութեանը յանձնած էի ,
« եւ միշտ խելքով ու հաւատարմութեամբ
« տնտեսած էր : Ուստի անոր յանձնեցի մնաց-
« եալ հարիւր յիսուն հազար ֆրանքս , զոր
« հաւատարիմ աւանդապահ մ' ինձ դարձու-
« ցած էր :

« Իսահակ Սամուէլ , եւ անկէ ետեւ իր
« զաւակները՝ որոց պիտի կտակէ իր երախ-
« տագիտական պարտականութիւնը , այս գու-
« մարը մինչեւ հարիւր յիսուն տարի շահեցը-
« նելով պիտի բազմապատկեն :

« Այս կերպով կարգէ դուրս մեծութեան
« կրնայ համիլ այս գումարը՝ եւ թագաւո-
« րական հարստութիւն մը կազմել . . . եւ
« թէ ապագային մէջ փորձութեան կամ ար-
« դելքի չհանդիպի :

« Երանի թէ ապագայ ժառանգներս այն
« ամբաւ հարստութեան բաժանմանն ու գոր-
« ծածութեանը մէջ իմ բաղձանացս համեմատ
« վարուին :

« Անտարակոյս , ազգատոհմի մը յաջորդա-
« կան սերունդը հարիւր յիսուն տարուան մէջ
« այնչափ բազդի փոփոխութիւններ եւ յե-
« ղաշրջումներ կրնայ կրել , որ հաւանակա-
« նաբար իմ ժառանգներս զանազան կարգի

« եւ վիճակի անձինք պիտի ըլլան, եւ այսպէս
« իրենց ժամանակի ընկերական այլ եւ այլ տա-
« րերքը պիտի ներկայացնեն :

« Թերեւս մէջերնին մեծ հանճարի կամ
« մեծ քաջութեան եւ կամ մեծ առաքինու-
« նութեան տէր մարդիկ պիտի գտնուին . թե-
« րեւս գիտուններ , պատերազմի կամ արուես-
« տից մէջ մեծ անուն ունեցողներ , կամ թե-
« րեւս աննշան արհեստաւորներ , անշուք քա-
« ղաքացիներ , եւ թերեւս իսկ , աւանդ , մեծ
« ոճրագործներ պիտի գտնուին անոնց մէջ :

« Ինչ որ ալ ըլլայ ժառանգացս ապագայ
« ընկերական վիճակը , իմ ամենէն ջերմ եւ սի-
« րելի փափաքս այս է որ ժառանգներս իրա-
« րու մօտենան եւ սերտ ու անկեղծ միու-
« թեամբ իմ գերդաստանս վերակազմեն՝ Քր-
« թիստոսի այս աստուածային խօսքը մէջերնին
« գործադրելով . « Սիրեցէք զմիմիանս : »

« Այս միութիւնը վրկաւէտ օրինակ մը
« կրնայ ըլլալ այլոց . . . վասն զի ես կը կար-
« ծեմ որ մարդկութեան ապագայ բարօրու-
« թիւնը՝ մարդոց իրարու հետ ընկերակցելէն
« պիտի ծնանի :

« Այսչափ ժամանակէ 'ի վեր ընտանիքս
« հալածող ճիզվիթական միաբանութիւնը՝ ըն-
« կերակցութեան մեծագոր ուժին պայծառ օ-
« րինակ մը կրնայ համարուիլ , թէ եւ նպատա-
« կը չար եղած ըլլայ :

« Այս սկզբունքն այն աստիճան վսեմ աստ-

« ւածահաճոյ եւ բեղնաւոր է, որ երբեմն ամե-
 « նէն չար եւ վտանգաւոր ընկերակցութիւնն ե-
 « րըն ալ բարեգործութեան կը հարկադրէ :

« Այսպէս ահա քարոզչութիւնները՝ մերթ
 « ընդ մերթ՝ թէ եւ խիստ քիչ անգամ՝ մաքուր
 « եւ ազնիւ լոյս մը ձգեցին այս խաւարային
 « ընկերութեան վրայ, որուն պժգալի եւ ան-
 « բարիչտ նպատակն է մարդասպան դաստիար-
 « ակութեամբ ջնջել ժողովրդոց կամքը, մը-
 « տածութիւնը, ազատութիւնը, խելքը, որ-
 « պէս զի զանոնք սարսափահար, սնապաշտ,
 « ապուշ եւ անզէն վիճակի մէջ ձգելով թա-
 « դաւորաց բռնութեանը մասնէ, եւ ինք ալ
 « խոստովանութեան միջոցաւ թադաւորներուն
 « վրայ իշխէ . . . »

Ատակին այս հատուածը կարդացուած ժա-
 մանակ՝ Գաբրիէլ եւ հայր Տէկրինեի նորէն ի-
 ռարու երես նայեցան տարօրինակ կերպով : Նո-
 տարը շարունակեց :

« Աթէ մարդկութեան վատթարութեանը
 « երկիւղի եւ բռնութեան վրայ հիմնեալ ապի-
 « բատ եւ անիծապարտ ընկերութիւն մը կրցաւ
 « դարեր տեւել եւ շատ անգամ ալ դաւուր եւ
 « ահարկութեամբ աշխարհի տիրել . . . որչափ
 « եւս առաւել եղբայրութեան եւ աւետարա-
 « նական սիրոյ վրայ հիմնեալ ընկերակցութիւն
 « մը, որ նպատակ ունենայ իրեն ազատել այրն
 « եւ կիներ վատթարիչ ստրկութենէ, աշխար-
 « հային բարօրութեան մասնակից ընել այն եղ-

« կելիները՝ որ կենաց դառնութիւններն ու
« թշուառութիւնները միայն կը ճաշակեն, ու
« դեպահիկ աշխատութիւնը փառաորել ու
« հարստացնել, տգիտութեամբ ապականեալ
« մարդիկը լուսաորել, Աստուծոյ անհուն ի-
« մաստութեան ու անապառ բարութեան մար-
« դոց սրտին մէջ իբրև մէկ մէկ զօրաւոր լծակ
« դրած կրից աղատ ծաւալումը նպաստաորել,
« Աստուծմէ եկած ամեն բան նուիրագործել . . .
« ինչպէս սէրը՝ այնպէս ալ մայրութիւնը, ինչ-
« պէս ուժը՝ այնպէս ալ խելքը, ինչպէս դե-
« ղեցկութիւնը՝ այնպէս ալ բարձր հանճարը .
« վերջապէս մարդիկը ճշմարտապէս բարեպաշտ
« եւ Ասեղծողին 'ի խոր սրտի շնորհապարտը-
« նել՝ բնութեան գեղեցկութիւններն անոնց
« զգացնելով եւ մեղ պարդեւած գանձերէն ա-
« նոնց ալ արժանաւոր բաժինը տալով :

« Ա՛հ, եթէ Աստուած կամի որ դար ու կէս
« ետքը՝ իմ տոհմիս սերունդները՝ մարդկու-
« թեան բարեկամ սրտի մը վերջին կամքը յար-
« դելով իրարու մօտենան եւ այսպիսի սուրբ
« հասարակութիւն մը ձեւացնեն, եթէ Աստ-
« ւած կամի որ անոնց մէջ դժբախտ եւ այլոց
« վշտին կարեկցութեամբ վառուած հողիներ,
« վսեմախոհ եւ աղատութեան սիրահար միա-
« քեր, ճարտարախօս եւ եռանդուն սիրտեր,
« անվեհեր եւ անյողողող բնաւորութիւններ,
« գեղեցկութեամբ խելքով եւ բարեպարտու-
« թեամբ պճնադարդեալ կանայք գանուին,

« Իրչափ արդիւնաւէտ եւ հզօր կըլլայ այս ա
« մեն գաղափարներուն՝ այս ամեն ազդեցու
« թեանց՝ այս ամեն զօրութեանց ներդաշնա
« կաւոր միութիւնը թագաւորական հարատու
« թեան մը բոլորափքը , որ ընկերակցութեամբ
« 'ի մի վայր կեդրոնաւալով եւ իմաստութեամբ
« անտեսուելով ամենէն հրաշալի անուրջները
« գործադրելի կընէ :

« Ի՞նչ սքանչելի վառարան մը կըլլայ բազ
« մաբեղուն եւ վեհ խորհրդոց , եւ իրչափ փրկ
« կաւէտ եւ կենդանարար շառաւիղներ անդա
« դար կը ցայտեն այն զթութեան ազատու
« թեան եւ սիրոյ կեդրոնէն :

« Իրչափ մեծամեծ բաներ կան փորձելու ,
« իրչափ վսեմ օրինակներ կան գործով աշխար
« հի ցուցնելու : Ի՞նչ երկնային առաքելու
« թիւն : Աերջապէս այսպէս միաբանեալ եւ
« այսչափ կարողութեան տէր եղող ընտանիք
« մը՝ ի՞նչ անդիմադրելի թռիչ մը կրնայ տալ
« հանուր մարդկութեան առ 'ի բարին :

« Ասկէց զատ , այս բարեգործական ընկե
« րակցութիւնը կրնայ մաքառիլ դիտ հայածող
« վատչուէր ընկերութեան դէմ , որ թերեւս
« հարիւր յիսուն տարի ետքն ալ իր անաւոր իշ
« խանութիւնը պիտի շարունակէ :

« Այն ժամանակ , քրիստոնեայ աշխարհին
« վրայ ծանրացած այս խաւարային ճնշող եւ բռն
« նական զօրութեան դէմ իմ ժառանգներս լու
« արջ եւ ազատութեան զօրութիւն մը կը հանեն

« Բարութեան ոգին չարութեան ոգւոյն
դէմ կեղնէ :

« Ասիւր կ'ս'յսի , եւ Աստուած ալ արդար-
« ները կը պաշտպանէ . . . :

« Եւ որպէս զի ընտանեացս այնչափ կա-
« թողութիւն տուող դրամական անհուն աղ-
« բիւրը չսպառի եւ տարուէ տարի նորոգի ,
« ժառանգներս՝ իմ կամացս անսալով պէտք է
« որ իմ շահու դրած գումարիս կրկնապատի-
« կը նոյն պայմաններով շահեցընեն . . . :

« Այն ժամանակ , իրենցմէ դարուկէս ետքն
« ալ՝ իրենց թոռներուն համար մեծագործու-
« թեանց նոր աղբիւր մը , բարութեանց մշտն-
« ջենաւորութիւն մը պատրաստած կըլլան :

« Այս ընկերակցութեան վրայ քանի մը
« գործնական խորհուրդներ տուած եմ , զորս
« Սդոյ դահլճին երեստսէ մեծ սնտուկին մէջ
« կրնան գտնել :

« Ասոնք են իմ վերջին կամքս , կամ մա-
« նաւանդ վերջին յոյսերս . . . :

« Բացարձակապէս կը պահանջեմ որ այս
« կտակիս բացուած օրը ժառանգներս անձամբ
« Սէն—Յրանսօս փողոցը գտնուին , որպէս զի
« այն ծանրակշիռ վայրկենին մէկտեղ գումար-
« ւած ըլլալով իրար տեսնեն ու ճանչեն . թե-
« բեւս այն ժամանակ իմ խօսքերս իրենց լա-
« կազդեն , եւ փոխանակ իրարմէ բաժնուած
« ապրելու՝ կը միանան , որով իրենք շահաւոր
« կեղնեն եւ իմ ալ կամքս կը կատարուի . . . :

« Ասկէց քանի մ'օր առաջ միտալ մը զըր-
« կեցի ընտանեացս այն անդամներուն՝ զորս
« աքսորը Ներոպայի այլ եւ այլ կողմերը ցրուած
« է . այն միտալին վրայ փորագրուած է դար
« ու կէս ետքը բոլոր ժառանգացս մէկտեղ գու-
« մարուելուն թուականը . բայց բուն պատ-
« ճառը դադանի պահելով՝ այսչափ միայն ը-
« սած եմ որ ժառանգներուս համար մեծ շահ
« կայ այն օրը Սէն—Յրանասօս փողոցը գտնուե-
« լի :

« Այսպէս ըրի , որովհետեւ զիս հարածող
« ընկերութեան խորամանկութիւնն ու յամառ
« հետամտութիւնը լաւ կը ճանչեմ : Նիշէ կարե-
« նայ դիտնալ որ դար ու կէս ետքն իմ ժառանգ-
« ներս ամբառ հարատու թիւն պիտի ունենան
« մէջերնին բաժնելիք , ամեն տեսակ խարդա-
« խութիւն ու դաւաճանութիւն 'ի դործ կը
« դնէ , եւ թերեւս ազգատոհմիս գլխուն ալ
« մեծ վտանգներ կը բերէ , վասն զի ամենա-
« վատ յանձնարարութիւններ դարէ դար կրնան
« շարունակել ճիղվիթաց ընկերութեան մէջ :

« Նրանի թէ այս նախազգուշութիւնս ա-
« պարդիւն չեղնէր :

« Նրանի թէ միտալներուն վրայ յայտնած
« կամքս որդւոց յորդի հաւատարմութեամբ ա-
« լանդուէր :

« Ժառանգութիւնս՝ ինչպէս արդէն ըսի՝
« անդառնալի կերպով պիտի դոցուի 'ի նախատ
« այն ազգականներուս՝ սրբ 1832 փետրվար 13

« ին կէս օրէն առաջ Սէն—Ֆրանսուա փողոցը
« ներկայ գտնուին : Օրն ու ժամը որոշելուս
« պատճառն այն է, որ ամեն պայմանաժամ
« սահման մը պէտք է ունենայ, եւ իմ ժա-
« ուանդներս ալ շատ տարիներէ 'ի վեր դիտցած
« կրկան որ այս ժամագրութենէն ետ մնալ չըլ-
« լար :

« Ատակիս ընթերցումէն ետեւ, կուտակեալ
« ստակներուն աւանդապահ կողմ անձն անոնց
« հաշիւն ու գումարը պիտի ծանուցանէ, որ-
« պէս զի միջօրէին ժամը դարկածին պէս՝ այն
« գումարները ներկայ գտնուող ժառանգներուս
« բաժնուին :

« Ս,յն ժամանակ տանս ամեն յարկերն ու
« սենեակներն անոնց պիտի բացուին, ուր ի-
« բնց համակրութեան գիծոյն եւ յարգանայ
« արժանի բաներ պիտի տեսնեն, մանաւանդ
« Սգոյ գահլճին մէջ . . . :

« Ար փափաքիմ որ այս սուսը չծախուի,
« այլ այսպէս յարգարեալ մնայ եւ իմ սերնդոցս
« գումարման տեղի ըլլայ, եթէ՛ ինչպէս կը
« յուսամ՝ իմ վերջին աղաչանքս ընդունին :

« Իսկ եթէ՛ ընդհակառակն՝ պառակտին,
« եթէ՛ փոխանակ նմանը չտեսնուած ազնիւ
« ձեռնարկութեան մը համար միաբանելու՝
« անձնատէր կրից անսան, եթէ ամուլ անհա-
« տականութիւնն արդիւնաւէտ ընկերակցու-
« թենէ նախամեծար համարին, եթէ այս ամ-
« բաւ հարստութիւնը մտափ շուայլութեան կամ

« կծծի ժլատութեան առիթ մը համարին . . . ա-
« նիծեալ ըլլան այն ամեն մարդոցմէ՝ զորս կըր-
« նային սիրել նպատաւորել եւ սղատել . . .
« հիմնայտակ կործանի այս առնք , եւ իստ-
« հակ Սամուէլի թողուցած բոլոր թուղթերը՝
« ինչպէս նաեւ կարմիր սրահին երկու պատ-
« կերները՝ տանս պահապանին ձեռք կրակը
« ձգուելով այրին :

« Ըսի . . .

« Հիմա իմ պարտքս կատարուած է . . . :

« Այս ամենուն մէջ այն մարդուն խորհր-
« զոցը հետեւեցայ՝ զոր կը յարգեմ ու կը սի-
« րեմ իբրեւ Սատուծոյ ճշմարիտ պատկեր երկ-
« րիս վրայ :

« Այն հաւատարիմ բարեկամը՝ որ հարրս-
« տութեանս միակ մնացորդն եղող այս հարիւր
« յիսուն հազար ֆրանքն ինձ բերաւ յանձնեց ,
« նա միայն զիտէ ինչ նպատակի սահմանելս . . .
« Չկրցայ անոր անկաակած բարեկամութենէն
« ծածկել այս վատահոթեան փորձը . բայց եւ
« այնպէս իսահակ Սամուէլի անունը չյայտնե-
« ցի անոր , որպէս զի այս մարդն եւ իր դա-
« ւակները մեծ վտանգներու մէջ չձգեմ :

« Մէկ պահէն՝ այն բարեկամս՝ որ չզիտեր
« թէ իմ մեռնելու որոշումս անյապաղ կատա-
« րում պիտի դանէ , հոս պիտի դայ նօտարիս
« հետ , եւ ես ալ պէտք եղած օրինական պայ-
« մանները կատարելէ ետեւ՝ այս կտակս կ'ը-
« կալ անոնց ձեռքը պիտի յանձնեմ :

« Ասոնք են իմ վերջին կամքս :

« Ասոնց կատարումը Նախախնամութեան

« պահպանութեանը կը յանձնեմ :

« Աստուած անպաշտպան չթողուր այս սի-

« րոյ խաղաղութեան միութեան եւ ազատու-

« թեան իղձերը :

« Այս ծածկախորհուրդ կտակը ես իմ ազատ

« կամօքս շինած եւ ծայրէ 'ի ծայր գրած ըլլա-

« լով, կուղեմ որ երկիւղած ճշդութեամբ գոր-

« ծադրի ըստ գրոյն եւ ըստ խմատին :

« 13 փետր . 1682 . ժամ 1 :

« ՄԱՐԻՈՍ ՏԸ ՌԷՆԲՕՆ . »

Քանի որ նօտարը կտակին ընթերցումը շա-
րունակեր էր, Քարբիէլ ալ հետզհետէ յուզուեր
էր այլ եւ այլ դժնդակ տպաւորութիւններով :
Նախ, ինչպէս որ ըսինք, խիստ տարօրինակ
երեւցեր էր իրեն՝ որ ճիղլիթական ընկերու-
թեան թշնամութեանցը զո՛ն եղող անձի մը թո-
ղուցած ամբաւ հարատութիւնը՝ իւր կրկին հը-
րաժարման միջոցաւ դարձեալ նոյն ընկերու-
թեան ձեռքն անցնի : Յետոյ Մարիոս ար Ռէն-
բօնի այսչափ թախանձանօք պատուիրած ըն-
տանեկան ընկերակցութեան սքանչելի օգուտ-
ներն իր դիտատէր եւ վեհ հողւովը կշռելով . . .
խոր դառնութեամբ կը մտածէր, որ ուրիշ բը-
նաւ ժառանգ չգտնուելուն եւ իր ալ հրաժա-
րելուն պատճառաւ այս վսեմ խորհուրդը չպիտի
կրնար գործադրիլ, եւ այս հարատութիւնը որ

կարծուածէն շատ մեծ էր, ապիրատ ընկերու-
 թեան մը ձեռքը պիտի անցնէր, եւ անոր պըժ-
 գալի նպատակներուն ահաւոր միջոց մը պիտի
 ըլլար: Բայց, չմոռնանք ըսել, Չարրիէլի սիր-
 արն այնչափ ազնիւ, այնչափ մաքուր էր, որ
 բնաւ անձնական կակիծ կամ ապաշաւ մը չզգաց
 տեսնելով որ իր կամաւոր հրաժարմամբ թու-
 դուցած հարստութիւնը մեծ արժէք եւ դորու-
 թիւն կրնար ունենալ. մինչեւ անգամ սրտա-
 շարժ հակադիպութեամբ մը գեղջկական խո-
 նարն քահանայութիւնը միտքը բերելով բերկըն-
 ցաւ, ուր կը յուսար քիչ ժամանակէն երթալ
 եւ աւետարանական ամենատարբ առաքինու-
 թիւններն 'ի դործ դնելով ապրիլ:

Այս խորհրդածութիւնները Չարրիէլի մտ-
 քին մէջ խառնաշփոթ կերպով իրար կը բաղ-
 խէին: Անոջ պատկերը, կտակին մէջ պարու-
 նակեալ չարագոյժ յայտնութիւնները, Պ. ար
 Աէնրօնի վերջին կամաց մէջ յայտնուած վստօմ
 խորհուրդը, վերջապէս այս ամեն կարգէ դուրս
 գէպքերը դարմանքի եւ ապշութեան մէջ ձը-
 դած էին նորասփ քահանայն:

Սամուէլ տուճարին բանալին նօտարին ներ-
 կայացնելով ըսաւ. « Այս տուճարին մէջ պիտի
 գտնէք, պարոն, իմ ձեռքս գտնուած դրամոց
 հաշիւն ու դուճարը, որ Պ. Մարիտ ար Աէն-
 րօնէն իմ հետ ուս յանձնուած 150 հազար ֆը-
 րանքին շահերուն կուտակութեամբը գոյացած
 է: — Ձեր հաւուն մի . . . գոչեց հայր Տ'էկ-

րիննի դարմանօք . ըսել է որ ձեր ընաանիքը
չահեցուցեր է միշտ այդ գումարը : — Այո ,
պարոն , եւ քանի մը վայրկենէն կինս պիտի եր-
թայ արժէթուղթերը պահող սնտուկը հոս պի-
տի բերէ : — Ո՞րչափ գումարի կը հասնին այդ
արժէթուղթերը , հարցուց Ռօտէն վերջին ծայր
անտարբեր դէմքով մը : — Ինչպէս որ Պ. Նօտարն
այս տումարէն պիտի ստուգէ , պատասխանեց
Սամուէլ դարմանալի պարզութեամբ մը՝ որպէս
թէ խնդիրը նախնական 150 հազար Ֆրանքին
վրայ էր . սնտուկին մէջ ունիմ այսօրուան գը-
նով երկու հարիւր տասներկու միլիոն . . . հա-
րիւր եօթանասուն . . . : — Ի՞նչ ըսիք , պա-
րոն , գոչեց մէկէն հայր Տ'էկրիննի առանց թող
տալու որ Սամուէլ խօսքը լմնցընէր , վասն զի
մնացեալ թիւերը կարեւորութիւն չունէին վե-
րապատուելիին : — Գումարը , այո , գումարը ,
յաւելցուց Ռօտէն դողդոջուն ձայնիւ եւ թերեւ
առաջին անգամ կենացը մէջ պազարիւնութիւ-
նը կորանցընելով . գումարը . . . գումարը :
— Ըսի , պարոն , թէ սնտուկին մէջ պատրաստ
երկու հարիւր տասներկու միլիոն հարիւր եօ-
թանասուն եւ հինգ հազար Ֆրանքի արժէ-
թուղթ ունիմ թէ անուանական եւ թէ փո-
խանցելի . . . Ինչպէս որ հիմա պիտի ստու-
գէք , պարոն նօտար , վասն զի ահա կինս կը
բերէ սնտուկը : »

Արդարեւ սոյն միջոցին Բերսարէ ներս մը-
տու վայտէ փոքրիկ սնտուկը թեւերուն մէջ

բանած, եւ սեղանին վրայ դնելով Սամուէլի
հետ սիրալիր նայուածք մը փոխանակելէ ետեւ
դուրս ելաւ: Երբոր Սամուէլ ժառանգութեան
տարասփելի գումարը յայտնեց, ընդհանուր հիա-
ցում մը տիրեց ամենուն վրայ: Սամուէլէն
զատ՝ այս տեսարանին բոլոր գերասաններն ինք-
զինքնին երազի մը խաղալիկ կը կարծէին: Հայր
Տ'էկրինեի եւ Ռօտէն քառսուն միլիոնի չափ
հաշուած էին . . . բայց այս գումարը՝ որ արդէն
անհագին էր՝ հինգսպասիկէն աւելի մեծցած էր . . .
Քարրիէլ՝ կտակին մէջի թագաւորական հարրա-
տութիւն խօսքը լսած ժամանակ՝ դրամագլխե-
լու հրաշալեաց ծանօթ չըլլալով երեք չորս մի-
լիոն հաշուեր էր մտօքը . . . այս պատճառա-
կերբոր երկու հարիւր տասներկու միլիոնը լսեց՝
զարմացաւ . . . եւ իր սքանչելի անշահասիրու-
թեան եւ երկիւղած ուղղութեան հակառակ՝
տեսակ մը շլացում զգաց՝ խորհելով որ այս ամ-
բաւ հարստութիւնը կրնար իրեն ըլլալ . . . մի-
այն իրեն . . . : Նօտարն ալ դրեթէ անոր պէս
զարմացած՝ Սամուէլին անտուկի հաշիւը կը քննէր
եւ կարծես թէ հագիւ իր աչքին կը հաւտար:
Հրեայն լուռ կեցած՝ տխուր մտահոգութեան
մէջ ընկզմած էր խորհելով որ մինչեւ այն կէ-
տրն ուրիշ ժառանգ մը չէր ներկայանար: Այս
խոր լռութեան միջոցին՝ քովի սենեկին ժա-
մացոյցը ծանր ծանր կէս օր զարնել սկսաւ . . . :
Սամուէլ վեր ցատկեց . . . քանի մ'երկվայր-
կենէ ետեւ վերջին պայմանաժամը լրացած էր:

Ռօտէն , հայր Տ'Եկրինեի , Գաբրիէլ եւ նօտարն
այն աստիճան պաշարուած էին , որ իրենցմէ
եւ ոչ մէկը կրցաւ ժամացոյցին տարօրինակ
հնչումը նշմարել . . . :

« Աէս օր » գոչեց Ռօտէն , եւ ակամայ
չարժամա՞ք մ'իր երկու ձեռքը մէկէն սնտուկին
վրայ դրաւ՝ որպէս թէ անոր տէր ըլլալու հա-
մար : — Աերջապէս » գոչեց հայր Տ'Եկրինեի
աննկարագրելի ուրախութեամբ եւ յազթական
արբեցութեամբ : յետոյ Գաբրիէլի թեւերուն
մէջ իյնալով եւ եռանդագին խանդով մը զայն
համբուրելով աւելցուց . « Ա՛հ , սիրելի որդ-
գեակ . . . նրչափ աղքատք ձեզ պիտի օրհ-
նեն : Դուք նոր սուրբ Ա՛նչենցիոս մ'էք . . . :
Դուք 'ի թիւս սրբոց պիտի անցնիք . . . այն . . .
կերդնում որ պիտի անցնիք : — Ամեն բանէ ա-
ռաջ Նախախնամութեան գոհութիւն տանք , ը-
տաւ Ռօտէն ծանր եւ յուզեալ ձայնիւ եւ ծունդի
վրայ գալով , գոհութիւն տանք Նախախնա-
մութեան որ Տէրոջ ամենամեծ փառքին գոր-
ծածուելու համար այսչափ հարատութիւն մեր
ձեռքը յանձնեց : »

Հայր Տ'Եկրինեի նորէն Գաբրիէլը համբու-
րելով ձեռքը բռնեց ու ըսաւ . « Ռօտէն իրա-
ւունք ունի . . . ծունդի վրայ գանք , սիրելի
որդեակ , եւ փառք տանք Նախախնամու-
թեան : »

Այս ըսելով հայր Տ'Եկրինեի ծունդի վրայ
եկաւ եւ Գաբրիէլն ալ հարկադրեց : Նորափ


քահանայն ապշած՝ շուարած՝ եւ իրարու եւ
ուելէ գահավիժարար ծագած այս տարօրինակ
անցքերէն գլուխը կորսնցուցած՝ մեքենարար
ծունդի վրայ եկաւ : Միջօրէի վերջին ժամն
հնչեց : Ամենն ալ ոտքի վրայ ելան : Այն ժա-
մանակ նօտարն այլայլեալ ձայնով մ'ըսաւ ,
վասն զի այս տեսարանը միանգամայն կարգէ
գուրս եւ ծանրակշիռ էր . « Պ . Մարիոս տր
Ռէնքօնի ուրիշ ոչ մէկ ժառանգը կէս օրէն ա-
ռաջ ներկայացած ըլլալով , կտակարարին կամքը
կը կատարեմ՝ յանուն արդարութեան եւ օրի-
նաց յայտնելով թէ Պ . Ֆրանսօսա—Մարի—Գար-
րիէլ Ռէնքօնեան՝ որ հոս ներկայ է , միակ ժա-
ռանգ եւ տէր է կտակարարին թողուցած բո-
լոր ընչից , շարժական եւ անշարժ ստացուա-
ծոց եւ ամեն տեսակ արժէից . ինքը՝ Պ . Գար-
րիէլ Ռէնքօնեան քահանայն՝ իր աղատ կամօքը
եւ օրինական վաւերագրով դանոնք ամենը նը-
ւիրեց Պ . Ֆրէտէրիկ—Էմմանուէլ տը Պօրտվիլ
Մարքիզ Տ'Էկրիսեի քահանային . նա ալ ըն-
դունեց . հետեւաբար փոխանակ Գարրիէլ Ռէն-
քօնեանի , յիշեալ Պ . Ֆրէտէրիկ Տ'Էկրիսեի քա-
հանայն օրինաւոր տէր ամեն գոյից եւ ստաց-
ւածոց՝ զորս Պ . Գարրիէլ Ռէնքօնեան իրեն պար-
գեւեց այս առաւօտ իմ ձեռօքս շինուած վա-
ւերագրով մը՝ զոր երկուքն ալ ստորագրած են »

Այս միջոցին պարտէզին մէջ մարդոց ձայ-
ներ լսուեցան : Բերսաբէ շտապով ներս մտաւ
եւ այլայլեալ ձայնիւ ըսաւ ամուսնոյն . « Ըն-

մաւէլ . . . զօրական մ'եկած է . . . կուզէ . . . »

Բերսարէ դեռ խօսքը չէր լմնցուցած՝ Տա-
կօպէս կարմիր գահլճին դռնէն ներս մտաւ :
Ծերունի զօրականը զարհուրելի կերպով դեղ-
նած ու վատած էր . ձախ թեւը պարանոցէն
կուրծքին վրայ կապած եւ ինքն ալ Ակրիքօւի
կրթնած էր :

Ռօտէն՝ Տակօպէսը տեսնելուն պէս՝ իր կը-
թոս եւ տմոյն արտեւանունքը մէկէն 'ի մէկ
ցցուեցան եւ կարծես թէ բոլոր արիւնն ուղե-
ղը ցատկեց : Յետոյ սնտուկին վրայ ինկաւ՝ այն
պիսի վայրագ մոլեգնութեան շարժումով մը ,
որ տեսնողը կրտէր թէ դայն մարմնովը ծած-
կելով իր կենաց իսկ վտանգաւը պաշտպանել
կուզէր :



Դ. ԱՌԻՍ Ը .

ՊԱՐԳԵԻ

Հայր Տ'էկրինեի Տակօպէսը չէր ճանչեր ,
եւ Ակրիքօւն ալ երբէք տեսած չէր . այս պատ-
ճառաւ չկրցաւ մէկէն 'ի մէկ Ռօտէնի զարհու-
րախառն ցասումը մեկնել . բայց շուտով հաս-
կրցաւ՝ երբ Գարրիէլ ուրախալից աղաղակաւ մը
վազեց Ակրիքօւի թեւերուն մէջ ինկաւ ըսելով
« Գու . . . կղբայր իմ , եւ դու . . . երկրորդ

հայր իմ . . . ան , Աստուած դրկեց ձեզ . . . »

Տակօպէս Վարդիէլի ձեռքը սեղմելէ ետեւ՝ արագ բայց դողդոջ քայլերով յառաջ եկաւ դէպ 'ի հայր Տ'էկրինեի : Աերապատուելի հայրք զօրականին սպառնալից դէմքը տեսնելուն , արդէն ստացած իրաւունքովը զօրացեալ եւ կէտ օրէն 'ի վեր ինքզինք իր սեփական տանը մէջ զգալով , քայլ մ'եւտ քաշուեցաւ եւ իշխանական դռնոցութեամբ մը հարցուց վաղեմի զօրակահինն . « Ո՞վ էք դուք , պարոն , թ'նչ կուղէք : »

Տակօպէս՝ փոխանակ սպասախանելու՝ երկու քայլ յառաջ եկաւ , եւ հայր Տ'էկրինեի դէմը կանգ առնելով՝ վայրկենի մը շտի տնոր երեսը դիտեց՝ անպիսի հետաքրքիր արհամարհոտ եւ յանդուգն նայուածքով մը , որ Հոսսարաց նախկին գնդապետը վայրկեան մը շփոթելով վաղեմի զօրակահինն հրացայտ նայուածքին եւ դժգոյն դիմաց առջեւ աչքը խոնարհեցուց :

Նօտարն ու Սամուէլ զարմանալով լռին հանդիսատես եղեր էին այս անցքին . Ակրիքօլ եւ Վարդիէլ ալ անձկութեամբ Տակօպէսի շարժումները կը դիտէին : Իսկ Ռօտէն՝ սնտուկին վրայ կրթնած էր , որպէս զի կարենայ մարտնովը դայն ծածկել :

Հայր Տ'էկրինեի զօրակահինն անողոր նայուածքէն զգացած շփոթութեանը յաղթելով գըլուխը տնկեց ու ըսաւ . « Ար հարցնեմ ձեզ , պարոն , ո՞վ էք , թ'նչ կուղէք : — Զիս չճանչե-

ցիք , ըստ Տակօպէն հաշիւ ինքզինք զսպե-
լով : — Ա՛չ , պարոն : — Մտոցաք ուրեմն , ը-
ստ զօրականը խորին արհամարհանօք , ձեր
այն ամօթահար ակնկորութիւնը Վիքսիքայի
դաշտին մէջ , ուր Ռուսաց հետ մէկ ըլլալով Գաղ-
ղիացւոց դէմ կը պատերազմէիք , երբոր Սիւսօն
զօրապետը՝ վէրքերով ծածկուած՝ պատասխա-
նեց ձեզ , ուրացող , որ իր սուրը կուղէիք .
« Նս իմ սուրս դաւաճանի մը չեմ յանձներ . »
Եւ գեանին վրայ սողալով Ռուս բաժանի մը
քով դնաց եւ սուրն անոր յանձնեց : . . : Այն
միջոցին Սիւսօն զօրապետին քով զօրական մը
կար՝ նոյնպէս վիրաւորեալ . . . այն զօրակա-
նը ես էի : — Վերջապէս , պարոն , ինչ կու-
ղէք ըստ հայր Տ'Էկրինի դժուարաւ ինքզինք
բռնելով : — Աուգեմ ձեր դիմակը վար առնուլ ,
եւ յայտնել որ դուք այնչափ վատ դարչելի եւ
անիծապարտ քահանայ մ'էք , որչափ այս Գար-
րիէլը սքանչելի եւ ամենէն օրհնեալ քահանայ
մ'է . — Պարոն . . . գոչեց մարքիզ արբան՝
զայրուցէն ու վրդովումէն կասկապուտ կարե-
լով : — Այո՛ , դու վատ մարդ ես , ըստ նորէն
զօրականն առաւել եւս բարկութեամբ . Սիւսօն
մարաջախտին աղջիկները , Գարրիէլը եւ Քար-
տովիլ օրիորդն իրենց ժառանգութենէն կապ-
տելու համար սոսկալի միջոցներ ՚ի գործ դրիք .
— Ի՛նչ կըսէք , գոչեց Գարրիէլ , Սիւսօն մարա-
ջախտին աղջիկները . . . : — Քու աղգականդ են ,
բարի դաւակն , ինչպէս նաեւ այն աղնիւ Քար-

տօժիլ օրիորդը . . . Ակրիքօլիս բարերարը . . .
Այս քահանայն՝ (հայր Տ'էկրիննին ցուցնելով)
օրիորդն իբրև խելագար, դարմանատան մը
մէջ գոցել տուած է . . . որբերն ալ վան-
քի մը մէջ արդելափակ ըրած է . . . Քեզ ալ,
բարի դաւակս, չէի յուսար հոս տեսնել . այլ
կը կարծէի որ անոնց պէս արդիլած էին, որ-
պէս դի շկրնաս այսօր հոս գտնուիլ . բայց
գոհութիւն Աստուծոյ, հոս ես, եւ ես ալ յար-
մար ժամանակին կը հասնիմ . վէրքիս պատ-
ճառաւ շկրցայ աւելի կանուխ հասնիլ, վասն զի
անչափ արիւն կորուսի, որ առաւօտէն 'ի վեր
քանի քանի անգամ մարեցայ : — Յիրաւի, գո-
չեց Քարրիէլ դող ելնելով, թեւիդ կապած ըլ-
լալը չէի նշմարած . . . ինչ վէրք է այդ : »

Ակրիքօլի մէկ ակնարկովը Տակօպէս պա-
տասխանեց . « Բան մը չէ . . . իյնալէ եղաւ . . .
բայց ահա հոս եմ . . . եւ շատ պժգալի վա-
տութիւններ երեւան պիտի ելնեն . . . : »

Անհնար է նկարագրել այս տեսարանին այլ
եւ այլ դերասաններուն հետաքրքրութիւնը,
անձկութիւնը, դարմանքն եւ երկիւղը՝ երբոր
Տակօպէսին այս սպառնալից խօսքերը լսեցին :

Բայց ամենէն աւելի Քարրիէլ սասանած
էր : Իր հրեշտակային դէմքը բոլորովին այլայ-
լեր էր . ծունգերը կը դողային : Տակօպէսի ը-
րած յայտնութենէն կայծակնահար եղած՝ եւ
ուրիշ ժառանգներ կեցած ըլլալն իմացած՝ քա-
նի մը վայրկեան շկրցաւ խօսք մ'արտասանել .

վերջապէս ազնկէզ ձայնիւ դռչեց. « Եւ այս ըն-
տանիքին կողոպտուելուն պատճառն ես եմ . . .
ն՛ս, Աստուած իմ . . . ես եմ . . . : — Դո՛ւ, եղ-
բայր իմ, դռչեց Ակրիքօլ : — Մի՛թէ քեզ ալ
կապտել չուղեցին, աւելցուց Տակօպէս : — Կը-
տակն այնպէս տնօրինած էր թէ ժառանգներէն
նրոնք որ կէս օրէն առաջ ներկայանան, ժա-
ռանգութիւնն անոնց պիտի ըլլայ . . . : — Ու-
րե՛մն, ըսաւ Տակօպէս նորապի քահանային վրը-
դովումէն զարհուրելով : — Աէս օրը զարկաւ,
յարեց Գարրիէլ : Ընտանեաց անդամներէն եւ
միայն ներկայ էի հոս. կը հասկընա՞ք հիմա . . .
պայմանաժամն անցաւ . . . եւ միւս ժառանգ-
ներուն բաժինն ալ ինձ մնալով զանոնք դըր-
կեցի իրենց ժառանգութենէն . . . : — Դո՛ւն,
ըսաւ Տակօպէս ուրախութենէն թո՛թովելով . . .
Դո՛ւն, բարի զաւակս . . . ուրեմն ամեն բան
աղատած է . . . : — Այո՛, բայց . . . : — Ա-
մեն բան աղատած է, կրկնեց Տակօպէս յաղ-
թական դէմքով մը Գարրիէլի խօսքն ընդմի-
ջելով. դուն անոնց հետ կը բաժնես . . . եւ
կը ճանչեմ քեզ : — Բայց այն բոլոր հարատու-
թիւնն եւ անդառնալի կերպով թողուցի, գո-
չեց Գարրիէլ յուսահատ ձայնիւ : — Թողուցի՞ր
մի՛, ըսաւ Տակօպէս քար կտրելով. բայց ու-
րո՛ւ . . . որո՛ւ թողուցի՞ր . . . : — Այս պա-
րոնին, ըսաւ Գարրիէլ հայր Տ'Ակրիներին ցու-
ցընելով : — Այդ պարոնին մի՛, կրկնեց Տակօ-
պէս սրտաբեկ . . . այդ մարդո՛ւն . . . այդ

ուրացեալիս . . . որ մեր ընտանեաց սատանան
 է միշտ : — Տայց , եղբայր իմ , գոչեց Ակրիքօլ ,
 այդ ժամանակու թեան վրայ իրաւունք ունենա-
 լլոյ գիտէիր : — Աչ , պատասխանեց դեռահասակ
 քահանայն տխրութեամբ , չէի գիտեր . . . դեռ
 այն ատուօտ հայր Տ'Ակրիսեիէն իմացայ . . .
 Նաւ ինձ թէ ինքն ալ մօտ օրերս իմացեր է
 քանի մ' ընտանեկան թուղթերէ , որք ժամա-
 նակաւ իմ վրայէս դանուեր են եւ մեր մայրն
 ալ իր խոտաւանահօրը տուեր է : »

Նրկաթագործ երիտասարդը կարծես թէ
 մէկէն 'ի մէկ լուսաւորուելով գոչեց . « Հիմա
 ամեն բան հասկըցայ . . . այն թուղթերուն
 մէջ տեսեր են որ դու կրնաս օր մը հարստա-
 նալ . . . քեզ իրենց ձեռքն անցունել ուղե-
 ցին . . . առին այն դպրոցը որին , ուր չէինք
 կրնար քեզ տեսնել . . . եւ ետքն ալ վատ սը-
 տութիւններով քու կոչումդ խարկեցին , որպէս
 զի քահանայ ըլլաս , եւ այդ պարզեւն իրենց ը-
 նես . . . : Ա՛հ , պարսն , յարեց Ակրիքօլ բար-
 կութեամբ հայր Տ'Ակրիսեիի դառնալով . հայրս
 իրաւունք ունի . այդպիսի մեքենայութիւն մը
 վատութիւն է . . . : »

Այս անոյքն անոյած ժամանակ վերանայա-
 ւելի հայնն ու իր լրտեսը՝ որ 'ի սկզբան դար-
 հուրեր էին եւ իրենց յանդգնութիւնը սարսեր
 էր , թիչ թիչ սիրտ առին եւ իրենց առջի պաղ-
 արիւնութիւնը նորէն դառն : Աօտէն , որ միշտ
 մատուկին վրայ կրթնած էր , ցած ձայնով քա-

նի մը խօսք ըսեր էր հայր Տ'Եկրինեի : Աստի
երբոր Ակրիքօլ զայրութէն բորբոքած վերա-
պատուելիին նողկալի դարանագործութիւնը
կշտամբեց , հայր Տ'Եկրինեի գլուխը խոնարհե-
ցնելով համեատարար պատասխանեց . « Արք
պարտքն է թշնամանաց ներել . . . և զանանք
Տէրոջը մատուցանել իբրև ապացոյց մեր խո-
նարհութեան » .

Տակօպէն՝ շաւարած և այս ամեն լաւծնե-
րէն գեոնահար և զած խելքին գալու վտանգի
մէջ էր . այնչափ սրտի տապնապնելէ ևտև՝ այս
նոր ու ահադին հարուածին առջև ստատաբար
լքանիլ սկսաւ :

Ակրիքօլի արդար և խոհական խօսքերը
կտակին մէկ քանի կէտերուն հետ բազմատե-
լով յանկարծ Վարդիէլի միտքը լուսաւորեցին
հայր Տ'Եկրինեի նպատակին վրայ , որով նախ
իր կրթութեանը ձեռք գրեր և ևտքն ալ ճիշ-
ով ընկերութեան մէջ մայուցեր էր գինքը :
— Ար կենաց մէջ առաջին անգամ Վարդիէլ կըր-
ցաւ մէկ հայեցումով նկատել իր գէմ լարուած
խաւարային մեքենայներուն բոլոր զսպանակ-
ները . այն ժամանակ զայրոյթն ու յուսահա-
տութիւնն իր սովորական երկշտութեանը յաղ-
թելով , գեոահասակ քարոզիչը՝ աչքերը պայ-
ծառացած և երեսներն ալ ազնիւ ցամամբ
բորբոքած գոչեց հայր Տ'Եկրինեի . « Ըսել է
է թէ , հայր իմ , երբոր դիւ ձեր դայրոցներէն
մէկուն մէջ դրիք , գիտե՛ք և կարեկցութեան

հողւով չէր, այլ միայն զիս օր մ'իմ ժառանգութենէս հրաժարեցնելու եւ բաժինս ձեր ուխտին ձեռքն անցունելու յուսով էր . . . եւ որպէս թէ զիս ձեր ընչաքաղցութեան զոհել բաւական չէր . . . վատ յափշտակութեան մ'ալ ակամայ գործիք ըրիք : Աթէ գործը միայն ինձ վերաբերեալ ըլլար . . . եթէ միայն իմ ժառանգական իրաւանցս աչք անկած ըլլայիք . . . ձայն չէի հաներ . վասն զի ես այնպիսի կրօնի մը պաշտօնեայ եմ՝ որ աղքատութիւնը փառաւորեց ու սրբազնացուց . կամովին ըրած նուէրս ձերն եղած է . եւ այն մասին պահանջողութիւն մը չեմ ըներ . . . բնաւ չեմ ըներ . . . բայց անոր մէջ մաս մը կայ՝ որ հայրագրիս ձեռօք Արարիոյ խորերէն բերուած խեղճ որբերու իրաւունքն է . եւ չեմ ուզեր որ զանոնք ալ կողոպտէք . . . օրհասականի մը վերջին կամքը կայ, որ մարդասիրական եռանդուն ըղձիւ՝ իր սերնդոց աւետարանական պաշտօն մը, յաւաջղիմութեան, սիրոյ, միութեան, աղատութեան սքանչելի պաշտօն մը կտակած է . եւ ես չեմ ուզեր որ այն պաշտօնը բողբոջելու ժամանակ խեղդուի : Աչ . . . ոչ . . . եւ ես ահա կըսեմ ձեզ որ այն պաշտօնը պիտի կատարուի, թէ եւ բրած պարզեւս ետ առնուլ հարկ ըլլայ ինձ : »

Հայր Տ'էկրինելի եւ Ռօտէն այս խօսքերը լսած ժամանակին՝ ուսերնին թեթեւ կերպիւ անկելով իրարու երես նայեցան :

Ռօտէնի ակնարկութեամբ՝ հայր Տ'էկրի-

նեի անշիտթ հանդարտութեամբ բերանը բա-
ցաւ, եւ ծանր ու հոգելից ձայնով մ'այսպէս
խօսեցաւ՝ առանց աչքը վեր առնելու . « Պ. ՏԸ
Ռէնքօնի ժառանգութեան առթիւ քանի մը դէպք
կը ծագի՝ խիստ կնճռալից երեւոյթով . քանի
մը խօլական ցնորքներ ընդ առաջ կելնեն խիստ
ապառնալից երեւոյթով . բայց բոլորն ալ ամե-
նասպարդ եւ ամենարնական բաներ են
Ռեատի խնդիրն իր կարգաւը ներկայացնենք . . .
մէկդի թողունք մեր վրայ եղած սուտ բարուր-
ները, որոց վրայ ետքը կը խօսինք : Պ. Գար-
րիէլ Ռէնքօն արբան, որուն խոնարհաբար կա-
ղաչեմ որ եթէ խօսքիս մէջ ճշմարտութենէ
մազի չափ խտտորիմ՝ ուղղէ կամ հերքէ, Պ.
Գարրիէլ արբան՝ ժամանակաւ մեր ընկերու-
թենէն ստացած խնամքը փոխարինելու համար,
իր ազատ կամօքն ինձ պարգեւեր էր՝ իբրեւ
մեր ընկերութեան երեսփոխանի՝ ինչ գոյք որ
կրնար օր մը ժառանգել, որուն քանակութիւ-
նըն ինք ալ ինձ պէս չէր գիտեր : » Հայր Տ'Ակ-
րիսեի հարցական աչքով մը Գարրիէլի նայե-
ցաւ՝ որպէս թէ այս ըսածին վկայ բռնելու մը-
տօք :

« Այդ ճշմարիտ է, ըսաւ նորատի քահա-
նայն, պարգեւն ազատ կամօք ըրի : — Այս ա-
ռաւօտ, մտերմական խօսակցութենէ մ'ետեւ,
որուն նիւթը յայտնել հարկ չեմ համարիր՝ հա-
ւատտի ըլլալով որ Պ. Գարրիէլ արբան ալ հա-
ւանութիւն կուտայ այսպէս ընելուս . . . : — Կը

հաւանիմ, պատասխանեց Վարդիէլ քաղաքա-
 վարութեամբ, խօսակցութեան նիւթն այս պա-
 րազայիս մէջ յիշելու հարկ մը չկայ: — Այն
 խօսակցութեան առթիւ, Պ. Վարդիէլ արքան ը-
 րած պարզեւն հաստատ պահելու բաղձանք
 յայանեց . . . չեմ բսեր ինձ համար . . . վասն զի
 երկրաւոր հարստութիւնն իմ աչքիս բնաւ չերե-
 ւիր . . . այլ սուրբ եւ զթասիրական գործերու
 համար, որոց մատակարար պիտի ըլլայ մեր
 բնկերութիւնը: Պ. Վարդիէլ արքային արդա-
 բախտնութեանը կը գիմեմ աղաչելով որ յայտ-
 նէ թէ ինքը չխօսուայաւ եւ չուխակց' ոչ մի-
 այն անաւոր երգմամբ, այլ եւ այն Պ. Տիւմէ-
 նիլի առջեւ շինուած վաւերական խոստմնա-
 գրով: — Ճշմարիտ է, պատասխանեց Վարդի-
 էլ: — Խոստմնագիրը եւ շարադրեցի, յաւելցուց
 ոտաբը: — Բայց Վարդիէլ իրեն բաժինը միայն
 կը պարզեւէր ձեզ, գոչեց Տակօպէս . այս բա-
 րեւէր տղան չէր կրնար ենթադրել որ գուք
 միւս ժառանգները կողոպտելու գործիք ըրած
 էիք զինքը: — Շնորհ ըրէք, պարոն, թոյլ տալ
 ինձ որ խօսքս լմնցնեմ, ըսաւ հայր Տ'Ակրինեի
 հեղիկ քաղաքավարութեամբ . յետոյ պատաս-
 խան տուէք: »

Տակօպէս գծուարաւ կրցաւ իր գանն ան-
 համբերութիւնը դասել:

Վերապատուելի հայրը շարունակեց . « Ու-
 բեմն Պ. Վարդիէլ արքան թէ խոստմնագրով եւ
 թէ երգմամբ հաստատեց ըրած պարզելու եւ որ

առաւելն է , երբոր ժառանգութեան գումարին
մեծութիւնը ինքն ալ մեզ պէս դարմացմամբ լը-
սեց , իր սքանչելի առատարտութեան հաւա-
տարիս կենալով ոչ միայն ըրած պարդեւին վը-
րայ չղղջաց , այլ եւ Նախախնամութեան գո-
հութիւն մատուցանելով վերասին նուիրապար-
ծեց դայն . վասն զի Պ. Նօտարը կը յիշէ ան-
շուշտ , որ Պ. Պարրիէլ արքան խանդակաթ
սիրով համբուրելէս եւ իրեն բսելէս ետեւ թէ
դթասիրութեան կողմանէ նոր սուրբ Աինչեն-
ցիոս մ'է , ձեռքէն բռնեցի , եւ ինքն ալ ինձ
հեռ ծունգի վրայ դալով փառք տուա Սատու-
ծոյ , որ այս ամբաւ հարատութիւնն իր ամենա-
մեծ փառացը ծառայեցրնելու խորհուրդը ներ-
չրնչեր էր իրեն : — Ճշմարիտ է , պատասխա-
նեց Պարրիէլ անկեղծութեամբ . քանի որ գոր-
ծըն ինձ միայն կը վերաբերէր , թէ եւ այն-
պիսի տարապայման հարատութեան մ'երեւան
եղնելէն վայրկեան մ'ապշութիւն եկաւ վրաս ,
աղաա կամօք ըրած պարդեւս ետ առնելու խոր-
հուրդ ամենեւին չանցաւ մտքէս : — Այս պա-
րապաներուն մէջ , շարունակեց նորէն հայր
Տ'Եկրինեի , ժառանգութեան գոցուելու ժամը
հնչեց . եւ որովհետեւ Պ. Պարրիէլ արքայէն
դատ ներկայ գանուող ժառանգ չկար , ուստի
հարկաւ ան եղաւ միակ օրինաւոր ժառանգ այն
անչափ հարատութեան . . . այն , անչափ . . .
եւ ես ալ դթասիրութեամբս ուրախ կըլլամ
անչափ ըլլալուն վրայ , որովհետեւ շատ թրչ-

ւասութիւններ պիտի ախօփին , շատ արտա-
սաքներ պիտի չնջուին անով . բայց ահա յան-
կարծ այս սլարոնը (Տակօպէնն ակնարկելով) ,
սխալ դատողողութեամբ մը՝ զոր 'ի խորոց սրբ-
օէ կը ներեմ եւ որուն վրայ տարակոյս չու-
նիմ որ ետքը պիտի զղջայ , կը վազէ հոս կու-
գայ թշնամանքն ու սպառնալիքը բերանը , եւ
կամբաստանէ զիս թէ արդեւափակ ըրեր եմ ,
չեմ գիտեր ուր , չեմ գիտեր որ աշգականներ-
քը , որպէս զի հոս չկրնան գտնուիլ . . . յար-
մար ժամանակին . . . : — Այո , կամբաստանեմ
ձեզ այդ վատութեան համար , գոչեց զօրականը
կատղելով վերապատուելիին անխորով հանդար-
տութենէն ու յանդգնութենէն . այո . . . եւ
հիմա պիտի . . . : — Արկին անգամ կատաչեմ
ձեզ , պարոն , որ շնորհ ընէք թող տալ ինձ որ
խօսքս շարունակեմ . յետոյ պատասխան ար-
ուէք , ըսաւ խոնարհարար հայր Տէկրինեի մեղ-
րալիր քաղցրութեամբ : — Այո , պիտի պատա-
խանեմ , եւ խայտառակ ընեմ ձեզ , գոչեց Տա-
կօպէն : — Թող տուր . . . հայր իմ . . . թող
տուր , ըսաւ Ակրիքօլ , հիմա խօսելու կարգը
կուգայ քեզ : » Զօրականը լսեց :

Հայր Տէկրինեի նոր վատահութեամբ մը
շարունակեց . « Անշուշտ , եթէ ստուգիւ Պ .
Վարդիէլ արբայէն զատ ուրիշ ժառանգներ
կան , ցուալի է որ սլատեհ ժամանակին չկրցան
հոս ներկայ գտնուիլ : Բայց ինչ կրնանք ընել .
եթէ խղճալեաց եւ կարօտելոց շահը պաշտպա-

ներս տեղ իմ շահս պաշտպանէի , դիպուածին
 բերած այդ առաւելագոյն շահէն սիրով կը հը-
 րածարէի . բայց իբրև փոխանորդ հազարաւոր
 աղքատաց՝ կը պարտաւորիմ այս ժառանգու-
 թեանս վրայ ունեցած բացարձակ իրաւունքս
 ամուր բռնել , եւ աներկբայ եմ որ Պ. Կոտարն
 ալ իմ այս պահանջմանցս օրինաւորութիւնը
 ճանչելով՝ այս բոլոր արժէքներն ինձ կը յանձ-
 նէ , որք ըստ օրինաց իմ սեփականութիւնս են :
 — Իմ միակ պաշտօնս է , ըստ Կոտարը խոով-
 եալ ձայնիւ , կտակարարին կամքը հաւատար-
 մութեամբ կատարել : Ժառանգութեան դոց-
 ւելուն համար որոշուած պայմանաժամէն ա-
 ռաջ Պ. Գարրիէլ Ռէնքօն արբայէն դատ ներ-
 կայացող չեղաւ : Պարզեւագիրը կանոնաւոր է .
 ուստի ժառանգութեան ամբողջ գումարը պար-
 դելընկալին տալէ դատ ուրիշ բան չեմ կրնար
 ընել . . . : »

Սամուէլ այս խօսքը լսելուն պէս՝ երեսը ձեռ-
 քին մէջ ծածկելով խորին հառաչք մ'արձակեց .
 խեղճ ծերուկը Կոտարին ըրած դիտողութեան
 օրինաւորութիւնը ճանչելու պարտաւորեալ էր :

« Բայց , պարոն , դոչեց Տակօպէս օրինաց
 ներկայացուցչին , այդ բանը չկրնար ըլլալ . . .
 դուք չէք կրնար թողուլ որ երկու խեղճ որ-
 բեր իրենց ժառանգութեանէն կողոպտուին : Յա-
 նուն անոնց հօրն ու մօրը կը խօսիմ ձեզ . . .
 կերդնում պատուոյս վրայ , դօրականի պատ-
 ւոյս վրայ , որ կնոջս վատահոլութիւնն ու տկա-

բամառութիւնը խաբելով Սիմօն մարաջախառին
աղջիկները վանքը տարած են , որպէս զի չկըր-
նամ այս առաւօտ զանոնք հոս բերել : Այս ք-
ռածս անչափ ճշմարիտ է , որ դատաւորին բռ-
դոքած եմ : — Ե՛, ինչ պատասխան տուաւ ձեզ ,
հարցուց նօտարը : — Ըսաւ թէ իմ վկայութիւնս
բաւական չէր կրնար ըլլալ աղջիկները վանքէն
հանելու , եւ թէ դատաստանական իշխանու-
թիւնը պէտք է նախ այս գործն ստուգէ . . . :

Այն , պարոն , յարեց Ակրիքօլ , այդպէս ե-
ղաւ Քարտօվիլ օրիորդին համար ալ , որ իբրեւ
խելագար դարմանոցի մը մէջ փակուած է , եւ
սակայն խենթութեան ամենաախորքը նշան մ'ան-
գամ չկայ վրան . ան ալ Սիմօն մարաջախառին
աղջկանց պէս այս ժառանգութեան վրայ իրա-
ւունք ունենալուն , ես ալ այն օրիորդին համար
իշխանութեան դիմեցի : — Ե՛, ինչ եղաւ , հար-
ցուց նօտարը : — Դժբաղդարար ինձ ալ հօրս
պէս պատասխան արուեցաւ թէ իմ պարզ վը-
կայութեամբս բան մը չէիս կրնար ընել . . .
եւ թէ նախ գործն ստուգել պէտք էր : »

Այս միջոցին Բերսաբէ փողոցի դրան զան-
գակին հնչիւնը լսելով Սամուէլի ակնարկու-
թեամբը Վարմիր դահլիճէն դուրս ելաւ : Նօտա-
րը Տակօպէտի եւ Ակրիքօլի դառնալով ըսաւ .
« Քաւ լիցի , պարոններ , որ ձեր անկեղծու-
թիւնը կասկածի ներքեւ ձգել ուզեմ . բայց կը
ցաւիմ որ անհնար է ինձ այդ անապացոյց ամ-
բաստանութեանց կարեւորութիւն տալով գոր-

ծին օրինական ընթացքը դադրեցնել . վասն զի վերջապէս , պարոններ , դուք ալ կը խոստովանիք որ դատաստանական իշխանութիւնը ձեր վկայութեան արժէք չէ տուեր , եւ ըսեր է թէ նախ պիտի ստուգուի , պէտք եղածը խորհուի : Արդ՝ ձեր խղճմտանքին կը հարցնեմ , պարոններ , այսպիսի ծանր պարագայի մը մէջ կրնամ ես այնպիսի պատասխանատուութիւն մը վրաս առնուլ , զոր դատաւորները չեն համարձակած : — Այո՛ , յանուն արդարութեան եւ պատուոյ պարտական էք առնուլ , գոչեց Տակօպէս : — Թերեւս ձեր կարծեօքն այդպէս է , բայց ես իմ կարծեօքս արդարութեան եւ պատուոյ հաւատարիմ կեցած կըլլամ երբոր օրհասականի մը նուիրական կամքը ճշդիւ կատարեմ : Մնաց որ դեռ ամեն յոյս կորսուած չէ ձեզ համար : Եթէ այդ ձեր պաշտպանած անձինք իրենց իրաւունքը յափշտակուած կը կարծեն , կրնան յետոյ դատ բանալ պարզեւատու Պ . Գաբրիէլ արքային դէմ . . . : Բայց հիմա իմ պարտքս է ժառանգութիւնն անմիջապէս անոր յանձնել : Եթէ ուրիշ կերպ բան մ'ընեմ , ծանր պատասխանատուութիւն կը բերեմ վրաս : »

Նօտարին դիտողութիւններն այն աստիճան համաձայն էին օրինաց , որ Սամուէլ , Տակօպէս եւ Ակրիքօլ սարսափահար մնացին : Գաբրիէլ , վայրկեան մը խորհելէ ետեւ՝ յուսահատ որոշում մ'ըրաւ մտքին մէջ եւ ամուրձայնով մ'ըսաւ նօտարին . « Արովհետեւ օրէն-


քրն այս պարագայիս մէջ արդար իրաւունքը պաշտպանելու անդոր է, եւ ալ ծայրայեղ միջոցի մը պիտի դիմեմ. բայց դեռ չդիմած՝ վերջին անգամ կը հարցնեմ Պ. Տ'Եկրինեի արքային թէ այս ժառանգութենէն ինձ ինչպիսի բաժնով դո՞՞ կըլլայ, այս պայմանաւ որ ժառանգութեան միւս բաժիններն ապահով ձեռքերու յանձնուին՝ մինչեւ որ միւս ժառանգներն իրենց իրաւունքը կարենան արդարացնել : — Այդ առաջարկութեան՝ քիչ մ'առաջ ըսածէս դատուրիչ պատասխան չունիմ, ըսաւ հայր Տ'Եկրինեի. խնդիրն իմ վրայ չէ, այլ դժասիրական անհուն շահու մը կը վերաբերի. ուստի Պ. Գարրիէլ արքային մասնական առաջարկութիւնը չեմ կրնար ընդունիլ, եւ իր ուխտերը կը յիշեցնեմ իրեն : — Ուրեմն, պարոն, կը մերժէք առաջարկութիւնս, ըսաւ Գարրիէլ խռովեալ ձայնիւ : — Գլխութիւնն այսպէս կը հրամայէ ինձ : — Բացարձակաբար կը մերժէք : — Այս գանձերով Աստուծոյ ամենամեծ փառացը համար հիմնուելիք ամեն տեսակ սուրբ գործերը մտածելով ամենաախորքը զիջու՞մ մ'ընելու ոչ համարձակութիւն կ'զգամ վրաս եւ ոչ կամք : — Ուրեմն, պարոն, ըսաւ դեռահասակ քահանայն յուղեալ ձայնիւ. որովհետեւ դիս կը հարկարդրէք, եւ ալ իմ պարզեւս ետ կառնում. իմ դիտարութիւնս մի միայն ինձ ինչպիսի ժառանգութիւնը տալ էր՝ եւ ոչ ուրիշներունը : — Աւա խորհեցէք, պարոն արքայ, ըսաւ հայր Տ'Եկրինեի :

կը յիշեցնեմ ձեզ թէ ձեռքս դրաւ որ . . . վաւե-
րական երգում մ'ունիմ . . . : — Գիտեմ, պա-
րոն, ձեր ձեռքը գիր մ'ունիք որով ես կերգ-
նում թէ ըրած պարզեւս երբէք ետ չպիտի
առնում ինչ պատճառանօք եւ ըլլայ, եւ եթէ
այնպիսի ուխտագրծու թիւն մ'ընեմ, ամեն պար-
կեչտ մարդոց ատելի եւ արհամարհելի ըլլամ :
Շատ աղէկ, այնպէս թող ըլլայ, ըսաւ Գաբ-
րիէլ խոր դառնութեամբ, երդմնադանցութեա-
նրա ամեն հետեւանքը յանձն կառնում, ամեն
տեղ հրատարակեցէք . թող ամեն մարդ զիս ա-
տէ ու արհամարհէ . . . բայց Աստուած կը դա-
տէ զիս . « Եւ խեղճ երիտասարդն աչքէն գլո-
րած արտասուք մը սրբեց :

« Ա՛հ, մի վախնար, բարեւիրտ դաւակա,
դոչեց Տակօպէտ յուսարեւելով . ամեն պարկեչտ
մարդիկ քու կողմը կըլլան : — Շատ աղէկ, շատ
աղէկ, եղբայր իմ, ըսաւ Ակրիքօլ : — Պարոն նօ-
տար, ըսաւ այն ժամանակ Ռօտէն իր փոքրիկ սուր
ձայնովը, հասկըցուցէք ուրեմն Պ. Գաբրիէլի որ
կրնայ ուղածին չափ իր երդմանը դրժել, բայց
քաղաքական օրինագիրքը՝ պարզապէս եւ միայն
. . . նուիրական երդման մը պէս դիւրաւ չկրնար
աւրուիլ : — Խօսեցէք, պարոն, ըսաւ Գաբրիէլ :
— Սովրեցուցէք Պ. Գաբրիէլ արբային, ըսաւ
Ռօտէն, թէ իր ըրած պարզեւր երեք պատճա-
ռաւ միայն կրնայ ետ առնուիլ, այնպէս չէ : — Ս. յո՛,
պարոն, երեք պատճառաւ, ըսաւ նօտարը :
— Առաջինն է անակնկալ որդեծնութիւնը, ը-

սաւ Ռօտէն , եւ ես կամաչեմ այս պատճառին
խօսքը Պ. Աբրային ընելու : Երկրորդն է պար-
զեւրնկային ապերախառութիւնը . . . : Արդ՝ Պ.
Գաբրիէլ արբան կրնայ անկասկած ըլլալ մեր
խորին եւ յաւիտենական երախտագիտութեան
վրայ : Աերջապէս անվաւերութեան երրորդ
պատճառն է՝ պարզեւին գործածութեան մասին
պարզեւատուին կամաց անգործադրելի մնալը :
Արդ , Պ. Գաբրիէլ արբան որչափ գէշ կարծիք
մը մէկէն 'ի մէկ ունեցած ըլլայ մեր վրայ , գո-
նէ քիչ մը փորձի ժամանակ մեզ կը շնորհէ զին-
քը համոզելու համար , որ իր պարզեւը՝ ինչպէս
որ ինք կը փախաքի՝ Աստուծոյ ամենամեծ փառ-
քը նպատակ ունեցող գործերու պիտի յատկա-
նայ : — Հիմա , պարոն նօտար , յարեց հայր Տ'էկ-
րինելի , ձեզ կիյնայ լճիռ տալ եւ ըսել թէ Գաբ-
րիէլ արբան կրնայ թէ ոչ ինձ ըրած պարզեւը
եւս առնուլ : »

Երրոր նօտարը պատասխան տալու վրայ
էր , Բերսարէ դռնէն ներս մտաւ երկու նոր
մարդոց հետ :



Գ. ԱՌԻԽ Ժ.

ԲԱՐԻ ՈՔԻ ՄԸ

Ներս մտնող երկու անձանց առաջինն էր
Յարէնկա : Այս դժնէադէմ անձը Սամուէլ տեռ-

հելուն պէս քովը գնաց եւ հարցուց . « Ո՞վ էք
դուք , պարոն : »

Փարէնկ'ս նախ արագ եւ սուր նայուածք
մը ձգեց Ռօտէնի վրայ՝ որ աննշմարելի կեր-
պով ցնցուեցաւ , բայց շուտով իր սովորական
պաղարիւնութիւնը նորէն գտաւ . յետոյ պա-
տասխանեց Սամուէլի . « Ճալմա արքայազուներ
քանի մ'օրէ 'ի վեր Փարիզ հասած է Հնդկաս-
տանէն , որպէս զի այսօր հոս գտնուի , ինչպէս
որ պարանոցը կրած միտալի մ'արձանագրու-
թիւնը կը պատուիրէ իրեն . . . : — Ան ալ , գո-
չեց Վարրիէլ , որ՝ ինչպէս յայտնի է՝ Ճալմայի
նաւարկութեան ընկեր եղած էր Ակորեան կըղ-
ղիներէն ասդին , ուր Աղէքսանդրիայէն եկող
նաւը հանդիպեր էր . ան ալ ժառանգակից է
եղեր . . . : Յիրաւի , կը յիշեմ որ նաւուն մէջ
ըսաւ ինձ թէ իր մայրը գաղղիացի սերունդ է
էր . . . : Բայց իր ճանապարհորդութեան նը-
պատակը չյայտնեց ինձ . . . : Ի՞նչ ազնիւ եւ
քաջ երիտասարդ մ'է այդ հնդիկը . ո՞ւր է : »

Խեղդիչը նոր նայուածք մը ձգեց Ռօտէնի
վրայ , եւ ծանր ծանր շեշտելով ըսաւ . « Երէկ
իրիկուն անոր քովէն մեկնեցայ . . . ըսաւ ինձ
թէ որչափ որ իր շահն այսօր հոս գտնուիլ կը
պահանջէր , կրնար ըլլալ որ այն շահն ուրիշ
պարագաններու զոհէր . . . : Գիշերը մի եւ
նոյն օթեւանին մէջ կեցայ . . . : Այս առա-
ւօտ , երբոր զինքը տեսնել ուղեցի , ըսին ինձ
թէ դուրս ելեր էր . . . : Ուստի հետն ունե-

ցած քարեկա Իութեհէս դրդեալ հոս եկայ՝ յու-
սալով որ թերեւս օգտակար տեղեկութիւններ
կրնամ տալ անոր վրայ : »

Նախընթաց իրիկունն ինկած որոգայթին
վրայ խօսք մը չընելով, ճալմայի նկատմամբ
Ռօտէնի նիւթած մեքենայութեան վրայ լաւ-
լով, արքայաշինն բացակայութիւնը կամաւոր
պատճառի մը տալով, խնդրիչ Ռօտէնին ծա-
ռայութիւն մ'ընել կուզէր, յուսալով որ իր
խորհրդատուութիւնը կը վարձատրէր : Աւե-
լորդ է ըսել թէ Պարէնկա լրբարար սուտ կը
խօսէր : Առջի գիշերն արդելափակ եղած բան-
տէն՝ առաւօտուն կարգէ դուրս ճարտիկու-
թեամբ դաւով եւ յանդգնութեամբ փախչելի
ետեւ՝ ճալմայի դանուած օթեւանը դիմեր էր .
հոն իմացեր էր որ յարգելի դէմքով եւ հասակով
այր մ'եւ կին մը՝ ինքզինքնին Հնդկին ազգա-
կան կոչելով՝ դայն տեսնել ուզեր էին, եւ ա-
նոր շարունակեալ վտանգաւոր զգայազրկու-
թեհէն վախնալով իրենց կառքը փոխադրել
տուեր էին, որպէս զի իրենց տունը տանելով
հարկ եղած խնամքն ընեն :

« Յաւալի է, ըսաւ նօտարը, որ այդ ժա-
ռանդն ալ չկրցաւ հոս ներկայ գտնուիլ, որով այս
մեծահարուստ ժառանգութեան վրայ ունեցած
իրաւունքը դժբաղդարար կորսնցուց . — Ա՛ . . .
մեծահարուստ ժառանգութիւն մը կայ եղեր » ը-
սաւ Պարէնկա աչքը Ռօտէնի երեսն ուղղելով,
որ խոհեմութեամբ անդին նայեցաւ :

Եկող երկու անձանց երկրորդն էր Միսօն
մարաջախտին հայրը , յաղթահասակ եւ կայ-
տառ ծերունի մը . մազերը ճերմակ եւ հարթ .
դէմքը՝ որ թեթեւ կերպիւ դունաւոր էր՝ մի-
անդամայն նրբամառութիւն քաղցրութիւն եւ
կարուկութիւն կը ցուցնէր : Ակրիքօլ անոր դէ-
մը վազեց :

« Գուք հնա , պարոն Միսօն , դռչեց : — Այն
տղան , հիմա հեռու տեղէ կուգամ : Պ . Հարախ
այսօր հոս պիտի գտնուէր ժառանգութեան
դործի մը համար . բայց որովհետեւ տակաւին
առ ժամանակ մը Փարիզէն բացակայ է , ինձ
յանձնեց որ . . . » — Ան ալ ժառանգ է ե-
ղեր . . . Պ . Տրանսօա Հարախ ալ . . . դռչեց
Ակրիքօլ՝ ծերունի դործաւորապետին խօսքը կրտ-
բելով : — Բայց ինչո՞ւ այդպէս դժգոյն ու այ-
լայլած ես , տղան , ինչ կայ , ըսաւ մարաջախ-
տին հայրը դարմացմամբ չորս դին նայելով , ինչ
կայ : — Ինչ պիտի ըլլայ , ձեր թոռները կա-
ղապաւեցին , դռչեց Տակօպէս յուսահատաբար
դործաւորապետին մօտենալով , եւ ահա այս
վատութեան ներկայ գտնուելու համար էր որ
դանոնք Միակերիոյ խորերէն բերի : — Գուք . . .
ըսաւ ծերունի դործաւորապետը զօրականին
դէմքը ճանչելու ջանալով . ուրեմն դնք . . . :
— Տակօպէսն եմ : — Գնք . . . որդւոյս այն-
չախ անձնուէր եղող աղնիւ Տակօպէսն էք ,
դռչեց մարաջախտին հայրը , եւ խանդակաթ
վեղմամբ ծերունի զօրականին ձեռքը սեղմեց .

բայց Սիմօնիս աղջկանը համար չխօսեցանք . . . :
— Աղջկանցը համար ըսէք . . . վասն զի մարա-
ջախան իր կարծածէն աւելի բազում որ է, ըսաւ
Տակօպէս . այս խեղճ աղայքը երկւորեակ են :
— Ո՞ւր են հիմա , հարցուց ծերունին : — Վան-
քըն են : — Վանքն են : — Այո՛ , այս մարդուն
դաւաճանութեամբը , որ զանոնք հոն փակելով
ժառանգութենէ զրկեց : Ո՞ր մարդուն : — Տ'էկ-
րինեի մարքիզին . . . : — Որդւոյս ռխերիմ թըշ-
նամիին , դոչեց ծերունի գործաւորապետը՝
զգուական նայուածք մը ձգելով հայր Տ'էկրին-
եիի վրայ , որուն յանգդնութիւնը բնաւ չէր
դրդուեր : — Մինակ աղջիկները չեն , յարեց
Ակրիքօլ . Պ . Հարտի ալ , իմ ազնիւ եւ բարե-
սիրտ վարպետս ալ դ ժբաղդարար զրկուեցաւ այս
ամբաւ ժառանգութեան իրաւունքէն : — Նո՛նչ
կրտես , դոչեց Սիմօն մարաջախտին հայրը . բայց
Պ . Հարտի չէր գիտեր որ այդ չափ կարեւոր շահ
մը կար իրեն համար . . . իր հեռաւոր բարե-
կամներէն մէկն իրեն պէտք ունենալուն համար
չտապով Փարիզէն ճանքայ ելաւ որպէս զի եր-
թայ տեանէ դայն . »

Այս իրարու ետեւէ եկած յայտնութեանց
վրայ Սամուէլի յուսահատութիւնն ալ հետըզ-
հետէ կաւելնար , բայց սրտովը հեծելէ դատ
ուրիշ բան չէր կրնար ընել . վասն զի կտակո-
ղին կամքը դ ժբաղդարար բացորոշ էր :

Հայր Տ'էկրինեի անհամբերութեամբ վերջ
տալ ուղեց այս տեսարանին՝ որ իր առերևոյթ

հանդարտութեան հակառակ զինքը կը շփոթեցընէր . ուստի ծանր եւ դժգոհ կերպիւ մ'ըսաւ . « Ս.յս ամենը պէտք է շուտով վերջ մ'ունենան , պարոն . եթէ դրպարտութիւնը կարենար ինձ դպչիլ , արդէն տեսնուած իրողութիւններով դիւրաւ կը հերքէի . . . : Ինչո՞ւ համար նողկալի մեքենայութեանց կընծայութայդ ժառանգաց բացակայութիւնը՝ որոց անուսով այս դօրականն ու որդին այսպէս թշնամանալիր կերպիւ բողոք կը բառնան : Ինչո՞ւ համար ատոնց ալ բացակայութիւնն ուրիշ պատճառ մ'ունեցած չըլլայ՝ ինչպէս այն հնդիկ երիտասարդինը , Պ . Հարաիինը , որ ինչպէս իր հաւատարիմ մարդը կըսէ , զինքն այսօր հոս դանուելու պարտաւորող շահերուն այս ատիճան կարեւորութիւնը չգիտէ եղեր : Աւելի հաւանական չէ կարծել որ Պ . Սիմօն մարաջախտին աղջիկներն ու Քարտովիլ օրիորդն ալ խիստ բնական պատճառներով չեն կրցած այս առաւուտ հոս ներկայանալ : Արկին կըսեմ , այս տեսարանը խիստ երկար տեւեց . կը կարծեմ որ Պ . նօտարն ալ ինձ պէս կը խորհի թէ այս նոր ժառանգաց երեւան ելնելը քիչ մ'առաջ իրեն ներկայացուցած խնդրոյս մէջ փոփոխութիւն մը չկրնար բնաւ ընել . այսինքն թէ ես՝ իբրեւ փոխանորդ աղքատաց՝ որոց Պ . Պարիկէլ արքան իր բոլոր ստացուածքը պարզեւեց , միակ տէրն եմ այս ընչից , թէ եւ ինք հիմա ժամանակն անցնելէ ետեւ գէ՞մ կենալ ուղէ : Ես՝ ինչ-

պէս որ խօսք տուած եմ՝ դարձեալ այս հան-
դիսաւ որ վայրկենիս մէջ ամենուն առջեւ խօսք
կուտամ որ այս հարատու թիւնը Տիրոջն ամե-
նամեծ փառացը համար պիտի դործածեմ . . . :
Հաճեցէք, Պ. նօտար, բացորոշ պատասխան մը
տալ եւ այս անհաճոյ տեսարանը վերջացնել . . . :
— Պարոն, ըսաւ նօտարը բարձր ձայնիւ, յա-
նուն արդարութեան եւ հաւատոյ, հողւոյս եւ
խղճիս վկայութեամբ հաւատարիմ եւ անկողմ-
նակալ դործադիր ըլլալով Պ. Մարիտա Ռէնթո-
նի վերջին կամաց, կը յայտնեմ թէ Պ. Գաբ-
րիէլ Ռէնթոն արբային ըրած ըստ օրինի պար-
զեւատութեամբ, դուք Պ. Տ'Էկրիսնեի ար-
բայ, միակ տէրն էք այս ամեն ընչից, զորս ահա
ձեզ կը յանձնեմ, որպէս զի պարզեւատուին
ուխտած փափաքին համեմատ դործածէք : »

Այս խօսքն անչափ համողմա՛մբ եւ լուրջ
կերպիւ արտասանուեցաւ, որ ժառանգաց
պաշտպաններուն վերջին տարտամ յոյան ալ
ի սպառ. ցրեցաւ : Ամուէլ ալ բողոքով ին դոյ-
նը նետելով անձկութեամբ Յերաքէի ձեռքը
սեղմեց, որ իր քով մօտեցեր էր, եւ արտաս-
ւայ խոշոր կաթիլներ ծարեղ սկսան երկու ձե-
րունիներուն երեսն 'ի վար : Տակօպէռ եւ Ակ-
րիքօլ տխուր սրտաբեկութեան մէջ ինկան :
Նօտարին այն խօսքը թէ ինքն օրինաց դոր-
ծադիր պաշտօնեայներէն աւելի հաւատ չէր
կրնար ընծայել իրենց բողոքին, զիրենք բողո-
քով ին յուսակաուր ըրեր էր : Գաբրիէլ ամենէն

աւելի կը տառապէր . խիղճը դառնապէս կը
մտրմոքէր խորհելով որ իր կուրուժեամբն ա-
կամայ պատճառ եւ դործիք եղեր էր այս նող-
կալի յափշտակութեան : Այս պատճառաւ եր-
բոր նօտարը՝ եղեւնափայտէ մնառակին մէջ պահ-
ւած արժէքներուն գումարն ստուգուելէ ետեւ
հայր Տ'Եկրինեի ըսաւ . « Առէք այս մնառակը ,
պարոն » , Գարրիէլ ցաւազին յուսարեկու-
թեամբ գոչեց . « Աւանդ , կը թուի թէ այս պա-
րադաներուն մէջ անողոք ճակատագիր մը ծան-
րացած է կարեկցութեան սիրոյ կամ կակծա-
նաց արժանի եղող ամեն անձանց վրայ . . . :
Ո՛հ , Աստուած իմ , աւելցուց դեռահասակ քա-
հանայն ձեռքերը ջերմեռանդութեամբ իրար
կցելով , քու գերազոյն արդարութիւնդ չկրնար
ներել որ այսպիսի անօրէնութիւն մը կատար-
ւի : »

Կարծեա թէ երկինք լսեց նորասի քարոզ-
չին աղօթքը . . . : Հաղիւ այս խօսքն ըսեր
էր , տարօրինակ անցք մ'անցաւ : Ռօտէն՝ առանց
Գարրիէլի բացագանչութեան լմնալուն սպա-
սելու , նօտարին հրամանին համեմատ մնառակ-
կը թեւերուն մէջ վերցուցեր էր՝ ուրախ եւ յաղ-
թական շունչ մ'առնելով : Ուստի այն միտջո-
ցին որ հայր Տ'Եկրինեի եւ Ռօտէն ինքզինքնին
գանձուն տէր կը կարծէին , յանկարծ քովի
սենսեկին գուռը բացուեցաւ , ուրկէ պահ մ'ա-
ռաջ ժամացոյցին հնչիւնը լսուեր էր , եւ կին
մ'երեւցաւ սեմին վրայ . . . : Գարրիէլ դայն

տեսնելուն պէս մեծածայն գոչեց եւ կարծեա
թէ կայծակնահար եղաւ : Սամուէլ եւ Բերաա
բէ ծունդի վրայ ինկան ձեռնամած : Երկու խ
րայէլացիներն անբացատրելի յուսով մը վառե
ցան : Դակ տեսարանին միւս ամեն դերասան
ներն ապշեցան մնացին . . . Ռօտէն . . . Ռօ
տէն անգամ . . . երկու քայլ ետ քաշուեցաւ ,
եւ սնաուկը նորէն սեղանին վրայ դրաւ դողահար
ձեռօք : Թէպէտ այս դիպուածը բնականի դէմ
բան մը չունէր , որովհետեւ քովի սենեակին
դուռը բացուելով կին մը տեսնուեր էր , բայց
անակնկալ ըլլալուն համար վայրկեան մը խոր
լռութիւն տիրեց : Ամենուն ալ կուրծքը կը ճըն
շուէր , եւ կարծեա թէ շունչ չէին կրնար առ
նուլ , վերջապէս ամենն ալ այս կինը տեսնե
լով տեսակ մ'երկխոզիւ եւ անսահմանելի անձ
կութեամբ խառն հիացում մը կ'զգային . . .
վասն դի հարիւր յիսուն տարի առաջ դահլճին
մէջ դրուած պատկերին նախատիպը կը թուէր :
Նոյն գաակը , նոյն ծալ'ի ծալ երկայն շքազ
գեան հագած էր եւ նոյն տիրութեամբ ու
համբերատարութեամբ տպաւորեալ դէմքն ու
նէր : Այս կինը ծանրաքայլ յառաջ եկաւ՝ ա
ռանց իր ներկայութենէն պատճառեալ խոր տը
պաւորութեան ուշադրութիւն ընելու , եւ ա
բայրով ու անագով դրուագեալ դարակաւոր
պահարաններուն մէկուն քով երթալով , ոսկե
գօծ պղնձէ դրուագներուն մէջ ծածկեալ զըմ
պանակ մը մզեց , եւ վերի դարակը բանալով

մէջէն կնքեալ մագաղաթէ պատեան մ'առաւ .
յետոյ սեղանին մօտենալով այն թուղթը հօտա-
րին առջեւ դրաւ, որ անշարժ եւ անշշուէնջ մե-
քենայարար առաւ զայն :

Այս ընելէ ետեւ, կլինը ախուր եւ միան-
գամայն քաղցր հայուածք մը ձգեց Չարրիէլի
վրայ, որ իր ներկայութենէն կարծես թէ յա-
փրշտակուեր էր, եւ դէպ 'ի բակին դուռը
գնաց, որ բաց մնացած էր : Սամուէլի եւ Բեր-
սաբէի մօտէն անցած ժամանակ՝ որք միշտ
ծունդի վրայ եկած էին, վայրկեան մը կանգ
առաւ, իր գեղեցիկ գլուխը դէպ անոնց ծուկ,
եւ գորովալիր կերպով մ'երեանին դիտելէ ե-
տեւ ձեռքն երկնցուց որ պագնեն . յետոյ ծա-
նրր ծանր դուրս ելաւ դռնէն, եւ գլուխն ե-
տին դարձընելով վերջին հայուածք մ'ալ Չար-
րիէլի վրայ ձգելէ ետեւ՝ քիչ քիչ աներեւոյթ
եղաւ : Անոջ մեկնիլը վերջ տուաւ այն ընդհա-
նուր հիացման՝ որ քանի մը վայրկեանէ 'ի վեր
բոլոր ներկայ գտնուողները թովեր էր :

Ամենէն առաջ Չարրիէլ լռութիւնը խզեց
այլայլեալ ձայնիւ մ'ինքնիրեն մրմնջելով . «Ան
է . . . դարձեալ ան . . . հնա . . . այս տան
մէջ : — Ո՞վ . . . այս կլինը . . . եղբայր իմ, հար-
ցուց Ակրիքօյ՝ քարողչին դժգունութեանն ու
այլայլութեանը վրայ սիրան անհանգիստ ըլլա-
լով, վասն զի երկաթագործ երիտասարդը մինչ-
չեւ այն ժամանակ այն կնոջ եւ պատկերին
տարօրինակ համամանութիւնը չէր նշմարած :

բայց եւ այնպէս ամենուն հետ ինք ալ ապշեր
մնացեր էր առանց պատճառը հասկընալու :

Տակօպէս եւ Յարէնկա ալ նոյն վիճակին
մէջ էին :

« Այս կինն ո՞վ է . . . հարցուց նորէն Ակ-
րիքօլ Գարրիէլի ձեռքը բռնելով որ սառի պէս
պաղ եւ խոնաւ էր : — Նայէ . . . ըսաւ դե-
ռահասակ քահանայն . այս պատկերները հարիւր
յիսուն տարիէ 'ի վեր հոս են . . . » Եւ ձե-
ռօքն երկու պատկերները ցուցուց , որոց առ-
ջեւ նստած էր ինք այն ժամանակ :

Գարրիէլի շարժումէն՝ Ակրիքօլ , Տակօպէս
եւ Յարէնկա աչքերնին վառարանին կողմը
դարձունելով երբոր երկու պատկերները տեսան՝
երեքը մէկէն գոչեցին .

« Ա՛ն է . . . նոյն կինն է , գոչեց երիտաւ-
տասարդը պակչելով , եւ պատկերն ալ հարիւր
յիսուն տարիէ 'ի վեր հոս դրուած է եղեր . . .
— Ի՛նչ կը տեսնեմ , Աստուած իմ , Սիմօն մա-
րաջախտին բարեկամն ու դէտը , գոչեց Տակօ-
պէս մարդուն պատկերը նկատելով . այս , անց-
եալ տարի Սիպերիա եկող ու մեզ գտնող մար-
դուն պատկերն է . . . իր տխուր ու քաղցր
դէմքէն եւ իր միայսար սեւ յօնքէն կը ճանչեմ :
— Այո՛ , նոյն ինքն է , ճակատը սեւ դիծով մար-
դը՝ որ Գանդէսի եղերքը խեղդեցինք ու թա-
ղեցինք , կըսէր ինքնիրեն Յարէնկա՝ սարսա-
փահար դողալով . այս մարդն է դարձեալ որ
Պօլվանիի որդւոցմէն մէկը անցեալ տարի ճա-

վա՛ Չամատիի աւերակներուն մէջ՝ կը հաւատաստէր թէ սպանութեանէն ետեւ Պոմպայի դռներէն մէկուն մօտ տեսեր էր . . . այն անիծեալ մարդը՝ որ ասին անցած տեղերն իր ետեւը մահ կը թողուր . . . եւ սակայն հարիւր յիսուն տարիէ՛ ՚ի վեր այս պատկերը հոս կեցած է : »

Պարէնկա ալ՝ Տակօպէսի ու Ակրիքօլի պէս չէր կրնար աչքը պատկերէն դատել :

« Ի՛նչ դարմանալի եւ խորհրդաւոր նմանութիւն մ'է այս , կըսէր ինքնիրեն հայր Տ'էկրինեի . յետոյ որպէս թէ յանկարծական գաղափար մը մտքին մէջ ծագելով՝ ըսաւ Քարրիէլի . « Բայց այս այն կի՞նն է որ Ամերիկայի մէջ ձեր կեանքն ազատեց : — Նոյն ինքն է , պատասխանեց Քարրիէլ զնցուելով . . . եւ սակայն ըսեր էր ինձ թէ Ամերիկայի հիւսիսակողմը պիտի երթար . . . աւելցուց նորատի քահանայն ինքնիրեն : — Բայց ի՞նչպէս հոս այս տան մէջ կը դռնուի , ըսաւ հայր Տ'էկրինեի Սամուէլին դառնալով պատասխան տուէք , պահապան . . . : Այդ կի՛նը մեզնէ առաջ կամ ձեզի հետ մտեր էր հոս . . . : — Ես ամենէն առաջ եւ առանձին մտայ հոս երբոր դար ու կէսէ՛ ՚ի վեր առաջին անգամ դուրը բացուեցաւ , պատասխանեց Սամուէլ ծանրութեամբ . — Ուրեմն այդ կնոջ հոս ներկայութիւնն ի՞նչպէս կը մեկնէք , աւելցուց հայր Տ'էկրինեի . — Մեկնելու չեմ աշխատիր , ըսաւ հրեայն . կը տեսնեմ . . . կը հաւատամ . . . եւ հիմա ալ կը յուսամ , աւելցուց :

տարակուսական դէմքով մը Ռերսարէի նայե-
լով : — Բայց , կրկին անգամ կըսեմ ձեզ , պէտք
է որ այդ կնոջ հոս ներկայութիւնը մեկնէք , ը-
սաւ հայր Տ'էկրինեի տարտամ կասկած մը սրտին
մէջ մ'զգալով . ո՞վ է , ի՞նչպէս հոս մտեր է :
— Իմ գիտցածս այս է , պարոն , որ հայրս շատ
անգամ ըսած էր ինձ թէ այս տունը գեանին
տակէն հաղորդակցութեան ճանքայններ ունի
թաղին հեռաւոր կողմերուն հետ : — Ա՛, հիմա
խնդիրը պարզուեցաւ , ըսաւ հայր Տ'էկրինեի .
կը մնայ միայն գիտնալ թէ այդ կինն ի՞նչ նը-
պատակաւ այս տունը մտած կրնայ ըլլալ : Իսկ
այս պատկերին հետ ունեցած դարմանալի նմա-
նութիւնը քնու թեան մէկ խաղն է :

Ռօտէն ալ այս դարմանալի կնոջ երեւցած
ժամանակ մէկէն 'ի մէկ հիացեր էր . բայց եր-
բոր կնքեալ ծրար մը նօտարին տալը տեսաւ ,
փոխանակ այս երեւման տարօրինակութեանը
վրայ խորհելու , ընկերութեան սեփականութիւ-
նըն եղած գանձը վայրկեան մ'առաջ առնելով
տունէն դուրս ելնելէն զատ ուրիշ բան չէր մը-
տածեր . տարտամ սրտատանջութիւն մը կ'զգար
տեսնելով այն սեւակնիք պատեանը՝ զոր Գար-
րիէլի պաշտպանուհին նօտարին տուեր էր եւ
նա ալ մեքենայաբար ձեռքը բռնած էր : Ուս-
տի Ռօտէն դահլճին մէջ տակաւին տիրած հիւս-
ցումն ու լռութիւնը խիստ յարմար միջոց մը հա-
մարելով սնտուկը վերցընել տանելու , արմու-
կովը կամաց մը մշտեց հայր Տ'էկրինեին , նշա-

նական ակնարկ մ' ըրաւ անոր, եւ եղեւնեայ
անտուկը թեւին տակն առնելով՝ դէպ'ի դուռը
շտկուեցաւ :

« Վայրկեան մը, պարոն, ըսաւ անոր Սա-
մուէլ ոտքի վրայ ելնելով եւ ճանքան գոցելով .
կազաչեմ Պ . նօտարին որ հիմա իրեն տրուած
պատեանը քննէ . . . յետոյ կրնաք դուրս ել-
նել : — Բայց, պարոն, ըսաւ Ռօտէն բռնի անց-
նել երթալ ուղելով, խնդիրը վերջնական կեր-
պով 'ի նպատակ հայր Տ'է կրկնելի վճռուած է . . .
ուստի թող տուէք որ . . . — Չեզ կըսեմ,
պարոն, ըսաւ ծերունին ձայնը բարձրացընե-
լով . այս անտուկը չկրնար հօսկէց դուրս ելնել
մինչեւ որ Պ . նօտարն իրեն տրուած պատեանին
ինչ ըլլալը չհասկընայ : »

Սամուէլին այս խօսքն ամենուն ուշադրու-
թիւնը գրաւեց : Ռօտէն ետ դառնալու հար-
կադրեցաւ . . . ոխերիմ աչքով մը Սամուէլի
երեսը նայելով, որմէ հրեայն՝ իր անյողողող բը-
նաւորութեան հակառակ սարսուեցաւ : Նօտարը
Սամուէլի առաջարկութեան անսալով պատեանն
ուշադրութեամբ քննեց :

Տէր Աստուած, գոչեց յանկարծ, ի՞նչ կը
տեսնեմ . . . : Ա՛հ, աւելի աղէկ : »

Նօտարին այս բացադանչութենէն ամենուն
աչքն անոր վրայ դարձաւ :

« Օ՛հ, կարդացէք, պարոն, կարդացէք,
գոչեց Սամուէլ ձեռքերն իրար կցելով, գու-
ցէ նախազգացութիւնս սխալած չէ : — Բայց,

սլարոնս : ըսաւ հայր Տ'Եկրինեի նօտարին , ինք
ալ Ռօտէնի պէս սրտատանջութեան մէջ իյնա-
լով , ի՞նչ թուղթ է այդ : — Կտակին յաւելուա-
ծըն է , պատասխանեց նօտարը : յաւելուած մը՝
որ ամեն բան խնդրոյ ներքեւ կը ձգէ : — Ի՞նչ
կըսէք , պարոն , գոչեց հայր Տ'Եկրինեի բար-
կութեամբ նօտարին մօտենալով , ամեն բան
խնդրոյ ներքեւ կը ձգէ , եւ ի՞նչ իրաւամբ :
— Անհնարին է , յաւելցուց Ռօտէն , կը բողո-
քենք : — Գարրիէլ . . . եւ դու հայր իմ , մը-
տիկ ըրէք , գոչեց Ակրիքօլ , ամեն բան կոր-
սուած չէ , դեռ յոյս կայ . Գարրիէլ , կը լսեա :
— Ի՞նչ կըսես , ըսաւ դեռահասակ քահանայն
ոտքի վրայ ելնելով եւ հազիւ իր եղբայրագրին
ըսածին հաւտալով : — Պարոններ , ըսաւ նօ-
տարը , պէտք է որ այս պատեանին մակագիրը
ձեզ կարդամ . . . կտակին բոլոր տրամադրու-
թիւնները կը փոխէ կամ մանաւանդ ետ կը ձը-
գէ : — Գարրիէլ , գոչեց Ակրիքօլ քարոզչին պա-
րանոցը նետուելով , ամեն բան ետ կը մնայ . . .
ուրեմն բան մը կորսուած չէ : — Պարոններ , մը-
տիկ ըրէք , ըսաւ նորէն նօտարը եւ հետեւեա-
լը կարդաց :

« Ներփակեալ թուղթը յաւելուած մ'է ,
« որ մէջը բացատրուած պատճառներով կտա-
« կին գործադրութիւնը 1832 յունիս 1 ին կը
« թողու , առանց ամենեւին փոփոխելու կտա-
« կին տրամադրութիւնները , զոր այսօր ցե-
« րեկուան ժամը մէկին գրեցի . . . : Տունք

« վերստին պիտի գոցուի, եւ ստակներն աւան-
« դապահին քով պիտի մնան. որպէս զի 1832
« յունիս Նին օրը ժառանգներուն բաժնուի :

« Վիլթանէօզ . . . այսօր 13 փետր . 1682
իրիկուան ժամը տասն եւ մէկին :

ՄԱՐԻՈՍ ՏԸ ՌԷՆԲՕՆ . »

— Այդ յաւելուածը կեղծ է, չեմ ընդունիր
դոչեց հայր Տ'Եկրինեի յուսահատ կատաղու-
թեամբ : — Նօտարին ձեռքը բերող տուող կի-
նը կասկածելի է մեզ . . . աւելցուց Ռօտէն .
այդ յաւելուածը սուտ է : — Այ, պարսն, ըսաւ
նօտարը խստութեամբ, երկու ստորագրու-
թիւնները բաղդատեցի, մի եւ նոյն են : Մնաց
որ . . . այս առաւօտ ներկայ չգտնուող ժա-
ռանգաց համար ըսածս ձեզ ալ կը յարմարի . . .
կրնաք այս յաւելուածին վաւերականութեան
դէմ դատ բանալ . բայց առ այժմ ամեն բան
կախ եւ իրրեւ չեղած կը մնայ . . . որովհե-
տեւ ժառանգութեան գոցուելուն պայմանա-
ժամը երեք ու կէս ամիս ետ ձգուած է . . . »

Երբոր նօտարն այս վերջին խօսքն արտա-
սանեց, Ռօտէնի եղունգներէն արիւն վաղել
սկսաւ . . . առօջին անդամ իր դաշկահար շրթ-
թունքը կարմրած երեւցան :

« Ո՛հ, Աստուած իմ, լսեցիր ինձ . . . ըն-
դունեցիր աղաչանքս . . . դոչեց Քաբրիէլ ծուն-
կի վրայ գալով, երկու ձեռքը երկիւղած ջեր-
մեռանդութեամբ իրօր կցելով եւ իր հրեշտա-


կային աչքը դէպ երկինք վերցընելով . քու
գերագոյն արդարութիւնդ չէր կրնար թողու-
որ անօրէնութիւնը յաղթանակէր : — Ի՞նչ կը-
սես . բարի զաւակս . դոչեց Տակօպէս . որ ու-
րախութեան առաջին ազդեցութեան մէկէն 'ի
մէկ ապշելով՝ յաւելուածին միտքը լաւ չէր
հասկցեր : — Ամեն բան ետ մնաց . հայր իմ .
դոչեց Ալրիքօլ . հոս ներկայանալու պայմա-
նաժամն այս օրէն երեք ամիս ու կէս ետքն
է . . . եւ հիմա որ այս մարդոց ինչ ըլլալը
հասկցուեցաւ . . . (Ռօտէնն ու հայր Տ'Էկրին-
եին ակնարկելով) ալ վախնալու բան մը չու-
նինք ասոնցմէ . պէտք եղած զգուշութիւննե-
րը ձեռք կառնուին , եւ որքերը Քարտօվիլ օ-
րիորդը , իմ աղնիւ վարայեսս Պ. Հարտի , եւ
հնդիկ երիտասարդն իրենց ժառանգութիւնը
կատանան : »

Անհնար է նկարագրել Քարրիէլին ու Ալ-
րիքօլին , Տակօպէսին ու Սիմօն մարաջախտին
հօրը , Սամուէլին ու Բերսաբէին հրճուանքն
ու ցնձութիւնը : Ծարէնկա միայն տխրած եւ
ձունջ կեցեր էր սեւադիժ ճակտով մարդուն
պատկերին առջեւ : Իսկ հայր Տ'Էկրինիի ու
Ռօտէնի կատաղութիւնն ալ նոյնպէս անհնար է
նկարագրել , մանաւանդ երբոր Սամուէլ եղեւն-
եայ սնտուկը վերցուց մէկ կողմ դրաւ : Նօ-
տարը՝ կտակին յաւելուածը ծոցը դնելով որպէս
զի օրինաց պահանջած ձեւովը բանալ տայ , դի-
տողութիւն մ'ըրաւ , որմէ Սամուէլ հասկցաւ

որ իր քով գտնուած այս ամբաւ հարստութիւնն յայտնի ըլլալէ ետեւ՝ առաւել խոհեմութիւն էր Գաղղիոյ Պանքան տանիլ յանձնել :

Մինչդեռ բոլոր ազնուախոհ սիրտերը պահ մը տառապելէ ետեւ ուրախութեամբ եւ յուսով կը յորդէին , հայր Տ'Էկրինեի եւ Ռօտէն տունէն դուրս կելնէին սիրտերնին մահաչունչ կատաղութեամբ բորբոքեալ : Վերապատուելի հայրն իր կառքը նստելով՝ ըսաւ իր մարդոց . « Սէն—Տիդիէի ապարանքը » . յետոյ շուարեալ եւ սրտաբեկ բարձերուն վրայ իյնալով երեսը ձեռքին մէջ ծածկեց եւ երկար հառաչք մ'արձակեց : Ռօտէն քովը նստաւ . . . : եւ սրտմտութեամբ ու արհամարհանօք դիտեց այս ընկճեալ ու վհատեալ մարդը . « Ա՛յտ մարդ . . . ըսաւ ինքնիրեն կամաց մը , կը յուսահատի . . . եւ սակայն . . . : »

Քառորդ մ'ետքը կառքը Պապիլոն փողոցը հասաւ եւ Սէն—Տիդիէի՝ ապարանին բակը մտաւ :



Գ.ԼՈՒԻՍ ԺԱ.

ԵՂԻՑԻՆ ԱՌԱՋԻՆՔ ՅԵՏԻՆ ԵՒ ՅԵՏԻՆՔ

ԱՌԱՋԻՆ

Հայր Տ'Էկրինեի կառքն արագ ընթացքով Սէն—Տիդիէի ապարանը՝ հասաւ : Ճանրան Ռօտէն լուռ նստած՝ շարունակ հայր Տ'Էկրինեին

զիտեց, որ այս ճախող վրիպումէն զգացած
կակիծն ու կատաղութիւնն արտաշնչել սկսաւ
երկար մենախօսութեամբ մը, որուն մէջ յա-
ճախ կը բացագանչէր, կը հեծէր ու կը զայ-
րանար նախասահմանութեան անդուծ հարուա-
ծին դէմ՝ որ ամենէն քաջահիմն յոյսերը մէկ
վայրկենի մէջ կոչնչացընէր :

Երբոր հայր Տ'Էկրինեիի կառքը Աէն—Տի-
ղիէի ապարանին բակը մանելով սիւնազարդ
գաւթին առջիւ կեցաւ, պատուհանի մը վարա-
գոյրին ծալքերուն ետեւէն իշխանուհւոյն երեսը
կիսով չափ տեսնուեցաւ, որ սրտատանջ ան-
համբերութեամբ կուգար նայելու թէ եկողը
հայր Տ'Էկրինեին էր : Ասկէց զատ, պատշաճից
ամեն օրինաց հակառակ, այս մեծ տիկինը՝ որ
առփոքար խիստ զգուշաւոր եւ խիստ նրբա-
նըկատ երեւոյթ մ'ունէր, վաղելով դուրս ելաւ
իր օննեակէն, եւ սանդուղին քանի մ'աստի-
ճաններէն վար իջնելով հայր Տ'Էկրինեիի դէմը
վաղեց, որ վշտահար եւ նկուն դէմքով մը վեր
կեղնէր : Իշխանուհին վերապատուելիին դժգոյն
եւ այլայլեալ դէմքը տեսնելուն պէս, կասկա-
ծելով որ ամեն բան կորսուած էր, մէկէն կանգ
առաւ եւ երեսին գոյնը նետեց . . . : Իր վա-
ղեմի տարփաւորին հետ փոխանակած արագ
նայուածք մ'իր կասկածին ստուգութեանը վը-
րայ տարակոյս չթողուց : Ռօտէն խոնարհաբար
վերապատուելիին ետեւէն կերթար : Երկուքն
ալ իշխանուհւոյն առաջնորդութեամբ վեր ել-

Ներսիս անոր սենեակը մտան : Գուռը գոցուելէ
ետեւ՝ իշխանուհին հայր Տ'էկրիմեիի դառնա-
լով անպատմելի անձկութեամբ գոչեց . « Ի՞նչ
եղաւ . . . : »

Վերապատուելի հայրը՝ փոխանակ այս հարց-
ման պատասխանելու , աչուրները կատաղու-
թեամբ բորբոքած , շրթուները ձերմկած , դէմ-
քը վարակած , իշխանուհուոյն նայեցաւ ու ը-
սաւ . « Գիտէ՞ք սրչափ գուժարի կը հասնի այս
ժառանգութիւնը , զոր մեք քառսուն միլիոն
կը կարծէինք : — Ար հասկընամ , գոչեց իշխա-
նուհին , մեզ խաբեր են . . . այդ ժառանգու-
թիւնը ոչինչ է եղեր . . . եւ ձեր ալ այնչափ
աշխատութիւնն 'ի դերու ելաւ : — Այո . . .
աշխատութիւնն 'ի դերու ելաւ , պատասխա-
նեց վերապատուելին՝ բարկութենէն ակռաները
կրճատելով , 'ի դերու ելաւ . եւ ժառանգութեան
գուժարն ալ չէ թէ քառսուն միլիոն . . . այլ
երկու հարիւր տասներկու միլիոն էր : — Եր-
կու հարիւր տասներկու միլիոն , կրկնեց իշ-
խանուհին ապշելով եւ քայլ մ'եւ երթալով .
անհնարին բան է : — Ես աչքովս տեսայ սրն-
տուկի մը մէջ պահուած արծէթուղթերը՝ զորս
նօտարն ալ մի առ մի հաշուեց : — Երկու հարիւր
տասներկու միլիոն , կրկնեց նորէն իշխանու-
հին բեկեալ սրտիւ . բայց թագաւորական ան-
հուն գորութիւն մ'էր այդ . . . ինչ ըրիք , հրա-
ժարեցա՞ք . . . մինչեւ վերջին վայրկեանը չմա-
քաւեցա՞ք առնն հնարաւոր միջոցներով : — Է՛հ ,

աիկին , ինչ որ կրցայ՝ ըրի , հակառակ Չար-
րիէլի դաւաճանութեանը , որ այս առաւօտ յայ-
տարարութիւն ըրաւ թէ մեզ կուրանայ եւ
մեր ընկերութենէն կը բաժնուի : — Ապերախ-
ար , ըսաւ իշխանուհին պարզութեամբ : — Նը-
ւիրատուութեան խոստմնագիրը՝ որ նախագգու-
չութեամբ նօտարին վաւերացնել տուած էի ,
այնչափ օրինաւոր էր , որ այն կատարի դին-
ւորին եւ որդւոյն բողոքանաց հակառակ՝ նօ-
տարը դանձն ինձ յանձնած էր : — Նրկու հա-
րիւր տասներկու միլիօն , կրկնեց իշխանուհին
ձեռքերն իրար կցելով . յիրաւի երազ կը թուի :
— Այո՛ , պատասխանեց հայր Տ՛՛կրիննէի դառ-
նութեամբ , մեզ համար այս ստացուածքն ե-
րազի պէս բան մ'եղաւ . վասն զի կտակի յա-
ւելուած մ'երեւան ելաւ , որ երեք ամիս ու կէս
եւս կը ձգէր կտակին բոլոր արամադրութիւն-
ները . արդ՝ հիմա ժառանգաց խումբը՝ մեր իսկ
նախագգուչութեամբ արթնցած են , գումարին
մեծութիւնը գիտեն . . . այսուհետեւ զգոյշ կը
կենան . ուստի մեզ համար ամեն բան կորսուած
է : — Բայց այդ յաւելուածը ո՞ր անիծածն երե-
ւան հանեց : — Աին մը : — Ի՞նչպէս կին : — Չեմ
գիտեր ինչ տեսակ թափառական կին մը , զոր
Չարրիէլ արդէն Ամերիկայի մէջ տեսեր է , կը-
սէ , իր կեանքն ալ մահուրնէ ազատեր է եղեր :
— Ի՞նչպէս այդ կինը հոն գտնուեցաւ : Ին-
չէն գիտէր այդպիսի յաւելուած մը կեցած ըլ-
լալը : — Այս ամենը կարծեմ թէ յառաջուց նիւթ-

ւած ու պատրաստուած էր թշուառական հրէի
մը հետ՝ որ տանը պահապանն է, եւ որուն ըն-
տանեացը յանձնուած է կտակեալ ստակին ա-
ւանդապահութիւնը երեք սերունդէ՝ 'ի վեր-
անշուշտ չարածճի հրեայն դադանի հրահանգ
մ'ունեցած ըլլալու է ժառանգներուն վրայ ար-
դիւման կասկած մ'ըլլալու պարագային նկատ-
մամբ . վասն զի Մարիոս Աէնբօն իր կտակին
մէջ դուշակած է որ մեր ընկերութիւնը պիտի
լրտեսէր իր ժառանգները : — Բայց այդ յաւել-
ւածին զօրութեանը դէմ դատ չկրնար բացուիլ :
— Գատ բանակ . . . հիմակուան ժամանակա . . .
կտակի դործի մը համար . կեղակարծ յուսով մեզ
հազար տեսակ աղաղակներու ենթարկել : Ար-
դէն ցաւալի է որ այս ամէնը պիտի ձանձրն-
ուին . . . : Ահ սարսափելի բան է . . . այն-
չա՛փ աշխատութիւններէ ետեւ . . . նպատա-
կին հասնելու վայրկենին . . . դար ու կէսէ
'ի վեր այսչափ խնամով եւ այսչափ յարատեւու-
թեամբ հետամուտ ըլլալէ ետեւ : — Նրկու հա-
րիւր տասներկու միլիոն , ըսաւ իշխանուհին :
Այսչափ հարստութեամբ ընկերութիւնն այ-
տուհեաւել ոչ թէ օտար երկիրներու՝ այլ Քաղ-
ղիոյ մէջ , Քաղղիոյ սրտին մէջ կրնար հաստա-
տուիլ , վասն զի ո՛վ կրնար իր դէմն առնուլ :
— Այո՛ , յարեց հայր Տ'Ալքիինեի դառնութեամբ ,
եւ նոր սերունդին դաստիարակութիւնը բոլո-
րովին մեր ձեռքը կանցունէինք . . . : Քա-
ղաքականապէս ալ անհաշուելի աղղեցութիւն

կուսենայինք : Յետոյ ոտքը գետինը դարնելով
աւելցուց . ան , ախկին , մարդու խելքին դա-
լիք բան է՝ այսչափ հանձարով ճարտարու-
թեամբ եւ երկայնամտութեամբ յառաջ տար-
ւած այսպիսի մեծ գործ մը կորանցընել . . . :

— Ուրեմն բնաւ յոյս չկայ : — Այս յոյսը մի-
այն կայ , որ Գաբրիէլ իր ժառանգութեան
բաժինը մեզ պարգեւելու խոստումը ետ չառ-
նու . որ դարձեալ փոքր բան չէ . . . վա-
սըն զի միայն անոր բաժինը երսուն միլիոնի կը
հասնի : — Բայց այդ ալ ահագին հարստութիւն
մ'է , գրեթէ ձեր ասկէ առաջ յուսացածին չափ
բան է , գոչեց իշխանուհին . ուրեմն ինչո՞ւ կը
յուսահատիք : — Ասան զի տարակոյս չկայ որ
Գաբրիէլ այս պարգեւատուութեան դէմ կրնայ
դատ բանալ՝ որչափ եւ ըստ օրինի վաւերա-
կան եղած ըլլայ , եւ դայն ոչնչացնելու հնարը
կը գտնէ հիմա՝ որ ազատ է , մեր վրայ լուսա-
ւորուած է , եւ զինքը որդեգրող ընտանիքէն
չբջապատեալ է . վերջապէս կրսեմ ձեզ թէ ա-
մեն բան կորսուած է , բնաւ յոյս չէ մնացած :
Մինչեւ անգամ խոհեմութիւն կը համարիմ գը-
րել Հռոմ եւ առ ժամանակ մը Փարիզէն հեռա-
նալու հրաման խնդրել : Այս քաղաքը դժոխք
կերելի աչքիս : — Ո՛հ , այն , կը տեսնեմ . . .
ալ բնաւ յոյս մնացած ըլլալու չէ . . . սիրե-
լիս , որպէս զի մինչեւ անգամ ձեզ վախճիլ
մտաբերէք . . . »

Եւ հայր Տ'Էկրինի բողոքովին ընկճեալ վը-

հատեալ մնացեր էր . այս ահագին հարուածն
անոր ներքին կարողութիւնը՝ որտին գորու-
թիւնը խորապակեր էր . ուստի սրտաբեկ ինկաւ-
թիկնաթոռի մը վրայ :

Վերոյիշեալ խօսակցութեանց միջոցին Ռօ-
տէն համեատարար ոտքի վրայ կեցեր էր դրան
քով իր հին փեղոյրը ձեռքը բռնած : Նրկու անգամ
հայր Տ'Էկրինեի եւ իշխանուհւոյն խօսակցու-
թեան ժամանակ իր դիակնագոյն գէմքը թե-
թեւ կերպիւ գունաւորուեր էր բարկութենէն ,
եւ կարծես թէ ներքին բուռն կռուի մը պատ-
ձառաւ արիւնը գլուխը ցատկելով իր կթոտ
արտեւանունքը կարմրեր էր . . . յետոյ իր սը-
խուր գէմքը վերստին իր գալկահար գոյնն ա-
ռեր էր :

« Պէտք է որ հիմա գրեմ Հոռմ եւ այս ձա-
խորդութիւնը ծանուցանեմ . . . վաճն գի ան-
հուն յոյսեր տապալող ահագին գէպք մ'է , ք-
սաւ հայր Տ'Էկրինեի յուսահատ տխրութեամբ ,
Վերապատուելի հայրը նստած էր . ձեռքովը
Ռօտէնին սեղան մը ցուցնելով խիստ եւ դժ-
բող ձայնիւ մ'ըսաւ . « Գրեցէք . . . : « Նըր-
տեան իր փեղոյրը գետինը դրաւ , վերապատ-
ուելիին հրամանին յարգական ողջունով մը պա-
տասխանեց . եւ ճիտը մէկ կողմ ծռած , գլուխը
խոնարհեցուցած եւ քովը ընտի քալուածքով գնաց
գրասեղանին առջեւի թիկնաթոռին եզրը նըս-
տաւ . յետոյ թուղթ եւ գրիչ մ'առնելով , լռին եւ
անշարժ իր մեծաւորին տուն տալուն սպասեց :

« Կը ներէք , իշխանուհի » ըսաւ հայր Տ'Եկ-
րինեի Սէն — Տիգիէ տիկնոջ : Իշխանուհին ալ
անհամբեր շարժամբ մը պատասխանեց , որ
հայր Տ'Եկրինեիի քաղաքաւարական հարցմանը
յանդիմանութիւն մը կը թուէր : Աերապատուե-
լի հայրը գլուխը խոնարհեցուց , եւ խռովեալ ու
խեղդուկ ձայնով մ'այս խօսքերը տուն տուաւ :

« Մեր ամեն յոյսերը՝ գրեթէ ստուգութիւն
« մ'ըլլալէ ետեւ՝ յանկարծ 'ի գերեւ ելան :
« Ռէնքօնի գործը , հակառակ մինչեւ հիմա
« գործածուած ամեն հանձարեղ ջանից , բաւո-
« րովին եւ անդառնալի կերպիւ աւրուեցաւ :
« Այս գէպքը գժբաղդարար ձախորդութենէ
« մեծ բան մ'է , աղէտ մ'է մեր ընկերութեան
« համար , որուն իրաւունքը բարոյապէս ան-
« ժրխտելի էր այս ընչից վրայ , վասն զի ուխտիս
« տրուելու համար գրաւուած ժամանակ գող-
« ցուած ու պահուած էր . . . : Գոնէ խիղճ
« հանդարտ է որ մեր իրաւունքը պաշտպանե-
« լու եւ ապահովելու համար մինչեւ վերջն
« ամեն հնար եղածն ըրի : Բայց , նորէն կրսեմ ,
« այս մեծ գործը բացարձակապէս եւ 'ի սպառ
« կորսուած պէտք է համարուի , եւ այսուհե-
« ւեւ մտքէ հանուի : »

Հայր Տ'Եկրինեի այս խօսքերն ըսած ժա-
մանակ կրնակը Ռօտէնի դարձուցած էր :

Նրտեսը՝ փոխանակ գրութիւնը շարունակե-
լու , մէկէն ոտքի վրայ ելաւ եւ գրիչը սեղա-
նին վրայ նետեց : Այս յանկարծական շարժու-

մը վերապատուելի հայրը լսելով ետին դարձաւ եւ խորին դարմացմամբ Ռօտէնի նայելով ըսաւ . « Է՛ . . . թի՛նչ կընէք : — Ալ լերջ տալու է . . . այս մարդը կը դառանցէ , ըսաւ Ռօտէն ինքնիրեն խօսելով եւ ծանր ծանր դէպ 'ի վառարանն երթալով : — Ի՞նչ կընէք . . . ինչո՞ւ ձեր տեղէն կեցնէք . . . եւ չէք գրեր » ըսաւ վերապատուելի հայրն առաւել եւս դարմացմամբ . յետոյ իշխանուհւոյն դառնալով , որ նոյնպէս կը դարմանար , արհամարհօտ կերպիւմը լրտեսն ակնարկեց եւ ըսաւ . « Փախուց , թի՛նչ ըրաւ . . . : — Ներեցէք իրեն , ըսաւ Սէն — Տիգրիէ տիկինը . անշուշտ այս դործին աւրուելէն զգացած սրտատանջութիւնն է պատճառը : — Շնորհակալ եղիք իշխանուհի տիկնոջ եւ տեղերնիդ դառնալով գրութիւննիդ շարունակեցէք » ըսաւ հայր Տ'Էկրիսնեի Ռօտէնին՝ արհամարհօտ կարեկցութեամբ , եւ հրամայական կերպով մը սեղանը ցոյց տուաւ :

Լրտեսն այս նոր հրամանն ալ բանի տեղ չդնելով վառարանին քով գնաց եւ երեսն ասդին դարձունելով իր կոր քամակը շտկեց , ուղղաբերձ կանգնեցաւ , իր իւզափայլ հաստ կոշիկներուն կրունկը գեամին դարկաւ , ձեռքներն իր ճենճօտ հին վերարկուին ետին կապեց եւ գլուխը անկելով հայր Տ'Էկրիսնեի երեսը նայեցաւ : Ռօտէն խօսք մ'ըսած չէր , բայց իր տղեղ դէմքը՝ որ այս միջոցիս թեթեւ կերպիւ գունաւորուած էր , յանկարծ անյն տու-

տիճան վստահութիւն մը կը յայտնէր իր գերա-
զանցութեան վրայ, այն աստիճան արհամար-
հանք կը ցուցնէր հայր Տ'Եկրինեի վրայ, այն
աստիճան հանդարտ եւ կրնայ ըսուիլ զուարթ
յանդգնութիւն մը ցոյց կուտար, որ վերապատ-
ուելի հայրն ու իշխանութիւն շիտթեցան մնացին :
Կնքդինքնին այն ձառագէժ եւ դժուծ ծերու-
կին իշխանութեան ներքեւ կ'զգային : Հայր
Տ'Եկրինեի ընկերութեան սովորութիւնները քաջ
գիտնալով չէր կրնար հաւատալ որ իր խոնարհ
քարտուղարն առանց պատճառի կամ մանա-
ւանդ առանց դրական իրաւունքի այսպիսի գե-
րազանցութեան գէժք մ' առնելու համարձա-
կէր : Ուշ, շատ ուշ հասկըցաւ վերապատուելին
որ այս ստորակարգեալը միանգամայն լրտես
եւ փորձառու օժանդակ մ'էր, որ ուխտին սահ-
մանադրութեանց համեմատ իշխանութիւն եւ
պաշտօն ունէր ստիպողական պարագայից մէջ
իր գլխաւորը պաշտօնէ ձգելու եւ առժամա-
հասկեայ կերպիւ անոր տեղն անցնելու, երբոր
անոր անկարողութիւնը տեսնէր : Վերապատ-
ուելի հայրը չէր սխալեր. ընկերութեան բոլոր
գլխաւոր անդամները, ընդհանրական մեծաւո-
րէն սկսեալ մինչեւ դաւառական արքաներն
եւ դպրոցաց տեսուչները, մօտերնին իրենցմէ
ծածուկ եւ շատ անգամ առ երեւոյթս ամենա-
չընչին պաշտօններու մէջ կ'ծկտած մարդիկ ու-
նին, որք յարմար ժամանակին իրենց պաշտօնը
կատարելու շատ յաջողակ են, եւ այս նպատա-

կաւ անդադար եւ ուղղապէս Հռոմի հետ կը
թղթակցին : Երբոր Ռօմէն այսպէս ինքզինք
ցոյց տուաւ , հայր Տ'էկրինեի սովորաբար գո-
ռող ձեւերն առժամայն փոխուեցան , եւ որ-
չափ որ շատ ծանր կը դաշէր իրեն այս բանը ,
յարդական վարանամբ մ'ըսաւ անոր . « Գուք
անշուշտ իշխանութիւն ունիք հրամայելու
ինձ' . . . որ մինչեւ հիմա ձեզ հրամայեցի » :

Ռօմէն՝ առանց պատասխանելու՝ իր ձեռ-
նոտ ու ծուռառեալ թղթապանակէն դրոշմաւոր
թուղթ մը հանեց , որուն վրայ լատիներէն քա-
նի մը տող դիր կար : Հայր Տ'էկրինեի երկիւ-
ղած յարդանօք առաւ այն թուղթը շրթունքին
տարաւ , յետոյ Ռօմէնի դարձուց՝ խոնարհու-
թիւն ընելով անոր առջեւ : Երբոր վերապառ-
ւելին դլուխը վեր առաւ , գէմքը սրտմտութե-
թենէն ու ամօթէն ծիրանի դարձած էր : Թէ
եւ ուխտին հրամանները կրաւորական հնազան-
դութեամբ եւ կոյր ակնածութեամբ կատարե-
լաւ վարժուած էր , բայց եւ այնպէս մէկէն 'ի
մէկ իշխանութենէն իյնալուն վրայ բուռն եւ
կակծագին դայրոյթ մը կ'զգար . . . : Բայց ամենն
այս չէր . . . : Արչափ որ երկար ժամանակէ 'ի
վեր իր եւ Սէն—Տիգիէ տիկնոջ մէջ տարփական
յարաբերութիւնները դադրած էին , այս վերջինը
դարձեալ կին մ'էր իրեն համար . ուստի կնոջ
մ'առջեւ այսպիսի անարդանք մը կրել՝ կրկ-
նապատիկ դառն էր իրեն , վասն զի կրօնա-
ւորական ուխտի մէջ մտնելովն աշխարհային

մարդը բոլորովին չէր մերկացած

Մնաց որ, Սէն—Տիգրիէ տիկինը՝ մեծաւո-
րին այսպէս յանկարծ ստորակարգեալի՝ եւ ստո-
րակարգելոյն ալ մեծաւորի փոխակերպիլը տես-
նելով, փոխանակ սրտնեալ ու դայթակղեալ ե-
րեւնալու՝ տեսակ մը հետաքրքրութեամբ Ռօ-
տէնի կը հայէր: Երբեւ կին . . . մանաւանդ խրա-
տապէս փառամուլ կին՝ ամեն բարձր ազդեցու-
թեանց յարելու ջանալով՝ իշխանուհին այսպիսի
հակադիպութիւնները կը սիրէր. ուստի եւ իրա-
ւամբ հետաքրքրական եւ շահագրաւ կը թուէր
իրեն տեսնել ցնցոտ դժուծ եւ մահադէմ մարդ
մը, դեռ քիչ մ'առաջ ամենախոնարհ ստորա-
կարգեալ մը, որ իր հարկաւ փորձուած խելքին
բարձրութեամբ մէկէն 'ի մէկ իշխել կ'սկսէր
հայր Տ'Եկրինեի լրաց, որ իր ծննդեամբն եւ քա-
ղաքաւարական վայելուչ ձեւերովը մեծ—իշ-
խան էր եւ քիչ մ'առաջ ընկերութեան առջեւ
ալ մեծ համարում եւ յարգ ունէր: Այն վայրկե-
նէն, Ռօտէն՝ իբրեւ կարեւոր եւ ազդեցու-
թեան տէր մարդ՝ հայր Տ'Եկրինեի յարգը բո-
լորովին կոտորեց իշխանուհւոյն մտքին մէջ:
Նուաստացման առաջին շարժումն անցնելէ ե-
տեւ, վերապատուելի հայր Տ'Եկրինեի թէ եւ դո-
ւողութիւնը սաստկապէս վիրաւորուած՝ սկսաւ
ընդհակառակն իր ամեն քաղաքաւարական ճար-
տարութիւնն 'ի դործ դնելով սլատիւ եւ մեծա-
րանք շոայելի Ռօտէնի, որ բազմին անակնկալ
դարձուածքովն իր մեծաւորն եղեր էր: Բայց

նախկին լրտեսն այս փափուկ ձեւերը հասկընալու եւ կշռելու անկարող, իր նոր կացութեան մէջ բիրտ եւ կոշտ խրոխտութեամբ հաստատուեցաւ, չէ թէ իր վիրաւորեալ անձնասիրութեան վրէժն առնելու մտօք, այլ իր արժէքն ու գերազանցութիւնը ճանչելով. վասն զի հայր Տ'Էկրինեի հետ ունեցած երկար գործակցութեամբն անոր ստորնութիւնը հասկըցեր էր :

« Գրիչը նետեցիք, ըսաւ հայր Տ'Էկրինեի Ռօտէնին՝ վերջին ծայր ակնածութեամբ, երբոր Հոռմի համար ծանուցադիր մը գրել կուտայի ձեզ . . . շնորհ կընէք խմացնել ինձ թէ ի՞նչ էր սխալս : — Հիմա կը հասկըցնեմ, ըսաւ Ռօտէն իր սուր ու կտրուկ ձայնովը . ես երկար ժամանակէ 'ի վեր հասկըցեր էի որ այս գործը ձեր կարողութենէն վեր էր . բայց կը լռէի . . . եւ սակայն իր զայն սխալներ գործեցիք . . . իր զայն խեղճ էք եղեր հնարիմացութեան կողմանէ . . . իր զայն կոշտ էին այս գործը գլուխ հանելու համար ձեր բանեցուցած միջոցները . . . : — Ձեր այդ յանդիմանութիւնները չեմ հասկընար, սրտասխանեց հայր Տ'Էկրինեի քաղցրութեամբ, թէ եւ իր առերեւոյթ հնազանդութեան մէջէն դադարնի դառնութիւն մը կը թափանցէր . միթէ յաջողութիւնն աներկբայելի չէր առանց այն յաւելուածին . . . միթէ դուք ալ գործակից չեղա՞ք այն տնօրէնութեանց՝ դորս հիմա կը պարսաւէք : — Այն ժամանակ դուք կը հրամայէիք, ես ալ կը հնազանդէի . . . արդարեւ

լու համար՝ պահապան զինուորները, ոստիկան-
ութեան տեսուչը եւ բանապանները ձեզ
մեղսակից եւ համախոհ կանուք . . . : Բայց
ատոնք ողորմելի բաներ են, պարոն . . . :
Այդ խեղճութիւնները պայծառ յաջողութեամբ
մը միայն կրնային ներելի ըլլալ . եւ այն յա-
ջողութիւնն ալ չունեցաք . . . : — Պարոն, բ-
աւա հայր Տ'էկրիների սաստիկ վիրաւորուելով .
վասն զի Սէն—Տիգիէ տիկինը Ռօաէնի բացորոշ
ու կտրուկ խօսքերէն զգացած տեսակ մ'աքան-
չացումը չկրնայով ծածկել, իր վաղեմի տար-
վաւորին երեսը կը նայէր այնպիսի դէմքով մը՝
որ « իրաւունք ունի » ըսել կը թուէր : — Պա-
րոն, ձեր այդ դիտողութիւնը չափազանց խիստ
է, եւ ձեզ պարտական եղած ակնածութեանս
հակառակ կըսեմ ձեզ թէ ես վարժուած չեմ . . . :
— Ուրիշ շատ բաներ ալ կան, որոց վարժուած
չէք, ըսաւ Ռօաէն խատուժեամբ վերապատ-
ւելիին խօսքը կտրելով . բայց հիմա կը վար-
ժուիք . . . : Մինչեւ հիմա դուք ձեր արժե-
քին վրայ շատ սխալ գաղափար մ'ունեցած
էք . հին պատերազմականի եւ աշխարհաքա-
ղաքացւոյ խմոր մը կայ ձեր վրայ՝ որ միշտ կե-
ռայ, կեփի, եւ ձեր մտքին պէտք եղած պա-
ղուժիւնը յատկութիւնն ու խորատեսութիւ-
նը կը խափանէ . . . Ժամանակաւ դեղեցիկ զը-
ւարթ եւ հեշտաբոյր զինուորական մ'էիք .
պատերազմներու տօներու եւ դուարճութեանց
եւ կանանց մէջ կը յաճախէիք . . . : Այդ բա-

լու համար՝ պահապան զինուորները, ոստիկան-
ութեան տեսուչը եւ բանապանները ձեզ
մեղսակից եւ համախոհ կառնուք . . . : Բայց
ատոնք ողորմելի բաներ են, պարոն . . . :
Այդ խեղճութիւնները պայծառ յաջողութեամբ
մը միայն կրնային ներելի ըլլալ . եւ այն յա-
ջողութիւնն ալ չունեցաք . . . : — Պարոն, բ-
աւա հայր Տ'էկրիների սաստիկ վիրաւորուելով .
վասն զի Սէն—Տիգրիէ տիկինը Ռօաէնի բացորոշ
ու կտրուկ խօսքերէն զգացած տեսակ մ'աքան-
չացումը չկրնայով ծածկել, իր վաղեմի տար-
վաւորին երեսը կը նայէր այնպիսի դէմքով մը՝
որ « իրաւունք ունի » ըսել կը թուէր : — Պա-
րոն, ձեր այդ դիտողութիւնը չափազանց խիստ
է, եւ ձեզ պարտական եղած ակնածութեանս
հակառակ կըսեմ ձեզ թէ ես վարժուած չեմ . . . :
— Ուրիշ շատ բաներ ալ կան, որոց վարժուած
չէք, ըսաւ Ռօաէն խատուժեամբ վերապատ-
ւելիին խօսքը կտրելով . բայց հիմա կը վար-
ժուիք . . . : Մինչեւ հիմա դուք ձեր արժե-
քին վրայ շատ սխալ գաղափար մ'ունեցած
էք . հին պատերազմականի եւ աշխարհաքա-
ղաքացւոյ խմոր մը կայ ձեր վրայ՝ որ միշտ կե-
ռայ, կեփի, եւ ձեր մտքին պէտք եղած պա-
ղութիւնը յատկութիւնն ու խորատեսութիւ-
նը կը խափանէ . . . Ժամանակաւ դեղեցիկ զը-
ւարթ եւ հեշտաբոյր զինուորական մ'էիք .
պատերազմներու տօներու եւ դուարճութեանց
եւ կանանց մէջ կը յաճախէիք . . . : Այդ բա-

ները ձեզ կէս մը մաշեցուցած են . ուստի այ-
տուհետեւ ստորակարգեալէ զատ ուրիշ բան մը
չէք կրնար ըլլալ . ձեր դատաստանը վճռուած
է : Գուք չպիտի կրնաք երբէք ունենալ այն
մտքի կորովն ու ամփոփ ուժը՝ որ մարդոց եւ
դիպաց կիշխտէ . եթէ ես այն մտքի կորովն ու
ամփոփ ուժն ունիմ . . . գիտէ՞ք՝ ինչ է պատ-
ճառը : Այն է որ ինքզինքս մի միայն մեր ըն-
կերութեան ծառայութեանը նուիրելով միշտ
տղեղ աղտոտ եւ կոյս մնացի . . . այն , կոյս . . .
իմ բոլոր այրական ուժս անվթար մնացած
է . . . : »

Այս շնական դռողութեան խօսքերն ար-
տասանած ժամանակ Ռօտէն սարսափելի էր :
Սէն—Տիզիէ իշխանուհին կարծես թէ զմայլե-
ցաւ անոր յանդգնութեանն ու ազդուութեան
վրայ : Հայր Տ'Եկրինեի այս դժոխային էակէն
ինքզինք անողոքելի կերպիւ ձաղկեալ զգալով
ապատամբական վերջին փորձ մ'ընել ուզեց :
« Այդ մեծաբանութիւնները քաջութեան ու կա-
րողութեան ապացոյց չեն , պարոն , ըսաւ . ձեր
տեսնելիք գործէն պիտի հասկցուի : — Այն , . . .
տեսնելիք գործէս պիտի հասկցուի , յարեց Ռօ-
տէն պաղութեամբ . . . եւ գիտէ՞ք՝ ո՞ր գործէս .
ձեր վատարար լքած գործէն : — Ի՞նչ կրսէ՞ք ,
գոչեց Սէն—Տիզիէ իշխանուհին . վասն զի հայր
Տ'Եկրինեի Ռօտէնին յանդգնութենէն ապշելով
խօսք չէր կրնար գտնել պատասխանելու : — Ար-
բեմ թէ , շարունակեց Ռօտէն ծանրութեամբ ,

եա վրաս կառնում յաջողեցնել Ռէնբօնի ժա-
ռանգութեան գործը՝ զոր դուք անյուսալի կը
համարիք : — Դ՞ուք վրանիդ կառնուք , գոչեց
հայր Տ'Էկրիննի : — Այո՛ , ես . . . : — Բայց
մեր մեքենայութիւններն երեւան ելան : — Ա-
ւելի աղէկ , անոնցմէ ճարտարագոյնները հնա-
րելու կը հարկադրինք : — Բայց չեն վստահիր
մեզ : — Աւելի աղէկ . դժուարաւ ձեռք բեր-
ւած յաջողութիւններն ամենէն ստոյգ եւ ա-
պահովն են : Ի՞նչպէս . կը յուսա՞ք Պաբրիէլը
հաճեցընել ըրած պարզելը եւս չառնելու , որ
թերեւս ապօրինաւոր ալ է : — Նս կը խոստա-
նամ ընկերութեան սնտուկը մտցընել այն եր-
կու հարիւր տասներկու միլիոնը՝ որմէ զինքը
զրկել կուզուի : Խօսքս պարզ չէ՞ : — Անհնարու-
թեանը չափ պարզ է : — Նս ալ կըսեմ ձեզ թէ
հնարաւոր է . . . եւ պէտք է հնարաւոր ըլ-
լայ . . . կը լսէք : Բայց ձեր միտքը կարճա-
տես ըլլալուն՝ չէք կրնար հասկնալ . . . գոչեց
Ռօտէն այն աստիճան ոգեւորեալ , որ իր դիակ-
նակերպ դէմքը թեթեւ կերպիւ գունաւորե-
ցաւ . դուք չէք հասկընար ուրեմն որ բնաւ
վարանելու չգար . . . կամ երկու հարիւր տաս-
ներկու միլիոնը մերը կըլլայ , եւ այն ատեն մեր
գերագոյն ազդեցութիւնը կը վերահաստատուի
Պաղղիոյ մէջ . ինչու որ այնչափ ահագին գու-
մարներով այսպիսի շահասէր դարու մը մէջ
կառավարութիւն մը կրնանք գնել . եւ եթէ
չափազանց սուղ կամ դժուարաստաց ըլլայ ,

քաղաքական պատերազմ կը բորբոքենք, ներկայ կառավարութիւնը կը տապալենք եւ Պուրպուրեանց իշխանութիւնը կը վերահաստատենք, որ մեր բուն ուղած կառավարութիւնն է, եւ որ մեզ երախտապարտ ըլլալով ամեն բան մեզ կը յանձնէ : — Ատոր տարակոյս չկայ, ըսաւ իշխանուհին զմայլմամբ : — Իսկ եթէ, ընդհակառակն, ըսաւ Ռօտէն, այդ երկու հարիւր տասներկու միլիոնը Ռէնքօնի ժառանգաց ձեռքը մնայ, մեր կործանումն ու կորուսան աներկբայելի է . վասն զի ոխերիմ եւ անողոք թշնամեաց հզօր սերունդ մը կունենանք մեր դէմ . . . : Չլսեցիք կտակարար Ռէնքօնին այն սարսափելի պատուէրն ընկերակցութիւն մը հաստատելու մասին, զոր իր անիծեալ սերունդն ալ կրնայ խիտ ազէկ դործադրել . . . : Մտածեցէք այն ատեն այդ միլիոններուն բոլորաթիւրը դու մարուած անհուն դօրութիւնները . մտածեցէք Սիմօն մարաջախար՝ երբոր իր ազջկանց անունով դործել սկսի . հասարակ մարդու մը դաւակնորդութիւնը եղած է առանց սնտախառելու . որով ժողովրդեան վրայ մեծ ազդեցութիւն կրնայ ունենալ . որովհետեւ զինուորական հողին եւ մարմնացեալ Պոնաբարթականութիւնը՝ տակաւին ազգային պատուոյ եւ փառաց աւանդութիւնը կը ներկայացնեն ժողովրդեան աչքին : Մտածեցէք Յրանսօա Հարտի, ազատամիտ անկախ եւ լուսաւորեալ քաղաքացին, "մեծ գործարանատէրի տիպարը, յառաջդիմութեան եւ

արհեստաւորաց բարեկեցութեան սիրահար . . .
Մտածեցէք Քարրիէլը , բարի քահանան , ինչ-
պէս իրենք կրսեն , նախնի Աւետարանին առաք-
եալը , եկեղեցւոյ ազնուապետութեան դէմ ե-
կեղեցւոյ ռամկավարութեան ներկայացուցիչը ,
հարուստ եպիսկոպոսին դէմ գիւղի աղքատիկ
քահանային երեւոյթիսանը , այսինքն իրենց ա-
ղաւաղ լեզուաւ՝ դատարկասուն բռնաւորին դէմ
սուրբ այգւոյն ժիր մշակը , եղբայրութեան ազա-
տութեան եւ յառաջդիմութեան դադափարնե-
րուն բնածին տարածիչը . . . ինչպէս որ կրսեն , եւ
այս ալ չէ թէ յեղափոխական հրդեհարկու քա-
ղաքականութեան մ'անուսով , այլ Քրիստոսի
անուսով , սիրոյ գթութեան եւ խաղաղութեան
կրօնի մ'անուսով . . . ըստ անոնց խօսքին :
Յետոյ կուգայ Ատրիէն Քարտովիլ , գեղոյ՝ շը-
նորհաց եւ վայելչութեան ախարը , ամեն ըզ-
գայականութեանց քահանայունին , որ դանոնք
մշակելով եւ գտելով առաւածացնել կը ջանայ :
Չեմ յիշեր անոր խնլքը , յանգգնութիւնը , զոր
չատ լաւ կը ճանչէք : Ուստի այդ ծննդեամբ
ազնուական , սրտով ժողովրդական եւ երեւա-
կայութեամբ բանաստեղծ օրիորդին չափ վտան-
գաւոր արարած մը չկրնար ըլլալ մեզ համար :
Վերջապէս կուգայ Յալմա իշխանագունը , կրտ-
սի՞՞՞ անվեհեր եւ ամեն բանի պատրաստ , վա-
սըն դի քաղաքակրթեալ կենաց պայմաններուն
ծանօթ չէ , աննուէր իր ատելութեան մէջ՝ ինչ-
պէս բարեկաւութեան . մէկ խօսքով սարսա-

փելի գործիք մը՝ զինքը գործածել գիացողին
ձեռք . . . : Վերջապէս այդ դարչելի ազգա-
տոհմին մէջ մէկը չկայ, մինչեւ անգամ այն
թշուառական Քուչ-Թու-Նիւն, որ թէպէտ ա-
ռանձնաբար արժէք մը չունի, բայց կրթուե-
լով, մաքրուելով, եւ այն ազնուախոհ եւ դիւ-
րահաղորդ բնութեանց հետ՝ ինչպէս իրենք կը-
սեն՝ յարակցութեամբ նորոգուելով, կրնայ այն
ընկերակցութեան մէջ ազդեցութեան ընդար-
ձակ բաժին մ'ունենալ իբրեւ արհեստաւորաց
հերկայացուցիչ . . . : Հիմա՝ կը կարծէք որ ե-
թէ այս անձինքը՝ որք արդէն կատարած են մեր
դէմ, վասն զի իրենք կողոպտել ուզեր ենք
կրսեն, եթէ այդ Ռէնքօնի չարախորհուրդ խը-
րատին հետեւին, եւ վատահ եմ որ կը հետեւին,
կը կարծէք, որ եթէ իրենց բոլոր կարողութիւն-
ներն ու գործողութեան միջոցներն այս ամբաւ-
հարստութեան հետ ընկերացնեն, որով անոր դո-
րութիւնը կը հարիւրապասկի, կը կարծէք որ
եթէ մեր սկզբանց դէմ կատարի կռիւ մը բա-
նան, մեր ամենէն վտանգաւոր եւ անեղ թըշ-
նամին չըլլան : Բայց ես կըսեմ ձեզ թէ մեր
ընկերութիւնն երբէք այսչափ ծանր սպառնալ-
եաց ենթակայ եղած չէ . այն, ուստի հիմա
այս գործը կենաց եւ մահու խնդիր մ'է իրեն
համար : Այս ժամուս մէջ ինքզինքնիս պաշտ-
պանելով գործ չլիննար, այլ յարձակելով, որ-
պէս զի Ռէնքօնեանց այդ անիծեալ սերունդը
ջնջենք եւ միլիոնները մեր ձեռքն անցունենք : »

Այս նկարագրին վրայ, դոր Ռօտէն անսովոր եւ հետեւաբար ազդու ոգեւորութեամբ մը կը ներկայացնէր, իշխանուհին եւ հայր Տ'էկրիննի ապշութեամբ իրարու երես նայեցան:

« Ար խոստովանիմ, ըսաւ վերապատուելին Ռօտէնի, թէ ես Պ. Ռէնրօնի պատուիրած այդ բարեգործական ընկերակցութեան ամեն վտանգաւոր հետեւանացը վրայ չէի խորհած. կը կարծեմ որ արդարեւ անոր ժառանգները՝ իրենց բնաւորութեան համեմատ՝ զոր լաւ կը ճանչենք, այդ անըջական խորհուրդն 'ի գործ դնելու պիտի աշխատին . . . : Ատանդը խիստ սպառնալից է. բայց առաջքն առնելու համար . . . թ'նչ ընելու է: — Ի՞նչ կըսէք, պարոն, երբոր ձեր գէմ ճալմայի պէս տգէտ արի եւ տաք գլուխ, Աարիէն Քարտովիլի պէս զգայասէր եւ արտակերտն, Սիմօնեան Ռօզի եւ Պլանչի պէս պարզ եւ միամիտ, Ֆրանսօա Հարտիի պէս արդարախոն եւ անկեղծ, Գարրիէլի պէս մաքուր եւ հրեշտակային, Քուշթու-Նիւի պէս բիրտ եւ տխամար բնութիւններ կան, կը հարցընէք թէ թ'նչ ընելու է: — Ստուգիւ չեմ հասկընար ձեզ, ըսաւ հայր Տ'էկրիննի: — Ատոր տարակոյս չունիմ. այս գործին մէջ ձեր անցեալ վարմունքը բաւական կը հաստատէ որ չէք կրնար հասկընալ, պատասխանեց Ռօտէն արհամարհոտ կերպիւ . . . դուք նիւթական կոշտ միջոցներու գիմեցիք՝ փոխանակ այսչափ ազնիւ փետմ եւ վեհ կրօն վրայ

գործելու, որք որ մը միանալով անաւոր արը-
ցակ մը կրնան կազմել. բայց հիմա բաժնուած
եւ առանձին ըլլալով ամեն խաբէութեանց,
ամեն հրապուրանաց, ամեն թելադրութեանց
եւ ամեն յարձակմանց կրնան տեղի տալ: Ար
հասկրնա՞ք վերջապէս . . . ոչ. դեռ չէք հաս-
կրնար: (Եւ ուսերը թոթովեց Ռօտէն): Յուսա-
հատութենէ մարդ կը մեռնի թէ ոչ: — Ա. յո՛ւ,
— Յաջող տարիանաց դէմ երախտագիտութիւ-
նը կրնայ թէ ոչ՝ յիմար վեհանձնութեան մին-
չեւ վերջին սահմանները հասնիլ: — Ա. յո՛ւ: — Չի
կայ այնպիսի դառն պատրանքներ, որոց սոս-
կալի իրականութեանը դէմ՝ անձնատապանութիւ-
նը միակ ապաւէն է: — Ա. յո՛ւ: — Չգայականու-
թեանց չափազանցութիւնը չկրնա՞ք մեզ գերեզ-
ման տանիլ ծանր եւ հեշտալի հողեւարքով:
— Ա. յո՛ւ: — Չկան կենաց մէջ այն սատիճան սար-
սափելի պարագաներ, որով ամենէն աշխարհա-
տէր պինդ եւ ամբարիշտ բնաւորութիւնները
կուրարար կուգան կրօնի թեւերուն մէջ կիցնան
ճնշեալ եւ վհատեալ, եւ աշխարհի ամեն մեծ
բարիքները խորդի աղօթքի եւ մտաց յափշտա-
կութեան հետ կը փոխանակեն: — Ա. յո՛ւ: — Չկան
վերջապէս հազար պարագաներ, որոց մէջ կը-
րից ընդդիմահարութիւնը խիստ կարգէ դուրս
փոփոխութիւններ, խիստ եղերական վախճան-
ներ յառաջ կը բերէ մարդու կամ կնոջ կեան-
քին մէջ: — Անշուշտ: — Աւրեմն ինչո՞ւ կը հար-
ցընէք ինձ թէ ինչ ընելու է: Ի՞նչ պիտի ը-

սէք, եթէ՛ օրինակի համար՝ այդ Ռէնքօնի ըն-
տանեաց ամենէն վտանգաւոր անդամները ե-
րեք ամիս չանցած դան, եւ ծունգի վրայ ին-
կած այս ընկերութեան մէջ մտնելու չնորհր
խնդրեն, յորմէ հիմա կը գարշին, եւ յորմէ այ-
սօր Գարրիէլ բաժնուեցաւ : — Այդպիսի դարձ
մ'անհնարին է, գոչեց հայր Տ'Եկրինեի . — Ան-
հրնարին մի . . . : Ասկէց տասն եւ հինգ տարի
առաջ դուք թնչ էիք, պարսն, բաւ Ռօտէն .
ամբարիշտ եւ խենէշ աշխարհական մը . . . բայց
եկաք մեր գիրկն ինկաք, եւ ձեր բոլոր գոյքը
մերն եղաւ . . . : Մեք այնչափ իշխաններ, թա-
գաւորներ, պապեր նուաճեցինք . մեր միութեան
մէջ գերազանց հանճարներ կ'լլեցինք ու մարե-
ցինք, որք մեզնէ դուրս պայծառ լուսով կը
փայլէին . գրեթէ երկու աշխարհները մեր իշ-
խանութեան ներքեւ առինք . մինչեւ այսօր
այսչափ ատելութեանց, այսչափ հալածանաց
գիմանալով յարատեւեցինք միշտ դօրեղ, միշտ
հարուստ եւ միշտ ահաւոր, եւ հիմա չկրնանք
մեր ճանկն անցունել ընտանիք մը՝ որ այսչափ
վտանգաւոր կերպիւ մեզ կ'օպառնայ, եւ որուն
հարատութիւնը՝ որ մեր ընկերութենէն դողը-
ւած է, այսչափ հարկաւոր է մեզ . . . չկր-
նանք բաւական ճարպիկութիւն ունենալ այս
արդիւնքն առանց ձախող բռնութեանց եւ ա-
ռանց վտանգաւոր եղեռանց ձեռք բերելու . . . :
Չէք գիտեր ուրեմն այն փոխադարձ կամ մաս-
նական ջնջման ամբաւ միջոցները դորս մարդ-

կային կրկն խաղը կրնայ ընծայել՝ երբոր ճարտարտարութեամբ տրամադրուին, իրարու դէմ հանուին, հակառակին, դրդուին . . . եւ մանաւանդ երբոր թերեւս ամենազօր օժանդակի մ'օգնութեամբ, աւելցուց Ռօտէն տարօրինակ ժպիտով մը, այն կիրքերուն եռանդն եւ ուժգընութիւնը կրնայ բազմապատկիլ . . . : — Այդ օժանդակը . . . սրն է, հարցուց հայր Տ'էկրինեի, որ Սէն—Տիգրիէ իշխանուհւոյն պէս սարսափախառն դմայլում մը կ'զգար այս միջոցիս : — Այո՛, շարունակեց Ռօտէն առանց վերապառւելիին պատասխանելու, եթէ այն ահեղ օժանդակը մեզ օգնութեան հասնի, շանթահար փոխակերպութիւններ կրնայ յառաջ բերել, ամենէն անգուսպները կրնայ երկչոտ ընել, եւ ամենէն հրեշտակաբարոյները վայրագ ու անգութ ընել . . . : — Բայց այդ օժանդակը . . . դոչեց իշխանուհին տարտամ սարսափով մ'ընկճեալ, այդ ամենազօր եւ ահեղ օժանդակը . . . սրն է . . . : Եթէ վերջապէս մեզ օգնութեան հասնի, յարեց Ռօտէն միշտ անզգած եւ դրժդոյն, ամենէն դեռահասակներն ու կորովիները ամեն վայրկենի մէջ մերձահաս մահուան վտանգի մէջ կրլան . . . վերջին վայրկենին հասնող հոգեվարքներու պէս . . . : — Բայց այդ օժանդակը, կրկնեց հայր Տ'էկրինեի եւս քան զեւս զարհուրած, վասն զի քանի որ Ռօտէն այս տխուր նկարագրին չարագոյժ սեւութիւնը կաւելցրնէր, այնչափ իր դէմքը դիակ-

նակերպ գոյն մը կառնուր : — Այս օժանդակը
կրնայ վերջապէս ժողովուրդը մահուամբ կոտո-
րել, եւ ամբողջ անիծեալ ընտանիք մը գերեզ-
ման իջեցնել . բայց կը հարկադրի յարգել այն
մեծ եւ անյեղլի մարմինը՝ որ իր անդամոց մահ-
ւամբը հակարանար երբէք . . . վասն զի իր հո-
գին . . . ճիշդ իթ ընկերութեան հոգին անկո-
րուստ է . . . : — Բայց այդ օժանդակը . . . :
— Այս օժանդակը, յարեց Ռօտէն . . . այս օ-
ժանդակը որ կը յառաջանայ . . . ծանր ծանր
կը յառաջանայ . . . եւ որուն աղետաշունչ նա-
խադրացութիւններն ամեն տեղ ծաւալելով իր
սոսկալի գալուստը կը գուժեն . . . : Քօլէ-
ւան է : »

Այս խօսքին վրայ, զոր Ռօտէն կարճ եւ
սուղ ձայնիւ մ'արտասանեց, իշխանուհին եւ
հայր Տ'Էկրինելի այլագունեցան ու դողացին :
Ռօտէնի նայուածքը տխուր եւ պաղ էր, կար-
ծեա թէ ուրուական մ'էր : Քանի մը վայրկենի
չափ դահլճին մէջ գերեզմանական լուծիւն մը
տիրեց, զոր նախ Ռօտէն խղեց : Ինքը միշտ
անզգած, հրամայական ակնարկով մը գրա-
սեղանը ցուցուց հայր Տ'Էկրինելի, ուր պահ
մ'առաջ ինքն Ռօտէն խոնարհաբար նստած էր,
եւ հակիրճ ձայնով մ'ըսաւ . « Գրեցէք : » Աւ-
րապատուելի հայրը նախ ցնցուեցաւ, յետոյ յի-
շելով որ մեծաւորութեան աստիճանէն ստորա-
կարգելոյ աստիճան իջեր էր, ոտքի վրայ ելաւ,
եւ խոնարհութեամբ Ռօտէնի առջեւէն անցնե-

լով դնաց սեղանին առջեւ նստաւ , դրիչը ձեռքին առաւ , եւ Ռօտէնի դառնալով ըսաւ .
« Պատրաստ եմ . . . : »

Ռօտէն հետեւեալը տուն տուաւ . վերապատուելի հայրն ալ դրեց .

« Վերապատուելի հայր Տ'էկրինելի անհանաճարութեամբ Ռէնբօնի ժառանգութեան դործը ծանր վտանգի մէջ ինկաւ այսօր : Ժառանգութեան գումարը երկու հարիւր տասներկու միլիոնի կը հասնի : Այս ճախորդութեան հակառակ տակաւին խօսք կրնայ տրուիլ Ռէնբօնի ընտանիքն այնպիսի վիճակի մը մէջ դընկու , որ չկրնայ ընկերութեան մնասել , եւ օրինաւորապէս անոր սեփականութիւնն եղած երկու հարիւր տասներկու միլիոնն յիշեալ ընկերութեան վերադառնայ : Ասոր համար լիակատար եւ ամենընդարձակ իշխանութիւն մը միայն կը խնդրուի : »

Այս տեսարանէն քառորդ մ'ետքը Ռօտէն Սէն—Տիգիէի ապարանէն դուրս կելնէր՝ արմուկովն իր ձեռնձոտ հին փեղոյրը շփելով , դորդուրս ելած ժամանակ գլխէն հանելով խորին յարգութեամբ դռնապանին ողջունին սրտախանց :



ՄԱՍՆ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՌՈՏԷՆԻ ԽՈՍՏՄՈՒՆՔԸ

ԳՎՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՆԾԱՆՕԹԸ

Հայր Տ'Էկրիսնէ ինն այնպէս մէկէն 'ի մէկ նոյն
իսկ Ռօտէնի ձեռօք անոր երբեմն գտնուած
ստորակարգեալ դրից մէջ ձգուելուն երկրորդ
օրը հետեւեալ անոցքը կանցնէր :

Քլովիս փողոցը , ինչպէս յայտնի է , Մօն-
թայն-Սէնթ-Ժընրվիէվ թաղին ամենէն ամաչի
փողոցներէն մէկն է : Այս պատմութեան ժա-
մանակները՝ յիշեալ փողոցին 4 թիւ տունը փո-
ղոցին վրայ մեծկակ յարկէ մը կը բաղկանար ,
ուրկէ նսեմաստուեր ծառուղիով մթին բակ մը
կեցնէր , որուն ծայրը երկրորդ շէնք մը կար դար-
մանալի կերպիւ խեղճ ու խարխալեալ : Շէն-
քին ճակատը կէս ստորերկրեայ խանութ մը կար ,
ուր ածուխ , տրցակով փայտ , քանի մը տեսակ
ընդեղէն եւ կաթ կը վաճառէին : Առաւօտեան
ժամ ինը կը հնչէր : Խանութպանուհին , որ մայր
Աբաէն կանուանէր , հեղահամբոյր եւ հիւանդոտ

դէմքով պառաւ մ'էր , բամապակէ թուխ կտա-
ւէ շրջազգեստ մը հագած եւ Ռուանի կարմիր
շղարչէ վարչամակ մը գլուխը կապած : Այս
կինն իր գեանայարկը տանող սանդուղին վե-
րին աստիճանին վրայ ելեր իր վաճառքը պար-
զելու կ'զբաղէր . այսինքն դրան մէկ կողմը
թանաքէ դոյլով կաթը կը դնէր . միւս կողմն
ալ քանի մը թառամած բանջարեղէններ կը շա-
րէր դեղնած կաղամբներու հետ . սանդուղին
տակը՝ գեանայարկին թերաստուեր մթութեան
մէջ փոքրիկ փռան մը կրակին ցոլումը կը տես-
նուէր : Այս խանութը ծառուղիին քովն ըլ-
լալով , դռնապանի սենեակ ալ եղած էր , եւ
ընդավաճառ կինը միանգամայն դռնապանի
պաշտօն կը կատարէր : Շատ չանցաւ , փոքրիկ
սիրուն արարած մը տունէն դուրս ելաւ եւ
թեթեւասլաց արագութեամբ վազելով մայր
Արաէնի խանութը մտաւ : Այս ծաղկափթիթ
օրիորդը Ռօզ—Բօմբօն էր , Պաքանալ թաղուհ-
ւոյն մտերիմ բարեկամը : Ռօզ—Բօմբօն՝ որուն
բաքոսամու բայց ակնածու տարփաւորը՝ ինչ-
պէս յայտնի է՝ Նինի—Մուլէն էր , այն ուզ-
գափառ ցոփը՝ որ պէտք եղած ժամանակ ար-
բենալէ ետեւ կրօնական մատենագիր Ժաք Տիւ-
մուլէնի կը փոխուէր , լպիրչ կաքաւներէ անդ-
բալեռնեայ վիճաբանութեան եւ մրկածուփ
կակաչի պարէն կաթողիկեայ տեսրակներ դը-
բելու կանցնէր խնդութեամբ :

Ռօզ Բօմբօն՝ անկողնէն նոր ելեր՝ իր առա-

ւօտեան անխնամ կերպարանքովն էր , եւ անշուշտ ուրիշ դատակ կամ գլխարկ չունենալուն համար՝ իր գեղեցիկ խարտեաչ փայլուն եւ սանտրած մազերուն վրայ ոստիկանութեան փեղոյր մը դրած էր իր բարեկենդանի կերպարանքէն մնացած : Արդարեւ այս տանն եւ եօթն տարու աղջկան դէմքին պէս վառվռուն , թարմ , վարդագոյն , կլոր , եւ երկու կապոյտ զուարթ եւ աշխոյժ աչքերով վառեալ դէմք խիստ քիչ կը գտնուէր : Ռօզ—Բօմբօն ոտքէն մինչեւ պարանոցն այնպէս լաւ փաթթուած էր իր կարմիր ու կանանչ աղիւսակած եւ նկարաւոր ըՍկովտեան թիկնոցին մէջ , որ տեսնողը կը գուշակէր որ ամօթխած մտահոգութիւն մ'ունէր . իր ոտքերն այնչափ ճերմակ էին , որ տեսնողը չէր գիտեր թէ գուլպայ ունէին թէ ոչ . արծաթափայլ օղակներով կարմիր սեկէ փոքրիկ կոշիկներ հագած էր . . . ղինքը տեսնողը դիւրաւ կը նշմարէր որ թիկնոցին ներքեւ բան մը բռնած էր :

« Բարի լոյս , օրիորդ Ռօզ—Բօմբօն , ըսաւ մայր Արսէն քաղցրութեամբ , այս առաւօտ կանուխ ելեր էք , միթէ երէկ չպարեցիք : — Ատոր խօսքը մի ընէք ինձ , մայր Արսէն , խաղալու սիրա չունէի . խեղճ Սէֆիդ , (Պարսնալ թագուհին) , Մայէօի քոյրը գիշերն 'ի բուն լացաւ . տարիաւորը բանտն ըլլալուն համար անմխիթար տրտմութեան մէջ է : Աեցիք , օրիորդ , ըսաւ ընդամաձառ կիներ , պէտք է որ ձեր Սէ

Ֆիզ բարեկամութեան վրայ բան մ'ըսեմ ձեզ ,
եթէ չէք սրդողիր : — Միթէ ես կը սրդողիմ . . .
ըսաւ Ռօդ—Բօմբօն ուսերը թոթվելով : — Կը
կարծէք որ Պ. Ֆիլէմօն եթէ դառնայ գայ՝ զիս
չպիտի կշտամբէ : — Ձեզ կշտամբէ , ինչո՞ւ հա-
մար : — Իր բնակարանին պատճառաւ՝ ուր դուք
հասեր էք . . . : — Ի՞նչ կըսէք , մայր Արսէն ,
միթէ Ֆիլէմօն չըսաւ ձեզ թէ իր բացակայու-
թեան ժամանակ իր երկու սենեակներուն տէ-
րն ես պիտի ըլլամ , ինչպէս որ իր տէրն ե-
ղած էի : — Ձեզ համար չէ խօսքս , օրիորդ ,
այլ ձեր Սէֆիզ բարեկամին համար զոր Պ. Ֆի-
լէմօնի բնակարանը տարիք : — Եւ ո՞ւր կրնար
երթալ առանց ինձ , բարեմիտ մայր Արսէնս :
Տարիաւորին բանտարկութենէն ետեւ իր բնա-
կարանը դառնալու չհամարձակեցաւ , վասն զի
հոն շատ պարտքեր կար վճարելիք : Իր տաղ-
նապը տեսնելով ըսի իրեն . « Եկէք առ այժմ Պ.
Ֆիլէմօնի տունը բնակեցէք . երբոր դառնայ գայ ,
ուրիշ տեղ մը ձեզ գտնելու հոգ կը տանինք :
— Եթէ կրնաք զիս ապահով շրնել որ Պ. Ֆիլէ-
մօն չպիտի սրդողի , շատ աղէկ , օրիորդ : — Պի-
տի սրդողի մի , ի՞նչ ըսելով , իր կարասիները
դորձածուելուն համար . եւ ի՞նչ գեղեցիկ կա-
րասի . երէկ իր վերջին դաւաթը կտարեցի . . .
եւ տես ի՞նչ դարմանալի ամանով մը կաթ առ-
նելու եկայ : »

Եւ բարձրաձայն խնդալով իր փոքրիկ ձեր-
մա՛լ թեւը թիկնացին տակէն դուրս հանեց եւ

մայր Արսէին անագին մեծութեամբ շամբա-
նիայի գաւաթ մը ցուցուց որ գրեթէ շիշ մը
գինի կրնար պարունակել :

« Ա՛հ , տէր Աստուած , ըսաւ ընդամաճաբ
զարմացմամբ , կարծես թէ բիւրեղեայ գալա-
թափող մ'է : — Ֆիլէմօնին պահեստի գաւաթն
է , որ արբշիռութեան մրցանակ արուած է ի-
րեն , ըսաւ Ռօզ—Յօմբօն : — Հիմա ձեր կաթն
այդ տարօրինակ ամանին մէջ պիտի գնեմ . տես-
նողն ինչ կըսէ , մարդ կամաչէ ձեռքը բռնե-
լու , ըսաւ մայր Արսէն : — Ես ալ նամանա-
պէս . . . եթէ սանդուղին վրայ մէկը դիմացս
ելնէ եւ այս գաւաթը մօմի պէս ձեռքս բռնած
տեսնէ . . . խնդալէս պիտի ճաթիմ , Ֆիլէմօնի
շուկային վերջին ապրանքը պիտի կոտորեմ , եւ
ինքն ալ պիտի անիծէ զիս : — Մի վախնաք ,
սանդուղին վրայ դիմացնիդ մարդ չելներ . վե-
րը ընդ ամենն երկու վարձակալ կայ . մէկն ար-
դէն դուրս ելած է , միւսն ալ շատ ուշ կելնէ :
— Վարձակալ ըսելով միաքս ինկաւ ըսաւ Ռօզ-
Յօմբօն . արդեօք երկրորդ դասիկոնին մէջ ներախ
կողմը վարձու սենեակ մը կայ : — Ձեզունին տակ
փոքրիկ անշահ սենեակ մը կայ՝ ծածկակեաց
ծերուկին բնակարանին վրայ , ըսաւ մայր Ար-
սէն : — Ա՛ , այն , հայր Եարլմայնը . . . այդ ծե-
րուկին վրայ աւելի բան մը չէք գիտեր : — Ոչ ,
օրինորդ . այսչափ միայն գիտեմ որ այս սոսա-
ւօտ կանուխ եկաւ եւ պատուհանին փեղկը բա-
խելով . « Արդեօք ինձ համար նամակ եկաւ ,

սիրելի տիկին , ըսաւ ինձ . (միշտ ալ քաղաքա-
վար է այս ծերուկը) : — Ոչ , պարոն , պատաս-
խանեցի իրեն : — Ուրեմն անհանգիստ մի ըլ-
լաք , սիրելի տիկին , ես նորէն կը հանդիպիմ »
ըսաւ ու դնաց : — Գիշերները բնաւ հոս չի
պառկիր : — Բնաւ . կերելի որ ուրիշ տեղ ալ
բնակարան ունի . վասն զի չորս հինգ օրն ան-
գամ մը ցերեկը կուգայ եւ քանի մը ժամ իր
սենեկին մէջ անցունելէ ետեւ կերթայ : — Մի-
նակ կուգայ : — Միշտ մինակ : — Աղէկ դի-
տէք . արդեօք երբեմն փոքրիկ կիներ ալ ներս
չի մտցըներ կատուի պէս . վասն զի եթէ ա-
նանկ բան մը կայ՝ Ֆիլէմօն ճանքայ կուտայ ձեզ ,
ըսաւ Ռօզ—Բօմբօն կատակախառն ամօթխա-
ծութեամբ մը : — Ա. Շարլմայնը . . . կին բերէ իր
սենեակը . . . խեղճ բարի ծերուկը . ըսաւ պա-
ռաւը ձեռքը վեր վերցընելով . եթէ զինքը տես-
նէք իր ձենձոտ փեղոյրովը , հնոտի զգեստովը ,
պատռած հովանեակովն եւ պարզամիտ դէմ-
քովը . կարծէք թէ սուրբ մ'է : — Բայց այն
ժամանակ , մայր Արսէն , ինչ ընելու կուգայ
հոս միայնակ եւ ժամերով այն անշահ ու մութ
խուցին մէջ , ուր կէս օրին անգամ հազիւ բան
մը կը տեսնուի : — Ես ալ այդ կը հարցնեմ ձեզ ,
օրիորդ , թէ ինչ գործ կրնայ ընել հոն . վասն
զի գոնէ կան կարասի ալ չունի որ դայ անոնց
վրայ նայի . ընդ ամենը անպիտան խշտեակ
մը , սեղան մը , վառարան մը , աթոռակ մ'եւ
հին սնտուկ մը կայ սենեկին մէջ : — Ֆիլէմօնի

տանը վարձուեն գինն ալ ատոր համեմատ է :
— Սակայն , օրիորդ , կը գողայ որ սենեակը
մարդ կը մտնէ , որպէս թէ ամեն մարդ գող է
հոս , եւ ինքն ալ ոսկեղէն կահեր ունի . իր ծախ-
քով կղպանք շինել տուաւ , եւ բանալին ալ
երբէք իմ քովս չձգեր . վերջապէս իր կրակն
ինք կը վառէ , որպէս զի մարդ չմտնէ իր սենե-
ակը : — Նւ կըսէք թէ ծեր է : — Այո , օրի-
որդ . . . յիսուենէն վաթսուենին մէջ կերեւի :
— Տգեղ ալ է : — Նրեւակայեցէք երկու փոքրիկ
օձի աչք՝ մեռելի գէմքի պէս աժգոյն երեսի
մը մէջ գչիրով ծակած : Շրթունքն ալ բոլորո-
վին ճերմակ է : Դէմքն այսպէս : Իսկ բնաւ ո-
ւորութեանը գալով վերջին աստիճան քաղա-
քավար է . բարեւ տուած ժամանակ այնչափ
յաճախ փեղոյրը կը հանէ եւ խոնարհութիւն կը-
նէ , որ մարդ կը շփոթի : — Բայց դարձեալ
խնդիրը հոս կուգայ թէ այդ մարդն ինչ կըր-
նայ ընել միայնակ այդ երկու սենեակներուն
մէջ , ըսաւ Ռօդ—Բօմբօն : Նրբոր Ֆիլէմօն այ-
սօր վաղը հոս գայ , եւ վրայի սենեակը Սէ-
ֆիդ բռնէ , կրնանք այն ատեն բան մ'իմանալ
եւ գրօնուել . . . : Ի՞նչ է այն սենեկին գինը :
— Ա՛հ . . . օրիորդ , այն աստիճան գէշ վիճա-
ճակի մէջ է որ կարծեմ թէ ասորին յիսուեն—
յիսուեն եւ հինգ ֆրանքի կուտայ տէրը . վասն
զի մէջը վառարան չկրնար դրուիլ , եւ լոյսն ալ
տիաճեւ փոքրիկ երդէ մը կառնու : — Խեղճ
Սէֆիդ , ըսաւ Ռօդ—Բօմբօն հառաչելով եւ տրխ-

բուժեամբ գլուխն երեբցնելով . այնչափ դբու-
նրլէ եւ թաք Ռէնբօնի հետ այնչափ ստակ մրս-
խելէ ետեւ դալ այսպիսի սենեկի մը մէջ նըս-
տիլ եւ իր ձեռաց աշխատութեամբ ապրիլ .
. . . սիրտ պէտք է ածուր . . . : — Յիրաւի մեծ տար-
բերութիւն կայ այդ սենեկին եւ այն քառա-
ձի կառքին մէջ , որով օրիորդ Սէֆիդ անցեալ
օր ձեզ առնուլ եկեր էր գեղեցիկ դիմակաւոր-
ներու հետ , ամենն ալ ուրախ զուարթ . . .
մանաւանդ այն արծաթազօծ թուղթէ փեա-
րազարդ սաղաւարտով եւ շրթնազարձ կոշիկ-
ներով մեծփոր մարդը . . . :

— Այո , Նինի — Մուլէնը . Արեւելու արդոյն պա-
րին մէջ նմանը չկայ . . . տեսնելու էր դին-
քը դէմ առ դէմ Սէֆիդի հետ . . . Պաքանալ
թագուհւոյն հետ . . . խեղճ խնձղասէր եւ
չունդամով աղջիկ : շիմայ ալ շոխնդ կը հանէ ,
բայց լալով : — Ա՛հ , անխորհուրդ մանկամարդու-
թիւն , ըսաւ ընդավաճառը : — Մտիկ ըրէք , մայր
Արսէն , դուք ալ մանկամարդ եղած էք : — Ճըշ-
մարիան ըսելով , հիմակուան տեսածնուդ աւե-
լի բան մ'եղած չեմ : — Հապա տարիաւորնե՛-
րը , մայր Արսէն : — Տարիաւորնե՞րը , այո .
բայց նախ ես տղեղ էի , եւ երկրորդ լաւ պահ-
պանուած էի : — Աւրեմն ձեր մայրը միշտ կը
հակէ՞ր ձեր վրայ : — Այ օրիորդ . . . բայց
լծեալ էի . . . : Ի՞նչպէս լծեալ , գոչեց Ռօդ-
ֆօմբօն դարմադմամբ : Այո , օրիորդ , ջրկիրի մը
տակառին լծուած էի եզբօրս հետ : Աւասի եր-

բոր օրը ութ կամ տասն ժամ ձիու պէս տակառ
քաշած ըլլայինք, դուարձութիւն մտածելու սիրտ
չէր մնար վրաս : — Խեղճ մայր Արսէն , ինչ
տաժանելի արհեստ , ըսաւ Ռօզ—Բօմբօն կա-
րեկցութեամբ : — Մանաւանդ ձմեռը՝ սառնա-
մանեաց մէջ՝ աւելի դժնդակ էր . . . Ես ու եղ-
բայրս կոշիկնուս տակը բեւեռներ դամել տա-
լու կը հարկադրէինք , որպէս զի լպիրժ սառե-
րուն վրայ կարենանք մեր բեռը քաշել : — Մա-
նաւանդ կին մ' այդ արհեստը գործէ . . .
մինչդեռ շուն լծելն արդիլեալ է , յարեց Ռօզ—
Բօմբօն աւելի եւս ցաւակցելով : — Ճշմարիտ է
ըսածնիդ , ըսաւ մայր Արսէն , անասունները
երբեմն մարդոցմէ աւելի երջանիկ են . բայց
ինչ պիտի ընենք , ապրելու է . . . կենդանին
ուր որ կապուած ըլլայ , պէտք է ճարակի . . . :
Բայց անտանելի բան էր . ուստի թոքի հիւան-
դութեամբ ախտացայ , եւ յանցանքն իմս չէր :
Կառք քաշելու փոկը՝ որուն լծուած էի , այն-
չափ կուրծքս կը ճնշէր որ չէի կրնար շունչ
առնուլ . ուստի տակառ քաշելը թողլով խա-
նութ մը բռնեցի : Ա երջապէս ըսել կուզեմ որ
եթէ ես ալ առիթ եւ գեղեցկութիւն ունենայի,
թերեւս ես ալ շատ մանկամարդներու պէս կըլ-
լայի , որ խնդալով կ'սկսին եւ յետոյ . . . — Հա-
կառակովը կը վերջացնեն , ճշմարիտ է , մայր
Արսէն . բայց ամեն մարդ ալ խելօք մնալու հա-
մար կառքի լծուելու քաջութիւնը չունի . . . :
Ս, յն հասակին մէջ աղջիկ մը կըսէ ինքնիրեն թէ

քանի որ մանկամարդ եւ գեղեցիկ է՝ պէտք է
դբօսնու . . . եւ թէ մարդ ամեն ժամանակ
տասնեւեօթն տարեկան չմնար . . . : — Ետ-
քը . . . : — Ետքը . . . կամ աշխարհի վերջն
է, կամ կը կարգուին : — Բայց, օրինորդ, թերեւս
առելի լաւ կըլլար ստկէց սկսիլ : — Այո՛, բայց
մանկամարդ աղջիկները չափազանց ախամար են .
այրերը հրապուրել կամ վախցընել չեն դիտեր .
միամիտ կամ դիւրահաւան են, եւ ձեր վրայ
կը ծիծաղին : Ահաւասիկ ես, մայր Արսէն, ե-
թէ ուղէի, բնութիւնը սոսկայնելու օրինակ
մը կրնայի ըլլալ . բայց կրած վիշտերս բաւա-
կան են . հարկ չկայ ամեն անգամ յիշելու :
— Ի՞նչ կըսէք, օրինորդ . . . դուք որ այդչափ
մանկամարդ եւ զուարթ էք, վիշտեր կրած էք :
— Ա՛հ, մայր Արսէն, տասնեւհինգ ու կէս տա-
րու էի՝ արտասուք թափել սկսայ եւ տասնեւվեց
տարու ըլլալէս ետեւ լալէ դադրեցայ : Աղւոր
բան չէ այս : — Ձեզ խաբեցին, օրինորդ : — Ա-
ւելի գէշն ըրին, ինչպէս որ ուրիշ շատ խեղճ
աղջկանց ալ ըրած են, որք՝ ինձ պէս ՚ի սկզբան
գէշութիւն ընելու բնաւ իղճ չունէին . . . :
Իմ պատմութիւնս երկայն չէ : — Հայրս ու մայ-
րս Սէն—Վալէրիի կողմը գեղացի են . բայց
անչափ աղքատ, անչափ խեղճ, որ հարկադ-
րեցան իրենց հինգ դաւակաց մէջէն զիս՝ ութ
տարեկան տղայ՝ հօրաքեռս քով դրկելու որ հոս
Փարիզի մէջ սպասուհի էր . Բարի կիներ գթա-
լով զիս քովն առաւ եւ դիւրին ալ չէր իրեն,

վասն զի վաստակը մեծ բան մը չէր : Տասն եւ
մէկ տարու եղայ , զիս Սէնթ—Սնթուան ար-
ւարձանին մէջ գործարան մը դրկեց աշխատելու .
գործարանաց վարպետները բամբասել չէ միտքս ,
բայց անոնց բնաւ հողը չէ մանչ եւ աղջիկ տը-
ղայոց խառն 'ի խուռն տասնեւութ տարու աղջ-
կանց եւ պատանեաց հետ աշխատիր : Եւ ո-
րովհետեւ ինչպէս ամեն տեղ՝ հոն ալ վարքն ու
բարքն աւրած ստահակներ կը գտնուին , որք ա-
մեն տեսակ խօսք եւ գործ անպատկառ կընեն , կը
հարցնեմ ձեզ թէ ի՞նչ չար օրինակներ չեն տար
տղայոց՝ որք կարծուածէն աւելի կը տեսնեն ու
կը լսեն : Այն ժամանակ ի՞նչ կուզէք որ ըլլան . . .
հետզհետէ մեծնալնուն հետ կը վարժուին նաեւ
ամեն օր այնպիսի բաներ լսել եւ տեսնելու ,
որք ետքը զիրենք չեն դայթակղեցներ : — Ճըշ-
մարիտ է ըսածնիդ , օրինորդ Ռօզ—Բօմբօն .
խեղճ տղայք , ո՞վ հող կը տանի անոնց . ոչ հայ-
քը եւ ոչ մայրը , խեղճերն իրենց աշխատու-
թեան կ'զբաղին : — Այո՛ , մայր Արսէն , երբոր
աղջիկ մը դլխէ ելնէ , չարաչար կը դատապար-
տեն սա է նա է ըսելով . բայց եթէ պատճառը
զիտնային , դատապարտելէ աւելի կը մեղքը-
նային . . . : Վերջապէս ինձ գալով , տասն եւ
հինգ տարու եղած ժամանակս խիստ գեղեցիկ
ու առոյգ էի . . . : Օրին մէկը գործարանին
վերակացուներէն մէկուն գանգատ մ'ունեցայ :
Քացի գտայ զինքն իր սենեակը , եւ խոստա-
ցաւ արդարութիւն ընել ինձ , մինչեւ անգամ

պաշտպանել զիս՝ եթէ իր խրատուցն անապի,
եւ զիս համբուրել ուղեց. ես ալ դէմ կեցայ ու
չթողուցի: Այն ժամանակ ըսաւ ինձ. « Չե՞ս
հաճիր, ուրեմն ալ գործ չունիս այս գործարա-
նիս մէջ »: — Ա՛հ, չնր մարդ, ըսաւ մայր Ար-
սէն: — Տուն կը դառնամ լալով, խեղճ հօրա-
քոյրս զիս կը քաջալերէ որ չզիջանիս եւ ու-
րիչ տեղ մտնեմ. . . այն . . . բայց անհնար
եղաւ. գործարանները լի էին գործաւորներով:
Սը որովհետեւ ձախորդութիւնը մինակ չգար,
հօրաքոյրս հիւանդացաւ, ստակը հատաւ, եւ
ուտելու հաց չկար. ինքզինքս կը սրտապնդեմ
եւ գործարանը կերթամ, որպէս զի վերակա-
ցունն աղաչելով նորէն աշխատիլ սկսիմ հոն.
բայց չյաջողեցաւ. « Քարը գլուխդ, ըսաւ ինձ,
քանի որ քու երջանկութիւնդ չեւ հասկընար
եւ կը մերժես. վասն զի եթէ հաճոյակատար
ըլլայիր, թերեւս յետոյ քեզ կնութեան ալ կառ-
նուի . . . »: Ի՞նչ կուղէք որ ձեզ ըսեմ, մայր
Արսէն. չքաւորութիւնը վրայնիս ծանրացած
էր. բանելու գործ չունի, մօրաքոյրս հիւանդ
էր. գործարանի վերակացուն կըսէր թէ զիս
կնութեան պիտի առնուր. . . ուստի ես ալ
ուրիշներուն պէս ըրի: — Ետքը երբոր ամուս-
նանալ ուղեցիք անոր հետ: — Արաս խնդաց,
եւ վեց ամիս ետքը զիս ձգեց. . . : Այն ա-
տեն ես ալ այնչափ լացի որ արտասուքս հատաւ:
Հիւանդացայ. . . եւ վերջապէս որովհետեւ ա-
մեն աղէտներու վրայ ժամանակ անցնելէ եւ

տեւ մարդ կը մխիթարուի, եւ ալ մխիթարուեցայ . ուրիշ անձինք դէմս ելան, եւ մէկէն միւսին անցնելով վերջապէս Պ. Ֆիլէմօնին պատահեցայ, եւ հիմա միւսներուն վրէժն անկէ կատարում . իր բռնաւորն եղած եմ, աւելցուց Ռօզ — Բօմբօն եղերերդական դէմքով, եւ այս պատմութիւնն ըրած ժամանակ իր գեղանի դէմքը տխրեցնող տրամութեան ամպը փարատիլ սկըսաւ : — Ճշմարիտ է, ըսաւ մայր Արսէն խորհելով . խեղճ աղջիկ մը խաբելով գլխէ կը հանեն . ո՞վ դայն կը պաշտպանէ, ո՞վ տիրութիւն կընէ : Ա՛հ, այո՛, շատ անգամ գործուած գէշութեան պատճառը դուք չէք . . . եւ . . . : — Ա՛յ, Նինի — Մուլէնը կուգայ, դռնեց Ռօզ — Բօմբօն ընդամաճառին խօսքը կտրելով եւ փողոցին միւս կողմը նայելով . նրչափ կանուխ ելեր է այս առաւօտ . . . Բնչ գործ կրնայ ունենալ ինձ հետ :

Այս ըսելով Ռօզ — Բօմբօն աւելի եւս պարկեշտաբար փաթթուեցաւ թիկնոցին մէջ : Ժաք Տիւմուլէն գլխարկն ականջներուն վրայ լիջուցած յառաջ կուգար կարմիր քիթով եւ փայլուն աչքերով : Արկնոց մը հագած էր, որ իր ուռուցիկ փորին կլորութիւնը կը կաղապարէր . մէկ ձեռքը հաստ գաւազան մը բռնած էր, եւ միւս ձեռքը կրկնոցին լայն գրպանին մէջ խօթած էր : Արբոր խանութին դրանը քով հասնելով դռնապանուհին հարցնելու վրայ էր՝ Ռօզ — Բօմբօնը տեսաւ :

« Օ՛ր, աղկիջս արդէն ելեր է . . . ըսաւ Նինի—Մուլէն . . . դո՛ն եմ հոս դանելուս վըրայ, որովհետեւ արշալուսոյն ծագած ատեն դինքն օրհնելու կուգայի: »

Եւ թեւերը բանալով Ռօդ—Բօմբօնի վրայ քալեց, բայց աղջիկը ետ քաշուեցաւ:

Ի՞նչ է այդ . . . ապաշնորհ տղայ, ըսաւ կրօնական մատենագիրը, առաւօտեան հայրագործով ողջագուրանքս կը մերժէք: — Ես Յիլէմօնէն զատ ուրիշ մարդէ հայրական ողջագուրանք չեմ ընդունիր . . . : Երէկ նամակ մ'ատի իրմէ, եւ հետը մէկ տակառ ռուփ, երկուսագ, սափոր մ'անուշ ցքի եւ ծամակալ մը: Ի՞նչ կըսէք, ծաղրելի ընծայ մը չէ այս: Ուստի ես ալ անուշ ցքին պահեցի, եւ մնացեալը տալով երկու զոյգ աղաւնի առի եւ Յիլէմօնի սենեկին մէջ դրի, որով փոքրիկ ու սիրուն աղաւնոց մը կունենամ: Մնաց որ իմ այրս եօթն հարիւր ֆրանքով կուգայ, զոր իր պատուարժան ընտանիքէն խնդրեց նուազածութիւն սովրելու պատճառանօք, որպէս զի ընկերութեան մէջ հրատուրիչ ըլլայ, եւ աղւոր ամուսնութիւն մ'ընէ: — Ուրեմն, սիրելի աղջիկս, կըրնանք անուշ ցքիին համը նայիլ եւ ընտանեկան կոչունք մ'ընել մինչեւ որ Յիլէմօն իր եօթն հարիւր ֆրանքովը գայ: »

Այս ըսելով Նինի—Մուլէն ձեռքը բաճկոնին գրպաններուն զարկաւ, որոց մէջէն մետաղի ձայն հնչեց, եւ աւելցուց. «Կուգայի ձեզ

առաջարկելու, որ այսօր, վաղը, եւ մինչեւ իսկ
միւս օր իմ կեանքս դեղազարդէք, եթէ ձեր սիրտը
կը հաճի . . . թէ որ ուղածնիդ պարկեշտ եւ հայ-
րավայել դբօսանք մ'է, սիրտս չէ չըսեր: — Ան-
հող եղիք, ես ձեզ համար հաւ, նախահաւ,
ընտանեկան պատկեր մը կըլլամ . . . : Օ'ն,
պատոյտ, ճաշ, տեսարան, ծպտեալ պարահան-
դէս եւ ետքն ալ ընթրիք . . . ձեր բանին չի
դար: — Այս պայմանաւ որ Սէֆիդ ալ մէկտեղ
դանուի: Խեղճ աղջիկը թերեւս քիչ մ'ախտի:
— Թո՛ղ Սէֆիդ ալ դանուի: — Ի՞նչ ըրիք, ժա-
ռանդութիւն մը ձեռք ձգեցիք, մեծփոք ա-
ռաքեալ: — Անկէց աղէկ, ո՛վ վարդերուն վար-
դը: Ես կրօնական լրագրի մը խմբագրապետն
եմ . . . եւ որովհետեւ այս յարգի խանութն
ըստ պատշաճի պէտք է բանի, ամեն ամիս
կանխիկ ամսական մ'եւ երեք օր ազատութիւն
կը խնդրեմ: Այս պայմանով երսունին քսան
եւ եօթն օրը սուրբ ու կռփիչ ըլլալու կը հա-
ճիմ: — Գո՛ւք կը խմբագրէք լրագիրը . արդարեւ
խիստ զուարճալի բան մ'ըլլալու է ձեր լրագի-
րը . . . անշուշտ ինքնիրեն կրնայ արգիլեալ պա-
րեր խաղալ սրճարանաց սեղաններուն վրայ:
— Այո՛, զուարճալի, բայց ոչ ամեն մարդոց հա-
մար . ծախքը աուողները հարուստ կղերական-
ներ են՝ որք ստակի չեն նայիր, բաւական է որ
լրագիրը խաճնէ, բղբառէ, այրէ, ջախջախէ,
ջարդէ, սպաննէ . . . : Պատուոյս վրայ կերդ-
նում որ կենացս մէջ երբէք այս աստիճան կա-

առղի եղած չէի, աւելցուց Նինի—Մուլէն բարձ-
րաձայն քրքիջով: — Նոր բացած վերքերս իմ
չաղահատ թոյնովս եւ երէտեք լեղիովս պիտի ա-
ռեղանեմ: »

Եւ իբրեւ վերջաբան՝ Նինի—Մուլէն Շամ-
բանիայի գինւոյ սրուակի մը խցանին ցատկե-
լու բոմբիւնին նման ձայն մը հանեց, որ շատ
խնդացուց Ռօղ—Բօմբօն:

« Ի՞նչ է ձեր կղերական լրագրին անունը,
հարցուց աղջիկը: — Սեր Ընկերն: — Շատ աղէկ,
ահա գեղեցիկ անուն մը: — Սպասեցէք քիչ մը.
Երկրորդ անուն մ'ալ ունի: — Նայինք ի՞նչ է:
— Սեր Ընկերն, իմ խորրած անհատորներսն, անորբերներսն,
անօրններսն եւ այլն, Մեծին Պօսիւէի այս խօս-
քին հետ. Աննէ որ մեզի հետ ընն, մեզի դէմ են: — Այդ-
պէս կըսէ միշտ Ֆլէմօն ալ երբոր հողմաղօրի
չինած ժամանակ Շօմիէոի պէս պատերազմներ
ունենայ: — Ատկէց կը հասկցուի թէ Մելգացի
արծիւին (Պօսիւէի) հանձարը տիեզերական է:
Ես մէկ պակասութիւն մը կը դանեմ անոր վը-
րայ, այն է Մօլիէոի վրայ նախանձիլը: — Ա-
տոնք գերասանի նախանձութիւններ են, ը-
սաւ Ռօղ—Բօմբօն: — Չոր աղջիկ . . . պա-
տասխանեց Նինի—Մուլէն մատովն սպառնա-
լով: — Աղէկ միտքս եկաւ. արդեօք Սէնթ—
Քօլօմպ տիկինն ալ պիտի սատկեցընէք . . .
վասն զի ան ալ քիչ մ'անսիրոյթ է բարեպաշտու-
թեան մասին . . . եւ ձեր ամուսնութիւնը . . .
ինչպէս կըլլայ: — Իմ լրագիրս ընդհակառակն

անոր ծառայութիւնս կընէ : Խորհեցէք անգամ
մը . . . խմբագրատնտնութիւնս . . . Ինչ փա-
ռաւոր վիճակ : Աղերականները զիս մինչեւ եր-
կինք կը բարձրացնեն , յառաջ կը քշեն , ինձ
կօժանդակեն , կօրհնեն : Սէնթ—Քօլօմպ պիտի
իյնայ ձեռքս . . . եւ այն ատեն կեանք . . .
մահու չափի կեանք կընեմ :

Ս. յս միջոցին թղթաբեր մը խանութէն ներս
մտաւ եւ մրդավաճառին նամակ տուաւ ըսե-
լով . «Պ. Շարլմայնի պիտի տրուի , ծախքը վը-
ճարուած է : — Օ՛, ըսաւ Ռօղ—Քօմբօն , մեր
ծածկակեաց եւ կարգէ դուրս երեւութով ձե-
րուկին համար է . տրդեօք հետու տեղէ կու-
գայ : — Անշուշտ , խտալիայէն կամ Հոմմէն ,
ըսաւ Նինի—Մուլէն նամակին վրայ նայելով ,
զոր մրդավաճառը ձեռքը բռնած էր : — Բայց
մի է այդ զարմանալի ձերուկը , աւելցուց Նի-
նի—Մուլէն : — Երեւակայեցէք , մեծփոք ա-
ռաքեալս , ըսաւ Ռօղ—Քօմբօն , խեղճուկ ձեր
մը՝ որ բակին ներսի ծայրն երկու սենեակ ու-
նի , ուր բնաւ չպատկիր , այլ միայն երբեմն
կուգայ ժամերով հոն կը դոցուի՝ անանց թող
տալու որ մէկը ներս մտնէ . . . ուստի հոն
ինչ ընելը մարդ չգիտեր : — Ուրեմն դաւադիր
կամ գրամանենդ մ'ըլլալու է . . . ըսաւ Նի-
նի—Մուլէն ծիծաղելով : — Խեղճ սիրելի մարդը ,
ըսաւ մայր Արսէն , մեր պիտի գործածէ իր կեղծ
գրամները : Նախաձայի համար ինձմէ դնած
հացի կտորին ու սեւ բողկին փոխարէն միշտ

պղինձ դրամ կը վճարէ : — Ի՞նչ է այդ դադա-
նակեաց հինաւուրցին անունը , հարցուց Տիւ-
մուլէն : — Պ. Շարլմայն , ըսաւ մրդավաճառը :
— Բայց ահա , գայլին խօսքն եղած ատեն պո-
չը կը տեսնուի : — Ո՞ւր է պոչը : — Ահա , տես
նա տանն առջեւէն եկող ծերուկը , որ ճիարը ծը-
ռած , հովանեակն ալ թեւին ներքեւ առած կը
քալէ : — Պ. Ռօտէնն է , գոչեց Նինի—Մուլէն ,
եւ մէկէն ետ քաշուելով շտապաւ սանդուղին
երեք աստիճաններէն վար իջաւ , որպէս զի
զինքը չտեսնէ : Յետոյ աւելցուց . — Եւ կըսէք
թէ այս պարոնին անունը . . . : — Պ. Շարլ-
մայն է . . . կը ճանչէք զինքը , հարցուց մըր-
դավաճառը : — Բայց ի՞նչ կուգայ կընէ հոս այս-
պիսի կեղծ անունով մը , ըսաւ Ժաք Տիւմու-
լէն ցած ձայնիւ ինքնիրեն խօսելով : — Ուրեմն
կը ճանչէք զինքը՝ յարեց Ռօղ—Բօմբօն անհամ-
բերութեամբ . ինչո՞ւ այդպէս ապշեցար : — Եւ
կըսէք թէ այս տան մէջ երկու սենեակ ունի
ուր մերթ ընդ մերթ գաղտագողի կուգայ , ը-
սաւ Ժաք Տիւմուլէն եւս քան զեւս դարձաց-
մամբ : — Այո՛ , կրկնեց Ռօղ—Բօմբօն , պատու-
հանները Յիլէմօնի աղաւնոցէն կերեւին : — Շուտ
շուտ , ծառուղիէն անցնինք երթանք , որպէս
զի մեզ չտեսնէ » ըսաւ Տիւմուլէն :
Եւ առանց Ռօտէնէն տեսնուելու , խա-
նութէն ծառուղին անցաւ , անկէց ալ Ռօղ—
Բօմբօնի բնակարանը տանող սանդուղէն վեր
ելաւ :

« Բարի լոյս , պարոն Շարլմայն , ըսաւ մայր Արսէն Ռօտէնի՝ որ դրանք սեմէն ներս կը մտնէր . այսօր երկու անգամ է որ հոս կուգաք , եւ ուրախ եմ , վասն զի շատ հազուատեսիլ էք : — Գուք ալ շատ բարեսիրտ եւ պարկեշտ էք , սիրելի տիկին » ըսաւ Ռօտէն խիստ քաղաքավար ողջունիւ մը : Եւ մրդավաճառին խանութը մտաւ :



Գ. Լ. Ռ. Ի. Խ. Բ .

Ա. Ռ. Ա. Ն. Ձ. Ն. Ա. Ր. Ա. Ն.

Ռօտէն մայր Արսէնի խանութը մտած ժամանակ դէմքէն անմեղ պարզութիւն մը կը վազէր . երկու ձեռքն իր հովանեակին կոթին վերայ կրթնցնելով ըսաւ . « Կը ցաւիմ , սիրելի տիկին , որ այս առաւօտ ձեզ խիստ կանուխ արթնցուցի . . . : — Գուք հոս յաճախ չէք դար , պատուական պարոնս , որպէս զի այդ ըրածնուդ դժգոհ ըլլայի : — Ի՞նչ ընեմ , սիրելի տիկին , դեղը բնակելուս համար՝ ժամանակ ժամանակ հոս կուգամ մանր գործերս տեսնելու : — Աղէկ միտքս եկաւ , պարոն , երէկուան սպասած նամակնիդ այս առաւօտ եկաւ . խոշոր ծրար մ'է եւ հեռու տեղէ կուգայ . ահաւասիկ ըսաւ պտղավաճառը նամակը ծոցէն հանելով . Թղթատարի ծախք չունի : — Շնորհակալ եմ ,

սիրելի տիկին, ըսաւ Ռօտէն նամակն առերեւոյթ անհողութեամբ մ'առնելով, եւ ծոցը գրնելէ ետեւ զգեստը խնամով կոճկեց: — Ուրեմն հիմա ձեր պարէնը պատրաստեմ, ըսաւ մայր Սրսէն. ձեր սովորականին պէս կուզէք, պատուական պարոնս: — Այո, միշտ սովորականիս պէս: — Հիմա կը պատրաստուի:

Այս ըսելով մրդավաճառը հին սակառ մը առաւ, մէջը չորս հատ վառելու բունձ, մանր խոխուներու խուրձ մը եւ քանի մը կտոր ալ ածուխ նետեց, եւ այս լուցկիները կաղամբի տերեւով մը ծածկեց. յետոյ խանութին ներսի կողմին երթալով սնտուկի մը մէջէ մեծ ու կլոր հաց մը հանեց, շերտ մը կտրեց. յետոյ վարժաչքով մը պատուական բողկ մ'ընարեց, երկուքի ձեղքեց, մէջը ծակ մը փորեց, եւ մոխրադոյն խոշոր աղով լցնելէ ետեւ՝ երկու կըտորներն իրաց կցեց, եւ լուցկիները ծածկող կաղամբի տերեւին վրայ դրաւ հացին հետ. վերջապէս իր փռան մէջէն քանի մը վառած ածուխ առաւ, հողով լցուն փայտէ կոշիկի մը մէջ դրաւ եւ նոյնպէս սակառին մէջ տեղաւորեց:

Ասնք ընելէ ետեւ՝ մայր Սրսէն իր սանդուղէն վեր ելաւ ու ըսաւ Ռօտէնի. « Ահա ձեր սակառը, պարոնս: — Մեծապէս շնորհակալ եմ, սիրելի տիկին, պատասխանեց Ռօտէն, եւ ձեռքը տափառին դրականը խօթելով ութ հատ հինգ սանթիմետր ողիմնձ հանեց եւ մի առ մի պտղավաճառին համբուլէ ետեւ՝ սաւ

կառն առնելով ըսաւ . « Մէկ պահէն սենեկէս
իջած ժամանակս՝ ձեր սակառն ուրիշ ան-
դամներու պէս կը բերեմ կուտամ : — Ինչպէս
որ կամիք , բարի պարոնս , ըսաւ մայր Սրտէն :

Ռօտէն հովանեակը ձախ թեւին ներքեւ ու-
ռաւ , աջ ձեռքովը սակառը վերցուց , եւ մութ
ժառուղիին մէջ մանելով փոքրիկ բակէ մ'ան-
ցաւ , արագ քայլերով խարխալեալ շէնքի մը
երկրորդ դասիկոնն ելաւ , գրգռանէն բանալի
մը հանելով առաջին դուռ մը բացաւ եւ ներս
մանելով դուռը խնամով փակեց :

Երկու սենեկաց առաջինը բռնորովին մերկ
էր . իսկ երկրորդը ախուր եւ ամենախեղճ խուց
մ'էր : Պատին թուղթերն այն աստիճան մաշած
աւրուած ու ծուտած էր , որ իր նախնական
դոյնն անհնար էր որոշել . փոկաշէն կազ մահ-
ճակալ մը՝ վրան դժուծ անկողին մը ձգուած ,
որուն բուրդէ վերմակը որդնաքանց եղած էր .
անցենարան աթոռակ մը , փոքրիկ ճճեկեր սե-
ղան մը , ապակարուեալ հողէ դորշ վառարան
մը՝ յախճապակի պէս ճաթրտած . մահճակալին
ներքեւ փակաղակաւոր հին սնտուկ մը . ասոնք
էին այս ախուր սենեկին կարասիները : Փոքրիկ
ապակիներով նեղ պատուհան մը հաղիւ քիչ
մը կը լուսաւորէր դոյն , վասն զի փողոցին վը-
րայ նայող շէնքը բարձր ըլլալուն՝ այս յարկին
օդն ու լոյսը գրեթէ բոլորովին արդիլած էր .
դնտասեղով իրարու կցուած երկու հին թաշ-
կինակ , որք պատուհանին առջեւ ձկ տեալ դեր-

ձանի մը վրայ ըստ կամս կրնային սահիլ , վարագուրի պաշտօն կը կատարէին . վերջապէս սալայատակին աղիւսները քայքայած , իրարմէ օձտուած եւ տակի դաճերը երեւան ելած ըլլալով , շէնքը վարձողին ծայրագոյն անհողութիւնը ցոյց կուտային :

Գուռը գոցելէ ետեւ՝ Ռօտէն փեղոյրն ու հովանեակն անկողնին վրայ նետեց , սակառը դետինը դրաւ , սեւ բողկն ու հացը դուրս հանեց սեղանին վրայ դրաւ . յետոյ վառարանին մէջ խօթեց , եւ ուժեղ շնչմամբ կրակը փչելով վառեց : Յետոյ գնաց երկու թաշկինակէ վարագոյրը գոցեց , եւ կարծելով որ զինքը բընաւ տեսնող չէր կրնար ըլլալ , քիչ մ'առաջ մայր Արսէնէն առած նամակը զգետին գրպանէն հանեց : Բայց այս շարժումն ըրած ժամանակ ուրիշ քանի մը թուղթեր ու զանազան նիւթեր ալ մէկ տեղ դուրս ելան , եւ աղտոտ ու ճմրտկած թուղթէ փոքրիկ ծրար մը սեղանին վրայ իյնալով բացուեցաւ . մէջը արծաթէ հին ու սեւցած Պատուոյ Ազգէնի խաչ մը կար , որուն կարմիր ժապաւէնը բոլորովին գունաթափ եղած էր :

Այս խաչը տեսնելուն պէս Ռօտէն արհամարհոտ եւ հեղնական ժպիտով մ'ուսերը թոթվեց , եւ սեղանին վրայէն վերցնելով նորէն գրպանը դրաւ ճալմայի միտալին հետ՝ զոր Չարէնկա գողցած էր . յետոյ իր արծաթէ խոշոր ժամացոյցը ծոցէն հանեց սեղանին վրայ դրաւ Հռոմէն ե-

կամ նամակին քով, եւ յուսով ու կասկածա-
նօք, երկիւղիւ եւ անհամբեր հետաքրքրու-
թեամբ խառն աչքով մը նամակին վրայ նայե-
ցաւ : Վայրկեան մը խորհելէ ետեւ՝ երբոր նա-
մակին կնիքը խզելու վրայ էր, մէկէն սեղանին
վրայ նետեց, որպէս թէ տարօրինակ մտահա-
ճութեամբ մ'իբ կրած բուռն եւ սրտատանջ ան-
բասուղութեան անձկութիւնը քանի մը վայր-
կեան երկարել կուզէր : Ժամացոյցը նայելով
որոչեց նամակը չբանալ միջեւ որ սլաքն ինն
ու կէսին վրայ հասնի, որուն տակաւին եօթն
րոպէ կուզէր : Ճակատադրական տղայամիտ ար-
տաւոցութեամբ մը, որմէ խիտ մեծ հանճար-
ներ ալ ազատ չեն եղած, Ռօտէն կըսէր ինք-
նիրեն . « Այս նամակը բանալու անհամբեր փա-
փաք ունիմ : բայց երբոր իննուկէսին բանամ,
բերած լուրերը յաջող կըլլան : » Մնացած քա-
նի մը րոպէն պարապ չանցունելու համար՝ Ռօ-
տէն քանի մը քայլ առաւ սենեկին մէջ, եւ
դնաց պատին վրայ երկու ժանգոտ բեւեռներէ
կախուած երկու հին ու դեղնած պատկերներու
առջեւ կանգնեցաւ եւ դմայլելով մ'անոնց նա-
յեցաւ :

Ռօտէնի դժուծ սենեկին միակ զարդն եղող
այս երկու նկարներէն մէկը կարմիր դեղին կա-
նանչ եւ կապոյտ երփներով ներկուած այն կոշտ
պատկերներէն էր՝ որք տօնավաճառաց մէջ կը
ծախուին : Տակը դրուած խաւերէն արձանադ-
րութենէ մը կը հասցուէր որ այս պատկերը

Հոռմ շինուած էր: Յնցոտի գրողեակներով ծածկուած կին մը կը ներկայայնէր՝ ուսը մախաղ մը դարկած եւ ծունդին վրայ փոքրիկ տղայ մը նստուցած: Չառադէմ բազդադուշակ կին մը աղուն ձեռքը բռնած՝ կարծես թէ ապագայն կը կարդար անոր մէջ, վասն զի բերնէն խոշոր կապոյտ գրերով այս խօսքը կելնէր. Սուր Բաբ (Պապ պիտի ըլլայ):

Երկրորդը՝ որ կարծես թէ խոր մտածութիւն կազդէր Ռօտէնի, ընտիր պատիկեր մ'էր, որուն ճարտար կերպուածքն եւ հարմարձակ ու ճիշդ ձեւը դարձանալի հակապատկեր մը կընծայէին միւս պատկերին կոչա նկարներուն քով: Այս հազուադիւտ եւ ընտիր պատկերը՝ դոր Ռօտէն վեց լուիի (կարգէ դուրս շապլութիւն) գնած էր, ցնցազգեստ պատանի մը կը ներկայայնէր: Ա.էմքին ապեղութիւնն ու շիմութեան ճարտարատիպ նկարագրով մը կը փոխարինուէր: Քարի մը վրայ նստած էր խոզի երամակէ մը շրջապատուած, որոց պահպանութիւն կընէր. արմուկը ծունկին եւ ծնօտն ալ ձեռքին կրթընցուցած էր: Մուրացկի կերպարանք ունեցող այս պատանիին խոկուն եւ մտախոհ դիրքը, լայն ճակատին դօրութիւնը, ուշիմ նայուածքին նրբութիւնը, խորամանկ բերնին ամրատիակութիւնը՝ կարծես թէ անընկձելի հաստատաստութեան մը հետ դերագոյն հանձար եւ նենգամիտ ճարպիկութիւն մը կը յայտնէին: Այս պատկերին ներքեւ հայրապետական ստորագրելնէրը

դալարուած էին շքադրամի մը բոլորաթիքը , եւ
անոր մէջտեղն ալ ծերունիի մը դլուխ կը տես-
նուէր , որուն քաջատիպ դժագրութիւնը՝ ման-
կահասակ խողարածին դէմքն ազդուապէս կը
յիշեցնէր :

Այս պատկերին մակագիրն էր Մանուկ-
Սեփարտի հիմերորդի . իսկ միւս երիւներանդ պատ-
կերին մակագիրն էր Անխարտեայն* : Այս պատ-
կերները հետզհետէ աւելի մօտէն եւ աւելի ե-
ռանդուն ու հարցական աչօք նկատելով , եւ
որպէս թէ ներշնչութիւններ կամ յոյսեր ա-
նոնցմէ խնդրելով , Ռօտէն այն աստիճան մօ-
տեցած էր որ միշտ ոտքի վրայ կեցած եւ աջ
ձեռքն ալ դլխուն ետեւը դրած , գրեթէ պա-
տին կրթներ էր . իսկ ձախ ձեռքը սեւ տա-
փատին դրպանը դրած , իր հին ձիթագոյն ըզ-
դեատին քղանցը մէկ կողմ քշած էր : Քանի
մը վայրկեան այս մտախոհ դիրքին մէջ մը-
նաց :

Ռօտէն , ինչպէս ըսինք , ժամանակ ժամա-
նակ կուղար այս սենեակը : Ուխտին կանոնաց
համեմատ մինչեւ այն ժամանակ հայր Տ'էկրին-
եիի հետ բնակած էր՝ յատկապէս անոր վրայ
հակելու պաշտօնով : Ընկերութեան անդամնե-
րէն ոչ մէկը՝ մանաւանդ ստորակարգեալ դրից

* Աւանդութիւն կայ որ Սեքստոս հինգերորդ
դի տղայութեան ժամանակ գուշակութիւն եղեր
է մօրը թէ տղան Պապ սլիտի ըլլայ . եւ պատա-
նեկութեան ժամանակն ալ խողարած է եղեր :

մէջ՝ ուր Ռօտէն գտնուած էր միշտ, չէր կըր-
նար ոչ իր տանը մէջ ջիփակուիլ, ոչ ալ բանալիով
կղպուած կարասի մ'ունենալ: Այս կերպով փո-
խադարձ եւ անդուլ լրտեսութեան արդելք մը
չկար, որ ձիգլիթ ընկերութեան գործելու եւ
ծառայեցնելու միջոցներուն ամենէն գորաւոր-
ներէն մէկն էր: Ռօտէն իր անձին վերաբեր-
եալ՝ բայց որ եւ է կերպիւ ուխտին ընդհանուր
չահուց հետ ալ յարաբերութիւն ունեցող պատ-
ճառներով Քլօվիս փողոցին մէջ այս սենեակը
բռնած էր ամենէն ծածուկ: Այս անձանօթ ա-
ռանձնարանին խորէն լրտեսն ուղղապէս կը թըղ-
թակցէր սուրբ ժողովին գլխաւոր եւ ազդեցու-
թեան տէր անդամոց հետ:

Ընթերցողք կը յիշեն թերեւս որ այս պատ-
մութեան սկիզբը, երբոր Ռօտէն կը դրէր շը-
ռոմ թէ հայր Տ'Եկրինեի՝ առանց իր մայրը տես-
նելու Քաղղիայէն մեկնելու հրաման ստանա-
լէն ետեւ՝ ճանքայ ելնելու Լոսանոսէն էր, կը յի-
շեն կրտսենք, որ Ռօտէն հայր Տ'Եկրինեի վա-
րանուամն ուխտին մեծաւորին խմայնելու համար
գրած նամակին ներքեւ յետադրի ձեւով այս
խօսքն աւելցուցած էր.

« Ըսէք կարդինալ—իշխանին որ կրնայ վրա-
« տահիլ իմ վրայ, բայց պէտք է որ ինք ալ
« իմ ըսածներս կատարէ: »

Ուխտին ամենէն հզօր աստիճանաւորին հետ
այսպէս ընտանի կերպով թղթակցութիւն մը,
գրեթէ պաշտպանի բերնով յանձնարարութեան

եղանակ մը՝ զոր Ռօտէն կարդինալ—իշխանին
կուղղէր, բաւականապէս կը հաստատէին թէ
լրտեսը, իր առերեւոյթ ստորակարգութեան
հակառակ՝ խիստ կարեւոր մարդ մը համարուած
էր Յկեղեցւոյ մէկ քանի իշխաններէն եւ ու
րիշ բարձր աստիճանաւորներէ, որք իրենց նա
մակները կեղծ անուններով եւ սովորական ըզ
դուշութեամբք եւ ապահովապէս ծածկագրեալ
Փարիզ կը դրկէին :

Ռօտէն երկար ժամանակ Սեքստոս հինգե
րորդի պատկերը մտախոհութեամբ նկատելէ ե
տեւ՝ ծանրութեամբ սեղանին քով դարձաւ, ու
րուն վրայ դրուած կեցեր էր նամակը՝ զոր իր
անհամբեր հետաքրքրութեան հակառակ տեսակ
մը մնապաշտական յապաղմամբ ուշացուցեր էր
բանալ : Եւ որովհետեւ ժամն ինն ու կէս ըլլա
լու դեռ քանի մը վայրկեան պէտք էր, ժա
մանակ չկորսնցնելու համար՝ իր սակաւապէտ
նախաճաշին պատրաստութիւնն ըրաւ : Հացն
ու սեւ բողկը սեղանին վրայ դրաւ կաղամարի
մը քով, յետոյ անյենարան աթոռակին վրայ
նստելով, եւ վառարանը դրեթէ սրունքներուն
մէջ առնլով, տափառին գրպանէն եղջերակով եւ
սայրը կիսով չափ մաշած դանակ մը հանեց,
պատառ մը հաց եւ պատառ մը բողկ կարեց եւ
իր համետտ նախաճաշն ուտել սկսաւ մեծ ա
խորժակով, աչքը ժամացուցի սլաքին վրայ
տնկած :

Արբոր ակնկալեալ ժամն եկաւ, Ռօտէն դող-

դոջ ձեռք նամակին պատեանը խղեց բացաւ :
Երկու նամակ կար մէջը . առաջինը կարդա-
ցած միջոցին շատ դո՛հ չեբեւցաւ, վասն զի քա-
նի մը վայրկեան ետքը ուսերը թոթվեց , դա-
նակին կոթն անհամբերաբար սեղանին վար-
կաւ , եւ աղտոտ ձեռքին յետատովը նամակն
արհամարհանօք մէկդի հրելով , երկրորդը կար-
դալ սկսաւ . մէկ ձեռք հացը բռնած , եւ միւ-
սով ալ բողկի շերտ մը մեքենաբար աղը թաթ-
խելով , գոր սեղանին մէկ կողմը ցանած էր :

Յանկարծ Բօտէնի ձեռքն անշարժ մնաց :
Քանի որ ընթերցումն յառաջ կը տանէր , հե-
տաքրքրութիւնն ու զարմանքը կաւելնար : Մէ-
կէն ասքի վրայ ելնելով պատուհանին քով վա-
զեց , որպէս զի ծածկագրութիւնը երկրորդ ան-
գամ քննելով սխալած չըլլալուն ապահովի .
վասն զի մէջը ծանուցուած բաներն անակըն-
կալ կը թաւելն իրեն : Անշուշտ Բօտէն հաս-
կրցաւ որ ծածկագրութիւնն աղէկ լուծեր էր .
վասն զի մէկէն թեւերը վար ձգեց՝ ոչ թէ սրբ-
տարեկութեամբ , այլ անակնկալ եւ կարգէ
դուրս գոհութենէ մ'առաջ եկած հիացմամբ .
եւ պահ մը գլուխը կախած եւ աչքը յառած
մնաց . . . : Եր ուրախութեան միակ նշանն էր՝
գորաւոր յաճախ եւ երկար շնչառութիւն մը :
Փառասիրութեան մէջ յանդուգն եւ ստորերկ-
րեայ մեքենայութեանց մէջ յամառ ու երկայ-
նամիտ մարդիկ՝ իրենց յաջողութեանը վրայ
կը հիանան՝ երբոր այն յաջողութիւնն իրենց

հանձարեղ ու խոհական նախատեսութիւնները
կանխէ ու դերադանցէ: Ռօտէն ալ այս վիճակին
մէջ էր. գործածած խորամանկութեամբը, ճար-
տարութեամբն ու կեղծաւորութեամբ, կաշա-
ռանաց մեծամեծ խոստմամբ, վերջապէս իբր
հանձարով քանի մը խօսքի տէր մարդոց ազ-
գած համարման երկիւղի եւ վատահոլութեան
չնօրհիւ. Ռօտէն կիմանար պապական կառա-
վարութենէն որ հնարաւոր եւ հաւանական
պարագայի մը մէջ կրնայ յաջողութեամբ այն-
պիսի դիրքի մը թեկնածել, որ շատ վեհա-
պեաներու երկիւղը նախանձը կամ ատելու-
թիւնը գրգռած է, դիրք մը՝ որ մերթ մեծա-
մեծ բարի մարդոց, մերթ պժգալի սրիկաներու,
մերթ ալ ընկերութեան յետին կարգերէն ելած
մարդոց ձեռք անցած է: Բայց այս նպատակին
ապահովապէս հասնելու համար հարկ էր որ Ռօ-
տէն իր խոստացած մեծ գործը յաջողութեամբ
գլուխ հանէր, ոչ թէ բռնու թեամբ, այլ միայն կը-
րից զսպանակներն ու խաղերը ճարտարութեամբ
դարձընելով. այսինքն է Ռէնբօնի տոհմին հա-
րատութիւնը ճիզվիթ ընկերութեան ձեռքն
անցունել. որ կրկին ամենամեծ հետեւանք
կրնար ունենալ. վասն զի Ռօտէն իր անձնա-
կան գիտմանց մէջ կը խորհէր իրեն պատուան-
դան եւ ահարկութեան միջոց մ'ընել իր ուխ-
տը, որոց գլուխն իր ձեռքը խաղալիկ մ'էր:

Հիացման առաջին տպաւորութիւնն անց-
նելէ ետեւ, տպաւորութիւն՝ որ տեսակ մը


փառասիրական համեստութիւն եւ գերագոյն
մարդոց վրայ սովորաբար տեսնուածին պէս իր
անձին վրայ անվստահութիւն մ'էր, Ռօտէն
գործն աւելի պաղ արիւնով եւ տրամախոհու-
թեամբ նկատելով ինքզինք զրեթէ մեղադրեց
այս հիացման համար: Սակայն քիչ մ'ետքը,
տարօրինակ հակասութեամբ մը վերատին այն
տղայական գաղափարներէն մէկուն հետեւելով,
որոց շատ անգամ կը հնազանդի մարդ երբոր
ինքզինք բոլորովին միայնակ եւ ծածուկ կը
կարծէ, Ռօտէն յանկարծ ոտքի վրայ ելաւ, եւ
իրեն այսչափ բերկրապատար հիացում պատ-
ճառող նամակն առնելով գնաց պարդեց դեռա-
հասակ եւ յետոյ Պապ եղող խոշարածին պատ-
կերին աչաց առջեւ. յետոյ խրոխտապանծ յաղ-
թանակաւ մը գլուխն երերցնելով, եւ իր օձի
նայուածքը պատկերին վրայ տնկելով աղտոտ
մատը հայրապետական խորհրդանիշին վրայ
դրաւ, եւ ակռաներուն մէջէն մռմռալով ը-
սաւ. « Ի՛, եղբայր, ի՛նչ կըսես . . . ես ալ . . .
թերեւս . . . »

Այս ծաղրաշարժ հարցումէն ետեւ Ռօտէն
սեղանին քով դարձաւ, եւ կարծես թէ առած
երջանիկ լուրն իր ակտորժակն առաւել եւս դըր-
գրած ըլլալով, նամակը բացուած առջեւը դը-
րաւ՝ որպէս զի անգամ մ'ալ կարդայ զայն.
Եւ կաթոգին տարփմամբ մ'անոր նայելով հացն
ուսեւ բողկը ցնծալից կատաղութեամբ խածնել
թկաւ հին աղօթք մը քթին տակէն երգելով:

Տարօրինակ մեծ եւ մանաւանդ ահաւոր
բան մը կար այս անսահման փառամոլութեան
մրցումին մէջ, որ արդէն դրեթէ արդարացած
էր դէպքերէն, եւ եթէ կրնայ այսպէս ըսուիլ
այսպիսի թշուառ առանձնարանի մը մէջ սլար-
փակուած էր: Հայր Տ'Եկրիսեի, եթէ ոչ գե-
րագոյն՝ դոնէ իրական արժէքի տէր, մեծա-
տոհմ բարձրամիտ եւ ազնուական ընկերու-
րութեանց մէջ մեծցած մարդ մ'ըլլալով հան-
դերձ՝ երբէք չէր համարձակեր մտքէն իսկ ան-
ցունել այն բանը՝ զոր Ռօտէն մէկէն 'ի մէկ ձեռք
բերել կուզէր: Հայր Տ'Եկրիսեի միակ դիտու-
մը՝ զոր Ռօտէն յանդգնութիւն կը համարէր,
որ մ'իբր ուխտին ընդհանրական մեծաւոր ըլլալ
էր, ուխտի մը՝ որ բոլոր աշխարհ ճիրաններուն
մէջ առած էր: Այս երկու մարդոց փառասիրա-
կան տրամադրութեանց տարբերութիւնը դիւ-
րաւ կրնայ հասկցուիլ: Երբոր բարձր խելքի,
առողջ եւ աշխոյժ բնութեան տէր մարդ մը
իւր հոգւոյն եւ մարմնոյն բոլոր զօրութիւն-
ները միակ մտածութեան մը վրայ ամփոփելով
Ռօտէնի պէս յամառութեամբ ժուժկալ ու սա-
կաւապէտ կեանք մը վարէ, եւ սրտի ու ըզ-
գայութեանց ամեն հաճոյքներէն կամաւորա-
պէս հրաժարի, այնպիսի մարդ մը դրեթէ միշտ
Սրարչին դրած նուիրական իղձերուն դէմ կա-
պրտամբի յօգուտ այլանդակ եւ անյագուրդ
կրքի մը, դժոխային աստուածութեան մը,
որ սրբապիղծ դաշամբ մ'իրմէ կը պահանջէ:

ահաւոր իշխանութեան մը փոխարէն՝ ջնջել ամեն ազնիւ հակամիտութիւնները, ամեն վսեմ յօժարութիւնները եւ ամեն գորովական բնազդումները՝ դորս Աստուած իր յաւիտենական իմաստութեամբն եւ անսպառ առատածեռնութեամբը հայրաքար իր արարածոց պարգեւեր է:

Այս նկարագրուած մաւնջ տեսարանին ժամանակ՝ Ռօտէն չէր նշմարեր որ իր նստած սենեկին վրայ նայող շէնքին երրորդ դասիկոնին պատուհաններէն մէկուն վարագոյրը թեւ թեւ կերպիւ բացուելով Ռօզ—Բօմբօնի խորամանկ դէմքն եւ Նինի—Մուլէնի կապկական երեսը կիսով չափ երեւան հաներ էր: Ասկէ կը հետեւէր որ Ռօտէն՝ իր ընչախտափ թաշկինակէ պատուարովը հանդերձ չէր կրցեր ազատ եւ ապահով մնալ Մրէտածափ խեղճ երկու շահատակներուն հետաքրքիր եւ անսպասեհ դննութենէն:



Գ. Լ. ՈՒԽ Գ.

ԱՆԱԿՆԿԱԼ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Ռօտէն՝ թէպէտ Հռոմէն եկած երկրորդ նամակը կարդալով խոր հիացում մը զգացեր էր, չուզեց որ իր գրելիք պատասխանին մէջ այս դարմանքը նշմարուի: Իր սակաւապէտ նախա-

ճաշը լմննալէն ետեւ , թերթ մը թուղթ առաւ ,
եւ շուտով հետեւեալ ծանօթութիւնը ծածկա-
գրրեց այն խիտա եւ կարուկ սճով որ իրեն
սովորական էր՝ երբոր ինքզինք սեղմելու հար-
կադրեալ չըլլար :

« Ինձ տրուած լուրը զիս չղարմայներ բը-
« հաւ . ամեն բան նախատեսած էի . վարա-
« նամատութիւնն ու վատութիւնը միշտ այս պը-
« տուղը կը բերեն : Այս բաւական չէ . Հերե-
« տիկոս Ռուսիա՝ կաթողիկ Նեհաստանը կը
« խողխողէ . Հոսմ ազանիչները կօրհնէ եւ ըս-
« պանդները կանխօժէ : Ասոր կը հաւնիմ :

« Ռուսիա ալ ասոր փոխարէն Ռօմանիոյ
« հայրենասէրներն Աւստրիոյ ձեռօք կոտորե-
« լու եւ ճնշելու ապահովութիւն կուտայ Հոս-
« մի : Ասոր ալ միշտ կը հաւնիմ :

« Բարի կարողինալ Ալպինիի խողխողիչ խուճ-
« բերն այլ եւս չեն բաւեր անօրէն աղատա-
« միտները ջարդելու , եւ յոգներ են :

« Ասոր չեմ հաւնիր : Պէտք է որ քալեն : »
Երբոր Ռօսիէն այս վերջին խօսքերը կը գը-
րէր , իր ուշադրութիւնը յանկարծ գրաւեցաւ
Ռօդ—Բօմբօնի թարմ եւ անուշ ձայնէն , որ
իւր Պէռանժէն գոց գիտնալով Ֆիլէմօնի պա-
տուհանը բացեր , եւ երկաթէ յենարանին վը-
րայնատելով անմահ երգասացին հետեւեալ եր-
գը կը նուագէր զմայլելի ձայնիւ .

Բայց , ի՞նչ սխալ . ո՞չ , Աստուած բարկու-
թիւն չէ .
Գ—43

Եթէ ամեն բան ստեղծեց . . . ամենուն ալ
նեցուկ է .

Գինի , զոր մեզ կուտայ . պաշտպան բարե-
կամութիւն ,

Եւ դու սէր , որ անկէ ետեւ կ'ստեղծես ,
հրապոյր տուէք իմ փիլիսոսիայու-
թեանս .

Վշտագնիչ երազներ փարատելու համար
թող ամեն մարդ՝ բաժակ 'ի ձեռին՝ բա-
րի մարդոց Աստուծոյն յանձնէ ինքզինք :

Այս երկնային քաղցրութեամբ լցուն երգն
այնչափ տարօրինակ կերպով կը հակադիպէր
Ռօտէնի պաղ անդթութեամբ դրած քանի մը
տողերուն հետ , որ ցնցուելով կատաղութե-
նէն շրթունքը խածաւ . վասն զի մէկէն ճանչեց
ճշմարիտ քրիստոնեայ բանաստեղծին երգը , որ
այնչափ ծանր հարուածներ տուած է եկեղեցւոյ
դեղձումներուն : Ռօտէն քանի մը վայրկեան
զայրազին անհամբերութեամբ սպասեց՝ կար-
ծելով թէ ճայնը պիտի շարունակէր . բայց Ռօդ
— Բօմբօն լուեց , կամ մանաւանդ մեղմ ճայնիւ
գեղգեղելով քիչ մ'ետքն ուրիշ եղանակ մը
նուագել սկսաւ , այն է Բօրէ Պօղ երգը , բայց
առանց բռներն արտասանելու : Ռօտէն չհա-
մարձակելով երթալ պատուհանին նայիլ , որ-
պէս զի այս անհաճոյ երաժշտուհւոյն ով բլա-
ւը տեսնէ , ուսերը թոթվեց , գրիչը նորէն ձեռ-
քն առաւ եւ շարունակեց .

« Ուրիշ բան մ'ալ . « Պէտք է ամեն երկրի
« անկախ մարդիկը զայրացնել . Եւրոպայի փի-

« լիատիայական կատաղութիւնը գրգռել, ա-
« զատամտութիւնը փրփրեցնել, Հռոմի դէմ
« աղաղակ վերցնել տալ : Ասոր համար պէտք
« է հետեւեալ երեք առաջարկութիւններն աշ-
« խարհի առջեւ հրատարակել .

« 1 . Պժգալի բան է պնդել թէ մարդ մը
« ամեն դաւանութեան մէջ կրնայ հոգւոյ փր-
« կութիւն գտնել՝ եթէ բարի վարք ունենայ :

« 2 . Նողկալի եւ անտեղի բան է խղճմը
« տանքի ազատութիւն շնորհել ժողովրդոց :

« 3 . Մասնոց ազատութեան պէս դարչելի
« բան չկայ :

« Աէտք է մեր տկար մարդը (Պապը) հա-
« մոզել որ այս ամեն կերպով ուղղափառական
« առաջարկութիւնները հրատարակէ : Աէտք է
« հաւտացնել իրեն թէ այս հրատարակութիւնը
« գերազանց աղգեցութիւն մը կունենայ բա-
« ցարձակ միապետական կառավարութեանց ,
« ճշմարիտ կաթողիկոսաց եւ ժողովրդեան բե-
« բանը կապողներուն վրայ : Ասանկով մեր
« մարդը թակարդը կիյնայ : Այս առաջարկու-
« թիւնները հրատարակուելուն պէս՝ փոթո-
« թիկը կը բրդի . ընդհանուր ապատամբու-
« թիւն մը կը ծագի Հռոմի դէմ . սարսափելի
« հերձուած մը կելնէ . սուրբ ժողովն երեքի
« կը բաժնուի . մէկը կը հաւնի , միւսը կը մե-
« ղադրէ . մէկ մասն ալ կը դողայ : Իսկ մեր
« տկար մարդը՝ որ Վեհաստանի կոտորածը թող
« տալուն համար այսօրուան օրս իր դէմ ելած

« բողոքներէն սարսափած է , այս առթիւ ալ
 « իր դէմ ելնելիք աղաղակներէն յանդիմանու-
 « թիւններէն սպառնալիքներէն եւ բռնն օձ-
 « տումներէն առաւել եւս զարհուրելով եւս կը
 « քաշուի :

« Ասոնք շատ աղէկ կուգան դործիս :
 « Այն ժամանակ մեր պատուական բարե-
 « միտ հայրը կաշխատի մեր տկար մարդուն
 « խղճմտանքը խախտել , միտքը վրդովել եւ հո-
 « գին սարսափեցնել :

« Վերջապէս զինքը զղուեցնել , իր ժողո-
 « վը բաժնել , զինքը մինակ ձգել , վախցընել ,
 « Ալպինի վայրագ եռանդը բորբոքել , Սան-
 « Ֆէտիսթներուն* ախորժակը գրգռել , աղա-
 « տամիտներն անոնց ճարակ տալ , Չէզնայի
 « մէջ եղածին պէս աւարտութիւն բռնաբա-
 « րութիւն եւ կոտորած ընել տալ : Այս ա-
 « մեն արիւնհեղութիւնները մեր տկար մար-
 « դուն անուամբը կատարուելուն համար՝ վեր-
 « ջի գատնութիւնն ան կը ճաշակէ , եւս կը
 « քաշուի . . . իր ամեն օրերը խղճի խայ-
 « թով , ամեն գիշերները սոսկումով , ամեն
 « վայրկեանները տագնապով կանցնին . եւ
 « արդէն սպառնալից հրաժարականը վերջա-
 « պէս կուգայ , թերեւս մեր յուսացածէն շատ

* Խաալիոյ մէջ տեսակ մը մոլեռանդ աւա-
 ղակներու ընկերութիւն մը՝ որ կղերին ձեռ-
 քը դործիք եղած էր :

« առաջ : Հիմա միակ վտանգն այս է . ձեզ կը
« մնայ այս մասին պէտք եղածն ընել :

« Երբոր հրաժարական պատահի . . . մեծ խոս-
« տովանահայրը հասկըցած է միտքս : Մեր ուխ-
« տին հրամանատարութիւնը փոխանակ ընդ-
« հանուր մեծաւորի մը յանձնելու՝ ես վրաս
« կառնում , վասն զի գիտէք որ մեր ընկերու-
« րութիւնը Սուրբ աթոռին ամենէն լաւագոյն
« զինուորութիւնն է : Այն ժամանակ այս զին-
« ւորութենէն վախ չեմ ունենար : Օրինակի
« համար . . . Աէնիշէրիներն ու պրետորական
« զինուորները (հին Հռոմի դատաւորական զին-
« ւորները) միշտ վտանգաւոր եղած են իշխա-
« նութեան . ինչո՞ւ համար . վասն զի առանց
« իշխանութեան հրամանին ներքեւ ըլլալու՝
« զայն պաշտպանելու պաշտօն ունէին . այս
« պատճառաւ իշխանութիւնը կը վախնար ա-
« նոնցմէ :

« Կղեմէս ԺԳ . տխմար մարդ էր : Մեր ըն-
« կերութիւնն անուանարկել կործանել ջնջել
« ուղեց , որ անտեղի սխալ մ'էր . ընդհակառակն
« պէտք էր որ պաշտպանէր արդարացնէր եւ
« անոր ընդհանրական մեծաւորն ինք ըլլար .
« Այն ժամանակ ընկերութիւնն իր ձեռքին մէջ
« եւ հրամանին ներքեւ ըլլալով՝ ամեն բանի
« կը հաճէր . եւ այսպէս մեզ կը կըսէր , սուրբ
« աթոռին հետ կը միացնէր եւ մեր ծառայու-
« թիւններէն վախնալու պատճառ չէր մնար :
« Կղեմէս ԺԳ . խիթէ մտաւ . . . խօսք հաս-

« կըցողին բարեւ . . . : Բայց ես այն կերպով
« մեռնող չեմ : »

Այս միջոցին Ռօղ—Բօմբօնի թրթռուն ու
քաղցրաւաչ ձայնը նորէն հնչեց :

Ռօտէն բարկութեամբ վեր դատկեց ամո-
ռին վրայ : Բայց յետոյ երբոր հետեւեալ երգը
լսեց որ անծանօթ էր իրեն, ձիզվիթը անա-
պաշտական դաղափարներու հակամէտ ըլլա-
լուն համար ապշեցաւ եւ դրեթէ սարսափեցաւ
մնաց այս զարմանալի զուգադիպութեան վրայ:
(Պէռանժէի Բարէ Պարէ է խօսողը) :

Ի՞նչ են թագաւորները . անխելք խառ-
նակեացներ , որք ամբարտաւանութեամբ
ուռեցած ,

Տխողոսներու փոխարէն իրենց ոճիրները
տալով դիրար դերեզման կը հրեն .

Ես կրնամ զանոնք ոսկիով քաւել , կամ ա-
նոնց դաւադանը ցուպի փոխել .
Խնդա ուրեմն
Յատկէ ուրեմն
Կլորիկ գիրուկս .

Տեսէք ի՞նչպէս կարձակեմ շանթը .
Արամաղդ գիս իրեն ժառանգ ըրաւ .
Ես կատարեալ եմ :

Մինչդեռ Ռօտէն ամթռակին վրայ կէս
մը կանգնած , պարանոցն երկնցուցած , աչքը
անկած դեռ մտիկ կընէր , Ռօղ—Բօմբօն՝ իր
երգարանին մէկ ծաղկէն մեղուի պէս դէպ 'ի
միւսը թռչելով Բօլիպրիի սխրալի տաղը նը-
ւագել սկսեր էր : ձիզվիթը բան մը չհասկը-

Նալով ասիշածի պէս նստաւ, բայց քանի մը
վայրկեան խորհելէ ետեւ՝ յանկարծ դէմքը դը-
ւարթացաւ. այս դարմանազի դէպքին մէջ բա-
րենչան գուշակութիւն մը կը տեսնէր: Նորէն
գրիչը ձեռքն առաւ, եւ իր առաջին խօսքերը
կարծես թէ ճակատադրին վրայ ունեցած տա-
րօրինակ վատահուժեամբը ներշնչեալ էին:

« Այս գործին յաջողութեանը վրայ մեծ
« վատահուժիւն ունիմ այս վայրկենիս. այս
« պատճառաւ բան մը գանց ընելու չգար: Ա-
« մեն նախազգացում մեզ կը պատուիրէ որ
« եռանդն իս կրկնապատկենք: Նրէկ՝ նոր խոր-
« հուրդ մ'եկաւ միտքս:

« Հոս ալ համաձայնութեամբ պիտի աշ-
« խատուի. ծայրայեղ կաթոլիկ լրագիր մը հիմ-
« նեցի՝ Սեր Էֆրէն անունով, որուն անդրա-
« լեռնական բռնաւորական եւ ազատասպան
« կատաղութենէն պիտի կարծուի թէ Հռոմի
« բերանն է. ես ալ այս կարծիքը տարածե-
« լու պիտի աշխատիմ, որով նոր փոթորիկ:

« Այս ալ բանիս աղէկ կուգայ:

« Ուսուցանելու ազատութեան խնդիրը պի-
« տի յուզեմ. խակ ազատամիտներն այս խնդ-
« րոյն մէջ մեզ հետ կը միանան: Այն տիմար-
« ները մեզ հասարակաց իրաւանց մասնակից
« ընել կուզեն, մինչպէս մեր արտօնութիւն-
« ները, առանձնաշնորհութիւնները, խոստո-
« վանական աղղեցութիւնը եւ Հռոմէն կախու-
« մը մեզ այդ հասարակաց իրաւունքէն դուրս

« կը թողուն՝ նոյն իսկ մեր վայելած օգուտ-
« ներուն պատճառաւ : Աւելի մեծ տխմարու-
« թիւննին ալ այս է, որ ինչպէս իրենք մեր դէմ
« անդէն են, մեզ ալ իրենց դէմ անդէն կը կար-
« ծեն :

« Հրալից խնդիր . գրգռիչ աղաղակներ .
« նոր տագնապ մեր տկար մարդուն : Ամեն մէկ
« առու՝ հեղեղը կը մեծցրնէ :

« Այս ալ գործիս աղէկ կուգայ :

« Արկու խօսքով համառօտեմ : Ախճանը
« հրաժարական է . իսկ միջոցն անդադար տադ-
« նապ նեղութիւն եւ վիշտ : Աէնքօնի ժա-
« ոանգութեամբ ընտրութիւնը կը գտնուի :
« Գինը կը կտրուի, ապուանքը կը վաճառուի : »

« Ռօտէն յանկարծ գիրը գաղբեցուց . վասն
« զի սենեկին գրանը դուրսէն ռանաճայն մը լը-
« սել կարծեց . ականջ դրաւ, շնչառութիւնը
« գաղբեցուց, եւ տեսաւ որ խոր լուսթիւն տի-
« բած էր . ուստի ինքզինք սխալած կարծելով
« նորէն գրիչը ձեռքն առաւ :

« Ես վրաս կառնում Աէնքօնի գործը, որ
« մեր աշխարհային մեծամեծ խորհուրդներուն
« միակ առանցքն է . այս գործին համար ձեռ-
« քի տակէ պէտք է աշխատինք : Շահուց խա-
« զը եւ իրից զսպանակները պէտք է բանե-
« ցրնենք հայր Տ'էկրիսնիի անմտարար դարկած
« լախտի հարուածներուն տեղ, որով քիչ մը
« նայ՝ ամեն բան վտանգի մէջ պիտի ձգէր :
« Սակայն խիտ լաւ միջոցներ ալ ունի . շատ

« մարդ կը ճանչէ, հրապուրիչ ձեւեր, արագա-
» տես հայեացք, բայց մէկ եղանակ մ'ու-
« նի . ասկէց զատ բաւական մեծ չէ որպէս զի
« պէտք եղած ժամանակ ինքզինք պղտիկցընել
« զխոնայ : Իր բուն դրից մէջ կրնամ անկէ
« օգուտ քաղել . մասունքը գէշ չեն : Վե-
« բապատուելի ընդհանուր հօր ազատ իշխա-
« նութիւնը ժամանակին ինձ ծառայեցուցի .
« եթէ պէտք ըլլայ, ընդհանուր մեծաւորին
« ինձ տուած գաղտնի գրաւոր խոստումները
« կիմացնեմ հայր Տ'էկրիների . մինչեւ հիմա
« թող արուեցաւ իրեն որ այս ժառանգութեան
« գործածութեանը համար յատուկ նպատակ մը
« սահմանէ, զոր գիտէք . գէշ խորհուրդ չէ,
« բայց անկարելոր է . նոյն նպատակին ուրիշ
« ճանքով ալ կրնանք հասնիլ :

« Առնուած տեղեկութիւնները սուտ են
« եղեր :

« Ժառանգութիւնն երկու հարիւր միլիոն-
« նէն աւելի է . երբոր հաւանական գէպք մը
« կատարուի, կեղակարծը կ'ստուգուի, եւ գոր-
« ծելու ընդարձակ ապարիէզ կը մնայ : Ռէնքօնի
« գործն այս ժամուս մէջ կրկնապատիկ ինձ
« է . երեք ամիս չանցած՝ այս երկու հարիւր
« միլիոնը մերը պիտի ըլլան ժառանգներուն
« ազատ կամօքը . եւ պէտք է ըլլայ . վասն զի
« եթէ կորանցընենք, աշխարհական գորութիւնը
« ձեռքէս կը պրծի, եւ յաջողութեանս հաւա-
« նականութիւնը կիսով չափ կը պակսի . ես լիա-


« զօր իշխանութիւն ուղեցի . բայց ժամանակն
« ստիպողական ըլլալուն՝ ունեցածի պէս կը
« գործեմ : Իմ խորհրդոցս համար տեղեկու-
« թիւն մը հարկաւոր է ինձ , եւ դայն ձեզնէ
« կ'սպասեմ . անպատճառ պէտք է , կը հասկը-
« նա՞ք : Աիէննայի արքունեաց մէջ ձեր եղ-
« բօրն ունեցած մեծ ազդեցութիւնը կրնայ ձեզ
« ծառայել : Աուղեմ ամենաճիշդ եւ մանրա-
« մասն տեղեկութիւններ ստանալ կայսերա-
« կանաց Բ . Նարօլէոնին՝ Տէյխսթատի դուք-
« սին ներկայ վիճակին վրայ . կրնանք թէ ոչ
« ձեր եղբօր միջոցաւ դադանի թղթակցութիւն
« մը բանալ դուքսին հետ՝ իր քովի մարդիկը
« բնաւ չիմանալով :

« Ասոր համար պէտք եղածը շուտով ը-
« րէք . վասն զի շատ հարկաւոր է : Այս ծա-
« նօթութիւնն այսօր ճանրայ պիտի ելնէ . մը-
« նայեալն ալ վաղը կը լրացնեմ . . . : Ասէն
« անդամուան պէս փերեզակին ձեռօք ձեզ
« պիտի հասնի : »

Երբոր Ռօտէն այս գիրը կրկին պատեանի
մէջ դնելով կը կնքէր , նորէն ոտնաձայն մը լսել
կարծեց դուրսը , եւ ականջ դրաւ . . . վայր-
կեան մը լռութենէ ետեւ՝ յանկարծ քանի մ'ան-
գամ իր դուռը բախեցին : Ռօտէն ցնցուեցաւ .
տարիի մը չափ կար որ այս սենեակը կերթար
կուգար , առաջին անգամն էր որ դուռը կը
բախէին : Իսկայն գրած նամակն զգեստին գրը-
պանը դնելով , դնաց անկողնին տակի հին սըն-

տուէր բացաւ, պատուած թաշկինակի մը մէջ
փաթթուած թուղթերու ծրար մ'առաւ, Հոռ-
մէն ստացած երկու ծածկագիր նամակներն ա-
նոր մէջ դրաւ, եւ անտուէր նորէն կղպեց :
Այս միջոցին դուրսէն անդադար դուռը կը
դարնէին անհամբերութեամբ : Ռօտէն մրգա-
վաճառին սակառը ձեռքն առաւ, հովանեակը
թեւին տակ, եւ սրտատանջ կերպով մը գնաց
տեմնելու թէ ո՞վ էր այս անդգոյշ այցելուն :
Դուռը բացաւ եւ մէկէն Ռօզ—Բօմբօն իր գէմն
եղնելով նազելի կերպիւ յարգանք մ'ըբաւ եւ
միամիտ գէմքով մը հարցուց .

« Պարոն Ռօտէն հմա է :



17-LL

№ 6004